ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

3

ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԻՐ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԸ

ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԱՏՈՐ 3

ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԻՐ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԸ

(Ժողովածուն նվիրվում է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գագիկ Սարգսյանի ծննդյան 90-ամյակին)

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ НАН РА

ВОСТОКОВЕДЕНИЕ В АРМЕНИИ

ТОМ 3

ДРЕВНЯЯ И СРЕДНЕВЕКОВАЯ АРМЕНИЯ И ЕЕ СОСЕДИ

(Сборник посвящается 90-летию со дня рождения академика Гагика Саркисяна)

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО "ГИТУТЮН" НАН РА
2017

INSTITUTE OF ORIENTAL STUDIES OF NAS RA

ORIENTAL STUDIES IN ARMENIA

VOLUME 3

ANCIENT AND MEDIEVAL ARMENIA AND HIS NEIGHBORS

(The Collection of papers in honour of academician Gagik Sargsyan on the occasion of his 90th birthday)

YEREVAN
"GITUTYUN" PUBLISHING HOUSE OF NAS RA
2017

PUBLISHED BASED ON THE DECISION OF THE SCIENTIFIC COUNCIL OF THE INSTITUTE OF ORIENTAL STUDIES OF NAS RA

Editor-in-Chief:
Ruben Safrastyan, Prof. Dr., Academician of NAS RA

Vice-Editor: Robert Ghazaryan, Assoc. Prof. PhD
Executive secretary: Mariam Khanzadyan, PhD

Editorial Board:
Nikolay Hovhannisyan, Prof. Dr., Corr. member of NAS RA
Vahan Bayburtyan, Prof. Dr.
Aram Kosyan, Prof. Dr.
Aleksan Hakobyan, Dr.
Lilit Harutyunyan, Assoc. Prof. PhD
Vahram Ter-Matevosyan, PhD

ՀՏԴ 001:94(479.25):06
ԳՄԴ 72+63.3(5Հ)
Ա 862

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝
ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ, պ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

ԳԼԽ. ԽՄԲԱԳՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ՌՈԲԵՐՏ ՂԱԶԱՐՅԱՆ, պ.գ.թ., դոցենտ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՄԱՐԻԱՄ ԽԱՆԶԱԴՅԱՆ, պ.գ.թ.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝
ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, պ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ
ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ, պ.գ.դ., պրոֆ.
ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ, պ.գ.դ., պրոֆ.
ԱԼԵՔՍԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ, պ.գ.դ.
ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, պ.գ.թ., դոցենտ
ՎԱՀՐԱՄ ՏԵՐ-ՄԱԹԵՎՈՍՅԱՆ, պ.գ.թ.

Ա 862 Արևելագիտությունը Հայաստանում. – Եր.: «Գիտություն», 2017, հ. III: Հին և միջնադարյան Հայաստանը և իր հարևանները 215 էջ + 8 էջ նկ.:

Ժողովածուն ընդգրկում է 2016 թ. մայիսի 19-ին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում անցկացված «Հին և միջնադարյան Հայաստանը և իր հարևանները» գիտաժողովի նյութերը: Նվիրվում է հայ մեծանուն արևելագետ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, արևելագիտության ինստիտուտի երկարամյա տնօրեն Գագիկ Խորենի Սարգսյանի ծննդյան 90-ամյակին:

ISBN 978-5-8080-1292-9
© ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, 2017



ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

(1926-1998)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայ արևելագիտության դասականը (1926 – 1998) 9

Հանձին «Հայոց պատմության» հեղինակի ես գտա իմ մշտական զրուցակցին 12

Մտավորականը և գիտնականը 13

Գագիկ Սարգսյանի կյանքի և գիտական գործունեության հիմնական տարեթվերը 16

Գագիկ Սարգսյանի աշխատությունների ժամանակագրական ցանկ 18

Հոդվածներ

Բոբոխյան Արսեն

Խորենացու վկայությունը Պաղատի սրբազան տարածքի մասին և վիշապաքարերի խնդիրը 32

Գրեկյան Երվանդ

Հայկական լեռնաշխարհի բնակչության կրած մարդկային կորուստները ուրարտական արշավանքների շրջանում 52

Խանզադյան Մարիամ

Վաղ պետականությունների առաջացման սոցիալական մեխանիզմների մասին 69

Խաչիկյան Մարգարիտ

Խուռի-ուրարտական նախալեզվի վերականգնման փորձ 85

Խորիկյան Հովհաննես

Վարչական բաժանման սկզբունքն Աքեմենյան Պարսկաստանում 91

Յակոբեան Ալեքսան

Կրկին Արտազ գավառում Աւարայրի դաշտի տեղորոշման խնդրի մասին 101

Հմայակյան Հասմիկ

Հայոց հնագույն մշակույթի խեթա-խաթա-լուվիական ենթաշերտը 127

Մելիքյան Արթուր

Հայաստանում սասանյան թագաժառանգների գահակալության սկզբնավորման և նշանակության հարցերի շուրջ 137

Ցականյան Ռուսլան

«Տուն Թորգոմա»-ն սկզբնաղբյուրներում 161

Փիլիպոսյան Աշոտ

Զորաց քարե՞ր, թե? Քարահունջ, հնագիտական հուշարձա՞ն, թե՞ հորինյալ «աստղադիտարան» 181

Քոսյան Արամ

Ինտեգրացիոն գործընթացները Եփրատյան կոնտակտային գոտում մ.թ.ա. II-I հազարամյակներում 200

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 213

CONTENTS

The Outstanding Orientalist of Armenia 9
In the author of the "History of Armenia I found my constant companion . 12
Intellectual and scholar 13
Main chronolgy of Gagik Sarkisyan's life and scientific activities 16
Chronological list of Gagik Sargsyan's studies 18
ARTICLES
BOBOKHYAN ARSEN
Evidence of Khorenatsi towards the sacred landscape of Paghat and the problem of vishapakars 32
GREKYAN ERVAND
Population losses of the Armenian Highland in the Period of Urartian campaigns 52
KHANZADYAN MARIAM
About social mechanisms of the genesis of early states 69
KHACHIKYAN MARGARIT
An Attempt at Restoring the Hurro-Urartian Protolanguage 85
KHORIKYAN HOVHANNES
Principle of Administrative Division of Achaemenid Persia 91
HAKOBYAN ALEKSAN
Again on the problem of the location of Avarayr field in Aryaz province ... 101
HASMIK HMAYAKYAN
The hittite-hattic-luwian substrate of ancient armenian culture 127
MELIKYAN ARTHUR
On the Sassanian crown princes' enthronement origin and significance in Armenia 137
TSAKANYAN RUSLAN
The "House of Torgom" in written sources 161
PILIPOSYAN ASHOT
Zorats Karer or Karahunj, Archaeological Monument or fictional observatory? 181
KOSYAN ARAM
Integrational Processes in the Euphratian Contacting zone in the II-I millenniums B.C. 200
ABBREVIATIONS 213

ՀԱՅ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՆԸ
ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ (1926-1998)

Բոլորեց անցյալ դարի հայագիտության անվիճելի առաջատարներից և հայ արևելագիտության հիմնադիրներից մեկի՝ ակադեմիկոս Գագիկ Խորենի Սարգսյանի ծննդյան 90-ամյակը:

Ակադեմիկոս Գ.Սարգսյանը պատկանում էր գիտնականի այն եզակի տիպին, ով միևնույն հաջողությամբ զուգակցում էր գիտական գործունեությունը գիտակազմակերպական բարդ ոլորտի հետ: Գ.Սարգսյանի գիտակազմակերպական գործունեության լուսապսակը, անկասկած, նրա շուրջ քառորդդարյա տնօրինությունն էր նորաստեղծ Արևելագիտության ինստիտուտում:

Գ.Սարգսյանը իրեն հատուկ նպատակասլացությամբ ավանդական գիտական ուղղությունների կողքին ստեղծեց նորերը, այն է՝ կովկասագիտության, սեպագրագիտության և արևելյան աղբյուրագիտության բաժիններ: Հայ արևելագիտության ձևավորման և կայացման ու միջազգային ասպարեզում հեղինակության բարձրացման գործում նրա ներդրումն անվիճելի է: Գ.Սարգսյանը հեռու էր կանգնած նեղ գավառական մտայնությունից և համոզված էր, որ հայ արևելագիտությունը և ընդհանրապես հայագիտությունը այլևս չեն կարող գոյատևել նեղ ազգային շրջանակներում: Անհրաժեշտ են իրենց մասնագիտությանը և օտար լեզուներին լիակատար տիրապետող գիտական կադրեր, ովքեր կարող են հայաստանյան գիտությունը դուրս բերել միջազգային լայն ասպարեզ: Այդ նպատակով նա իր ղեկավարած Արևելագիտության ինստիտուտում ձեռնարկեց այդպիսի կադրերի պատրաստության բարդ գործը: Մի քանի տասնյակ երիտասարդներ գործուղվեցին Խորհրդային Միության առաջատար գիտական կենտրոններ՝ Մոսկվա, Լենինգրադ, Թբիլիսի և այլ քաղաքներ, ովքեր վերադառնալով հիմք դրեցին Հայաստանում դասական արևելագիտությանը: Գ.Սարգսյանի նպատակը տեղում գիտական դպրոցների հիմնումն էր, ինչը թույլ կտար արդյունավետ կազմակերպել հաջորդող սերունդների պատրաստման գործը: Եվ դա նրան հաջողվեց: Գ.Սարգսյանին այս երախտավոր ձեռնարկման մեջ լիուլի աջակցում էր նրա մերձավորագույն գործընկեր և ընկեր, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն Գ. Տիրացյանը:

Գ.Սարգսյանը Արևելագիտության ինստիտուտի իր համախոհների հետ միասին (Հ.Ինճիկյան, Ն.Հովհաննիսյան, Պ.Մուրադյան, Ն.Հարությունյան) հիմնեց մի շարք արևելագիտական պարբերականներ, որոնց մի մասը ներկայումս էլ շարունակվում է հրատարակվել (Մերձավոր և Միջին

Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հին Արևելք, Կովկաս և Բյուզանդիա, Արևելյան աղբյուրագիտություն): Այս միջազգային պարբերականներին իրենց մասնակցությունն էին բերում ժամանակի առաջատար գիտնականներ ինչպես ԽՍՀՄ-ից, այնպես էլ արտերկրից:

Գ.Սարգսյանը հատուկ ուշադրություն էր դարձնում հայ արևելագետների անմիջական շփումներին արտասահմանյան գործընկերների հետ: Նրա օրոք ինստիտուտի աշխատակիցները պարբերաբար մասնակցում էին միջազգային գիտաժողովների աշխատանքներին, հրատարակվում արտերկրի գիտական հանդեսներում: Ըստ էության հայ արևելագիտությունը 1970-1990-ական թվականների սկզբներին հաջողությամբ դուրս եկավ միջազգային ասպարեզ և իրավամբ ԽՍՀՄ առաջատար արևելագիտական կենտրոններից մեկն էր:

Գ.Սարգսյանը չէր պատկանում այն գիտնականների թվին, ովքեր իրենց բազմազբաղ գիտակազմակերպական գործունեության ընթացքում աստիճանաբար հեռանում են ակտիվ գիտական գործունեությունից: Այսօր, երբ փորձում ենք հետ նայել, համոզվում ենք, որ նա կարողացավ ներդաշնակ և կատարյալ զուգակցել գիտնականի և գիտության կազմակերպչի բնատուր հատկությունները:

Գ.Սարգսյանը երբեք չդավաճանեց իր գիտահետազոտական գործունեությանը: Ավելին, 1970-1990-ական թվականներին կտրուկ ավելացան նրա գիտական հետաքրքրությունների շրջանակները՝ ներառելով այնպիսի ուղղություններ, որոնց նա ժամանակին միայն հպանցիկ էր անդրադարձել: Գ. Սարգսյանի գիտական հետաքրքրության առարկա ուղղությունների միայն հպանցիկ թվարկումն ինքնին արդեն խոսուն է՝ 1) հինարևելյան քաղաքային համայնք, 2) հելլենիստական դարաշրջանի Միջագետքի սոցիալ-տնտեսական կյանք, 3) ուշբաբելոնյան և հելլենիստական դարաշրջանների սեպագիր տեքստերի հրատարակություն և ուսումնասիրություն, 4) Հին Հայաստանի սոցիալ-քաղաքական պատմություն, 5) հելլենիզմը Հայաստանում, 6) Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրություն և պատմագիտական առանցքագաղափար, 7) նախամեսրոպյան հայոց պատմագրություն, 8) Ուրարտու-Հայաստան և հայ ժողովրդի կազմավորման խնդիրները և այլն:

Գ.Սարգսյանի գիտահետազոտական գործունեության բնորոշ առանձնահատկությունը նրա սկզբունքայնությունն էր, որը նա պահպանում էր սրբորեն: Հազիվ թե հնարավոր լինի հիշել թեկուզ մի դեպք, երբ Գ.Սարգսյանը, ելնելով պահի թելադրանքից կամ արտաքին ճնշումից, փոխեր իր տեսակետները: Եվ, իհարկե, Գ.Սարգսյանի այդպիսի բնութագրի շարունակությունը պետք է համարել նրա մշտական պայքարը

գիտության մեջ պարզունակության, մակերեսայնության և հատկապես գավառականության ու մարտնչող տգիտության դեմ: Գիտականության շահը նրա համար վեր էր ամեն ինչից: Այդպիսին էր ակադեմիկոս Գ.Սարգսյանը թե որպես գիտնական, թե որպես գիտական տնտեսության կազմակերպիչ: Եվ այդպիսին էլ կմնա իրեն ճանաչողների և իսկական հայ գիտնականների սրտում:

ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՆՁԻՆ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՀԵՂԻՆԱԿԻ ԵՍ ԳՏԱ ԻՄ ՄՇՏԱԿԱՆ ԶՐՈՒՑԱԿՑԻՆ

Իմ գիտական կենսագրությունը մասամբ ոչ սովորական է, երկատված: Այն սկսվել է տակավին ուսանողական տարիներին Լենինգրադի Էրմիտաժում, երբ իմ երկրորդ ուսուցիչը (առաջինը իմ հայրն էր)՝ մեզանում լավ հայտնի Իգոր Միխայիլի Դյակոնովը, ինձ հանձնարարեց մշակել, այսինքն՝ կարդալ, թարգմանել, մեկնաբանել և հրատարակել հելլենիստական դարաշրջանի բաբելոնյան սեպագիր տախտակների էրմիտաժյան հավաքածուն: Հետագա ողջ կյանքում ասուրագիտությունից ես այլևս չեմ բաժանվել: Արտասահմանում հրատարակել եմ Բեռլինի առաջավորասիական թանգարանի համաբնույթ հավաքածուն ու հելլենիստական Բաբելոնի քաղաքին վերաբերող տասնյակ հոդվածներ, որոնք այստեղ՝ Հայաստանում, գործնականորեն ոչ ոքի հայտնի չեն:

Հայագիտություն մուտք եմ գործել արդեն ասպիրանտ եղած ժամանակ, բայց դարձյալ Հին Հայաստանի քաղաքին վերաբերող թեմայով, որը հետո վերաճեց նրա սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային պատմության: Ինձ ամբողջապես գրավեց Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»: Հանձին «Հայոց պատմության» հեղինակի՝ ես գտա իմ մշտական զրուցակցին: Նա ինձ գերեց իր խոր, գերբնական համակարգվածությամբ, հոգեբանականությամբ և առեղծվածայնությամբ: Ընդ որում՝ նրա գլխավոր հանելուկայնությունը այն չէ, ինչպես բոլորը կարծում են, թե որ դարում է նա ապրել ու ստեղծել, այլ այն, թե որտեղից է հայթայթել իր հարստագույն տեղեկությունները ոչ միայն իրենից ոչ վաղ անցյալի մասին, այլև իրենից կեսհազարամյակ, իսկ երբեմն էլ մեկ ամբողջ, նույնիսկ երկու հազարամյակ առաջ: Հենց այդ ուղիների, ինչպես նաև նրա հայթայթած տեղեկությունների մշակումն ու մատուցման եղանակների որոնումը դարձան իմ վերջին 3-4 տասնամյակների հետազոտությունների առարկան: Իբրև միջանկյալ արդյունք՝ «Հայոց պատմության» գրաբարից ռուսերեն թարգմանությունը եղավ, որ ես հրատարակեցի Մ.Էմինի թարգմանությունից մեկ հարյուրամյակ անց:

Ես հիմա էլ «բռնված եմ» Մովսես Խորենացու առեղծվածներով և մենագրություն եմ պատրաստում նրա «Պատմությունը» կազմող համակարգերի շուրջ, այդ թվում՝ Հայոց եկեղեցու 1700-ամյակի՝ Հայաստանում կրոնի էվոլյուցիայի մասին, ներառյալ նրա բեկումնային պահը՝ հայերի դարձը քրիստոնեություն:

ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Տարիների հեռվից մեր առջև հառնում է ականավոր հայագետ-արևելագետի կերպարը, որի ողջ կյանքն ու գործունեությունը հայ պատմագիտությանը, հայկական մշակույթին և հարազատ ժողովրդին անմնացորդ ծառայելու մի փայլուն օրինակ է:

Ես բախտ եմ ունեցել տարիներ շարունակ Արևելագիտության ինստիտուտում և նրանից դուրս համագործակցելու այդ հետաքրքիր և պայծառ մտքի տեր մարդու հետ: Այդ տարիների ընթացքում մեր գործընկերությունը վերաճեց իսկական ընկերության և եղբայրական համագործակցության: Իմ մտապատկերի մեջ Գագիկ Սարգսյանը ներկայանում է որպես բնության կողմից օժտված և փայլուն կրթությամբ հղկված, առինքնող անկեղծությամբ լի մի վառ անհատականություն: Այդ տաղանդավոր գրչի տեր, մասշտաբային մտածողություն ունեցող, բացառիկ վերլուծական կարողություններով օժտված գիտնականն իսկապես երևույթ էր հայ պատմագիտական մտքի զարգացման մեջ:

Գ.Սարգսյանը Գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի տնօրենի պաշտոնը ստանձնեց 1971թ., երբ հայ արևելագիտությունը, որը տևական ժամանակ դարձել էր մի տեսակ մոռացված գիտություն, սկսել էր վերելք ապրել: Իսկապես դա տարեց և միջին սերնդի արևելագետների հիշողության մեջ կմնա որպես վառ և ոգևորիչ մի ժամանակաշրջան:

Գիտական շրջաններում արդեն մեծ հեղինակություն վայելած Գ.Սարգսյանն աներևակայելի եռանդով և նպատակասլացությամբ ձեռնամուխ անցավ գործի: Նրա առջև դրված էին լրջագույն խնդիրներ՝ հայ արևելագիտության մեջ ծնունդ տալ բոլորովին նոր ուղղությունների, որոնք խորհրդային ամբողջատիրական պետության քմահաճույքով բացակայում էին դեռևս 1958թ. ստեղծված արևելագիտության սեկտորում: Նրա ջանքերի շնորհիվ հայ արևելագիտության ուսումնասիրության օբյեկտ դարձան հին և հնագույն շրջանի պատմությունը, միջնադարագիտությունը և այլ ուղղություններ: Անկեղծորեն ասած, այդ օրերին վարելով Արևելագիտության ինստիտուտի գիտական քարտուղարի պաշտոնը, ինձ միշտ զարմացրել է Գ.Սարգսյանի՝ արագ որոշումներ կայացնելու և այդ որոշումները կյանքի կոչելու բացառիկ ընդունակությունն ու կարողությունը:

Նրա ջանքերը կենտրոնացած էին նաև հետևյալ խնդիրների վրա՝ նորաստեղծ ինստիտուտի շուրջը հավաքել բարձր պրոֆեսիոնալիզմով օժտված կադրերի, շարունակել արևելագիտությունը սիրողական մակարդակից գիտական մակարդակի բարձրացնելու այն երթը, որը սկսվել էր

դեռևս սեկտորի օրերից, պատրաստել բարձր որակավորում ունեցող կադրեր և այլն: Գ. Սարգսյանը իսկապես երիտասարդ տաղանդավոր մարդկանց հայտնաբերելու և նրանց ինստիտուտի շուրջը համախմբելու հազվագյուտ ձիրք ուներ: Առհասարակ նա անդուլ նվիրումով էր իրագործում գիտական կադրերի պատրաստման և նրանց դաստիարակման դժվարին գործը:

Շնորհիվ նրա վիթխարի եռանդի՝ կարճ ժամանակամիջոցում նրան հաջողվեց ինստիտուտի շուրջը համախմբել մեծ գործի գաղափարով ոգեշնչված, շնորհալի ու խանդավառ մի ամբողջ կուռ կոլեկտիվի: Այդ բոլորի արդյունքը հանդիսացավ այն, որ հայ արևելագիտությունը ոչ միայն դուրս եկավ մեր տարածաշրջանի և Խորհրդային Միության սահմաններից, այլև իր արժանի տեղը գտավ համաշխարհային գիտական շրջաններում:

Գիտության հմուտ կազմակերպչի ձիրքի հետ միաժամանակ Գ. Սարգսյանը մեծ ուսուցչապետ էր: Հայաստանի տարբեր բուհերի նախկին ուսանողներն առ այսօր հիշում են նրա փայլուն դասախոսությունները:

Թեև Գ.Սարգսյանի ուսումնասիրությունների օբյեկտը հին շրջանի պատմությունն էր, սակայն որպես բնությունից օժտված մարդ նա ուներ իր ուրույն մոտեցումներն արդի միջազգային գերխնդիրների վերաբերյալ: Նրա քաղաքական մտածողության շրջանակները լայն էին և ընդգրկուն:

Գ.Սարգսյանն իմ խորին համոզմամբ նաև կատարյալ քաղաքացի էր: Մեր անկախության ծննդի առաջին օրերին նա երբեք չընկավ ծայրահեղությունների մեջ և տուրք չտվեց քաղաքական խաղերին:

Գ.Սարգսյանը նաև ջերմ հայրենասեր էր, հայրենիքի հոգսերով ապրող մարդ: Նա միշտ հավատարիմ է եղել այն սկզբունքին, որ չի կարելի քաշվել անկյուն և գործնականում ոչինչ չանել հարազատ երկրի և ժողովրդի համար: Նաև օժտված էր պայծառ լավատեսությամբ և մեր ժողովրդի ապագան երբեք չի համարել մութ և անորոշ:

Հայաստանը պաշտելի էր նրա համար իր բոլոր մեծություններով և փոքրություններով, վեհությամբ և արատներով: Նա հեռու էր նաև ազգային նեղմտությունից, արհամարհանքով էր վերաբերվում աղմկոտ հայրենասերներին:

Որպես ճշմարիտ մտավորական՝ Գ.Սարգսյանը կյանքի նյութական բարիքներից ոչ մի ակնկալություն չուներ, ինքը և իր ընտանիքը միշտ ապրել են համեստ կյանքով: Առհասարակ նա հեռու էր կյանքի ճղճիմ կողմերից: Ես իր կենդանության օրերին Գ.Սարգսյանին համարել եմ երջանիկ մարդ, որովհետև ուներ լավ ընտանիք, սիրասուն զավակներ, զբաղվում էր իր սիրած գործով, հրճվում էր կյանքի խոյանքով:

Գ.Սարգսյանը նաև կենսախինդ և դյուրահաղորդ մարդ էր, ով սիրում էր ընկերական շրջապատում ուրախ հավաքներ: Նա ուներ իր ուրույն փիլիսոփայությունը կյանքի և մահվան առեղծվածի վերաբերյալ: Նա կյանքն ընկալում էր որպես արբեցուցիչ մի վայելք, երջանկության կարճատև մի խենթություն, որտեղ ցավն ու հաճույքը քայլում են կողք կողքի: Ես մի քանի անգամ նկատել եմ, որ Գ.Սարգսյանը՝ որպես ազնիվ նկարագրի տեր մարդ, խորունկ տխրությամբ էր տանում կյանքում իր հետ պատահած վատ բաները: Տարիներ շարունակ նրա հետ շփվելիս ես նրա մեջ նկատել եմ նաև մի տեսակ անդորր, հոգևոր խռովքի բացակայություն ու խաղաղություն: Եվ խաղաղ սրտով էլ նա հրաժեշտ տվեց կյանքին:

Ակադեմիկոս Գ.Սարգսյանը անկասկած հայ պատմագիտության մեջ մնայուն անուն է, իսկ արևելագիտության բնագավառում՝ խոշոր երախտավոր: Նրա՝ իսկական գիտնականի և բարձր մտավորականի կերպարը, շնորհիվ իր փայլուն աշխատությունների և կատարած գործի, հավատացած ենք, ընդմիշտ կպահպանվի սերունդների հիշողության մեջ:

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի վարիչ

ԳԱԳԻԿ ԽՈՐԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ

Գագիկ Խորենի Սարգսյանը ծնվել է 1926 թ. ապրիլի 6-ին Երևանում:

1943 - ավարտել է Երևանի Ն. Կրուպսկայայի անվ. միջնակարգ դպրոցը:

1950 - ավարտել է Լենինգրադի համալսարանի պատմության ֆակուլտետը:

1951-1954 - ԽՍՀՄ ԳԱ պատմության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի ասպիրանտ:

1954 - շնորհվել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1954-1971 - աշխատել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում:

1954-1956 - կրտսեր գիտաշխատող,

1956-1962 - ավագ գիտաշխատող,

1962-1966 - փոխտնօրեն՝ գիտական գծով,

1966-1971 - բաժնի վարիչ:

1956-1962 - ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի գիտնական քարտուղար:

1967 - շնորհվել է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

1967-1972 - Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի դասախոս:

1971-1994 - ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն:

1974 - ընտրվել է Հայկական ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ:

1977-1984 - Վ.Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտի դասախոս:

1978 թ.-ից - ՀՀ ԳԱԱ «Պատմա-բանասիրական հանդեսի» խմբագրական խորհրդի անդամ:

1981 - ստացել է պրոֆեսորի գիտական կոչում:

1984 - ընտրվել է Արևելագետների համամիութենական ասոցիացիայի հայկական մասնաճյուղի նախագահ:

1985 - արժանացել է Հայկական ՍՍՀ պետական մրցանակի՝ «Հայ ժողովրդի պատմություն» ութհատորյակի կազմելուն մասնակցելու համար:

1985 թ.-ից - պատմական գիտությունների սիրիական ընկերության պատվավոր անդամ:

1985-1995 - Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի պրոֆեսոր:

1986 - ընտրվել է Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս:

1986 – պարգևատրվել է Հայկական ՍՍՀ Գերագույն խորհրդի նախագահության պատվոգրով՝ ծննդյան 60-ամյակի առթիվ:

1988-1990 - Հայկական ՍՍՀ ԳԱ փոխպրեզիդենտ և խմբագրական-հրատարակչական խորհրդի նախագահ:

1989 թ.-ից - "Вестник древней истории" հանդեսի խմբագրական խորհրդի անդամ:

1994 - արտաքին կապերի և միջազգային գիտական կենտրոնների հետ համագործակցության գծով ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ:

1994 թ.-ից - ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունքի պատմական գիտական պրոբլեմային գիտխորհրդի նախագահ:

1995-1998 - ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ, հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար:

ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՑԱՆԿ

1944

1. Գրախոսություն: Սովետ. գրական և արվեստ, 1944/9, էջ 92, 93: Գրախոս. Սահինյան Ա., Բարեկամները, Երևան, 1944. – 106 էջ:

1946

2. Հայնրիխ Հայնե (Մահվան 90-ամյակի առթիվ), Սովետ. գրականություն և արվեստ, 1946/3, 78-81:

1951

3. Указатель собственных имен и географических названий. (К "Ассиро-вавилонским источникам по истории Урарту" И.М.Дьяконова), ВДИ, 1951/4, 283-305 (соавт.: И.М.Дьяконов, Е.Ф.Яковлева).

1952

4. Самоуправляющийся город селевкидской Вавилонии, ВДИ, 1952/1, 68-83.

1953

5. О городской земле в селевкидской Вавилонии, ВДИ, 1953/1, 59-72.

1955

6. Градостроительство в Армении при Тигране II и вопрос о переселении чужестранцев, ИАН, 1955/2, 43-64.
7. Из истории городской общины в Армении (IV в. н.э.), ВДИ, 1955/3, 48-62.
8. Частные клинописные контракты селевкидского времени из собрания Государственного Эрмитажа (Публикации), ВДИ, 1955/4, 136-162, 5 л. ил.

1956

9. Աղբյուրների օգտագործման եղանակը Մովսես Խորենացու մոտ, Բանբեր Մատենադարանի, 1956/3, 31-42:
10. Գառնիի հունարեն արձանագրության շուրջը, ՏՀԳ, 1956/3, 45-56:

1957

11. Положение древних городов Вавилона в эллинистический период, Материалы первой всесоюз. науч. конференции востоковедов в Ташкенте 4-11 июня 1957г., Ташкент, 1957.
12. Социальная роль клинописной нотариально-правовой системы в эллинистической Вавилонии, Eos (Varsaviae-Vratislaviae), 1957, 48/2, 29-44.

13. (Рецензия): ВДИ, 1957/4, с. 142-146. – Рец.: Манандян Я.А., О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. н.э. – XV в. н.э.). Изд. 2-е – Ереван, 1954, 347с.

1958

14. (Рецензия): ИАН, 1958/4, с. 93-96 – Рец.: Гарни. [Т] 2, Аракелян Б.Н., Результаты работ Гарнийской археологической экспедиции 1951-1955гг. (Античный период), Археол. раскопки в Армении, № 7, Ереван, 1957, 93 с.
15. (Рецензия): Вопросы истории, 1958/4, с.179-187. Рец.: Тюменов А.И., Государственное хозяйство древнего Шумера, М.–Л., 1956, 518с.
16. (Рецензия): Вопросы истории, 1958/6, с. 180-190. – Рец.: Всемирная история, Т. 1, 2. (Соавт.: Бенклиев С.Н., Лурье С.А., Меликишвили Г.А. и др.).

1959

17. Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի սեսիան (Լրատու), ՊԲՀ, 1959/1, 300:
18. Краткий очерк научной, педагогической и общественной деятельности: Яков Амазаспович Манандян, Библиография (Сост. Е.С.Власян, Р.А.Бабаджанян), Ереван, 1959, 8-45.

1960

19. Արևելագետների համաշխարհային XXV կոնգրեսը: (Լրատու), ՊԲՀ, 1960/3, 221-228 (հեղինակակից՝ Հ.Եգանյան):
20. Հակոբ Համազասպի Մանանդյան (1873-1952), ՊԲՀ, 1960/2, 90-101:
21. О хронологической канве "Истории Армении" Мовсеса Хоренаци, Москва, 1960, 15 с. (XXV Междунар. конгресс востоковедов. Докл. Делегации СССР).
22. То же на нем. яз.: Über den chronologischen Zusammenhang in der "Geschichte Armeniens" von Moses Chorenazi, 249 S.
23. Тигранакерт. Из истории древнеармянских городских общин, Москва, 1960, 160 с. с илл.

1961

24. Отчет о командировке в ГДР. (Изучение материалов по социально-экономической истории Древнего Востока), Москва, 1961. 4 с. (АН СССР Всесоюз. ин-т науч.-техн. Информ.).

1962

25. Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին, Երևան, 1962. – 94 էջ – (ՀՍՍՌ ԳԱ պատմ. ին-տ):

26. Դաստակերտները և ագարակները V դարի հայկական աղբյուրներում, ՊԲՀ, 1962/3, էջ 77-94:
27. Հին Հայաստանի հասարակարգի որոշ առանձնահատկությունների մասին, ՏՀԳ, 1962/6, 39-54:
28. К вопросу о датировке Тигранакертской греческой надписи, ИФЖ, 1962/1, 226-231.

1963

29. Об особенностях социально-экономического развития древней Армении, Сообщ. АН ГрузССР, 1963, т. 32/2, с. 495-502 (на груз. яз.).
30. (Примечания к "Книге башен"): Керам К., Боги, гробницы, ученые, Москва, 1963, 393-394.

1965

31. Հայաստանը մ.թ.ա. II դարում (Հելլենիստական շրջանի պատմության լուսաբանման համար Մ.Խորենացու «Հայոց պատմության» տվյալների սիստեմատիկ օգտագործման փորձ), ՏՀԳ, 1965/3, 57-72:
32. Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը, Երևան, 1965. – 192 էջ (ՀՍՍՌ ԳԱ պատմ. ին-տ):

1966

33. Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966. – 258 էջ (ՀՍՍՌ ԳԱ պատմ. ին-տ):
34. Տիգրան Բ-ի տերությունը, ՊԲՀ, 1966/1, 93-112:
35. Обожествление и культ царей и царских предков в древней Армении, ВДИ, 1966/2, 3-26.

1967

36. Սովետահայ պատմագրության նվաճումները, ՊԲՀ, 1967/2-3, 47-72 (հեղինակակից՝ Լ.Հ.Բաբայան):
37. Տիգրան Բ-ի և Արտավազդ Բ-ի գահատարիների քանակն ըստ Խորենացու, ԼՀԳ, 1967/12, 66-72:
38. Изучение истории древней Армении в армянской советской историографии, ВДИ, 1967/2, 201-212.
39. О двух значениях термина "дастакерт" в ранних армянских источниках, Эллинистический Ближний Восток, Византия и Иран, Москва, 1967, 97-101.

1968

40. Խորենացու «Պատմության» ժամանակագրական համակարգի վերականգնման մասին, ՊԲՀ, 1968/1, 119-146:

41. Խմբ.: Տեր-Մինասյան Ե.Գ., Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից (խմբ.՝ Գ.Խ.Սարգսյան): Մատենադարան, Երևան, 1968. – 239 էջ:
42. Les deux significations du terme dastakert dans les anciènnes sources arméniennes, REA NS, 1968, T. 5, 43-50.
43. On the problem of the cults of the Hellenistic world (The cult of the royal dynasty in ancient Armenia), Studien zur Geschichte und Philosophie des Altertums, Budapest, 1968, 283-292.

1969

44. Անտիոքոս Գ. Սելևկյանը և հայկական պետությունները, ԲԵՀ, 1969/1, 41-61:
45. Նախամեսրոպյան շրջանի պատմագրությունը, ՊԲՀ, 1969/1, 107-126:
46. Ներածություն: Ավդալբեգյան Թ., Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1969, 5-9:
47. Խմբ.: Ավդալբեգյան Թ., Հայագիտական հետազոտություններ, ՀՍՍՀ ԳԱ, Պատմ. ին-տ. (պատ. խմբ.՝ Գ.Խ.Սարգսյան), Երևան, 1969. – 490 էջ:
48. City Land in Seleucid Babylonia, Ancient Mesopotamia. Socio-economic History. A Collection of Studies by Soviet Scholars, Moscow, 1969, 312-331.

1970

49. Հիմնազուրկ տեսություններ Ուրարտուի մասին, ՊԲՀ, 1970/3, 46-64:
50. Քսենոփոնի կյանքը և ստեղծագործությունը. «Անաբասիս», Քսենոփոն. Անաբասիս, Երևան, 1970, 201-220:
51. Խմբ.: Կրկյաշարյան Ս.Մ., Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ (պատ. խմբ.՝ Գ.Խ.Սարգսյան), Երևան, 1970. – 215 էջ:
52. Խմբ.: Քսենոփոն. Անաբասիս (պատ. խմբ.՝ Գ.Խ.Սարգսյան), Երևան, 1970. – 283 էջ:

1971

53. Հայ ժողովրդի պատմություն [ութ հատորով], ՀՍՍՀ ԳԱ պատմ. ին-տ: Հ. 1. Հայաստանը նախնադարյան-համայնական և ստրկատիրական կարգերի ժամանակաշրջանում (հատորի խմբ.՝ Ս.Տ.Երեմյան [պատ. խմբ.], Գ.Խ.Սարգսյան [պատ. խմբ. տեղակալ] և ուրիշ.), Երևան, 1971. – 991 էջ:
54. Բովանդ.-ից: Հելլենիզմը Արևելքում: Հայաստանի միավորումը և հզորացումը Արտաշես Ա-ի օրոք: Հայկական աշխարհակալ տերությունը: Տիգրան Բ: Հայ-հռոմեական պատերազմը: Հայաստանը

Արտավազդ Բ-ի և նրա հաջորդների ժամանակաշրջանում: Հայաստանի սոցիալ-տնտեսական կարգը հելլենիստական դարաշրջանում: Հայաստանի պետական կարգը հելլենիստական դարաշրջանում: (Կենտրոնական իշխանությունը: Պետական կառուցվածքի տարրեր): Հելլենիստական թատրոնը Հայաստանում, 489-689, 915-918:

55. Դարձյալ Մովսես Խորենացու ժամանակագրական համակարգի մասին, ՊԲՀ, 1971/1, 156-158:

56. Խմբ.: Տեր-Մինասյան Ե.Գ., Պատմա-բանասիրական հետազոտություններ (խմբ.՝ Գ.Խ.Սարգսյան), Երևան, 1971. – 485 էջ (ՀՍՍՀ ԳԱ լեզվի ին-տ):

1972

57. Հայ ժողովրդի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Գ.Խ.Սարգսյան, Թ.Խ.Հակոբյան, Ա.Գ.Աբրահամյան և ուրիշ. (խմբ.՝ Մ.Գ.Ներսիսյանի), Երևան, 1971. – 595 էջ:

58. Բովանդ.-ից: Հայկական լեռնաշխարհի հնագույն ցեղերը, ժողովուրդները և պետությունները: Հայ ժողովրդի ծագումն ու կազմավորումը: Հին հայկական պետությունը: Հայաստանը, Հռոմը և պարթևները: Հին Հայաստանի մշակույթը: Ֆեոդալական հասարակարգի հաստատումը և հին հայկական պետության անկումը, 7–164:

59. Ֆեոդալական հասարակարգի հաստատումը Հայաստանում և հին հայկական պետության անկումը, ՊԲՀ, 1972/2, 219-236:

60. Խմբ.: Ադոնց Ն., Հայաստանի պատմություն: Ակունքները. X-IV դդ. մ.թ.ա. (խմբ. և վերջաբանը՝ Գ.Խ.Սարգսյանի), Երևան, 1972. – 430 էջ:

1973

61. Մովսես Խորենացին և նրա «Հայոց պատմությունը», ՊԲՀ 2, 43-60.

62. Новые данные о городской земле в Селевкидской Вавилонии, Древний Восток. Города и торговля (III-I тыс. до н.э.), Ереван, 1973, 185-193.

63. Ред.: Древний Восток. Города и торговля (III-I тыс. до н.э.)(Отв. ред. Г.Х.Саркисян), Ереван, 1973. - 243 с.

1974

64. Greek Personal Names in Uruk and the Graeco-Babyloniaca Problem, Acta Antiqua Acad. Scient. Hungaricae, 1974, T. 22, Fasc. 1-4, 495-503.

1975

65. New Cuneiform Texts from Uruk of the Seleucid Period in the Staatliche Museen zu Berlin, Staatliche Museen zu Berlin. Forschungen und Berichte. Archälogische Beiträge, 1975, Bd. 16, 15-75.

1976

66. Թադևոս Ավդալբեգյանի հայագիտական ուսումնասիրությունները: (Ծննդյան 90-ամյակի առթիվ), ՊԲՀ, 1976/2, 49-56:
67. Մովսես Խորենացի, Հայ մշակույթի նշանավոր գործիչները. V-XVIII դարեր, Երևան, 1976, 70-86:
68. Греческая ономастика в Уруке и проблема Graeco-Babyloniaca, ДВ 2, 1976, 181-217.
69. Игорь Михайлович Дьяконов (к шестидесятилетию со дня рождения), ДВ 2, 1976, 265-282.
70. Черты эллинизма в духовной культуре древней Армении, Доклад, прочитанный на XIV Междунар. конфер. ученых-античников соц. стран "Эйрене" (Ереван, 18-23 мая 1976г.), ИФЖ, 1976/3, 51–62.
71. Черты эллинизма в духовной культуре Древней Армении. Довольствия в городе поздней Вавилонии – аналог полисных раздач. Тезисы докладов XIV Междунар. конфер. античников соц. стран, Ереван, 1976, 382-385.

1977

72. Проблемы истории Древнего Востока и древней Армении в советской армянской историографии (1967-1977гг.). ВДИ, 1977/4, 121-136.
73. Bruchstücke von seleukidischen Wirtschaftstexten aus Uruk in den Staatlichen Museen zu Berlin, AoF, 1977/5, 81-86.

1978

74. Սուրեն Երեմյան: [Ծննդյան 70-ամյակի առթիվ], ՊԲՀ, 1978/2, 252-256:
75. Довольствие–išqu в городе поздней Вавилонии – аналог полисных раздач (Постановка вопроса), ДВ 3 1978, 88-92.
76. К предыстории армянской письменности: (Доклад) на II Междунар. симпозиуме по арм. искусству, Ереван, 1978. – 10 с. (Ин-т искусств АН АрмССР).
77. То же на франц. яз.: De la préhistoire de l'écriture arméniènne, Erevan, 1978. – 11 p.

1979

78. Խմբ.՝ Էլչիբեկյան Ժ.Գ. Հայաստանը և Սելևկյանները (պատ. խմբ.՝ Գ.Խ.Սարգսյան), Երևան, 1979. – 127 էջ:

79. Институт востоковедения АН Армянской ССР, Народы Азии и Африки, 1979/6, 135-143.

80. Моисей Хоренский и Давид Непобедимый. (Опыт установления источниковедческой связи), Кавказ и Византия 1, 1979, 67-72.

81. Черты эллинизма в духовной культуре древней Армении, Проблемы античной истории и культуры. Докл. на XIV Междунар. конфер. античников соц. стран "Эйрене", Ереван, 1979, 18-24.

82. Ред.: Проблемы античной истории и культуры. (Докл. на XIV Междунар. конфер. античников соц. стран "Эйрене", АН СССР. АН АрмССР. Отделение истории и экономики. Ред. кол.: Б.Б.Пиотровский (отв. ред.), Е.С.Голубцова, Г.Х.Саркисян и др, Ереван, 1979. – 507 с.

1980

83. История армянского народа: С древнейших времен до наших дней, Г.Х.Саркисян, Т.Х.Акопян, А.Г.Абрамян и др. (под ред. М.Г.Нерсисяна), Ереван, 1980. – 458 с.

84. Из содерж.: гл. 1. Древнейшие племена, народности и государства Армянского нагорья. § 2. Каменный и бронзовый века на территории Армянского нагорья. § 3. Древнейшие этнические образования на территории Армянского нагорья и сопредельных стран. § 4. Государство Урарту. Гл. 2. Образование армянского народа и древнеармянского государства. Гл. 3. Армения, Рим и парфяне. Гл. 4. Общественно-политический строй и культура древней Армении. Гл. 5. Установление феодального общественного строя и падение древнеармянского государства, 11-100.

85. К вопросу о характере и периодизации материальной культуры Армении эллинистического периода, Всесоюзн. симпозиум по проблемам эллинистической культуры на Востоке. Тезисы докладов, Ереван, 1980, 74-75.

86. К предыстории армянской письменности (Доклад, прочитанный на II Междунар. симпозиуме по арм. искусству), Кавказ и Византия 2, 1980, 15-20.

1981

87. Հայ ժողովրդի պատմություն: Հ. 1. Հնագույն ժամանակներից մինչև 18-րդ դարի վերջը: Հատորը գրել են Գ.Խ.Սարգսյանը, Մ.Գ.Ներսիսյանը, Ս.Տ.Երեմյանը և ուրիշ. – Թեհրան, 1981. – 312 էջ (Երևանի պետ. Համալս.) (պարսկ. լեզվով):

88. Խմբ.: Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա: Հ. 1. Հնագույն ժամանակներից մինչև IX դարի կեսերը (կազմողներ՝ Պ.Հ.Հովհաննիսյան, Ա.Գ.Աբրահամյան: Խմբ.՝ Գ.Խ.Սարգսյան, Լ.Ա.Խուրշուդյան), Երևան, 1981. – 944 էջ:
89. О провинциях и провинциальных канцеляриях в древней Армении, Древний Восток и мировая культура, Москва, 1981, 98-102.

1982

90. Հելլենիստական մշակույթը և Հայաստանը, Հանրապետ. հինգերորդ գիտ. կոնֆերանս՝ նվիրված Հայաստանի մշակույթի և արվեստի պրոբլեմներին: Զեկուցումների թեզեր (Երևանի պետ. համալս., ՀՍՍՀ ԳԱ արվեստի ին-տ), Երևան, 1982, 182-184:
91. Նույնը ռուս.: Эллинистическая культура и Армения, V респ. науч. конф. по проблемам культуры и искусства Армении. Тезисы докл., Ереван, 1982, 392-392.
92. Мовсес Хоренаци, Видные деятели армянской культуры (V-XVIII века), Ереван, 1982, 56-67.
93. Ред.: Видные деятели армянской культуры (V-XVIII вв.). (Сборник), Ерев. гос. ун-т. Центр арменовед. исслед. (ред. и авт. предисл. Г.Х.Саркисян), Ереван, 1982. – 475 с.
94. Die Sklaven im Uruk der hellenistischen Zeit, AfO Bejheft 19, 1982, 138-143.
95. Zum Problem des Herrschertitels in Uruk der Seleukidenzeit, Societies and Languages of the Ancient Near East, London, 1982, 333-335.

1983

96. Խմբ.: Մուրադյան Կ.Մ., Գրիգոր Նազիանզացին հայ մատենագրության մեջ (պատ. խմբ.՝ Գ.Խ.Սարգսյան), Երևան, 1983. – 263 էջ:
97. Греческая ономастика в Уруке и проблема Graeco-Babyloniaca, ДВ 2, 1983, 181-217.
98. Рец.: Новосельцев А.П., Генезис феодализма в странах Закавказья. (Опыт сравнительно-исторического исследования), Москва, 1980. – 286с. (1983/1, 128-132).
99. Вавилонская гиря в XVI в. до н.э. с клинописной надписью из раскопок Мецамора, ДВ 4, 1983, 113-122 (соавт.: И.М.Дьяконов, Э.В.Ханзадян).
100. Von der Tempelsklaverei im hellenistischen Babylonien, Iraq 45/1, 1983, 131-135.

1984

101. Գիտական, գիտակազմակերպական և մանկավարժական գործու-

նեության համառոտ ակնարկ, Բաբկեն Նիկոլայի Առաքելյան [Կենսամատենագիտություն], Երևան, 1984, 9-20 (հեղինակակից՝ Գ.Ա.Տիրացյան):

102. Նույնը՝ ռուս.: Краткий очерк жизни, научной, научно-организационной и педагогической деятельности, Бабкен Николаевич Аракелян [Биобиблиография], Ереван, 1984, 21-30 (соавт.: Г.А.Тирацян).

103. Կյանքի, գիտական, մանկավարժական, գիտակազմակերպական և հասարակական գործունեության համառոտ ակնարկ, Սուրեն Տիգրանի Երեմյան [Կենսամատենագիտություն], Երևան, 1984, 13-27 (հեղ-կից՝ Վ.Բ.Բարխուդարյան):

104. Նույնը՝ ռուս.: Краткий очерк жизни, научной, педагогической, научно-организационной и общественной деятельности. Сурен Тигранович Еремян (Биобиблиография), Ереван, 1984, 28-42 (соавт.: В.Б.Бархударян).

105. Востоковедение, Достижения науки в Советской Армении (1920-1980), АН АрмССР. Совет по истории естествозн. и техники, Ереван, 1984, 258-264.

106. [Рецензия]: Народы Азии и Африки, 1984/5, 158-166. Рец.: История древнего мира, Кн. 1-3 (под ред. И.М.Дьяконова и др.), Москва, 1982.

107. Список парфянских Аршакидов в раннесредневековой армянской историографии, Кавказ и Византия 4, 1984, 130-141.

108. Эллинизм в Вавилонии и в Армении (опыт типологического сопоставления), Второй Всесоюзный симпозиум по проблемам эллинистической культуры на Востоке. Тезисы докладов, Ереван, 1984, 60-62.

1986

109. Պատմահայր Հերոդոտոսը, Հերոդոտոս. Պատմություն ինը գրքից, Երևան, 1986, 553-578:

110. Խմբ.: Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից (թարգմ.՝ Կրկյաշարյան, պատ. խմբ.՝ Գ.Խ.Սարգսյան), Երևան, 1986. – 651 էջ:

111. "История Армении" Мовсеса Хоренаци, Ереван, 1986. – 55 с.

1987

112. Նիկողայոս Ադոնցի գլուխգործոցը, Ադոնց Ն., Հայաստանյ Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, 550-565:

1988

113. Ուրարտական տերությունը և հայերը (Հայ ժողովրդի կազմավորման խնդրի շուրջը: Մի հավելում), Ուրարտու-Հայաստան, Երևան, 1988, 47-126, 169:

114. Манумиссии в селевкидско-аршакидском Уруке, ДВ 5, 41-56.
115. Некоторые особенности клинописной передачи греческих имен, Третий Всесоюз. симпозиум по проблемам эллинистической культуры на Востоке. Тезисы докладов, Ереван, 1988, с. 78.
116. Царица Эрато, Кавказ и Византия 6,1988, 14-23.
117. Eine Urkunde über "Deputat" Vergabe aus dem hellenistischen Uruk, AoF 15/2, 1988, 264-268 (Mitaut. J.Oelsner).

1989

118. Խմբ.: Կուն Ն.Ա., Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները (թարգմ.՝ Լ.Հախվերդյան, խմբ.՝ Գ.Սարգսյան), Երևան, 1989. – 641 էջ:

1990

119. Հայոց գրական լեզվի նախնական փուլերը պատմաբանի հայացքով, ՊԲՀ, 1990/4, 22-30:
120. Հուժկու անհատականություն (Մանուկ Աբեղյանի ծննդյան 125-ամյակի առթիվ), Գրակ. թերթ, 1990, 30 մարտի:
121. Նախահայրենիքի, ժողովրդի կազմավորման և Ուրարտուի մասին, ՊԲՀ, 1990/1, 23-40:
122. К предыстории армянской письменности. Доклад, прочит. на II Междунар. симпозиуме по арм. искусству, Кавказ и Византия 2, 1990, 15-20.
123. Мовсес Хоренаци. История Армении (пер. с древнеарм. яз., введение и примеч. Г.Саркисяна; ред. С.Аревшатян), Ереван, 1990. – 291 с.

1991

124. Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», Երևան, 1991. – 88 էջ:
125. "История Армении" Мовсеса Хоренаци, Ереван, 1991. – 87 с.
126. "The History of Armenia" by Movses Khorenatzi, Erevan, 1991. – 123 p.
127. Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 1991, 4 հոկտ.:
128. "История Армении" Мовсеса Хоренаци, Республика Армения, 1991, 4 окт.
129. Խմբ.: Սարգսյան Ա. Բ., Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմությունը» և Մովսես Խորենացին (պատ. խմբ.՝ Գ.Խ.Սարգսյան), Երևան, 1991. – 329 էջ:
130. Свидетельство поздневавилонской клинописной хроники об Армении времени Тиграна II, ИФЖ, 1991/2, 45-54.

131. L'histoire d'Arménie de Moise de Khorène et L'Ourartou, Colloque Moise de Khorène et l'historiographie armenienne des origines [Paris, 1991, P. 1].

1992

132. Հայաստանի հարակից երկրների պատմություն: Ձեռնարկ միջն. դպրոցի 7-րդ դասար.համար (հեղ. կոլեկտիվ), Երևան, 1992. – 239 էջ:

133. Բովանդ.-ից: Գլուխ առաջին. Հին Միջագետք, էջ 8-24: Գլուխ երկրորդ. Փոքրասիական երկրներ. 3. 2. Իրան. – 34-44:

134. Մեր օրերի իմ ընկալումները, Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 1992, 14, 15 օգոստ.:

135. Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» և սեպագրական աղբյուրները (Հայկի և Հայկյանների առասպելի պատմականության և զարգացման փուլերի խնդիրները), ՊԲՀ, 1992/2-3, 27-50:

136. Babylonian Variant of Hellenism, Proceedings of the XXXII International Congress for Asian and North African Studies, Hamburg – Stuttgart, 1992, 460-461.

137. Moses Khorenatsi's "History of Armenia" as a System, Proceedings of the Fourth International Conference on Armenian Linguistics, Cleveland, 1991, New York, 1992, 213-222.

1993

138. Հայոց պատմություն (Դասագիրք հանրակրթ. դպրոցի 5-6-րդ դասար. համար), Երևան, 1993. – 320 էջ (հեղ-կիցներ Վ.Բ.Բարխուդարյան, Հ.Գ.Մարգարյան, Պ.Ա.Զոբանյան):

139. Բովանդ.-ից: Նախնադարյան հասարակությունը Հայկական լեռնաշխարհում: Հայ ժողովրդի ծագումը և կազմավորման սկիզբը: Վանի թագավորությունը (Ուրարտու): Համահայկական պետությունը: Մեծ Հայքի պետության վերելքը: Հայաստանը հզոր աշխարհակալ պետություն: Տիգրան 2-րդ Մեծ: Հայաստանը Հռոմի և Պարթևների միջև: Հայաստանը 1-3-րդ դարերում: Հին Հայաստանի տնտեսական կյանքը և պետական կարգը: Հին Հայաստանի մշակույթը: Ավատատիրությունը Հայաստանում և քրիստոնեության ընդունումը: Պայքար անկախության պահպանման համար: Վաղ միջնադարյան Հայաստանի մշակույթը, 9-125, 160-177:

140. Les phases préliminaries de la langue littéraire arménienne vues par un historien, Armenia and the Bible. Papers Presented to the International Symposium Held at Heidelberg. July 16-19, 1990 (Edit. By Christoph Burchard), Atlanta, 1993, 195-206.

1994

141. Հայագիտություն. հարցեր և հարցադրումներ: (Զեկուցում՝ ընթերցված 1994թ. նոյեմբ. 23-ին ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտ. բաժանմունքի ընդլայնված նիստում), Նպատակ, 1994, 29 դեկտ.:

142. Eine Ergänzung zur Rekonstruktion der Artasesidendynastie Armeniens nach dem Seleukidischen astronomischen Tagebuch BM 34791, AMI 27, 1994, 237-240.

1995

143. Ինքնորոշում և կողմնորոշում. Մեծ Հայքի վերելքի շրջան, Ինքնություն (Հումանիտար հետազոտությունների հայկական կենտրոն), 1, Երևան, 1995, 89-100:

144. Das Land Ararat. Umrisse einer Frühgeschichte, Armeniens. Wiederentdeckung einer alten Kulturlandschaft, Bochum, 1995.

1996

145. Հայոց պատմություն (Դասագիրք հանրակրթական դպրոցի 5-6-րդ դասարանների համար), 2-րդ վերամշակ. հրատ., Երևան, 1996. – 287 էջ (հեղ-կից.՝ Հ.Մարգարյան, Վ.Բարխուդարյան, Պ.Զոբանյան):

146. Մովսես Խորենացու նախարարական տոհմերի ցանկը, ՊԲՀ, 1996/1, 73-90:

147. Խմբ.: Ղլեչյան Վ.Բ., Նոր պատմություն (17-րդ դարի երկրորդ կես – 1918թ.) (Դասագիրք միջն. դպրոցի 9-րդ դասար. համար) (խմբ.՝ Գ.Խ. Սարգսյան, Մ.Զուլալյան), Երևան, 1996. – 399 էջ:

148. Խմբ.: Մուրադյան Պ., Սուրբ Շուշանիկի վկայաբանությունը: Բնագիր և հետազոտություն, – Երևան, 1996. – 218 էջ:

1997

149. Մովսես Խորենացու Ողբը նոր մեկնաբանությամբ, ՊԲՀ, 1997/1, 119-130:

150. Բ.Ն.Առաքելյան: (Ծննդյան 85-ամյակի առթիվ), ՊԲՀ, 1997/1, 224-226 (հեղ-կից.՝ Ա.Ա.Քալանթարյան):

151. Hellenismus in Babylonien, AoF, 1997/24.2, 224-232.

1998

152. Հատուկ անունների ստուգաբանությունը Մովսես Խորենացու Պատմության մեջ, ՊԲՀ, 1998/1-2, 113-128, 1998/3, էջ 85-99:

153. Հայերի ծագումը. պատմագիտության պատմություն և պատմագիտական շահարկումների, Գիտություն, 1998, 2-15 նոյեմբերի:

154. Потомки Хайка. Очерк истории и культуры Армении с древнейших времен до становления Третьей республики, Ереван, 1998. – 326с. (соавторы К.Худавердян, К Юзбашян).

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Պ.գ.թ. Բոբոխյան Արսեն
(ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ)

ԽՈՐԵՆԱՑՈՒ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՂԱՏԻ ՍՐԲԱԶԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՄԱՍԻՆ ԵՎ ՎԻՇԱՊԱՔԱՐԵՐԻ ԽՆԴԻՐԸ

«Ս. Լուսավորիչը նորադարձ հայերին վարդապետելիս, ըստ Ագաթանգեղոսի պատմության, նրանց հայրերին կոչում էր քարապաշտ, կարծում ենք թե՛ վերոհիշյալ պաշտամունքի և թե՛ քարերից շինված պատկերների կամ կուռքերի պատճառով [նկատի ունի Պաղատը, Բութը, Դարբնաց քարը - Ա.Բ.]: Նորից վերհիշենք Վանի ոլորտը, որ Հայոց երկրի դիցաբանական գլխավոր կենտրոններից մեկն է: Այն ևս ունի նույնպիսի քարեր, ինչպես Ակոռին և այլն: Ըստ հին ավանդության՝ Շամիրամը դրանց մոտերքում գործեց իր զարմանալիքը և դրանց մոտերքում սպանվեց: Եվ ինչ եղավ նրա մահից հետո, հիշել է մեր Պատմահայրը (Խորենացին)՝ ասելով (թե կուզես հավատալ). «Եւ Շամիրամ՝ Քար առաջին քան զՆիոբէ»:

Ղևոնդ Ալիշան[1]

«Ասկեց քանի մը տարի առաջ ո՞վ կարող էր երևակայել, որ ամենեն շատ քննադատված Մովսես Խորենացիի Վիշապազուններու և Վիշապներու պալատի առասպելը իրականության փոխվեր: Բայց Խորենացիի առաջին հաղթանակը չէ ասիկա, ուրիշ շատ հաղթանակներ ալ տարավ. վերջերս Գառնիի լեռանց անմատչելի բարձունքներուն վրա մինչև 7 կանգուն բարձրությամբ բազմաթիվ կոփածո վիշապներու գյուտը ավելի ևս խոնարհեցնելու կոչած է պատմահոր քննադատները»:

Թորոս Թորամանյան[2]

---

[1] Ալիշան 2002: 28 (առաջին հրատ.՝ 1895թ.): Ըստ վիշապաքարերի առաջին հայտնագործողներից Ատրպետի՝ Ս.Գրիգոր Լուսավորչի կողմից հայերին «քարապաշտ» կոչելը կապված է նրանց երկրպագած վիշապ կոթողների հետ (Ատրպետ 1927: թ.1), որոնք կործանվել են քրիստոնեական դարձի ընթացքում (Ատրպետ 1934: թ. 4):

[2] Թորամանյան 1942: 57: Խորենացուն վիշապաքարերի համատեքստում այդպես է արժևորում նաև Ն. Մառը (Марр 1936: 68), ի տարբերություն գերքննադատներ Գ. Խալաթյանցի (Халатянц 1896) կամ Ա. Կարիերի (Կարիէր 1899): Ավելի ծայրահեղական է Ատրպետի բնորոշումը. Գառնիի լճակների վիշապ արձանների մասին խոսելիս նա շեշտում է, որ դրանք «անձայն կերպով մեզ ավելի ընդարձակ տեղեկություններ են տալիս վիշապազանց մասին, քան թե Փավստոս Բուզանդացին, Ղազար Փարպեցին և Մովսես

Ավելի քան մեկուկես հազարամյակ է անցել Խորենացու ժամանակներից, սակայն մինչ օրս չեն դադարում անդրադարձները նրա կատարած գործի վերաբերյալ: Հայոց պատմության այն ենթաշերտերը, որոնք վեր է հանել Պատմահայրը, այնքան խորն են, որ այսօր էլ, արդի գիտության զարգացման պայմաններում, դժվար է լիովին ներթափանցել դրանց մեջ: Այս իմաստով բնական է, որ Խորենացին մշտապես եղել է այնպիսի մի գիտնականի հետազոտությունների կիզակետում, ինչպիսին ակադեմիկոս Գագիկ Սարգսյանն է. դրանցում մեծանուն հայ պատմաբանը փորձել է մեկնել խորենացիական տեղեկությունների հավանականությունը՝ այդ թվում նաև հին հայկական կրոնի և սրբավայրերի համատեքստում[1]:

Խորենացու հայտնած տեղեկությունների հիշյալ խորը շերտագրության տեսանկյունից նշելի է, որ դրանք կարող են նպաստել նաև հնագիտական խնդիրների լուսաբանմանը: Նման մի հարցադրման է նվիրված այս հոդվածը, որը նպատակ ունի անդրադառնալու Հայկական լեռնաշխարհի հնագույն մշակույթի ամենանշանավոր երևույթներից մեկի, մասնավորապես վիշապաքարերի խնդրին Վանա լճի հարավարևելյան շրջաններին վերաբերող խորենացիական մի վկայության համատեքստում (նկ. I, II)[2]:

«Վիշապաքար» երևույթը

Վիշապաքարերը Հայկական լեռնաշխարհի հիմնականում բարձրլեռնային (ծ.մ. մոտ 2400-3200 մ վրա), ավելի քիչ՝ նախալեռնային (ծ.մ. մոտ 1400-2400 մ վրա) գոտիներում ի հայտ եկող կոթողային հուշարձաններ են, որոնք խաչքարերի նման հանդիպում են միայն Հայկական լեռնաշխարհում: Դրանց տարածման հիմնական շրջաններն են Արագածի, Գեղամա, Ջավախքի, Թռեղքի և Տայքի լեռները. վերջերս այդ քարակոթողները ի հայտ են գալիս նաև Վանա լճի շրջակայքում: Վիշապաքարը բրոնզ-երկաթեդարյան երևույթ է. առկա տվյալների համաձայն, սկզբնավորվելով Ք.ա. III հազար վերջին, դրանք գոյություն են ունեցել մինչ Ք.ա. I հազար սկզբները: Այսօր հայտնի են այս հուշարձանի մոտ 150 օրինակներ:

Խորենացին, որոնք ոչինչ չեն պարզում վիշապազանց շրջանի մասին» (Ատրպետ 1924: 138. Խորենացի-վիշապաքար համատեքստում այլ անդրադարձների համար հմմտ. Ատրպետ 1912բ: 13-14; 1929: 60):

[1] Հմմտ. օրինակ՝ Սարգսյան 1966: 23-78:

[2] Նկար I, II-ը բերված են ըստ՝ Outtier, Thierry 1990, fig. 2, 4, 14-16, նկար III-ը մերն է:

Վիշապաքարերն ունեն մոտ 150-550 սմ բարձրություն, պատրաստված են բազալտից և ըստ պատկերագրության՝ բաժանվում են երեք տիպի՝ 1. ցլակերպ, 2. ձկնակերպ և 3. ձկնացլակերպ (հմմտ. նկ. II/ 1[1]): Վիշապաքարերի երեք տիպերն էլ մշակված և քանդակված են բոլոր կողմերից, բացի «պոչից», ինչը վկայում է այն մասին, որ դրանք նախապես կանգնած են եղել: Նոր հետազոտությունները ցույց են տալիս, որ վիշապաքարերը գրեթե միշտ առնչվում են միջին չափսի կլորավուն քարաշարերին՝ կրոմլեխներին և դրանց անմիջական միջավայրին, որը կարող է բաղկացած լինել այլ կրոմլեխներից, ժայռապատկերներից, «հսկայի տներ» (աշտարակաձև կառույցներ) հիշեցնող շինություններից, արհեստական քարակույտերից, ջրանցքներից: Որպես սրբավայրերի առանցքային կետերում գտնվող հուշարձաններ՝ վիշապաքարերը կրում են էական իմաստային ծանրաբեռնվածություն՝ վերարտադրելով հնագույն մի հասարակության հիշողության դաշտը:

Վիշապաքարային բարձրադիր ծիսական միջավայրի նորահայտ ամենակարևոր հուշարձանը Տիրինկատարն է՝ Արագածի լեռնազանգվածի հարավային լանջին՝ ծովի մակարդակից մոտ 3000 մ բարձրության վրա, որտեղ փաստագրվել են տաս վիշապաքարեր, ինչն այդ հուշարձանների մինչ այժմ հայտնի ամենամեծ կուտակումն է: Վերջին շրջանի պեղումներն այստեղ ցույց են տալիս նման սրբավայրի էական դերը բրոնզ-երկաթեդարյան Հայաստանի պատմամշակութային զարգացումներում[2]:

Խորենացու վկայությունը

Երբ խոսքը վիշապների մասին է խորենացիական համատեքստում, առաջին հերթին մեր առջև են գալիս «Հայոց պատմության» վիպասաններից գրանցված այն հատվածները, որոնք վերաբերում են՝ 1. Վիշապաքաղ Վահագնին, ով կռվում է վիշապների դեմ և հաղթում նրանց և 2. Աժդահակին (նույն իրեն՝ վիշապին) ու նրա սերունդներին (վիշապազուններին), որոնք հիշվում են Տիգրանի, Արտաշեսի, Սաթենիկի, Արտա-

---

[1] Պատկերված են *Ահմադի Օբա 1*, *Դիքթաշ 1* և *Աժդահա Յուրտ 5* վիշապաքարերը (մանրամասների համար տե՛ս Բոբոխյան և այլք 2015):

[2] Վիշապաքարերը հայտնաբերվել են XIX-XX դդ. սահմանին և հետազոտվել Ատրպետի, Ն.Մառի, Յ.Սմիռնովի, Ա.Քալանթարի, Բ. Պիոտրովսկու, Մ.Աբեղյանի, Գ.Ղափանցյանի և այլոց կողմից (Ատրպետ 1929; Марр, Смирнов 1931; Քալանթար 1933; 1937; Пиотровский 1939; Աբեղյան 1941; Капанцян 1952; Բարսեղյան 1967; Խանզադյան 1969): Նորագույն հետազոտությունների համար հմմտ. Gilibert et al. 2012; Բոբոխյան և այլք 2015:

վազդի կապակցությամբ (Տիգրանի՝ Աժդահակին սպանելը և նրա տունն ու կին Անուշին՝ վիշապների մորը, գերի տանելը, Արգավանի՝ Արտաշեսի դեմ դավ լարելը վիշապների տաճարում, Սաթենիկի սիրահարությունը Մասիսի ստորոտը գրաված վիշապազուններին, վիշապազունների կանանց՝ մանուկ Արտավազդին կախարդելը և նրան գողանալը ու նրա տեղը դև դնելը, Արտաշեսի կռիվը վիշապազունների դեմ և նրանց ոչնչացնելը) (I: Լ, ԼԱ, II: ԽԹ, ԿԱ): Այս պատմություններն արտահայտում են վիշապամարտության տարբեր դրվագներ, որոնց մասին բավականին խոսվել է համապատասխան գրականության մեջ, այդ թվում նաև վիշապաքարերի համատեքստում[1]: Սակայն մեզ հետաքրքրող վկայությունը մեկ այլ աղբյուրից է, ոչ «Հայոց պատմությունից» և քիչ այլ ենթատեքստ ունի:

Խոսքը Պատմահոր «Պատմութիւն Սրբոց Հռիփսիմեանց» վարքագրական երկասիրության մասին է, որում առկա են մանրամասներ Հայաստանում քրիստոնեության տարածման վերաբերյալ (հիմնականում Հռիփսիմեանց կույսերի, բայց նաև Բարդուղիմեոս առաքյալի ժամանակաշրջանում): Այս երկում Խորենացին, ի թիվս այլոց, պատմում է, թե ինչպես քրիստոնյաները, անցնելով Վասպուրականի Անձևացիք գավառի (Վանա լճից հարավ-արևելք) Կանգվար (Ագռավաքար) սարի մոտով, հասնում են Պաղատ լեռան գագաթը, որտեղ գտնվում էր Արամազդի և Աստղիկի սրբավայրը («տուն Արամազդայ եւ Աստղկայ»), որտեղ հեթանոսները «Պաղատ» կոչվող պաշտամունք և տոնակատարություններ էին իրականացնում: Դեպի հարավային լանջը («ի կատար լերինն, որ ի վայր իջանէ»), հորդաբուխ ակունքների շրջանում, Բութ անվամբ վայրի շրջակայքում, կար կրակի տուն (= տաճար), ջրի աղբյուր, քարայր՝ երկու վիշապներով («եւ յայրս քարին որջացեալ կային վիշապք երկու»): Ծեսերի ժամանակ այստեղ իրականացվում էին երիտասարդ տղաների և կույս աղջիկների զոհաբերություններ: Բացի այդ, Ագռավաքարի շրջակայքում՝ Անահիտի պաշտամունքային վայրի մոտ, հիշվում է մի հատուկ քար՝ Դարբնաց քար անվամբ, որի մեջ դևեր էին բնակվում, և որին հեթանոսները հրաշքներ էին վերագրում[2]:

---

[1] Հմմտ. օր.՝ Աբեղյան 1985: 178-242; հմմտ. Աբեղյան 1941; Սարգսյան 1966: 54-55; Մնացականյան 1952; Հմայակյան 1990; Պետրոսյան 2015:

[2] Մովսես Խորենացի 1865: 294, 301-302: Քննարկվող երկի մանրամասն վերլուծության համար տե՛ս Outtier, Thierry 1990: Նախաքրիստոնեական Հայաստանի սրբավայրերի և վիշապի պաշտամունքի համատեքստում, այս տեղեկության վերլուծության մասին տե՛ս Ալիշան 2002: 27-33, 133, 144, 198; Կոստանյանց 1879: 18, 20; Գելցեր 1897: 77; Սամուելյան 1931: 326-327; Դուրեան 1933: 47; Դալալյան, անտիպ, 32; Вардумян 1991: 105, 111;

Խորենացու այս վկայությունը մեզ հետաքրքրող հարցադրման տեսանկյունից վերլուծելիս աչքի են զարնում մի քանի առանձնահատկություններ:

1. Պաղատ[1] լեռան սրբավայրը գտնվում է երկու մակարդակների վրա՝ լեռան գագաթին (Արամազդի և Աստղիկի տունը)[2] և նրա հարավային բարձրադիր լանջին՝ Բութի[3] մոտ (կրակի տունը և քարանձավը՝ երկու վիշապներով, դրանց հարակից միջավայրը՝ որպես կարևոր սրբավայրեր, հայտնի են Հայաստանում պատմական և ազգագրական տվյալներով[4]:

Parsamyan 2015: 6: Հատկապես հմմտ. Աբեղյան 1941: 41, 75 և նկ. IV (ըստ Աբեղյան 1940, թ. 80): Քննարկվող տարածքի աշխարհագրության մասին տե՛ս Սրվանձտյանց 1982: 12-19: Անձևացյաց Հոգվոց վանքի նկարը և վիշապների՝ քարանձավում ապրելու ավանդությունները բերված են՝ Դիլանյան 2012: 107, 109-111, 228:

[1] Ըստ Ղ. Ալիշանի (2002: 32) և Ն. Ադոնցի (1972: 71)՝ Խորենացու «Պաղատ» անունը պետք է կարդալ «Պաշատ»: Ալիշանը հիշատակում է լեռան ևս մեկ անուն՝ Պաշատույզ:

[2] Պաղատն արդի Բեշել (Ադոնց 1972: 71) կամ Բաշետ (Outtier, Thierry 1990: 725) դաղն է, ամենաբարձր կետը՝ 3750 մ: Այն համադրվում է ասորեստանյան արձանագրությունների Պաձատե լեռանը, որը հիշատակվում է Նիպուր (Արարադ) լեռան հետ միասին (Ադոնց 1972: 71; հմմտ. Հակոբյան և այլք 1991: 990): Պաղատ բառի հիմքում, ամենայն հավանականությամբ, *պաղ*՝ քար բառն է ընկած (Петросян 2014: 69):

[3] Բութ անվան մասին Ղ.Ալիշանը բերում է հետևյալ տվյալը: Խորենացիական «աստուածացուցեալ գոլով ի Սեաւ Քարին՝ հոսէին յակն յորդաբուղխ Աղբերն՝ որ բղխէ յոտս լերանցն, որ է յառաջ խորավիմին... Եւ զի ասէին զԿրակն Քոյր, և զԱղբիւրն՝ Եղբայր, յերկիր ոչ արկանէին զմոխիրն, այլ արտասուօք եղբօրն ջնջէին» հատվածը Ալիշանը համարում է գեղեցիկ զրույց, որ գուցե կրակապաշտ քուրմի վիպասանական երգի հիշատակ է «որպիսին կարող էր լինել պաշտամունքավայրի քրմապետը՝ Բութը, ում անվամբ էլ, ըստ պատմության, կոչվում էր լեռը»: Այսպես է գրված Տիրամոր պատկերի պատմության մի ընտիր օրինակում, որ Ալիշանի տպագրածից (1865թ.) ավելի ճոխաբան է. «Որ տեղին Բութ լսի. քանզի անուն քրմապետին Բութ կարդայր» (Ալիշան 2002: 31. հմմտ. նաև Տաղավարեան 1909: 13): Բագարանի VII դ. եկեղեցու արձանագրության մեջ հիշվող Բուտ անվան մասին տե՛ս Марр 1893:

[4] Հարությունյան 2000: 36: 200: Թ.Թորամանյանը Հայաստանի նախաքրիստոնեական սրբավայրերի մասին խոսելիս հնարավոր է համարում, որ մեր նախնիները որպես բնապաշտներ պաշտամունքային հիմնական արարողու-

Հնագիտական հետազոտությունները (մասնավորապես վիշապաքարերի համատեքստում) ևս ցույց են տալիս, որ համապատասխան սրբավայրերը գտնվել են լեռների բարձունքներին (բնակավայրերից դուրս) և լանջերին (բնակավայրերի միջավայրում)[1], ճիշտ այնպես, ինչպես նկարագրում է Խորենացին Պաղատի պարագայում: Խոսքը սրբազան տարածքի մոդելավորման մասին է տարբեր մակարդակների վրա և տարբեր տիպի բնական (աղբյուր, քար, բլուր,) (նկ. I, II): Լեռների գագաթները և քարանձավ[2]) և մարդակերտ (արձան, տաճար) ենթասրբավայրերով, ինչը, բացի Պաղատից, գրեթե նույնությամբ հայտնի է Հայաստանի այլ շրջաններում ևս (հմմտ. Արտամետ/Սուկավետը[3], Գեղաման[4], Տիրինկատարը[1]):

թյունները կատարել են բացօթյա՝ սրբազան համարված վայրերի վրա, որպիսիք են նախ և առաջ լեռնային բարձունքները (Թորամանյան 1942: 86):

[1] Բոբոխյան և այլք 2015: 276:

[2] Հայ իրականության մեջ քարանձավների կարևորության մասին հմմտ. Շահինյան 2005:

[3] Խոսելով Արտաշես արքայի՝ Արտամետ քաղաքի հիմնադրման մասին՝ Թովմա Արծրունին գրում է, որ վերջինս օգտագործում է «վերևում» ցայտող աղբյուրը և ջրի պահպանության համար ամուր պարսպում քարաբլուրը: Իսկ գոգաձև մի հովտում կառուցում է բարձրաբերձ աշտարակ և նրա վրա կանգնեցնում Աստղիկի պատկերը: Այստեղ լեռան գագաթի հարավակողմում գտնում է աղբյուր, որից ջրմուղ անցկացնելով՝ բերում հասցնում է հովիտը: Ապա դաշտավայրի արևմտյան կողմում և ծովեզերքին ստեղծում է պարսպապատ ու գոգավոր տարածություն, այն լրացնում ծառաշատ ու վայելչատես այգիներով: Սրանից հետո հիշում է «Սուկավետ լեռան վրայի սրբերը», մասնավորապես Քոյոա սրբի պաշտամունքը, և որ Արտաշեսի կին Սաթենիկը, ով, ինչպես տեսանք Խորենացու մոտ առնչվում է վիշապներին, «չհրաժարվեց Աստղիկի պատկեր անվանված կուռքերից» (Թովմա Արծրունի I. Ը; այս հատվածի քննարկումն առասպելաբանական համատեքստում հմմտ. Դուրեան 1933: 47; Հմայակյան 2012; Սիմոնյան 2013): Արծրունու նկարագրված լանդշաֆտը (աղբյուրներ, գոգավոր հովիտներ, լիճ) և նրա պրակտիկ (ջրամատակարարում) և ծիսական (աշտարակ, Աստղիկի պատկերով կուռք, սրբեր) օգտագործման ձևը հիշեցնում են վիշապաքարային միջավայրերը. այս իմաստով «Աստղիկի պատկեր անվանված կուռքեր»-ը հիշեցնում են վիշապ քարակոթողները:

[4] Խոսքն առաջին հերթին Գեղարդի մասին է: Այսպես, Թ. Թորամանյանը շեշտում է, որ «Այրի վանքի ձորը և քարայրերը կապ պետք է ունենան նախաքրիստոնեական պաշտամունքների հետ, ինչպես Բագնայրն իր քարայրերով և աշտարակաձև մնացորդով, ինչպես Բագարանն իր քարայրերով, Աղավնատան գյուղը, Հաջի-Ղարայի գերեզմանատան զույգ

աշտարակների և «Արդար Դավիթ» անվանված աշտարակի մնացորդները» (Թորամանյան 1942: 141): Խոսելով Գեղամա լեռների վիշապաքարերի և վերջիններիս՝ ջրի պաշտամունքին առնչվելու մասին՝ Ստ.Մնացականյանը գրում է. «Մյուս կողմից, հազիվ թե պատահական լինի Գեղարդի «Սուրբ աղբյուրի» առկայությունը հենց այս, հնադարյան ջրի պաշտամունքին նվիրված լեռնալանջերում: Ամենայն հավանականությամբ Գեղարդի այս աղբյուրի պաշտամունքը ևս ունի իր շատ խոր արմատները, այն միայն սրբագործվել է քրիստոնեության կողմից, դարձել քրիստոնեական սրբավայր» (Մնացականյան 1971: 86-87): Քարայր-վիշապ կոթող-վիշապամայր (Անահիտ) կապը Ատրպետը ցույց է տալիս ինչպես Անձևացյաց աշխարհի/Հոգվոց վանքի, այնպես էլ Շիրակում գտնվող Սառնաղբյուրի (Սոյյուդլի) և Գեղարդավանքի օրինակներով (Ատրպետ 1931: թ. 43-46, 60-73): Մասնավորապես ենթադրում է, թե Գեղարդի քարայր-«մեհյանը» այն վայրն է եղել, որտեղ նախնական ծեսեր են իրականացվել մինչև ջրի պաշտամունքին և ջրանցքներին առնչվող վիշապաքարերի մոտ Գեղամա լեռներ բարձրանալը՝ վարդավառի տիպի տոների ընթացքում (Ատրպետ 1912ա): Քարանձավների համատեքստում վիշապների պաշտամունքի կապակցությամբ Ատրպետը հիշատակում է նաև Էջմիածնի շրջանի Հայի և Թուրքի Զեյվա գյուղերի մոտ գտնվող քարանձավը, որի խորքից բխում է Թուրքի Զեյվայի առվակը: Ջուրը բխելիս մեծ աղմուկ է դուրս գալիս, որ նմանվում է որոտի ձայնի, ինչը ժողովուրդը կապում է Ուշապի հետ: Այս ջրի շտեմարանը գտնվում է Արագածի վերին շերտերում, որից ելնելով՝ Ատրպետն այս երևույթն առնչում է «աչկատարյան շրջանի» ոռոգման համակարգի և դրա հետ կապված ջրի պաշտամունքի հետ: Քարանձավի մոտ որձաքարի վրա սանդուղք է փորված՝ բլրի գագաթը բարձրանալու և բագինը պաշտելու համար: Այդ ապառաժի վրա տեսանելի փոսիկները և քանդակները սուրբ ջրի համար էին արված: Նման սանդուղքներ կան Գառնիի, Վեդիի, Հայոց ձորի, Մաքենյաց կողմերում (Ատրպետ անթվակիր, 1-3): Ատրպետն այստեղ նկարագրում է Մեծամորի բրոնզ-երկաթեդարյան հուշարձանը:

[1] Վերոհիշյալ արագածյան Տիրինկատարը՝ վիշապաքարերի ամենամեծ կուտակումով աչքի ընկնող սրբավայրը, ինչպես վկայում է վերջինիս դիրքը (ուղղված դեպի Արարատյան դաշտավայրը) և անվանումը (կապված Տիրի հետ, որը նույնպես վիշապային հատկանիշներ է կրում), հավանաբար առնչվել է Արարատյան դաշտավայրում գտնվող Տիրի Երազամույն տաճարին, որը կարող էր գտնվել Զվարթնոցի տեղում, որտեղից ուղիղ տեսարան է բացվում Տիրինկատարի ուղղությամբ (Ղաֆադարյան 1972: 22): Ամենայն հավանականությամբ, այս Տիրինկատարը կապված է Տարոնի Տիրինկատարին, որի վրա է գտնվել Անահիտ աստվածուհու արձան-

2. Պաղատի սրբավայրը կապվում է Արամազդի, Աստղիկի (լեռան գագաթին) և վիշապների (Բութ բնակավայրի մոտ) պաշտամունքի հետ: Այդ երեքի միջև որոշակի կապ գոյություն ունի. հետազոտողների մեծ մասը վիշապների պաշտամունքն առնչում են արական՝ ցլային (Արա, Արամազդ, Վահագն, Տիր)[1] և իգական՝ ձկնային (Աստղիկ, Անահիտ)[2] կենդանակերպի հետ: Այս իմաստով չի բացառվում, որ դարերի ընթացքում ցուլ-ձուկ կենդանակերպ վիշապները վերածվել են մարդակերպ Արա-Աստղիկի: Պատմաազգագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ և՛ Արայի, և՛ Աստղիկի պաշտամունքը հիրավի կապված է եղել բարձրադիր կետերի հետ[3]:

մեհյանը, և որը Ս. Գրիգոր Լուսավորիչը կործանել է՝ տեղը նվիրելով Ս. Առաքելոց վանքին: Վերջինս գտնվում էր լեռան հյուսիսային կողմում, իսկ հարավային լանջին բխում էր Կորեկ կոչվող աղբյուրը: Տիրինկատար (Տիրակատար, Վիշապ, Վիշապ քաղաք, Տիրակ, Ծիրինկատար, Օձ) է կոչվել նաև ոչ հեռու՝ Աշտիշատի մոտ գտնվող քաղաքը, որը, ըստ Հովհան Մամիկոնյանի, կառուցել են Դեմետրե և Գիսանե եղբայրները՝ անվանելով Վիշապ, քանի որ այն Վիշապաքաղ Վահագնի մեհյանի մոտ էր գտնվում (Thierry 1976: 237; Вардумян 1991, 109: 112-113; հմմտ. Մելիք-Փաշայան 1963: 39, 109; Петросян 2004: 123): Ի դեպ, ըստ ավանդության, Տիրինկատարի Ս. Առաքելոց վանքում է թաղված նույն ինքը Խորենացին (Ա-Դո 1912: 116):

[1] Ղափանցյան 1945; Капаницян 1952; Հմայակյան 2004; Քոչարյան 2005: Այս աստվածությունների շարքում անպայման պետք է հիշատակել ուրարտական աղբյուրների վիշապ-աստվածություն Կուեռային, որն իր վիշապակերպությամբ և մարդակերպությամբ կարող էր միավորել վիշապների զարգացման տարբեր փուլերը (Հմայակյան 1990): Կարելի է այստեղ հիշել նաև Միհրի անունը, որը մի կողմից կապվում է քարայրերի հետ, մյուս կողմից էլ՝ քարայրերում ապրող Օղուզ դյուցազունների հետ (Ավդալբեգյան 1969: 25-26, 30՝ Պաղատի և Բութի համատեքստում. հմմտ. նաև Սահակյան 2014: 17-26). Վերջիններս հաճախ առնչվում են մեգալիթյան շինությունների և վիշապ կոթողների հետ:

[2] Աբեղյան 1941 (Պաղատի սրբավայրի համար տե՛ս էջ 75): Անահիտի հետ է կապում վիշապների պաշտամունքը և վիշապաքարերը հատկապես Ատրպետը (հմմտ. օրինակ՝ Ատրպետ 1929: 56): Պատահական չէ, որ Դարբնաց քարի մոտ՝ Տիրինկատարում, ինչպես նաև Ծոփաց Անահտայ աթոռ կոչված լեռան (Քեռշկեր կամ Քեռշմեր) վրա կային Անահիտի պատկեր/արձաններ (Ալիշան 2002: 138; Տաղավարեան 1909: 70):

[3] Աստղիկի համար մանրամասն տե՛ս Սիմոնյան 2013: 237՝ Պաղատի համապատասխան ժողովրդական ավանդույթներում հիշվելը հմմտ. էջ 233,235,

3. Սրբավայրը հորդաբուխ ակունքների շրջանում է. Խորենացու վկայությունից երևում է, որ Բութը եղել է ջրի պաշտամունքի կենտրոն[1]: Գրեթե բոլոր հետազոտողները վիշապաքարերն առնչել են հնագույն ջրի պաշտամունքի և ջրօգտագործման հետ[2], ինչի համար հիմք են հանդիսացել հետևյալ յոթ չափանիշները. ա) լանդշաֆտը. վիշապաքարերը հիմնականում ի հայտ են գալիս ջրով հարուստ միջավայրերում, բ) տեղադրությունը. վիշապաքարերը գլխավորապես գտնվում են հնագույն լճակների և ջրանցքային համակարգերի հանգուցակետերում, գ) ձևը. Վիշապաքարերի տիպերից մեկը կերտված է ձկան կերպարանքով, դ) պատկերագրությունը. ձկնակերպ վիշապաքարերը կրում են ձկան պատկերային տարրեր, իսկ ցլակերպերի բերանից հաճախ ջուր է ցայտում, ե) ազգագրական հենքը. վիշապաքարի նման կոթողներն առնչվել են անձրևաբեր ծեսերին (= «ցասման արձաններ»), զ) ազգագրական հենքը. բոլոր հեղինակները շեշտում են վիշապաքարերի հնարավոր կապը ջրին առնչվող Վարդավառի տոնին, է) առասպելական հենքը. հայկական առասպելաբանության մեջ վիշապի կերպարն ուղղակիորեն առնչվում է ջրի պահպանման գաղափարին: Սակայն, եթե իր մինչքրիստոնեական կերպարում վիշապը ջրի ստեղծողն է, բաշխողն ու դրական պաշտպանը, ապա հետագայում հայտնի պատճառներով այն ձեռք է բերում ջուրն արգելողի հակադիր գործառույթ:

4. Հեթանոսները պաշտամունք և տոնակատարություններ են իրականացնում լեռնագագաթին (ծեսը կոչվում է «Պաղատ») և լեռնալանջին (ուղեկցվում է երիտասարդ տղաների և կույս աղջիկների զոհաբերություններով՝ երկու վիշապների համար/կողմից): Ծեսերի ժամանակ ձայներով, որոտընդոստ շարժումներով և կերպարանքները այլայլելով,

---

237,239): Տե՛ս նաև Մելիք-Մուրադյան 2000: Այն հանգամանքը, որ Աստղիկի հիմնական տաճարները գտնվել են նույն Աշտիշատում և Պաղատ լեռան վրա (հմմտ. Эмин 1896: 21; Մելիք-Փաշայան 1963: 25, 35), մեկ անգամ ևս հաստատում է վերին և միջին մակարդակների սրբավայրերի գոյության մասին տեսակետը, տվյալ դեպքում՝ ոչ թե տեղային, այլ ընդարձակ աշխարհագրական գոտու սահմաններում: Ինչ վերաբերում է Արամազդին, Ա.Պետրոսյանը գտնում է, որ նրա հիմնական տաճարը գտնվել է Անիում, երկրորդականը՝ Պաղատում (Պետրոսյան 2006: 9):

[1] Այս մասին հմմտ. նաև Эмин 1896: 29:

[2] Հմմտ. Քալանթար 1937; Пиотровский 1939; Աբեղյան 1941; Շիրմազան 1962; Խաչատրյան 1971; Карапетян 1979:

փրփրելով, թապլտկելով գործողություններ են իրականացվում[1]: Երիտասարդների զոհաբերության դրվագը հստակ պահպանվել է հայկական հիշողության մեջ՝ նույն վիշապների համատեքստում[2]: Նման ծիսակատարություններ պիտի տեղի ունենային հատկապես լեռնային ուխտագնացությունների ընթացքում՝ Վարդավառի, Համբարձման և Նավասարդի տիպի տոների կապակցությամբ, որոնք հիմնականում առնչվում էին Աստղիկին[3], և կապված էին լեռների պաշտամունքի հետ (հատկապես Վարդավառը)[4] :

5. Պաղատի և շրջակայքի սրբազան լանդշաֆտի կարևոր բաղադրատարրն է Դարբնաց քարը (որը ոչ պատահականորեն հանդես է գալիս Ագռավաքարի համատեքստում), ինչի փայլուն մեկնաբանությունը տվել է արդեն Ղ. Ալիշանը: Փորձելով բացատրել Խորենացու տեղեկությունը Պաղատի, Բութի, Դարբնաց քարի մասին և կապելով դրանք լեռների և քարերի պաշտամունքի հետ՝ մեծանուն հայագետը հիշում է կելտերին, բրետոնացիներին և սաքսերին բնորոշ դոլմենները, մենհիրները կամ եբրայեցիների հիշատակի քարերը (որոնց տեղերում հետագայում Աստծո տուն՝ *բեթ-էլ* էին կառուցում)[5]: Այս իմաստով, եթե Դարբնաց քարը վիշապաքար չէ, ապա գոնե կանգուն քար է, որը կատարել է նույն գործառույթը, ինչ վիշապաքարը դարձից մոտ երկու հազարամյակ առաջ: Այն հանգամանքը, որ Բութը հիշվում է «քար դարձած հովիվի ու ոչխարների» ավանդազրույցների շարքում[6], որով ժողովուրդը հաճախ վեր-

---

[1] Բութում և Պաղատում կատարվող այս ծեսերի զուգահեռները բերում է Ղ. Ալիշանը (2002: 198):

[2] Աբեղյան 1941: 41; Դալալյան, անտիպ, 32; հմմտ. Гулакян 1983: 86-88: Վիշապի այրի մեջ որջանալու և երիտասարդ աղջիկներ ու տղաներ զոհաբերելու այլ օրինակներ էլ են հայտնի հայ մատենագրության մեջ (հմմտ. Սահակյան 2014: 329):

[3] Պաղատ լեռան վրա գտնվող Աստղիկի կուռքը հայտնի էր նավասարդյան տոների հետ կապված ուխտով (Սիմոնյան 2013: 235, 236, 241):

[4] Այս մասին հմմտ. Մարտիրոսյան 2015: 154-155, 167; Բոբոխյան և այլք 2015: 376, 388:

[5] Ալիշան 2002: 28: Դարբնաց քարի մասին հմմտ. Սրվանձտյանց 1978: 166, 180, 390; 1982: 13-14; Ռաֆֆի 1991: 418; Капанцян 1957: 311; Մելիք-Փաշայան 1963: 58, 108, 140; Ավդալբեգյան 1969: 48; Ղանալանյան 1969: 72, 246-247; Թադևոսյան 2007: 156: Դարբնաց քարի պատմության բանաստեղծական վերարտադրությունն իրականացրել է Մ.Աբեղյանը (1886):

[6] Ղանալանյան 1969: 69:

արտադրել է սրբազան քարերի, այդ թվում՝ մենհիրների պաշտամունքը, փաստում է քարե կոթողների մասին վերհուշի առկայությունը ժողովրդական ավանդազրույցներում:

Քննարկում

Մովսես Խորենացու «Պատմութիւն Սրբոց Հռիփսիմեանց» երկասիրության մեջ պահպանվել են բացառիկ վկայություններ հեթանոսական շրջանի Հայաստանի սրբավայրերից մեկի մասին Պաղատ լեռան շրջանում, որը կապվում էր Արամազդի, Աստղիկի և վիշապների պաշտամունքի հետ:

Այս լանդշաֆտի առաջին լուրջ վերլուծությունն իրականացրել է Ղ.Ալիշանը: Առանձնացնելով Պաղատ-Բութ-Ագռավաքար/Դարբնաց քար սրբազան գոտին՝ Ալիշանը նշում է, որ վերջինիս կարևորությունը կախված է եղել մի կողմից տարածքի հրաբխային (Բութն, ըստ հեղինակի, քրիստոնեության դարասկզբին դեռ լրիվ չէր մարել), մյուս կողմից էլ՝ աղբյուրներով հարուստ լինելու հանգամանքի հետ[1]:

Գիտության զարգացման ներկա մակարդակում ակնհայտ է, որ խորենացիական վկայությունն իր էությամբ ավելի արխաիկ է, քան դարձի շրջանը:[2] Մասնավորապես սրբազան լանդշաֆտի կազմակերպման/մոդելավորման քննարկվող տարբերակը (երբ նույն սրբավայրի զանազան հատվածները տեսանելի են լեռնային միջավայրի տարբեր մակարդակներում) Հայաստանում հայտնի է առնվազն Ք.ա. III-II հազար սահմանից սկսած և հատկապես վիշապաքարերով բնորոշվող սրբազան տարածքների համակարգում:

---

[1] Ալիշան 2002: 3: Նմանապես Ն. Տաղավարյանը, ելնելով այս համատեքստում Խորենացու Հուր քրոջ և Ջուր եղբոր հիշատակման հանգամանքից, այստեղ տեսնում է ջրի և կրակի պաշտամունքի տարրեր (Տաղավարեան 1909: 11, 13, 17), իսկ Դարբնաց քարի և Բութի կապակցությամբ նկարագրված դրդրդյունները կապում է հրաբխականության երևույթի հետ: Ըստ նրա՝ Հայաստանում լեռները պաշտվել են շնորհիվ բարձրության, գեղեցկության, խորհրդավորության և հրաբխականության (Տաղավարեան 1909: 9-10, 19): Ի դեպ, կրակի և ջրի քույր ու եղբայր լինելու մասին ավանդույթը պահպանվել է նաև ազգագրական նյութերում (Լալայան 1988: 158, 418; հմմտ. Սամուելյան 1931: 327; Աբեղյան 1975: 51, 58-59; Բդոյան 1950: 39; Մնացականյան 1955: 282; Ղանալանյան 1969: 411):

[2] Հ. Համայակյանը նկատել է, որ Աստղիկի և Արամազդի համատեղ պաշտամունքավայրի ի հայտ գալը Պաղատ լեռան վրա հիշեցնում է հայասական Ուգուր և Իշտար զույգը (Համայակյան 2016: 48):

Ե՛վ վիշապաքարային միջավայրերը, և՛ Պաղատի քննարկվող սրբավայրն առանձնանում են նմանատիպ հնագիտական (ժայռապատկերներ, մեգալիթյան կառույցներ, քարանձավներ)[1], բայց նաև ազգագրական (սրբեր-զիարեթներ, սրբազան քարեր, ծիսակատարությունների հետքեր) հուշարձանների կուտակումով: Ուշագրավ է, որ ինչպես Պաղատի, այնպես էլ վիշապային այլ լանդշաֆտներում մինչ օրս պահպանվել են ուխտատեղիներ, որոնցում շարունակվում են համապատասխան ծիսակատարություններ իրականացվել[2]: Չէ՞ որ, ինչպես գրում է Գ. Սարգսյանը, «որևէ վայրի պաշտամունքային բնույթը, ինչպես հայտնի է, շատ մնայուն ու հաստատուն է»[3]:

Խորենացու տեղեկությունները, գումարվելով համապատասխան պատմական, բանահյուսական և հնագիտական տվյալներին, օգնում են մեզ տարբեր շերտեր/փուլեր առանձնացնել վիշապների պաշտամունքի

---

[1] Կանգվարի, Պաղատի և Բութի շրջանը հայտնի է տարբեր բարձրլեռնային և նախալեռնային հնագիտական հուշարձաններով: Դրանցից հատկապես ուշագրավ են ինչ-որ «ամրոցի» (կարծում ենք մեգալիթյան կառույցի - *Ա.Բ.*) հետքերը Կանգվարի գագաթային (3000 մ) հատվածում (Outtier, Thierry 1990: 723), Վանի թագավորության շրջանի գտածոները Կանգվարում (Outtier, Thierry 1990: 724), քարանձավային բազմաթիվ ժայռապատկերները Բութում (Belli 1975; 1989: 8-13; 2001: 261-265; Outtier, Thierry 1990: 725, 728, fig. 16, հմմտ. նկ. II/3): Ի դեպ, այդ ժայռապատկերների պատկերագրության մեջ Բ. Ուտիեն և Մ. Թիերին տեսնում են Հռիփսիմյանց կույսերի պատմության՝ վիշապներին առնչվող ծիսական հատվածի վերարտադրությունը (վիշապներ, պարողներ, երաժշտական գործիքներ, արյունահեղություններ, ևն) (Outtier, Thierry 1990: 725; քարայր-վիշապ ուղղակի կապի համար տե՛ս մեկ անգամ ևս Աբեղյան 1975: 67; Ղանալանյան 1969: 42; հմմտ. Սարգսյան 1989: 10-17): Բացի այդ, քննարկվող ժայռապատկերների հետազոտողները շեշտում են, որ դրանցում բավականին մեծ թիվ են կազմում «Մայր աստվածուհու» պատկերները (Belli 2001: 264-265). գուցե սրանք Աստղիկի կամ Անահիտի նախնական կերպարնե՞րն են արտացոլում:

[2] Ղ.Ալիշանը Բութի հին պաշտամունքի հետ է կապում բարձր լեռներում գտնվող Բութկի Ս. Գևորգ ուխտատեղին (Ալիշան 2002: 33), որի մոտ ջուր էր բխում (Տաղավարեան 1909: 14): Պաղատ լեռան մասին հնագետ Օ. Բելլին գրում է. «Տեղացի բնակչության կողմից որպես սրբազան ընդունված այս լեռան վրա դեռ այսօր էլ ավանդական ծիսական արարողություններ են կատարվում» (Belli 1987: 9), որոնց ընթացքում «իրականացվում են նվիրաբերական զոհաբերություններ» (Belli 2001: 262):

[3] Սարգսյան 1966: 41:

ոլորտում[1]: Տվյալների ոչ ամբողջականության պատճառով նման սահմանազատումներն իհարկե պայմանական են: Եվ սա այն պատճառով, որ մշակութային երևույթները կարող են լինել ոչ միայն զարգացող, այլև խաչասերվող, դադարող և կրկնվող: Սակայն առաջարկվող սխեման ունի որոշակի տրամաբանություն, հետևապես կարող է առայժմ ընկալվել որպես հավանական և հետագայում ճշգրտվող: Ըստ այդմ՝ վիշապի գաղափարն ունի զարգացման մի քանի փուլեր, երբ այն որպես վերացական կամ որոշակի կատեգորիա արտահայտվում է տարբեր երևույթների ձևով:

Մասնավորապես I փուլում վիշապը կարծես մարմնավորում է բնության երևույթները («տարրերային շրջան», հավանաբար Ք.ա. III հազար առաջ). II փուլում այն ձեռք է բերում կենդանակերպության տարրեր («տոտեմական շրջան»՝ արտահայտված վիշապաքարերի երևույթում, Ք.ա. մոտ III-II հազ.). III փուլում վիշապը մարդակերպ է դառնում՝ արտահայտվելով արական (Կուեռա, Արա, Արամազդ, Վահագն, Տիր) և իգական (Աստղիկ, Անահիտ) կերպարներում, որպես նրանց մարմնավորում կամ հակամարմնավորում («պանթեոնի շրջան», Ք.ա. մոտ I հազ.). IV փուլում, կորցնելով նախնական հատկանիշները, վիշապը վերածվում է դիվային-օձային ցածր ոլորտի կերպարի՝ իր մեջ պահպանելով նախորդ փուլերին վերաբերող տարրեր («դարձի շրջան», Ք.հ. I հազար սկիզբ)[2]. V փուլում տեղի է ունենում վիշապի կերպարի միախառնում, երբ նախկին պատկերացումները նորերի հետ միասին հայտնվում են մեկ կաթսայի մեջ. դրանով վիշապը կարծես նորից դառնում է տարերային՝ վերարտադրելով արքետիպային մակարդակի հիշողությունը («վերհուշի շրջան», Ք.հ. I-II հազ.)[3] :

---

[1] Վիշապի և օձի պաշտամունքին վերաբերող ազգագրական և բանահյուսական տեղեկությունների մանրամասն վերլուծությունը տե՛ս Սիմոնյան 2011: 53-97:

[2] Թ.Ավդալբեգյանը բարի աստվածության կամ դյուցազնի աստիճանական վերածումը չարի կոչում է *դիվացում* և հիշատակում տարբեր դրսևորումներ, այդ թվում՝ վիշապների համատեքստում (Ավդալբեգյան 1969: 52-65):

[3] Ն.Մառի կարծիքով հայերի դարձից հետո վիշապի սրբարանները փոխարինվեցին քրիստոնեական պաշտամունքային կառույցներով, որոնք կոչվեցին վիշապամարտիկ աստվածություններին համարժեք սրբերի անուններով: Այսպես, նախաքրիստոնեական շրջանում Աշտարակը եղել է վիշապների պաշտամունքի վայր, Ծիրանավոր եկեղեցու տեղում եղել է վիշապի՝ Աշտարակ-Աժդահակի պաշտամունքի տաճար, որ հետո քրիստոնեական ժամանակներում վերածվել է հնագույն տիպարի բազիլիկի: Տաճարի մոտ հետագայում գոյացել է գյուղ, որ հնագույն սրբավայրի անունով կոչվել է

Ընդ որում, չի բացառվում, որ հիշյալ փուլերի ընթացքում վիշապի կերպարը և նրա մարմնավորման ձևերը (օրինակ՝ արձանները կամ տաճարները) աստիճանաբար իջել են վերից վար, այսինքն՝ լեռներից դեպի նախալեռներ և դաշտավայրեր, ու պատկերացումների հետ միասին համապատասխանաբար վերարտադրվել են նաև լանդշաֆտային ընկալումները:

Այսպիսով, վերն առաջարկված փուլաբաժանման համակարգում Խորենացին փաստագրել է վիշապների զարգացման չորրորդ փուլը[1]: Մինչդեռ հայկական հիշողության մեջ (արտահայտված պատմական[2], բայց հիմնականում ազգագրական-բանահյուսական ոճի աղբյուրներում) այս բոլոր փուլերը պահպանվել են սինկրետիկ մակարդակում: Այսօր էլ վիշապների վերաբերյալ ժամանակակից հայերի հետաքրքրությունը, որն արտահայտվում է մի կողմից դրանց վերից վար իջեցնելու, վերստին կանգնեցնելու կամ թանգարանացնելու, մյուս կողմից էլ՝ հետազոտելու, հասկանալ փորձելու մեջ, դեռևս գտնվում է ենթագիտակցական (կամ ինչպես ասվեց՝ վերհուշի) փուլում:

Վերջում, վերստին շեշտելով Պատմահոր հայտնած տեղեկությունների կարևորությունը, մեկ այլ մեծ հայի՝ Գ. Սրվանձտյանցի բառերով մնում է ասել. «Արդյոք և որչափ երախտապարտ եմք այն սրբազան ծերունի Խորենացվույն, որ միան պատճառ եղեւ այն մագաղաթներ գտնե՛ ազգային լեզվավ ի լույս հանելու. ապա թե ոչ, աննշան և անգո ազգ մի կ'ձևանայինք անշուշտ առանց Նախնյաց. անարմա՛տ ծառ, ուստի և անհաստատ»[3]:

Եզրակացություն

Հնագիտական, պատմական, ազգագրական և բանահյուսական տվյալները բացահայտում են վիշապի մասին պատկերացումների առատությունը հայկական մշակույթի տարբեր ոլորտներում: Վիշապի գաղափարի տարածական և ժամանակագրական զարգացման օրինաչափությունների հետազոտությունը ցույց է տալիս, որ այն այդ մշակույթի ին-

---

Աշտարակ (Марр 1924: 278; Շահազիզ 1987: 38-39, 265; հմմտ. Թորամանյան 1942: 210, 211, 244, 289; Թումանյան 2015: 105):

[1] Տե՛ս *contra* Աբեղյան 1941: 41-43:

[2] Վիշապների մասին պատկերացումները բավականին առատ են հայ միջնադարյան գրականության մեջ (բացի Խորենացուց, հմմտ. Եզնիկի, Մովսես Կաղանկատվացու, Գրիգոր Մագիստրոսի, Հովհաննես Սարկավագի և այլոց անդրադարձները):

[3] Սրվանձտյանց 1982: 27:

վարիանտ տարրերից մեկն է: Դարերի ընթացքում վիշապի կերպարն ապրել է բազմաթիվ ձևաբովանդակային և գործառութային փոփոխություններ, զարգացման որոշակի փուլերում եղել ակտիվ կամ կրավորական, սակայն նրա հիմնական տարերային էությունը մնացել է անփոփոխ: Այս հոդվածը նպատակ ուներ անդրադառնալու վիշապ երևույթի արտահայտման եզակի դեպքին՝ որոշակի տարածական (Վանա լճի հարավարևելյան գոտի) և ժամանակագրական (քրիստոնեական դարձի շրջան) սահմաններում՝ հիմք ընդունելով Խորենացու մի վկայությունը: Առկա տվյալների վերլուծությունը բացահայտում է սրբազան տարածքի կազմակերպման նույնականությունը Հայկական լեռնաշխարհի տարբեր ենթաշրջաններում և ժամանակահատվածներում, ինչում Վանա լճի ավազանը բացառություն չի կազմում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղեան Մ. 1886, Ոսկեմայր-Տիրամայր (Դարբնաց քար և Հոգւոց վանք), Արարատ ԺԹ/ԺԲ, 509-510:

Աբեղյան Մ. 1940, «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ, Գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Աբեղյան 26բ, Երևան, 186թ. (ձեռագիր):

Աբեղյան Մ. 1941, «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ, Երևան:

Աբեղյան Մ. 1975, Երկեր, հ. Է, Երևան:

Աբեղյան Մ. 1985, Երկեր, հ. Ը, Երևան:

Ադոնց Ն. 1972, Հայաստանի պատմություն, Երևան:

Ա-Դօ 1912, Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայեթները, Երեւան:

Ալիշան Ղ. 2002, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան:

Ավդալբեգյան Թ. 1969, Միհրը հայոց մեջ, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 13-79:

Ատրպետ 1912ա, Վիշապամայր, Ալեքսանդրոպոլ:

Ատրպետ 1912բ, Դիրաքլարի տաճարը, Հանդէս ամսօրեայ 1, 5-15:

Ատրպետ 1924, Շիրակի ջրանցքը, Հանդէս ամսօրեայ 1-4, 31-46, 131-142:

Ատրպետ 1927, Վիշապազանց Վորորանը, Գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Ատրպետ 16, Լենինական, 52թ. (ձեռագիր):

Ատրպետ 1929, Ճորոխի ավազանը, Վիեննա:

Ատրպետ 1931, Վիշապազանց կուլտը և Անահիտ, Հայաստանի պատմության թանգարանի արխիվ, Ատրպետ ՀՊԹ ԱԱ 177, Լենինական, 84 թ. (ձեռագիր):
Ատրպետ 1934, Գրախոսություն՝ Պրոֆ. Հ.Մանանդյանի «Ֆեոդալիզմը հին Հայաստանում» աշխատությունը, Գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Ատրպետ 69, Երևան, 4 թ. (ձեռագիր):
Ատրպետ անթվակիր, Օձնայր, Հայաստանի պատմության թանգարանի արխիվ 188/5, 3 թ. (ձեռագիր):
Բարսեղյան Լ.Ա. 1967, Գեղամա լեռների «վիշապները», ՊԲՀ 4, 181-188:
Բդոյան Վ.Հ. 1950, Երկրագործական պաշտամունքի մի քանի հետքեր հայերի մեջ, Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի III, Երևան, 5-71:
Բոբոխյան Ա., Ջիլիբերտ Ա., Հնիլա Պ. 2015, Վիշապաքարերի հնագիտություն, Վիշապ քարակոթողները, Պետրոսյան Ա., Բոբոխյան Ա. (խմբ.), Երևան, 269-396:
Գելցեր Հ. 1897, Հետազոտութիւն հայ դիցաբանութեան, Վենետիկ:
Դալալյան Տ. (անտիպ ձեռագիր), Վիշապների պաշտամունքը Հայաստանում, Երևան, 1-49:
Դիլանյան Ս. 2012, Հայոց սրբազան լեռները, Երևան:
Դուրեան Ե. 1933, Հայոց հին կրօնը կամ հայկական դիցաբանութիւն, Երուսաղէմ:
Թադևոսյան Ա. 2007, Դարբինը հայոց ծիսահամակարգում (Պատմաազգագրական ուսումնասիրություն), Հայ ազգագրություն և բանահյուսություն 23, Երևան, 101-183:
Թորամանյան Թ. 1942, Հայկական ճարտարապետություն 1, Երևան:
Թումանյան Գ. 2015, Վիշապաքարերի պաշտամունքային-կիրառական գործառույթները, Վիշապ քարակոթողները, Պետրոսյան Ա., Բոբոխյան Ա. (խմբ.), Երևան, 99-120:
Լալայան Ե. 1988, Երկեր 2, Երևան:
Խանզադյան Է. 1969, Գառնի IV, Հնագիտական պեղումները Հայաստանում 12, Երևան:
Խաչատրյան Մ.Մ. 1971, Արագածոտնի նախաուրարտական ջրաբաշխական համակարգի փորագրված գծագիրը, ՊԲՀ 3, 128-137:
Կարիէր Ա. 1899, Հեթանոս Հայաստանի ութ մեհեաններն, Վիեննա:
Կոստանյանց Կ. 1879, Հայոց հեթանոսական կրոնը, Վաղարշապատ:
Հակոբյան Թ.Խ., Մելիք-Բախշյան Ստ.Տ., Բարսեղյան Հ.Խ. 1991, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան 4, Երևան:

Հարությունյան Ս. 2000, Հայ առասպելաբանություն, Բեյրութ:
Հմայակյան Հ. 2004, Հայասական ᵈU.GUR-ը և Արա Գեղեցիկը, ՄՄԱԵԺ XXIII, 381-394:
Հմայակյան Հ. 2012, Հունական Արտեմիս և հայկական Աստղիկ դիցուհիների մի շարք ընդհանրությունների շուրջ, ՄԱ VIII, 87-101:
Հմայակյան Հ.Հ. 2016, Գրիգոր Ղափանցյանը և խեթագիտությունը, Երևան:
Հմայակյան Ս. 1990, Կուեռա-կուառ աստվածության պաշտամունքը Հայկական լեռնաշխարհում, ՊԲՀ 1, 152-167:
Ղանալանյան Ա. 1969, Ավանդապատում, Երևան:
Ղափանցյան Գ. 1945, Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան:
Ղաֆադարյան Կ.Գ. 1972, Հայաստանի թանգարանների պատմությունից, ԼՀԳ 10, 20-35:
Մարտիրոսյան Հ. 2015, Լեռնային ակունքի ֆառնը, արշալույսի դիցուհին և գլխի ու մորթու զոհաձեսը վիշապակոթողների իմաստաբանական հենքում, Պետրոսյան Ա., Բոբոխյան Ա. (խմբ.), Վիշապ քարակոթողները, Երևան, 136-170:
Մելիք-Մուրադյան Ե. 2000, Աստղիկ դիցուհու պաշտամունքի վայրերը, Էջմիածին 11, 88-92:
Մնացականյան Ա.Շ. 1952, «Վիշապ» քարակոթողների և վիշապամարտի դիցաբանության մասին, ՏՀԳ 5, 73-100:
Մնացականյան Ա.Շ. 1955, Հայկական զարդարվեստ, Երևան:
Մնացականյան Ստ. 1971, Երևանը և նրա շրջակայքը, Երևան:
Մովսես Խորենացի 1865, Պատմութիւն Սրբոց Հռիփսիմեանց, Մատենագրութիւնք, Վենետիկ, 297-325:
Շահազիզ Ե. 1987, Աշտարակի պատմությունը, Երևան:
Շահինյան Ս.Մ. 2005, Հայաստանի քարանձավները, Երևան:
Շիրմազան Գ. 1962, Դրվագներ Հայաստանի ոռոգման պատմությունից, Երևան:
Պետրոսյան Ա. 2006, Արամազդ, Երևան:
Պետրոսյան Ա. 2015, Երեսուն տարի անց. վիշապ քարակոթողները և վիշապամարտի առասպելը, Պետրոսյան Ա., Բոբոխյան Ա. (խմբ.), Վիշապ քարակոթողները, Երևան, 13-52:
Սահակյան Ա. 2014, Ժողովրդական քրիստոնեությունը միջնադարյան Հայաստանում, Երևան:
Սամուելյան Խ. 1931, Հին Հայաստանի կուլտուրան 1 - Քարե դար, Երևան:
Սարգսյան Գ. 1966, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան:

Սարգսյան Է. 1989, Քարանձավները բացում են իրենց գաղտնիքները, Երևան:
Սիմոնյան Լ. 2011, Հավքն իր թևով, օձն իր պորտով, Երևան:
Սիմոնյան Լ. 2013, Աստղիկ դիցուհու պաշտամունքը Վասպուրականում և Տարոնում, Մարության Հ.Տ. (խմբ.), Հայաստանի մայրաքաղաքները, Գիրք I - Վան, Երևան, 233-242:
Սրվանձտյանց Գ. 1978, Երկեր, հ. 1, Երևան:
Սրվանձտյանց Գ. 1982, Երկեր, հ. 2, Երևան:
Տաղավարեան Ն. 1909, Հայոց հին կրոնները, Կ. Պոլիս:
Ռաֆֆի 1991, Հրապարակախոսական և գրական-քննադատական հոդվածներ, Երկերի ժողովածու 11, Երևան:
Մելիք-Փաշայան Կ.Վ. 1963, Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան:
Քալանթար Ա. 1933, Արագածը պատմության մեջ, Երևան:
Քալանթար Ա. 1937, Մի հնագույն ջրաբաշխական սիստեմ Խորհրդային Հայաստանում, Տեղեկագիր ՀԽՍՀ պատմության և գրականության ինստիտուտի II, 171-194:
Քոչարյան Գ.Գ. 2005, Տիր/Տիւր աստվածությունը «հայոց մեծաց» սերնդաշարքում, ԼՀԳ 1, 130-141:
Вардумян Г.Д. 1991, Дохристианские культы армян, Армянская этнография и фольклор 18, Ереван.
Гуллакян С.А. 1983, Указатель мотивов армянских волшебных сказок, Ереван.
Капанцян Гр. 1952, О каменных стелах на горах Армении, Ереван.
Капанцян Гр. 1957, Историко-лингвистические работы, Ереван.
Карапетян Л.Л. 1979, Ирригация и орошение в земледелии Армении эпохи поздней бронзы, ИФЖ 1, 59-74.
Марр Н.Я. 1893, Имя Бут или Буд в армянской надписи VII века по Р. Х., Записки Восточного отделения императорского археологического общества VII, 322-325.
Марр Н.Я. 1924, Книжные легенды об основании Киева на Руси и Куара в Армении, Известия Российской академии истории материальной культуры III, 257-287.
Марр Н.Я., Смирнов Я.И. 1931, Вишапы, Ленинград.
Марр Н.Я. 1936, Армянская культура, ее корни и доисторические связи по данным языкознания, Кипарисов Ф.В. (ред.), Язык и история 1, Ленинград, 62-85.
Петросян Э. 2004, Боги и ритуалы древней Армении, Ереван.
Петросян Э. 2014, Театр в средневековых армянских миниатюрах, Ереван.

Пиотровский Б.Б. 1939, Вишапы: каменные статуи в горах Армении, Ленинград.
Халатянц Г. 1896, Армянский эпос в Истории Армении Моисея Хоренского, Т. I (исследование), т. II (материалы), Москва.
Эмин Н.О. 1896, Исследования и статьи, Москва.
Belli O. 1975, Doğu Anadolu'de yeni arkeolojik keşifler. Van-Yedisalkim (Put) köyü boyah mağara resimleri, Tarih Dergisi 27-29, 1-40.
Belli O. 1989, Van: Die Hauptstadt der Urartäer, Istanbul.
Belli O. (ed.) 2001, Istanbul University's Contributions to Archaeology in Turkey: 1932-2000, Istanbul.
Gilibert A., Bobokhyan A., Hnila P. 2012, Dragon Stones in Context: The Discovery of High-altitude Burial Grounds with Sculpted Stelae in the Armenian Mountains, Mitteilungen der Deutschen Orient Gesellschaft 144, 93-132.
Parsamyan A. 2015, Les temples antiques en Arménie. Que sont-ils devenus après la christianisation du pays? Université de Rouen, Journée d'études des doctorants du 10 février 2015, Rouen, 1-28.
Outtier B., Thierry J.-M. 1990, Histoire des Saintes Hripsimiennes: Essai sur son fondement matériel, Syria 67/3-4, 695-733.
Thierry J.M. 1976, Le couvent des Saints-Apotres de Muš, Handes Amsorya, 235-256.

Bobokhyan Arsen
(Institute of Archaeology and Ethnography)

EVIDENCE OF KHORENATSI TOWARDS THE SACRED LANDSCAPE OF PAGHAT AND THE PROBLEM OF VISHAPAKARS

In the work "History of the Saint Hripsimians" by Movses Khorenatsi details on spreading of Christianity in Armenia have been kept, where the author, among others, tells how the Christians, passing by the mountain Kangvar (Agravakar) of the province Andzevatsik in Vaspurakan (South-East from the Lake Van), reached the peak of the mountain Paghat, where the sanctuary of Aramazd and Astghik was situated: here the pagans a cult called "Paghat" as well as various feasts used to realize. Towards the southern slope of the mountain, among rich water sources, in the neighborhood of the place called But there were a house of fire, a source of water and a cave with two vishaps (dragons): during rites sacrifices of young boys and virgin girls were

carried out here. Besides, in the neighborhood of Agravakar, by the cult place of Anahit, a special stone called "Blacksmith's stone" is mentioned, to which the pagans attributed miracles. In the present article the above-mentioned data is discussed in the context of one of the most important phenomenons of Ancient Armenia, vishapakars («dragon-stones»). It is shown that the sacred landscape described by Khorenatsi has its parallels in corresponding enviroments known by archaeological data and to be typical for vishapakars.

Պ.գ.դ. Գրեկյան Երվանդ
(ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ)

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՐԱԾ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

«...եւ դու սրակոտոր կ'անես նրա բոլոր արական սեռի բնակիչներին, կը խնայես կանանց, ապրանքներն ու բոլոր անասունները: Քաղաքում գտնուող ամէն ինչ ու մնացած մարդկանց աւար կը վերցնես եւ կը սեփականացնես...»

(Հին Կտակարան, Երկրորդ Օրէնք 20:12-14)

Ուրարտական հանդիսավոր արձանագրությունները և հատկապես արքայական տարեգրությունները մեծ տեղ են հատկացնում գերեվարությունների և ձեռք բերված ավարի թվարկմանը՝ հայտնելով նաև գերիներից «ոմանց սպանելու» և «ոմանց կենդանի տանելու» մասին (*aliki zašgubi aliki šeḫiri*/TI(.LA)MEŠ *agubi*)[1]: Այդ տեքստերում մինչև մեկ թվի ճշգրտությամբ առանձին թվարկվում են «տղամարդիկ» (*'aše*[MEŠ], LÚ[MEŠ]), «(դեռահաս տարիքի) պատանիներ/երեխաներ» ([LÚ]*ubše*)[2], «կանայք» ([LÚ/MUNUS]*"ediani*[MEŠ]/[MUNUS]*lutu*[MEŠ]/MUNUS[MEŠ]), երբեմն՝ «զինվորներ» (LÚ[MEŠ] *gunušini*/[LÚ]ÉRIN[MEŠ]), և մեկ դեպքում առանձնացված նշվում են նաև «մանուկներ»-ը ([LÚ]TUR[MEŠ]): Համաժամանակյա նորասորեստանյան տեքստերը, ընդհակառակը, տալիս են «երիտասարդ թե մեծ, տղամարդ թե կին» գերիների թվի միայն ամփոփիչ տվյալներ՝ առանց որևէ մանրամասնության (UN.MEŠ/*niše* TUR/*ṣeḫer* GAL/*rabi* NITA/*zikar u* MUNUS/*sinniš*)[3] (նկ. 1):

---

[1] Ուրարտուում իրականացված գերեվարությունների համար տե՛ս Меликишвили 1951: 27сл.; նույնի՝ 1954: 346сл.; Дьяконов 1952: 90сл.; Çilingiroğlu 1983: 311ff.

[2] Այս տերմինի [LÚ]*arše* ընթերցումը ակնհայտորեն տեղին չէ (տե՛ս և հմմտ. Меликишвили 1960: 212, прим.3; КУКН, стр. 436): Տերմինի [LÚ]*ubše* ընթերցման և թարգմանության համար հմմտ. Дьяконов 1963a: 91.

[3] Grayson, Novotny 2012, No. 3 (16); No. 4 (14). Նորասորեստանյան դարաշրջանում ասորեստանցիների կողմից տեղահանված բնակչության քանակական հաշվարկների համար տե՛ս Oded 1979: 22ff.

Մեզ հասած աղբյուրների ոչ ամբողջական տվյալներով Հայկական լեռնաշխարհի տարբեր շրջաններ և նրա սահմաններից դուրս ձեռնարկված ուրարտական արշավանքների ժամանակ գերեվարվել է 629.519 մարդ, այդ թվում՝ 18.722 «տղամարդ»[1], 186,461 «պատանի/երեխա», 214, 369 «կին», 28,740 «ռազմիկ», ընդհանուրը՝ 448,292 մարդ (տե՛ս Հավելվածը): Ավելի քան 181 հազար է կազմում այն գերիների թիվը, որոնց դեպքում աղբյուրները նշում են միայն հանրագումարային թվեր՝ գերեվարված «ժողովրդի» (*ᴸᵘ taršu"ani*/ᴸᵘUN(MEŠ)) շարքում չառանձնացնելով «տղամարդկանց», «դեռահասներ/երեխաներ»-ի կամ «կանանց» թվաքանակները: Ինչ վերաբերում է Մենուայի արձանագրություններից մեկում նշված տեղեկությանը Էթիունի երկրից տարված «հիսուն բյուր» (50 *atibi*) գերիների մասին[2], ապա ակնհայտ է, որ այդ թիվը խիստ չափազանցված է կամ էլ ավելի շուտ գործ ունենք գրչի սխալի հետ[3]:

Նշվածից բացի պետք է հաշվի առնել, որ ուրարտական աղբյուրները շուրջ չորս տասնյակ անգամ հայտնում են գերեվարությունների մասին՝ առանց որևէ թվական տվյալ նշելու, և նկատի ունենալով, որ միջինացված հաշվարկի դեպքում յուրաքանչյուր արշավանքի ժամանակ գերի է տարվել շուրջ 5 հազար մարդ[4], ապա նման հաշվարկի դեպքում կարող ենք ենթադրել աղբյուրների չնշած ևս մոտ 200 հազար գերիների մասին: Դրանով ուրարտական արշավանքների ժամանակ գերեվարվածների ընդհանուր թիվը կարող է կազմել առնվազն 830 հազար մարդ: Այստեղ պետք է նկատի ունենալ նաև, որ գերեվարությունների մասին հիմնական թվական տվյալները հայտնող Արգիշթի Մենուայորդու և Սարդուրի Արգիշթորդու տարեգրությունները թերի են (անհայտ է մնում այս ար-

---

[1] Գերեվարված «տղամարդկանց» ընդհանուր թիվը կազմում է 25,322 հոգի: Հետազոտողները հիմնականում համակարծիք են, որ Էրեբունի ամրոցի շրջակայքում վերաբնակեցված Խատե և Ծուպա երկրների 6600 հարյուր ռազմիկները հավաքագրվել են նախորդ տարի դեպի արևմուտք՝ Թաբալ, Մելիտիա և այլ երկրների դեմ ձեռնարկված արշավանքի ժամանակ գերեվարված և կենդանի տարված 8698 «տղամարդկանց» շարքից (տե՛ս Меликишвили 1953: 27 сл., հմմտ. Salvini 2002: 41): Ըստ այդմ, «տղամարդկանց» ընդհանուր քանակից հանվել է 6600 թիվը, որն արտացոլված է «ռազմիկներ»-ի ընդհանուր թվաքանակի մեջ:

[2] CTU I, A 5-2A₃-F₃ etc.

[3] Օրինակ՝ 5 *atibi*՝ «հիսուն հազար»-ի փոխարեն:

[4] Համեմատության համար կարելի է նշել, որ մոտավորապես 3-5 հազ. մարդ է միջինը կազմել խեթական արքաների արշավանքների ժամանակ գերեվարվածների թիվը (տե՛ս Lorenz, Schrakamp 2014: 45):

քաների գահակալության համապատասխանաբար 5 և առնվազն 15 տարիների պատմությունը), և որ գերեվարվածների թիվը, անկասկած, լինելու էր շատ ավելի մեծ[1]:

Ուշադրություն է գրավում այն, որ մեզ հասած աղբյուրներում նշված գերիների ընդհանուր թվաքանակի մեջ «տղամարդիկ» կազմել են բավական փոքր թիվ, ըստ պահպանված տվյալների՝ 19 հազարից պակաս մարդ, որոնց էլ, եթե գումարենք գերեվարված «ռազմիկներ»-ի թիվը՝ մոտ 29 հազար մարդ, այնուամենայնիվ, կունենանք ոչ ավելի, քան 48 հազար մարդ 448 հազարից և սա՝ գերիների ընդհանուր թվաքանակի նվազագույն հաշվումներով: Գերի տարված տղամարդկանց և ռազմիկների քանակը միասին կազմում է գերիների մոտ 10.59 տոկոսը, իսկ եթե առանձնացնենք «ռազմիկներ»-ին (մոտ 6.41), որոնց, անկասկած, ընդգրկել են զորքերում և չեն դիտարկել իբրև աշխատուժ, և որոնց ներգրավվածությունը տնտեսության մեջ եղել է սահմանափակ կամ դրվագային, ապա գերի տարված տղամարդկանց քանակը կկազմի ընդամենը մոտ 4.18 տոկոս: Այդ հարաբերակցությունը շատ ավելի փոքր կարող է լինել, եթե հաշվի առնենք նաև այն 181 հազար գերիներին, որոնք աղբյուրներում նշված են հանրագումարային թվերով: Եթե ամփոփենք նշվածը, ապա ուրարտական աղբյուրների մատնանշած և ենթադրվող շուրջ 830 հազար գերեվարվածների մեջ տղամարդկանց թիվը կազմելու էր ոչ ավելի, քան մոտ 35 հազար մարդ:

Փաստ է, որ գերի տարված «տղամարդկանց» թիվը չնչին է, իսկ գերիների ճնշող մեծամասնությունը կազմել են «կանայք» և «դեռահասներ»-ը՝ համապատասխանաբար մոտ 47.82 և 41.59 տոկոս: Սա մղում է մտածելու, որ ուրարտական տեքստերում առկա պնդումը՝ «ոմանց սպանելու» մասին, իրական էր և կարող էր առավելապես վերաբերել չափահաս/զենք կրելու ունակ արական բնակչությանը: Այս առումով ուշագրավ է, որ գերի տարված «տղամարդկանց» հիշատակելիս ուրարտական աղբյուրներն առանց բացառության շեշտում են նրանց «կենդանի» տանելու փաստը (հմմտ. LÚ TI^{MEŠ}/*šebiri* արտահայտությունը՝ «կենդանի տղամարդիկ» կամ «կենդանի (տարված) տղամարդիկ»[2]: «Կենդանի» տանելու փաստը երբեմն նշվում է նաև «ռազմիկներ»-ի դեպքում (LÚ ÉRIN^{MEŠ} *šebi(e)ri*)[3], մինչդեռ ո՛չ «կանանց» և ո՛չ էլ «դեռահասներ/երեխաներ»-ի դեպքում այդ փաստը երբեք չի շեշտադրվում:

---

[1] Ուրարտական արքաների տարեգրությունների կառուցվածքի վերակազմությունը տե՛ս Grekyan 2015: 91ff.

[2] КУКН, 173 $II_{20, 45}$, 241 F_{29} ; CTU I, A 8-3 $II_{20, 45}$, 9-3 VI_{29}.

[3] КУКН, 173 I_{x+13}; CTU I, A 8-3 I_{13}.

Ուրարտական իշխողների վարած այս քաղաքականության արտացոլումը կարելի է գտնել վաղերկաթեդարյան դամբարանային նյութերում: Օրինակ, Հայաստանի տարածքում ընկած Թալինի և Հոռոմի վաղերկաթեդարյան դամբարանադաշտերի պեղումների տվյալները ցույց են տալիս, որ այստեղ իսպառ բացակայում են դեռահաս տարիքի (10-19 տարեկան) պատանիների/երեխաների թաղումները[1]: Դա կարող է վկայել, որ այդ տարիքային խմբի պատանիները/երեխաները գերեվարվել են ուրարտական արշավանքների ժամանակ՝ ի տարբերություն 20-29 տարեկան տղամարդկանց տարիքային խմբի: Այդ խմբի թաղումները կազմում են ամենամեծ խումբը՝ ըստ Հոռոմի, և ամենամեծ խմբերից մեկը՝ ըստ Թալինի նյութերի[2]: Տղամարդկանց համար առավել կենսունակ տարիքում մահացության այդպիսի մեծ ցուցանիշը կարող է լինել մի կողմից՝ ռազմական բախումների հետևանք, իսկ մյուս կողմից՝ կարող է հուշել, որ նվաճողները ոչնչացրել են հատկապես տարիքային այդ խմբին պատկանող չափահաս արական/զենք կրելու ունակ բնակչությանը՝ «ռազմիկներ»-ին:

Թեև ուղղակի վկայություններ չկան, սակայն չի բացառվում, որ կենդանի թողնված և Ուրարտու գերեվարված տղամարդկանց կուրացրել են՝ սահմանափակելու նրանց շարժունակությունը և կանխելու անհնազանդության հնարավոր փորձերը, իսկ նրանց աշխատուժն օգտագործվել է այնպիսի աշխատանքներում, որոնք միատոն են և արհեստավարժ մոտեցում չեն պահանջում: Տղամարդ ռազմագերիներին կուրացնելու երևույթը վկայված է հին Առաջավոր Ասիայի ողջ պատմության ընթացքում[3]: Օրինակ, խանիգալբադցի 14,400 ռազմիկների կուրացնելու և գերեվարելու մասին է հաղորդվում ասորեստանյան արքա Սալմանասար I-ի տեքստերից մեկում[4]: Ավելին, կարելի է ենթադրել անգամ, որ կենդանի թողնված արական սեռի գերիների մի մասին ներքինացրել են[5]. դրա վկայությունը կարելի է համարել Ռուսախինիլի Կիլբանիկայի (Թոփրաքքալե) քաղաքի պալատական/տաճարային անձնակազմը թվարկող տեքստում 2411 «դեռահասներ»-ի հիշատակությունը ներքինիների շարքում[6]: Այս երևույթը նույնպես խորթ չէր հին Առաջավոր Ասիայի համար[7]:

---

[1] Ավետիսյան, Մկրտչյան 1994: 26:

[2] Նույն տեղում::

[3] Gelb 1973: 87; Heimpel 2009: 43ff.; Snell 2011: 7. Խեթական օրինակի համար տե՛ս Beal 2007: 95.

[4] Grayson 1987: 184 (A.0.77.1 74-75).

[5] Տե՛ս նաև Дьяконов 1983a: 57.

[6] Дьяконов 1963a: 39; КУКН, 412 лиц. стор ii. հմմտ. CTU IV, CT Tk-1ii.

[7] Ռազմագերիներին ներքինացնելու երևույթի վաղ վկայությունների համար

Այն, որ տնտեսության մեջ, ներառյալ հողագործական և շինարարական ծանր աշխատանքները, օգտագործվել է հիմնականում կանանց և երեխաների աշխատուժը, վկայված է Ուրի III-ի հարստության օրոք[1], միկենյան աշխարհում[2], միջինասորեստանյան[3] և նորասորեստանյան դարաշրջաններում[4]: Որպես օրինակ կարող ենք նշել Ուրի III-ի հարստության արքա Շուլգիի կառավարման 48-րդ տարով թվագրվող տեքստերից մեկը: Նրանում նշվում են տեքստիլագործության մեջ ներգրավված շուրջ 10 հազար կախյալների տրված օրապահիկ գարու չափաքանակները ամսական և տարեկան կտրվածքով, ընդ որում նշված թվաքանակի մեջ կանայք և երեխաները կազմել են աշխատողների ավելի քան 96 տոկոսը՝ համապատասխանաբար 6423 կին, 3157 երեխա[5]:

Տնտեսության մեջ կանանց ներգրավվածության վկայությունների հանդիպում ենք նաև ուրարտական տեքստերում: Մասնավորապես Մենուա Իշպուինորդու օրոք կազմված տեքստերից մեկը վկայում է նորանված «ամայի» տարածքներ գերեվարված կանանց բերելու մասին, ովքեր պետք է հողային/երկրագործական աշխատանքներ կատարեին (*...ui gi ištini šidauri* ^{LÚ}*"ediani parubi erṣedubi ištinini*)[6]: Իշպուինիի և Մենուայի շրջանին պատկանող երկու տեքստերում կարծես թե նշվում է գերեվարված կանանց ինչ-որ արտոնյալ համայնքի, տվյալ դեպքում՝ տուշպացիներին (բառացի՝ «Տուշպա (քաղաքի) տղամարդկանց»[0]) տալու մասին (*kamni* ^{LÚ}*"ediani 'ašiniei* URU*ṭušpai* (URU) *manu inini gurdari*)[7]: Հնարավոր է, այդ մասին է խոսվում նաև Մենուայի թողած Գործոթի ընդարձակ արձանագրության մեջ[8]: Մի քանի այլ տեքստեր վկայում են «մնացած տղամարդկանց զինվորներին տալու» (*ali 'aše manu arubi* ^{LÚ}*ḫuradina"e*^{MEŠ})[9] կամ «տղամարդկանց և կանանց զինվորներին առանձին տալու» մասին (*šeri*

տե՛ս Asher-Greve 2008: 130:

[1] Дьяконов 1968: 11 и прим. 42; նույնի՝ 1983б: 270сл.; Gelb 1973: 81ff.; Uchitel 1984: 261ff.; Adams 2010: 3ff. տե՛ս նաև Snell 2011: 6f.

[2] Uchitel 1984: 257f., 274ff.; Palaima 2004: 285; Olsen 2014: 60ff.

[3] Postgate 2008: 85.

[4] MacGinnis 2012: 13ff.

[5] Uchitel 2002: 621ff.

[6] CTU I, A 5-24 Vo_{6-11}.

[7] КУКН, 31, лиц. стор.$_{40-43}$, обор. стор.$_{19-21}$, 35, обор. стор. Текст III_{36-38}; CTU I, A 3-4 $Ro_{39'-41'}$, A 3-9 Vo_{36-38}.

[8] CTU I, A 5-2A_{5-6}-F_{5-6}.

[9] Տե՛ս, օրինակ, КУКН, 44, верх. стор.$_{14-15}$, лиц. стор.$_{8}$; CTU I, A 5-9 f. s.$_{14-15}$. A 5-9 f. f.$_{8}$ ինչպես նաև՝ A 18-4 $Ro_{7'-9'}$:

'aše MUNUS *lutu* LÚ A.SI MEŠ-*"e arubi*)[1]:

Այստեղ նկատենք, որ ռազմագերիներին զինվորների միջև բաժանելու երևույթը նորություն չէր: Տաճարներից զատ ռազմագերիներին զինվորների միջև բաժանելու փաստը վկայված է, օրինակ, Մարիի տեքստերում[2]: Նույն երևույթն առկա է նաև նորասորեստանյան շրջանում: Իր արձանագրություններից մեկում ասորեստանյան արքա Շամշի-Ադադ V-ը հայտնում է գերված ռազմիկներին «ինչպես մորեխներ»-ի իր երկրի զինվորներին տալու մասին[3]: Դեպի Շուբրիա իրագործված հաղթական արշավանքից հետո գերիներին «ինչպես ոչխարների և այծերի» ասորեստանյան ազնվականությանն ու խոշոր քաղաքների բնակչությանը բաժանելու մասին է հայտնում ասորեստանյան արքա Ասսարհադդոնը[4]:

Ուրարտական տեքստերը հաճախ են նշում, որ թվարկված ավարը բաժին է հասել միայն արքային (*i-na-ni* MAN-*e nu-na-bi*), իսկ այն, ինչ զինվորներն են վերցրել, «առանձին են տարել» (*mi-i a-li* LÚ A.SI MEŠ-*še ir-bi-tú še-ri pa-ar-tú*)[5]: «Խաթթուասսի տերեր»-ի (իմա՝ հրամանատարների), խեթական բանակի կառամարտիկ և հետևակային զինվորների տարած գերիների մասին հայտնի է խեթական տեքստերից[6]: Ասորեստանյան բարձրաքանդակներում հաճախ հանդիպող մոտիվներից մեկը՝ գերիների խմբին ուղեկցող ասորեստանյան զինվորի պատկերով, կարող է վերաբերել նրան բաժին հասած գերիներին՝ իբրև մասնաբաժին ընդհանուր ավարից[7]:

Անկասկած, ուրարտական արշավանքները նվաճված երկրների համար ունեցել են ծանր հետևանքներ: Որպես կանոն՝ արշավանքների ժամանակ տեղի բնակավայրերը հրդեհվում և ավերվում էին: Ուրարտական արձանագրություններում հաճախ է հանդիպում ամրոցները քանդելու և քաղաքները հրդեհելու մասին կաղապարային ձևակերպումը (URU MEŠ GIBÍL-*bi* É.GAL MEŠ *ḫar-ḫar-šú-bi*)[8]: Վաղերկաթեդարյան մի շարք բնակավայրերի ավերումը ուրարտացիների կողմից վկայված է հնագիտորեն (Արմավիր[9], Կարմիր բլուրի վաղերկաթեդարյան բնակատեղի[1], Դվին[2],

---

[1] КУКН, 241 F_{28}; CTU I, A 9-3 VI_{28}.
[2] Richardson 2011: 30.
[3] Grayson 1996: 188 (A.0.103.1 iv 34-36).
[4] Leichty 2011, No. 33 iii $_{21'-22'}$.
[5] Տե՛ս, օրինակ, КУКН, 241 C_{45-46}; CTU I, A 9-2 $II_{45'-46'}$.
[6] Lorenz, Schrakamp 2014: 45f.
[7] Nadali 2014: 109.
[8] Տե՛ս, օրինակ, КУКН, 173 I_{x+7}; CTU I, A 8-3 $I_{7'}$.
[9] Мартиросян 1974: 19.

Մեծամոր[3], Էլառ[4], Շամիրամ[5], Հոռոմ[6], Հասանլու IVB[7], Հաֆթավան-թեփե IV[8], Կորդլար Թեփե II-I[9], Դինքա Թեփե II[10], Գյոյ-թեփե[11] և մերձուրմյան ավազանի վաղերկաթեդարյան այլ բնակավայրեր[12], Նորշունթեփե և Աղձնիքի այլ բնակավայրեր[13], Քյոշքերբաբա[14], Ալթընթեփե[15] ևն): Դրանք բոլորն էլ հրդեհվել և ավերվել են Ք.ա. IX դ. վերջ – VIII դ. սկզբներին[16]: Ուրարտական աղբյուրների համաձայն՝ ընդհանուր առմամբ նվաճվել և ավերվել է ավելի քան 1841 բնակավայր, որոնցից 16-ը «արքայական քաղաքներ» են, 383-ը՝ ամրոցներ, շուրջ 1440-ը՝ ամրություններից զուրկ գյուղեր և ավաններ: Աղբյուրների մատնանշած բնակավայրերի մեծամասնությունը տեղորոշվում է Լեռնաշխարհի սահմաններում (304 ամրոց և «արքայական քաղաք», 1284 գյուղ և ավան):

Հինարևելյան աղբյուրներից հայտնի են դեպքեր, երբ հարձակման ենթարկված երկրի բնակչության կորուստը կազմել է մինչև 90 տոկոս: Այս առումով բնութագրական է Ք.ա. 701թ. ասորեստանյան արքա Սինախերիբի կողմից դեպի Հուդայի թագավորություն ձեռնարկված արշավանքը:

Սինախերիբն իր արձանագրություններում հայտնում է Հուդայի թագավորությունից 200.150 մարդու տեղահանելու մասին[17]: Ք.ա. VIII դ. վերջերի համար Հուդայի բնակչության թիվը, հնագիտական իրավիճակից ելնելով, գնահատվում է 110-250 հազարի սահմաններում[18]: Եթե որպես

---

[1] Сорокин 1958: 149; Мартиросян 1961: 63.
[2] Кушнарева 1977: 107 сл.
[3] Խանզադյան և այլք 1973: 56-58, 189.
[4] Խանզադյան 1979: 11:
[5] Արեշյան 1985: 14:
[6] Badaljan *et al.* 1994: 9ff.
[7] Muscarella 1989: 34ff.; նույնի՝ 2012: 267ff., Fig. 18.03 – 18.04, ինչպես նաև ստորև՝ ծնթ. 61:
[8] Burney 1972: 139.
[9] Kroll 2012: 143.
[10] Muscarella 1994: 140.
[11] Kleiss, Kroll 1977: 116.
[12] Muscarella 1974: 82; Danti 2013: 367f.
[13] Hauptmann 1971: 76.
[14] Bilgi 1983: 113f.
[15] Karaosmanoğlu *et al.* 2014: 78.
[16] Smith 2003: 166ff.
[17] Grayson, Novotny 2012, No. 4 (51), 16 (Col. iv 3); etc.
[18] Zorn 2014: 91.

հիմք վերցնենք երկրորդ՝ առավելագույն թիվը և հավատանք ասորեստանյան աղբյուրների տվյալներին, ապա ստացվում է, որ Հուդայի թագավորությունը միայն գերեվարությունների հետևանքով կորցրել է իր բնակչության մոտ 80 տոկոսը: Դրան պետք է գումարել նաև արշավանքի ժամանակ բնակչության կրած զուտ ֆիզիկական կորուստները: Սինախերիբի զորքերի կողմից հրեական Լակիշ քաղաքի գրավման ժամանակ զոհված խաղաղ բնակիչների թիվը, դատելով այստեղ բացված չորս զանգվածային թաղումներից, հասել է առնվազն 1500 մարդու, ներառյալ կանայք և երեխաներ: Դա կարող էր կազմել քաղաքի ողջ բնակչության 75-90 տոկոսը[1], հաշվի առնելով, որ քաղաքը զբաղեցրել է մոտ 8 հա տարածք, իսկ այստեղ բնակչության խտությունը մեկ հեկտարի համար ենթադրվում է 200-250 մարդու սահմաններում[2]: Խաղաղ բնակչության կրած ֆիզիկական կորուստները գերեվարվածների թվաքանակին հավելելու դեպքում մենք կունենանք Սինախերիբի արշավանքի ժամանակ Հուդայի բնակչության կրած կորուստների շատ ավելի մեծ տոկոս:

Այստեղ կարող ենք նշել, որ ուրարտական տեքստերում նույնպես եզակի չեն ավերածություններից և գերեվարություններից բացի բնակչությանը զանգվածաբար ոչնչացնելու մասին տեղեկությունները: Օրինակ, Արգիշթի Մենուայորդու «Խորխորյան տարեգրության» մեջ նշվում է Բիխաուծունի քաղաքն իր բնակիչներով հանդերձ այրելու մասին (URU*bi-[ḫa]-ú-[ṣ/z]u-ni-e* URU-*e* LU*ta-ar-šú-a-na-ra-ni* GIBÍL-*bi*)[3]: Սարդուրի Արգիշթորդու «Գանձադռան տարեգրության» մեջ, խոսելով Կուխա երկրի «արքայական քաղաք» Իլդամուշան գրավելու մասին, հատուկ շեշտվում է տեղի բնակիչներին այրելու և քաղաքի կայազորը ոչնչացնելու փաստը (URU*<il>-[da-mu]-šá-ni* URU MAN-*nu-si* ..... *gu-nu-šá-[a ḫ]a-ú-bi* UNMEŠ*-ra-ni* GIBÍL-*b[i]* LÚ*ir-di* .....KUR*qul-ḫa-i* ..... *za-aš-gu-bi*)[4]: Ուշկիանի և Բամնի (*)[5] լեռների վրա ապաստանած բնակչությանը ոչնչացնելու մասին է նշվում տարեգրության մեկ այլ հատվածում[6]:

Ուրարտական զորքերի կողմից իրականացված զանգվածային կոտորածի հնագիտական վկայության բնութագրական օրինակը Հասան-

---

[1] Zorn 2014: 83ff.

[2] Zorn 1994: 33f.

[3] КУКН, 173 II_{44-45}; CTU I, A 8-3 II_{44-45}.

[4] КУКН, 241D_{x+6-12}; CTU I, A 9-3 $III_{4'-10'}$.

[5] Այսպես է թարգմանված տեղանունը նախորդ հրատարակություններում: Տե՛ս КУКН, 241F27: Միրյո Սալվինին ընթերցում է KUR*ḫa-am-ni*: (CTU I, A 9-3 VI_{27})

[6] КУКН, 241F_{26-28}; CTU I, A 9-3 VI_{26-28}.

լուն է: Վերջինս մերձուրմյան ավազանի վաղերկաթեդարյան շրջանի խոշորագույն քաղաքական կենտրոնն էր, հավանաբար ասորեստանյան աղբյուրների հիշատակած Գիլզանու երկրի մայրաքաղաքը[1]: Ք.ա. IX դ. վերջերին ուրարտական զորքերի կողմից այն նվաճվում է[2]: Հասանլուի IVB շերտի պալատական համալիրի գրավման ժամանակ զոհված բնակիչների թիվը կազմում էր առնվազն 285 մարդ[3], և հաշվի առնելով Հասանլուի տարածքն ու նրանում ընդարձակ պալատական համալիրի գոյությունը՝ կարելի է նշել, որ նվաճողներն ըստ էության կոտորել են քաղաքի ողջ բնակչությանը, ներառյալ մեծաթիվ կանանց, երեխաների և մանուկների[4]: Ընդ որում, բնակիչների մի մասին՝ մոտ 70 հոգու, գերազանցապես կանանց և երեխաների, նվաճողները քշել են դեպի որպես տաճար ծառայող պալատի կառույցներից մեկը՝ այսպես կոչված Burned Building II-ը (կամ բնակիչներն են փորձել ապաստանել տաճարում), որտեղ և անխնա կոտորել են. զոհվածների մեծ մասը մահացու հարված է ստացել գլխին, շատերի վերջույթներն անդամահատված են:

Ինչ խոսք, նշված օրինակները ցույց են տալիս, որ ուրարտական արքաների արշավանքների ժամանակ տեղ են գտել նաև բնակչության զանգվածային կոտորածների դեպքեր: Դրան պետք է հավելել նաև այն փաստը, որ բնակչության ֆիզիկական կորուստներն աճելու էին գերեվարությունների ժամանակ կամ ճանապարհին և հատկապես այն դեպքերում, երբ ուրարտացիները ձերբազատվել են գերի ընկած բնակչության արական՝ զենք կրելու ունակ զանգվածից: Աղբյուրներից դատելով՝ դա կազմել է տղամարդկանց 67-75 կամ գերեվարվածների ընդհանուր թվի 13.27-18.73 տոկոսը[5]: Եթե ընդունենք, որ ուրարտական աղբյուրների վկայություններն իրոք վերաբերում են գերի տարված շուրջ 830 հազար մարդու, ապա կարելի է մտածել, որ գերեվարությունների ընթացքում սպանված զենք կրելու ունակ արական բնակչության ընդհանուր թիվը կազմելու էր մոտ 130-190 հազար մարդ:

Նման հաշվարկի համար հիմք ենք վերցնում չորսից հինգ հոգանոց ընտանիքում առնվազն մեկ չափահաս տղամարդու առկայությունը[6]:

---

[1] Reade 1979: 175ff.

[2] Dyson, Muscarella 1989: 19ff.; Muscarella 1989: 34; նույնի՝ 2006: 75ff., ինչպես նաև վերը՝ ծնթ. 42:

[3] Danti 2013: 354:

[4] Muscarella 1989: 32ff.; նույնի՝ 2006: 77.

[5] Հմմտ. Дьяконов 1983a: 57:

[6] Նորասորեստանյան շրջանի գրավոր աղբյուրներից դատելով՝ մեկ ընտանիքի համար որպես միջին թիվ կարելի է նշել չորս անձը: Տե՛ս Wiggermann

Որպես զուգահեռ այստեղ նույնպես կարող ենք դիմել հինարևելյան աղբյուրներին: Մասնավորապես Սալմանասար III-ի տեքստերից մեկում խոսվում է 2800 ռազմիկների սպանելու և 14.600 մարդու գերեվարելու մասին[1]: Սպանվածների թիվը կազմում է ընդհանուրի մոտ 16 տոկոսը, և կարելի է մտածել, որ այս դեպքում ևս ասորեստանցիները կոտորել են բոլոր զենք կրելու ունակ տղամարդկանց, որոնց աղբյուրն անվանում է «ռազմիկներ» (GAZ.MEŠ): Խեթական տեքստերից մեկում նշվում է արքայի հրամանը դիմադրություն ցուցաբերած քաղաքի բոլոր տղամարդկանց սպանելու և մնացյալ գերիներին (NAM.RA/*arnuwalaš*) արքայի մոտ ուղարկելու մասին[2] և այլն[3]: Չափահաս արական բնակչության կոտորածի հիշատակումների բազմիցս կարելի է հանդիպել «Հին Կտակարան»-ում[4]:

Ինչ խոսք, վերը նշված օրինակները հիմք չեն տալիս պնդելու, որ ուրարտական զորքերն ամենուրեք իրականացրել են բնակչության զանգվածային ջարդեր: Պալատական/տաճարային տիպի տնտեսություն ունեցող ուրարտական պետությունը, որը փորձում էր հաստատվել լեռնաշխարհի հարթավայրային շրջաններում և վերածևելով լանդշաֆտը՝ այն հարմարեցնել պետության պահանջներին, աշխատուժի խիստ մեծ կարիք ուներ, ինչը ստացվում էր հիմնականում գերեվարությունների հաշվին: Այլ բան է, որ նվաճողները գերի տարված հսկայական բնակչությանը վերահսկելու խնդիր ունեին, որը և, ինչպես երևում է, փորձել են լուծել չափահաս արական բնակչությանը զանգվածաբար կոտորելով, իսկ կենդանի թողնված արական սեռի գերիներին, ամենայն հավանականությամբ, կուրացնելով:

Լայնածավալ գերեվարություններին վերաբերող տեղեկություններով հագեցած ուրարտական արքայական արձանագրություններում հանդիպում են նպատակային վերաբնակեցումների վերաբերող ընդամենը մի քանի վկայություններ: Ուրարտական իշխողների իրականացրած գերեվարությունների, ինչպես նաև վերաբնակեցումների ունեցած ազդեցությունը Հայկական լեռնաշխարհի բնակչության էթնոլեզվական պատկերի վրա մենք կքննարկենք մեկ այլ աշխատանքում:

2000: 190; Galil 2007: 346, Tab. 33-34. Հմմտ. նաև Zorn 1994: 33 (միջինը՝ 4-5.5 մարդ): Ուգարիթում մեկ ընտանիքի անդամների միջին թիվը կազմում է 5.25 մարդ: Տե՛ս Garr 1987: 31ff. Տե՛ս նաև՝ Adams 1981: 144.

[1] Grayson 1996: 17 (A.0.102.2: ii 10b-12a).

[2] Hoffner 2002: 63.

[3] Ամփոփ տե՛ս նաև՝ Дьяконов 1963б: 16.

[4] Հղումների համար տե՛ս Zorn 2014: 85f.

Հավելված					
	«տղամարդ»	«պատանի, դեռահաս»	«կին»	«հասակի»	«ծառայություն»
	'aše LÚ^MEŠ	(LÚ)ušše^(MEŠ)	LÚ^MUNUS□edani MUNUS^MEŠ MUNUS^luhi^(MEŠ)	LÚ^MEŠ gumušini LÚ^ERIN^MEŠ	LÚ^UN^(MEŠ) LÚ^karšu□ani
Իշպուինի Սարգոնյանի և Սենուա Իշպուինիանի					
	x+1160	x+2203	x+17270	–	–
Գերեվարված մեկի ընդհանուր թիվը		x+20633			
Սենուա Իշպուինիանի					
	–	–	–	–	x+61812
Գերեվարված մեկի ընդհանուր թիվը		x+61812			
Արգիշտի Սենուայանի					
	x+7637	x+128262	x+83649	16740	x+110705
Գերեվարված մեկի ընդհանուր թիվը		x+346993			
Սարգոնի Արգիշտիանի					
	x+9925	55996	x+113450	12000	x+7150
Գերեվարված մեկի ընդհանուր թիվը		x+198521			
Ռուսա Սարգոնյանի					
	+	–	+	–	–
Արգիշտի Ռուսայանի					
	+	–	+	–	–
Ռուսա Արգիշտիանի					
	+	–	+	–	–
Անհայտ պատկանելությամբ					
	+	–	–	–	x1000+560
Ամբողջը	x+18722	x+186461	x+214369	28740	x+181227
Գերեվարվածների ընդհանուր թիվը			629519		

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ավետիսյան Պ., Մկրտչյան Ռ.. 1994, Թալինի վաղ երկաթեդարյա դամբանների սոցիալ-ժողովրդագրական վերլուծության փորձ, Քալանթարյան, Հարությունյան 1994 գրքում, 24-27:

Արեշյան Գ., 1985, Շամիրամի հուշարձանախմբի սիստեմատիկ պեղումների տասնամյակը, ՀԱԱՆԳՆ 1983-1984, Զեկուցումների թեզիսներ, Երևան, 13-15:

Խանզադյան Է.Վ. 1979, Էլառ-Դարանի, Երևան:

Խանզադյան Է.Վ., Մկրտչյան Կ.Հ., Պարսամյան Է.Ս. 1973, Մեծամոր, Երևան:

Քալանթարյան Ա.Ա., Հարությունյան Ս.Բ. 1994 (խմբ.), Հայաստանի հանրապետությունում 1991-1992 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան նվիրված Գ.Ա. Տիրացյանի հիշատակին, Զեկուցումների թեզիսներ, Երևան:

Арутюнян Н.В. 2001, Корпус урартских клинообразных надписей, Ереван.

Дьяконов И.М. 1952, К вопросу о судьбе пленных в Ассирии и Урарту, ВДИ 1 (39), 90-100.

Дьяконов И.М. 1963а, Урартские письма и документы, Москва-Ленинград.

Дьяконов И.М. 1963б, Община на древнем Востоке в работах советских исследователей, ВДИ 1 (83), 16-34.

Дьяконов И.М. 1968в, Проблемы экономики. О структуре общества Ближнего Востока до середины II тыс. до н.э.: 4. Структура государственного сектора экономики в Западной Азии, ВДИ 4 (106), 3-40.

Дьяконов И.М. 1983а, Урарту, Фригия, Лидия, в кн. Дьяконов 1983в, 267-280.

Дьяконов И.М. 1983б, Царство Шумера и Аккада: III династия Ура, в кн. Дьяконов и др. 1983, 45-68.

Дьяконов И.М. 1983в (ред.), Зарождение древнейших классовых обществ и первые очаги рабовладельческой цивилизации. Часть первая: Месопотамия, "История Древнего Востока", том 1. Москва.

Дьяконов И.М., Неронова В.Л., Свенцицкая И.С. 1983 (ред.), История Древнего Мира, том 2: Расцвет древних обществ. Москва.

Кушнарева К.Х. 1977, Древнейшие памятники Двина. Ереван.

Мартиросян А.А. 1961, Город Тейшебаини по раскопкам 1947-1958гг. Ереван.

Мартиросян А.А. 1974, Аргиштихинили. Археологические памятники Армении 8. Урартские памятники I. Ереван.
Меликишвили Г.А. 1951, Некоторые вопросы социально-экономической истории Наири-Урарту, ВДИ 4 (38), 22-40.
Меликишвили Г.А. 1953, К вопросу о царских хозяйствах и рабах-пленниках в Урарту, ВДИ 1 (43), 22-29.
Меликишвили Г.А. 1954, Древневосточные материалы по истории народов Закавказья I. Наири-Урарту. Тбилиси.
Меликишвили Г.А. 1960, Урартские клинообразные надписи. Москва.
Сорокин В.С. 1958, Следы древнейшего поселения у Кармир-блура, СА 2, 149-163.
Abrahami Ph, Battini L. 2008 (eds.), Les armees du Proche-Orient ancien (IIIe-Ier mill. av. J.-C.), BAR IS 1855. Oxford.
Adams R. McC. 1981, Heartland of Cities. Survey of Ancient Settlement and Land Use on the Central Floodplain of the Euphrates. Chicago – London.
Adams R. McC. 2010, Slavery and Freedom in the Third Dynasty of Ur: Implications of the Garshana Archives, Cuneiform Digital Library Journal, 2010/2, 1-8.
Badaljan R., Kohl Ph., Stronach D., Tonikjan A. 1994, Preliminary Report on the 1993 Excavations at Horom, Armenia, Iran 32, 1-29.
Beal R.H. 2007, Making, Preserving, and Breaking the Peace with the Hittite State, in: Raaflaub 2007, 81-97.
Biber H., Işik K., Erdoğan S. 2015 [2016], The Story of Tirmet Stele (Reconstruction of Tirmet Stele in the Light of New Stele Fragments), AJNES 9/2 (forthcoming).
Bilgi Ö. 1983, Köşkerbaba Höyük Kazilari – 1982, KST 5, 113-116.
Biscione R., Hmayakyan S., Parmegiani N. 2002 (eds.), The North-eastern Frontier. Urartians and Non-Urartians in the Sevan Lake Basin. Roma.
Bradley K., Cartledge P. 2011 (eds.), The Cambridge World History of Slavery, vol. I. The Ancient Mediterranean World. Cambridge.
Brice L.L., Roberts J.T. 2011 (eds.), Recent Directions in the Military History of the Ancient World, "Publications of the Association of Ancient Historians" 10. Claremont, CA.
Burney Ch.A. 1972, Excavations at Haftavān Tepe 1969: Second Preliminary Report, Iran 10, 127-142.
Çilingiroğlu A. 1983, Urartu'da Toplu Nüfus Aktarimlari/Mass Deportations in the Urartian Kingdom, AnAr 9, 311-317 / 319-323.

Çilingiroğlu A., French D.H. 1994 (eds.), Anatolian Iron Ages 3, The Proceedings of the Third Anatolian Iron Ages Colloquium held at Van, 6-12 August, 1990. British Institute of Archaeology at Ankara Monograph No. 16, Ankara.

Danti M.D. 2013, The Late Bronze and Early Iron Age in Northwestern Iran, in: Potts 2013, 327-376.

Dyson R.H., Jr., Muscarella O.W. 1989, Constructing the Chronology and Historical Implications of Hasanlu IV, "Iran" 27, 1-27.

Dyson R.H., Jr., Voigt M. 1989 (eds.), East of Assyria: A Highland Settlement of Hasanlu, "Expedition" 31/2-3, 1-127.

Galil G. 2007, The Lower Stratum Families in the Neo-Assyrian Period, CHANE 27. Leiden – Boston: Brill.

Garcia-Ventura A. 2014, Ur III Biopolitics. Reflections on the Relationship between War and Work Force Management, in: Nadali, Vidal 2014, 7-23.

Garr W.R. 1987, A Population Estimate of Ancient Ugarit, BASOR 266, 31-43.

Gelb I.J. 1973, Prisoners of War in Early Mesopotamia, JNES 32/1-2, 70-98.

Grayson A.K. 1987, Assyrian Rulers of the Third and Second Millennia BC (To 1115 BC), The Royal Inscriptions of Mesopotamia: Assyrian Periods, vol. I. Toronto – Buffalo – London.

Grayson A.K. 1996, Assyrian Rulers of the Early First Millennium BC (858-745 BC), The Royal Inscriptions of Mesopotamia: Assyrian Periods, vol. III. Toronto – Buffalo – London.

Grayson A.K., Novotny J. 2012, The Royal Inscriptions of Sennacherib, King of Assyria (704-681 BC), Part 1, RINAP 3/1, Winona Lake.

Grekyan Y.H. 2015, The Regnal Years of the Urartian Kings Argišti Menuahi and Sarduri Argištihi, AJNES 9/1, 91-124.

Hauptmann H. 1971, Norşun Tepe Kazisi, 1969 / Die Grabungen auf dem Norşun Tepe, 1969, in: Keban Projesi 1969 Çalişmalari, 73-79/81-90.

Heimpel W. 2009, Blind Workers in Ur III Texts, KASKAL 6, 43-48.

Hoffner H.A., Jr. 2002, The Treatment and Long-Term Use of Persons Captured in Battle according to the Maşat Texts, in: Yener, Hoffner 2002, 61-72.

Hudson M., Wunsch C. 2004 (eds.), Creating Economic Order. Record-Keeping, Standardization, and the Development of Accounting in the Ancient Near East, vol. IV. Bethesda, Maryland.

Jas R.M. 2000 (ed.), Rainfall and Agriculture in Northern Mesopotamia, Proceedings of the Third MOS Symposium (Leiden 1999), PIHANS 88.

Istanbul – Leiden.
Karaosmanoğlu M., Korucu H., Yilmaz M.A. 2014, Altintepe Urartu Kalesi Kazi ve Onarim Çalişmalari 2003-2013, in: Kasapoğlu, Yilmaz 2014, 77-96.
Kasapoğlu H., Yilmaz M.A. 2014 (eds.), Anadolu'nun Zirvesinde Türk Arkeolojisinin 40 Yili. Ankara.
Kleiss W., Kroll S. 1977, Urartäische Plätze in Iran: A. Architektur (Stand der Forschung Herbst 1976) - B. Die Oberflächenfunde des Urartu-Surveys 1976, AMI 10, 53-118.
Kroll S. 2012, Ermenistan ve Iran'daki Urartu, "Aktuel Arkeoloji" 30, 140-146.
Kroll S., Gruber C., Hellwag U., Roaf M., Zimansky P. 2012 (eds.), Biainili-Urartu. The Proceedings of the Symposium held in Munich 12-14 October 2007, AI 51.
Leichty E. 2011, The Royal Inscriptions of Esarhaddon, King of Assyria (680-669 BC), RINAP 4. Winona Lake, Indiana.
Lorenz J., Schrakamp I. 2014, "Our Master! Do Not Destroy Us!" The Fate and Role of Non-Combatants in the Wars of the Hittites, in: Nadali, Vidal 2014, 37-64.
MacGinnis J. 2012, Evidence for a Peripheral Language in a Neo-Assyrian Tablet from the Governor's Palace in Tušhan, JNES 71/1, 13-20.
Muscarella O.W. 1974, The Iron Age at Dinkha Tepe, Iran, MMJ 9, 35-90.
Muscarella O.W. 1989, Warfare at Hasanlu in the Late 9th Century B.C., in: Dyson, Voigt 1989, 24-36.
Muscarella O.W. 1994, North-Western Iran: Bronze Age to Iron Age, in: Çilingiroğlu, French 1994, 139-155.
Muscarella O.W. 2006, The Excavation of Hasanlu: An Archaeological Evaluation, BASOR 342, 69-94.
Muscarella O.W. 2012, Hasanlu and Urartu, in: Kroll *et al.* 2012, 265-279.
Nadali D. 2014, The Impact of War on Civilians in the Neo-Assyrian Period, in: Nadali, Vidal 2014, 101-111.
Nadali D., Vidal J. 2014 (eds.), The Other Face of Battle. The Impact of War on Civilians in the Ancient Near East, AOAT 413. Münster.
Oded B. 1979, Mass Deportations and Deportees in the Neo-Assyrian Empire. Wiesbaden.
Olsen B.A. 2014, Women in Mycenaean Greece. The Linear B Tablets from Pylos and Knossos. London – New York.
Palaima T.G. 2004, Mycenaean Accounting Methods and Systems and Their Place within Mycenaean Palatial Civilization, in: Hudson, Wunsch 2004, 269-301.

Parpola S., Whiting R.M. 2002 (eds.), Sex and Gender in the Ancient Near East. Proceedings of the 47th Rencontre Assyriologique Internationale, Helsinki, July 2-6, 2001. Helsinki.

Postgate J.N. 2008, The Organization of the Middle Assyrian Army: Some Fresh Evidence, in: Abrahami, Battini 2008, 83-92.

Potts D.T. 2013 (ed.), The Oxford Handbook of Ancient Iran. Oxford: Oxford.

Raaflaub K.A. 2007 (ed.), War and Peace in the Ancient World. Malden, MA – Oxford – Chichester.

Reade J.E. 1979, Hasanlu, Gilzanu, and Related Considerations, AMI 12, 175-181.

Richardson S.F.C. 2011, Mesopotamia and the "New" Military History, in: Brice, Roberts 2011, 11-51.

Salvini M. 2002, The Historical Geography of the Sevan Region in the Urartian Period, in: Biscione *et al.* 2002, 37-60.

Salvini M. 2008, Corpus die testi urartei, vol. I. Le iscrizioni su pietra e roccia: I Testi, DocAs VIII/1; vol. II, Le iscrizioni su pietra e roccia. Thesaurus, DocAs VIII/2; vol. III, Tavole, DocAs VIII/3. Roma.

Salvini M. 2012a, Corpus die testi urartei, vol. IV. Iscrizioni su bronzi, argilla e altri supporti nuove iscrizioni su pietra paleografia generale, DocAs VIII/IV, Roma.

Smith A.T. 2003, The Political Landscape. Constellations of Authority in Early Complex Polities. Berkeley – Los Angeles – London.

Snell D.C. 2011, Slavery in the Ancient Near East, in: Bradley, Cartledge 2011, 4-21.

Uchitel A. 1984, Women at Work, Historia: Zeitschrift für Alte Geschichte 33/3, 257-282.

Uchitel A. 2002, Women at Work: Weavers of Lagash and Spinners of San Luis Gonzaga, in: Parpola, Whiting 2002, 621-631.

Wiggermann F.A.M. 2000, Agriculture in the Northern Balikh Valley: The Case of Middle Assyrian Tell Sabi Abyad, in: Jas 2000, 171-231.

Yener A.K., Hoffner H.A., Jr. 2002 (eds.), Recent Developments in Hittite Archaeology and History, Papers in Memory of Hans G. Güterbock. Winona Lake.

Zorn J.R. 1994, Estimating the Population Size of Ancient Settlements: Methods, Problems, Solutions, and a Case Study, BASOR 295, 31-48.

Zorn J.R. 2014, War and Its Effects on Civilians in Ancient Israel and Its Neighbors, in: Nadali, Vidal 2014, 79-100.

POPULATION LOSSES OF THE ARMENIAN HIGHLAND IN THE PERIOD OF URARTIAN CAMPAIGNS

Grekyan Yervand
(Institute of Oriental Studies, NAS RA)

Enumeration of population groups captured as prisoners of war is often mentioned in Urartian royal inscriptions. According to these sources, during the campaigns of Urartian kings to the various regions of the Armenian Highland and beyond, around 630,000 people were captured as prisoners of war. In addition, Urartian sources approximately forty times inform about captivity of "men (and) women" without mentioning of specific numerical data. It could estimate additional 200,000 prisoners. With this calculation, the total number of captives could reach up to 830,000 people.

Strangely enough, the Urartian texts always announce about "killing of the some" and "taking others alive". But when we compare the number of captive 'men' with the numbers of other population groups of different ages and sexes (such as 'youths/(male) children (of immature age)', 'warriors', 'women' or 'infants'), it becomes clear that the number of captured 'men' is negligible. It comprises only about 4.18 percent of the total, while the majority of the prisoners consist of 'youths/(male) children' and 'women', 41.59 and 47.82 percent respectively. This fact suggests that the statement of the Urartian texts about "killing of the some" was real and could mainly refer to adult male population of the local communities. It is not accidental that the texts also specifically mention the fact that the enumerated 'men' were taken alive, while in case of 'youths/(male) children' or 'women' this statement never figures in the texts.

If we accept that the evidence of the Urartian sources refer to 830,000 captured people and take off the numbers of 'men' and 'warriors' left alive, then it could be assumed that during the Urartian campaigns the total number of the massacred adult male population constitutes around 67-75 percent of men or 13.27-18.73 percent of the total number of prisoners of war, around 130-190,000 persons.

The Urartian Empire was a palace/temple state, and its economy required extensive manpower that was satisfied mainly through large-scale captures. It was another matter that the invaders faced with the problem of control over the captured people numbering in the hundreds of thousands, a problem, which they tried to solve by mass annihilation of adult men and by blinding and/or castrating the male prisoners, who had a chance to be left alive.

Մարիամ Խանզադյան
(ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ)

ՎԱՂ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Ինչպե՞ս մարդիկ թույլ տվեցին իրենց գցել թակարդը, թույլ տալով պետության վեր խոյացումը իրենց շուրջ և իրենց վրա մինչ այն աստիճան, որ նրանք այլևս ընտրություն չունեին և ոչ էլ ի վիճակի էին մերժել այն»

Էդդան Սաութհոլլ

Վաղ պետականությունների[1] առաջացման և տիպաբանության հարցերը պատմագիտության ակտիվ քննարկվող և վիճահարույց հանգուցակետային առավել լայնածավալ խնդիրներից են, որոնք մեծապես կրել են ժամանակի սոցիալ-փիլիսոփայական համակարգերի ազդեցությունը:

Այս հոդվածում կանդրադառնանք վաղ պետականությունների առաջացման տեսություններին, մասնավորապես այն սոցիալական մեխանիզմներին, որոնք հանգեցնում են բովանդակային նոր կառույցի՝

---

[1] Մասնագիտական գրականության մեջ վաղ պետականություն հասկացությանը զուգահեռ հանդես է գալիս նաև քաղաքակրթություն բառը, որն իր հիմնական հատկանիշներով, մասնավորապես սոցիալական կյանքի կազմակերպվածության ցուցիչներով համապատասխանում է վաղ պետականություն եզրույթին. հասարակություն, որն ունի զարգացած սոցիալական կառուցվածք, պետականություն կամ քաղաքական կազմակերպման ոչ պակաս բարդ ձևեր (Крадин 2012:159): Վաղ պետականություն եզրույթի առավել ամփոփ նկարագրությունը տվել է ռուս հետազոտող Լ.Գրինինը. «Վաղ պետականությունը կատեգորիա է, որը վերաբերում է բավականին խոշոր և բարդ հողագործաարհեստագործական հասարակության (հասարակությունների կամ տարածքների խմբի) քաղաքական կազմակերպման հատուկ ձևին: Այդ ձևն է որոշում հասարակության արտաքին քաղաքականությունը և մասամբ սոցիալական և հասարակական կարգը: Քաղաքական այս ձևը միևնույն ժամանակ բնակչությունից անջատված իշխանության կազմակերպում է, որն ունի գերակայություն և սուվերենություն և ունակ է հարկադրանք իրականացնելու, փոփոխելու հարաբերությունները, մտցնելու նոր նորմեր և վերաբաշխելու ռեսուրսները, և որը հիմնականում կամ մեծամասամբ կառուցված է ոչ ազգակցական սկզբունքով» (Гринин 2012: 10):

պետականության կազմավորմանը:

Պետականության առաջացումը հուզել է հասարակական միտքը դեռևս անտիկ շրջանից: Պլատոնյան «մեր կարիքներն են ստեղծում պետություն»[1,2] և արիստոտելյան «յուրաքանչյուր պետություն – բնական առաջացման արդյունք է»[3] դրույթներին փոխարինելու եկան պետության միջնադարյան աստվածաբանական տեսությունները (Թ. Աքվինացի) և լուսավորչականների «հասարակական պայմանագրի» տեսությունը (Սպինոզա, Ջ.Լոկ, Թ. Հոբբս, Ժ.Ռուսո), որոնց հաջորդեցին Հեգելյան «պետությունը աստծո երթն է աշխարհում»[4], «բռնության տեսությունը» (Ե. Դյուրինգ, Լ.Գումպլովիչ, Կ.Կաուցկի), Լ.Մորգանի ստադիալ զարգացման տեսությունը[5], «օրգանական տեսությունը» (Հ. Սպենսեր, Ռ.Վորմս), որը մեծապես պայմանավորված էր դարվինիզմի տարածմամբ և պատմագիտության մեջ կենսաբանական գործոնի շեշտադրմամբ, Օ.Կոնտի պոզիտիվիստական տեսությունը, խորհրդային և հետևաբար նաև հայ պատմագիտության մեջ XX դարի գերակայող մատերիալիստական կամ մարքսիստական տեսությունը[6], «հոգեբանական տեսությունը» (Լ.Պետրաժիցկի,

---

[1] «Շատ բաների կարիք զգալով՝ մարդիկ հավաքվում են միասին, որպեսզի ապրեն միասին և միմյանց օգնեն: Նման համատեղ բնակությունը մենք անվանում ենք պետություն» (Платон 1986:157, 369):

[2] Асмус 1986: 646.

[3] Аристотель 1983: 378:

[4] Ասատրյան 2014: 165:

[5] Լ.Մորգանի տեսությունը մեծ ազդեցություն ունեցավ Ֆ.Էնգելսի, հետագայում նորէվոլյուցիոնիստական հոսանքի հիմքերում կանգնած Գ.Չայլդի վրա (տե՛ս Лынша 2001):

[6] Ըստ մարքսիստական հայեցակարգի (Կ.Մարքս, Ֆ.Էնգելս, Վ.Լենին)՝ հասարակության զարգացման հիմքում արտադրության զարգացումն է: Արտադրողական ուժերի աճը հանգեցնում է սոցիալ-տնտեսական հարաբերությունների համակարգերի փոփոխությանը. փոխվում են հասարակական արտադրության տեսակները՝ արտադրության միջոցները, և հասարակական-տնտեսական մի ֆորմացիան փոխարինվում է մեկ այլ՝ ավելի առաջադեմ ֆորմացիայով: Արտադրական հարաբերությունները հանդես են գալիս որպես հենք, և նրանց հիմքում սեփականության որոշակի ձևն է: Հենքից վերև քաղաքական և իրավական վերնաշենքն է՝ հասարակական գիտակցության որոշակի ձևը: Պետությունն ունի դասակարգային բնույթ, քանի որ արտահայտում է տիրապետող դասակարգի շահերը: Պետության բռնի ուժի շեշտադրումը համապատասխանում էր խորհրդային հասարակության պետաիրավական համակարգին, ինչն էլ հանգեցրեց Մարքսի, Էնգելսի և Լենինի վիճելի տեսական դրույթների բացարձակացմանը: Այս դոգմատիկ համա-

Զ.Ֆրոյդ), «ոռոգման կամ հիդրավլիկ տեսությունը» (Կ.Վիտֆոգել), Ա.Թոյնբիի «մարտահրավեր-պատասխանի» տեսությունը[1], 1960-ական թթ. սկսած՝ նոր էվոլյուցիոնիստական տեսությունները[2], XX դարի երկրորդ

կարգը գերակայող էր խորհրդային պատմագիտության մեջ մինչև ԽՍՀՄ փլուզումը (Венгеров 2000:8): Մարքսիստական հայեցակարգի ժամանակակից վերաիմաստավորումը տե՛ս Семенов 1997; 2009:

[1] Ա.Թոյնբին այս մարտահրավերները խմբավորել է 5 խմբերում՝ խիստ կլիմայով երկրների, նոր հողերի, հարվածների, ճնշման և սահմանափակման մարտահրավերներ (Тойнби 2010: 178)՝ շարունակելով «մարտահրավեր-պատասխան» բանաձևի վերհանումը տարբեր քաղաքակրթությունների օրինակով: Նշենք, որ Թոյնբիի աշխատանքը թե՛ տարածական, թե՛ ժամանակագրական առումներով խիստ լայնածավալ է և լեցուն պատմափիլիսոփայական և աստվածաբանական շեշտադրումներով. նրա համար պատմությունը մարդկային ստեղծագործական ուժի արտահայտությունն է տարաբնույթ քաղաքակրթությունների տեսքով, որպես նախախնամության թողած հնարավորությունների իրագործում: Թոյնբիի աշխատանքի այս առանձնահատկություններին Լ.Ֆեվրը տվել է դիպուկ մի բնորոշում՝ «քաղաքակրթություններով աճպարարություն» (Февр 1991: 81, 90):

[2] Նոր էվոլյուցիոնիզմը ուղղություն է արևմտյան մարդաբանությունում և սոցիոլոգիայում, որը սկզբնապես զարգացումը դիտարկում էր որպես էվոլյուցիոն զարգացում պարզից դեպի բարդը, ըստ Ջ.Ստյուարդի դպրոցի՝ բազմագիծ, ըստ Լ.Ուայթի՝ միագիծ մոդելներով: Պարզից դեպի բարդ այդ մոդելի շրջանակներում են նաև Սալինզի ու Սերվիսի քառափուլ տեսությունը, ըստ որի՝ սոցիալական էվոլյուցիան դիտարկվում է որպես փուլերի շարք (լոկալ խումբ – ցեղ – ցեղատիրություն - պետություն՝ Service 1971) և Ֆրիդի՝ էգալիտար հասարակություն - աստիճանակարգված հասարակություն – շերտավորված հասարակություն – պետություն մոդելը (Fried 1967): (Ցեղատիրություն եզրույթի առաջացման և զարգացման մասին տե՛ս Крадин 1995: 11-62), 1980-ականներին կոմպլեքս փոխներգործության մոդել առաջարկեց Կլաուսենը՝ պնդելով, որ պետք է ուշադրություն դարձնել ոչ միայն էվոլյուցիոն վերընթաց պոզիտիվ կուտակումներին, այլև այն հանգամանքին, որ ցանկացած մոդել կարող է և՛ դրական, և՛ բացասական հետևանքներ ունենալ, առաջընթաց կամ հետընթաց ապրել: Ավելի ուշ առաջ քաշեց սոցիալական էվոլյուցիայի՝ որպես «ժամանակի մեջ կառուցվածքային վերակազմակերպման գործընթացի» դրույթը: Այս գործընթացի արդյունքում «ի հայտ է գալիս կառուցվածք, որը որակապես տարբերվում է նախորդ ձևից»: Նոր էվոլյուցիոնիստական ուսումնասիրությունները միտված են այդ տեսակի կառուցվածքային փոփոխություններում օրինաչափությունների վերհանմանը: Ավելի մանրամասն տե՛ս Классен 2000: 7-8.

կեսին մարքսիստական հայեցակարգում ի հայտ եկած բազմագիծ զարգացման տեսությունները[1] և այլն[2]:

Արդեն XX դարի երկրորդ կեսին՝ երկու համաշխարհային պատերազմներից և XX դարի սկզբի ճգնաժամային երևույթների վերաիմաստավորման՝ *«մշակույթը զարգանում է ճգնաժամերի շնորհիվ»* հարացույցի շրջանակներում ձևավորվեց «ճգնաժամային տեսությունը», որի շրջանակներում առաջ քաշվեց պետության՝ արտաքին գործոններով պարտադրված չլինելու հանգամանքը: Հիմնական շեշտադրումները դրվում են homo տեսակի էվոլյուցիոն զարգացման ընթացքում ի հայտ եկած և միջավայրի փոփոխություններով պայմանավորված օբյեկտիվ ձևափոխումների վրա: Մասնավորապես ուսումնասիրողները գտնում են, որ Homo sapiens-ի ձևավորման արդյունքում կենդանական և զուգահեռաբար գոյություն ունեցող հոմինիդների առանձնահատուկ կեցության մոդելի ստեղծումն ընթացել է էվոլյուցիոն հինգ հիմնական վեկտորներով. 1. Տեխնոլոգիական հզորության աճ, 2. ժողովրդագրական աճ, 3. կազմակերպչական բարդության աճ, 4. սոցիալական և անհատական բանականության աճ և, վերջապես, 5. ներտեսակային ագրեսիայի զսպման մշակութահոգեբանական մեխանիզմների կատարելագործում[3]:

Աշխատանքային գործիքներ ստեղծելուց մինչև պարզունակ նախապետություններ կազմավորելու խիստ երկարատև ժամանակաշրջանի փուլերը (1,2 մլն տարի առաջ – մ.թ.ա. III հազարամյակ) ըստ էության ոչ այլ ինչ են, քան homo տեսակի՝ ճգնաժամային երևույթները հաղթահարելու և կեցության նոր տեսակներ մշակելու աստիճաններ:

Այդ փուլերից մեկի՝ արտադրող տնտեսության անցնելու հիմքում նույնպես ճգնաժամային երևույթներն էին, որոնք ժամանակին կասկածի տակ դրեցին մարդկության գոյությունն առհասարակ: Այդ ճգնաժամին մարդկությունը պատասխանեց իր սոցիալական և տնտեսական կազմակերպության արմատական վերակառուցումով[4], և այս վերակառուցման խորքային արտահայտություններից մեկն էլ իշխանության կազմակերպման նոր ձևն էր՝ սկսած նեոլիթյան կամ քաղաքային հեղափոխությունից մինչև վաղ պետականությունների առաջացումը:

Արմատապես փոփոխված իրավիճակը համակարգի պատաս-

---

[1] Այս ուղղության մասին տե՛ս Крадин 1995a: 9-10.

[2] Իր մոտեցումն ունի Ռ.Կայնեյրոն, որը պետականության առաջացման բոլոր տեսությունները բաժանում է երկու խմբի՝ վոլյունտարիստական և բռնության վրա հիմնված (Кайнейро 2006: 55-57):

[3] Назаретян 2004б: 52.

[4] Венгеров 2000:14.

խանն էր ձևավորված հանգամանքներին[1] և բովանդակային նոր կառույցի՝ էվոլյուցիոն տեսակետից հեռանկարային մոդելի[2], տվյալ դեպքում՝ պետականության առաջացման պատճառ:

Անշուշտ, վաղ պետական միավոր հասկացությունն անհնար է սահմանափակել կարծրացած գաղափարախոսական սխեմաների պրոկրուստյան մահիճի շրջանակներով. ավանդական տեսություններից[3], բայց ներկայումս առաջ են քաշված վաղ պետականությունների տիպաբանության բազմաթիվ տարբերակներ[4], և նույնիսկ պետության հատկանիշների պարագայում տարընթերցումները բազմազան են[5]:

Պետականության հատկանիշների վերաբերյալ նույնպես միաս-

---

[1] Назаретян 2004a: 325.

[2] Гринин 2007.

[3] Ավանդական հայացքները և տեսությունները կարելի է բնութագրել հետևյալ չափանիշներով. առկա է «նախապետական հասարակություն - պետություն» միագիծ սխեմա, ենթադրվում է հետնախնադարյան հասարակությունների զարգացման միակ իրական էվոլյուցիոն ուղղություն՝ դեպի պետություն, զարգացման յուրաքանչյուր փուլ անխուսափելի է գործնականորեն ցանկացած նախապետական հասարակության համար, և, վերջապես, ցանկացած նույնիսկ ոչ զարգացած պետություն, որպես կանոն, ավելի բարդ է, քան ցանկացած ոչ պետական հասարակություն (Гринин и др. 2006:12):

[4] Կլաուսենն ու Սկալնիկն առաջարկում են սաղմնային, տիպիկ և անցումային վաղ պետականություններ (Claessen&Skalnik 1978), Կրադինն առաջարկում է չհրաժարվել մարքսիստական դրույթից, որ տնտեսության ձևն է կանխորոշում սոցիալական կազմակերպության ձևը (Крадин 1995a: 14), նաև նշվում է որ Ջ.Ստյուարդի հետևորդները մշակել են բազմագիծ մոդել, որտեղ հաշվի են առնված էկոլոգիական բոլոր գործոնները (Sanders&Webster 1978): Էկոլոգիական չափանիշներից ելնելով (մերձարևադարձային, «մեծ գետերի» բերրի շրջաններ և չափավոր էկոլոգիական գոտիներ՝ մետաղյա գործիքների շեշտադրումով)՝ տիպաբանության իր տարբերակն առաջարկել է Յու.Պավլենկոն (Павленко 1989): Երկաթի՝ պոլիսային կառուցվածքում ունեցած դերի մասին տե՛ս Фролов 1988: Երեք տարբերակ նշում է Լ.Կուբբելը՝ ռազմական, արիստոկրատական և պլուտոկրատական (Куббель 1988: 134-135): Պոլիտոգենեզի տարբեր մոդելներ առաջարկում է Ի.Դյակոնովը (Дьяконов 1989: 35-51; նաև՝ Дьяконов 1994):

[5] Ոմանք գտնում են, որ «առայժմ չկա միասնական տեսակետ, թե որ պոլիտիան պետք է համարել պետականություն, և սոցիոմշակութային բարդության որ աստիճանն է տարանջատում նախապետական հասարակությունները պետական հասարակություններից (Гринин и др. 2006: 7):

նական կարծիք չկա[1]: Մանավանդ խորհրդային պատմագիտության և տեսական գրականության մեջ որպես պետականության հատկանիշներ նշվում է այսպես կոչված պետականության դասական եռյակը, որը ձևավորվել է XIX դարում և կիրառվում էր թե՛ մարքսիստական, թե՛ նոր էվոլյուցիոն այլ տեսություններում[2]՝ հասարակության կազմակերպման տարածական սկզբունքը, հարկային համակարգի առկայությունը, զարգացած մասնագիտական պետական ապարատը:

Այս եռյակի, հատկապես զարգացած պետապարատի առկայությունը վիճաբանության թեմա է, եթե խոսքն արդեն կայացած պետականության մասին չէ: Արքայական թիկնապահները, պահակները, վարձու ջոկատները, քիչ թե շատ խոշոր մշտական բանակը և ոստիկանությունը՝ այս բոլոր կառույցները միշտ չէ որ համակարգային բնույթ ունեն, և ըստ

---

[1] Թվարկենք առավել հայտնի տարբերակները. այսպես, ըստ Գ.Չայլդի, քաղաքակրթության (իմա՝ պետականության) ցուցիչները տասն են՝ քաղաքային կենտրոնի առկայություն՝ 7000-20000 բնակչությամբ, մասնագիտացված արհեստավորների, պաշտոնյաների, քրմերի և այլոց առկայություն, վերադասին վճարվող «հավելյալ եկամուտ», կոթողային հասարակական շինություններ, կառավարող դասակարգ, գրային և թվային համակարգեր, հանրահաշվի, երկրաչափության և աստղագիտության սաղմնային դրսևորումներ, արվեստ, արտաքին առևտուր և տարածքային սկզբունքի վրա հիմված պետություն (Childe 1950:10-16): Կլաուսենն ու Սկալնիկն առաջարկում են հետևյալ 6 գործոնները՝ բնակչության աճ, պատերազմ, նվաճում, գաղափարախոսություն, հավելյալ ապրանքի արտադրություն և արդեն գոյություն ունեցող պետությունների ազդեցություն, սակայն ավելի ուշ շրջանի ուսումնասիրություններում որոշ փոփոխություններ են մտցրել. պատերազմն ու նվաճումները երկրորդական գործոնների են վերածվել, իսկ առաջին պլան մղվել են ոռոգումը, առևտուրն ու էնդոգամիան (Claessen&Skalnik 1978: 625): Ըստ Յու.Բերյոզկինի՝ հասարակության սոցիոքաղաքական բարդացման մասին վկայում են կոթողային շինությունները, թանկարժեք ոչ կենցաղային իրերի առկայությունը, խոշոր բնակավայրերը և այդ բնակավայրերի ու շինությունների ակնհայտ աստիճանակարգությունը (Березкин 2012: 139-142): Ըստ Ռ.Կառնեյրոյի՝ պետությունն ինքնուրույն քաղաքական միավոր է, որն իր տարածքում միավորում է բազմաթիվ հանրույթներ, ունի կենտրոնական կառավարություն, որն իրավասու է պատերազմ վարել և հարկադիր աշխատանքներ իրականացնել, հարկեր հավաքել, հրատարակել և կյանքի կոչել օրենքներ (Carneiro 1991:168): Ն.Կրադինը որպես պարտադիր պայմաններ նշում է նստակեցությունը, ինտենսիվ հողագործությունը որպես տնտեսության հիմք, մետաղագործությունը (Крадин 2012:195).

[2] Гринин 2007: 31.

էության նրանք հիմնվում են կազմակերպման արդեն գոյություն ունեցող (տոհմային, սովորութային և այլն) ավանդույթների և ձևերի վրա: Առավել ևս փոքր պետությունների պարագայում հարկադրման պրոֆեսիոնալ ապարատն ընդհանրապես թույլ էր:

Եռյակի մյուս բաղադրիչը հասարակության կազմակերպման տարածքային սկզբունքն է: Ըստ ավանդական պատկերացումների[1] պետության մասին կարելի է խոսել այն դեպքում, երբ հասարակության կազմակերպման ազգակցական սկզբունքը ամբողջությամբ դուրս է մղվում: Այս հակադրումը հետագայում լուրջ քննադատության է արժանացել[2]. Մանավանդ վաղ պետականությունների պարագայում դժվար է հստակ տարանջատել ազգակցական և տարածքային սկզբունքները: Ըստ Կլաասենի և Սկալնիկի՝ տիպիկ վաղ պետականության պարագայում ազգակցական կապերը դեռևս հավասարակշռվում են տարածքային կապերով, բայց և առաջատար դեր վարչական մարմիններում խաղում են ոչ բարեկամական սկզբունքով առաջ եկած պաշտոնյաները[3]: Բոնդարենկոն նշում է նաև, որ հատկապես Մերձավոր Արևելքի երկրների պարագայում հողագործական հասարակություններում ազգակցական համայնքի վերացման դեպքերը խիստ հազվադեպ են[4]: Ընդհանուր առմամբ, պետք է նշել, որ մինչպետական և պետական կազմավորումներում կարևորվում է ոչ այնքան տարածական բաժանման առկայությունը կամ բացակայությունը, այլ այն հանգամանքը, որ անցումը պետականության ուղեկցվում է «բնական» տարածական բաժանումից «արհեստական» բաժանման անցումով. Նահապետական քաղաքական կազմակերպությունից ժառանգելով բնական տարածքային բաժանումը՝ ձևավորվող պետականությունը սկսում է այն արհեստականորեն փոփոխել, ինչն ավելի պարբերական բնույթ է կրում: Սակայն միշտ չէ որ վաղ պետականություններում տարածական փոխակերպման այս սկզբունքը դրսևորվում է կանոնավոր: Վերջիններս հաճախ ներկայանում են որպես տարաբնույթ՝ կազմակերպման տոհմային և էթնիկ, տարածական և խառը սկզբունքներով: Ավելին, հետագայի զարգացած և հասուն պետականությունները նույնպես դրսևորում են մի իրավիճակ, երբ փաստացի առկա են պետականության մի տեսակ կենտրոնում և տարաբնույթ պոլիտիաներ ծայրամասերում[5]: Այսպիսով, «հիմքեր

---

[1] Հիմքում, իհարկե, Լ.Մորգանի տեսակետն է (Морган 1935: 7):

[2] Տե՛ս Бондаренко 2012: 112-113.

[3] Claessen&Skalnik 1978, հղումը ըստ Бондаренко 2012: 102.

[4] Бондаренко 2012: 105-106.

[5] Տարածքային փոխակերպումները վաղ պետականությունների դեպքում ունեն ևս մեկ առանձնահատկություն. հաճախ գրավոր աղբյուրների բացակա-

չկան այս կամ այն հասարակության պատմության մեջ ինչ-որ մի թռիչք՝ ազգակցականի լիակատար գերակայությունից դեպի տարածքային կապերի բացարձակ տիրապետություն փնտրելու համար»[1]:

Եվ երրորդ բաղադրիչի՝ հարկային համակարգի առկայությունը և բացակայությունը նույնպես քննարկումների առարկա են: Մասնագետները գտնում են, որ վաղ հասարակությունների դեպքում երբեմն դժվար է զանազանել հարկը տուրքից, նվերներից, ռեցիպրոկացիայի վրա հիմնված վերաբաշխումից[2], ժամանակավոր փոխառություններից, հարկադրական աշխատանքի որոշ տեսակներից: Մյուս կողմից՝ սեփական հպատակները հարկային պարտավորվածությունից կարող էին ազատված լինել, բայց օտարերկրացիները և առևտրականները լինեին հարկատու. հարկերը կանոնավոր բնույթ չէին կրում և այլն:

Վերոհիշյալ եռյակից բացի, քննարկման առարկա են նաև պոլիտոգենեզին նպաստող ներքին (մշակութային գործոններ, օրինակ՝ գաղափարախոսություն) և արտաքին (էկոլոգիական, սոցիալական, միջամայնական հարաբերություններ[3] և այլն) գործոնների հիմնախնդիրները[4]: Որոշ ուսումնասիրողներ առանձնահատուկ ուշադրություն են դարձնում եռամակարդակ սոցիալական շերտավորմանը[5], գրային համակարգին՝ որպես ջրբաժանի, որը տարանջատում է նախապետական հասարակությունները քաղաքակրթությունից[6] և այլ գործոններին:

յության պարագայում օգնության է գալիս հնագիտությունը: Հնագիտական ուսումնասիրությունները թույլ են տալիս բացահայտել բարդ սոցիալական կառուցվածքի հատկանիշները՝ բնակավայրերի աստիճանակարգություն, կացարանների և դամբարանների շերտավորում, ինչը վկայում է ազնվականության կամ վերին խավի առկայության մասին (Лозный 1995: 106):

[1] Бондаренко 2012: 116.

[2] Կառավարվողները կառավարողին տրամադրում են բնամթերք և ծառայություններ՝ կամավոր-պարտադիր նվերների, տուրքերի, հասարակական աշխատանքների և այլնի տեսքով, իսկ փոխարենը ստանում իրենց նյութական ծախսերի փոխհատուցում հիմնականում գաղափարախոսական ոլորտում, և վաղ պետականության զարգացմանը զուգընթաց ռեցիպրոկացիան ստանում է ավելի ու ավելի անհամաչափ, ոչ սիմետրիկ բնույթ (Кочакова 1995: 159):

[3] Амброзино 1995: 71-72.

[4] Քաղաքակրթության հատկանիշների մանրամասն քննարկումը տե՛ս Крадин 2012:

[5] Claessen 1978: 587-588.

[6] Крадин 2012: 177.

Պետականության հատկանիշներից բացի, քննարկման առարկա է նաև պետականաստեղծ գործոնների հարցը: Ի՞նչ «էական պայմաններ»[1] են անհրաժեշտ, որպեսզի որոշակիորեն ինքնակազմակերպված նախապետական հանրույթը վերափոխվի պետականության: Վերը նշված ճգնաժամը ի՞նչ դրսևորումներ պետք է ունենա վաղ հասարակություններում՝ դրանք էլ ավելի համախմբելու և «հասարակական ձեռքբերումները որոշակի սոցիալ-ինտեգրատիվ մատրիցայի»[2]՝ էվոլյուցիոն նոր մակարդակի բարձրացնելու համար:

Մեզ առավել համալիր և ամփոփ է թվում ռուս հետազոտող Գրինինի դասակարգումը: Այսպես, գոյություն ունեն պետականության անցման երկու հիմնական ուղիներ.

1. Ուղղահայաց, այսինքն անցում ավելի ցածր փուլից ավելի բարձր փուլի, ինչը կապված է հասարակության ծավալի ու բարդացման աճի հետ, և այդ բարդացումը տեղի է ունենում առավել մանր հասարակարգերի՝ ավելի մեծ պոլիտիայի մեջ միավորվելու միջոցով, ընդ որում այս տարբերակը ժամանակային առումով ավելի արագ, երբեմն էլ սրընթաց գործընթաց կարող է լինել:

2. Հորիզոնական, այսինքն՝ էվոլյուցիայի նույն փուլի շրջանակներում անցումը էվոլյուցիոն զարգացման մյուս գծին: Երկրորդ տարբերակն առաջին հերթին կապված է ոչ թե ծավալների ու բարդության աճի, այլ հասարակության ներսում կառուցվածքային փոփոխությունների հետ: Այս փոխակերպումը հորիզոնական է, և ըստ էության նախապետական հասարակությունը կամ պոլիտիան՝ որպես պետականության անալոգ (նմանակ), իր զարգացման ցանկացած փուլում այս կամ այն ազդակի հետևանքով կարող է վերաճել պետականության:

Պոլիտոգենեզի և վաղ պետականությունների առաջացման պատճառները համալիր բնույթ ունեն: Անցում արտադրող տնտեսության, աշխարհագրական և կլիմայական առանձնահատկություններ (Կ.Վիտֆոգել, Լ.Մեչնիկով), բնակչության աճ[3], միգրացիաներ[1], հավելյալ ապրանքի

---

[1] Claessen 2002: 105.

[2] Клягин 1996: 108-107.

[3] Որոշ ուսումնասիրողներ հստակ թիվ են առաջարկում: Չայլդը նշում էր, որ բնակչության մինիմումը (նվազագույնը) տվյալ դեպքում պետք է կազմի 7000 մարդ (Childe 1950: 10): Ըստ Կլյագինի՝ փոքր մարդկային պոպուլյացիան (հազար հոգուց պակաս) ցուցաբերում է անկանխատեսելի պահվածք, իսկ խոշոր մարդկային պոպուլյացիայի (մոտավորապես 10000 և ավելի) վարքը դինամիկ օրինաչափություններ ունի: (Клягин 1996: 86, 92-93): Բարդ շերտավորված հասարակություն ձևավորելու համար անհրաժեշտ է մարդկանց

ավելացում[2], հանրույթների միջև կապերի աշխուժացում, պրեստիժային բարիքների դերի աճ, տնտեսական կոոպերացիայի և կառավարողների և կառավարվողների միջև ծառայությունների փոխանակում[3], ռեսուրսների պակաս, կրոնի զարգացում, աշխատանքի բաժանում, մարդկային ինտելեկտի զարգացում և այլ պատճառներ, այս կամ այն համադրությամբ առաջ են քաշված բազմաթիվ գիտնականների կողմից[4], նայած թե որ ազ-

---

որոշակի թիվ, որն էլ կապահովի վարչարարների, ծառաների, քրմերի, զինվորների և այլոց պահանջը (Claessen 2002: 107): Ժողովրդագրական գործոնի մասին հետաքրքիր դիտարկում է արել Ա.Կորոտաևը. Նեոլիթյան հեղափոխությունից մի քանի հազար տարի անց մարդկությունը մեծ թվով նորամուծություններ է կատարել, որոնք բարձրացրել են աշխատանքի արդյունավետությունը և ներունակ էին բարձրացնելու մարդկանց մեծամասնության կենսամակարդակը: Սակայն լրացուցիչ այս ռեսուրսները միշտ օգտագործվել են վերարտադրողական հաջողության մեծացման համար: Կենսամակարդակի ցանկացած բարձրացմանը հետևել են մանկական մահացության կրճատում և վերարտադրողական տարիքի հասած երեխաների թվի աճ: Արդյունքում լրացուցիչ ռեսուրսները նախևառաջ նպաստում էին բնակչության աճին, և այդ աճը շատ արագ խժռում էր այդ ռեսուրսները: Արդյունքում ցիկլի վերջում բնակչության մեծամասնության կենսամակարդակը վերադառնում էր նախկին վիճակին, եթե նույնիսկ ավելի չէր իջնում (Коротаев 2003: 215):

[1] Վերոհիշյալ գործընթացների զարգացման մեջ հսկայական դեր են խաղում արտաքին հարաբերությունները և այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ պատերազմները, վերաբնակեցումները, առևտուրը, փոխառությունները: Չնայած միջհամայնքային շփման այս ձևերն ուսումնասիրվում են, սակայն ընդհանուր առմամբ պետության առաջացման տեսության մեջ արտաքին գործոնների դերը անարժանիորեն նվազեցված է» (Гринин 2007: 35):

[2] Մարքսիստական հարացույցում՝ տնտեսական գործոններ և դասակարգային պայքար:

[3] Service 1971: 1975.

[4] Նշենք մի քանիսը. պետականության առաջացման գլխավոր խթան Մորգանը համարում է տոհմական հաստատությունների անկարողությունը բավարարելու հասարակության հարաճուն կարիքները, և մասնավորապես քաղաքների ի հայտ գալը, քանի որ քաղաքը՝ հասարակությունը փոխելով, կառավարման համակարգի առջև դրեց նոր մարտահրավերներ. պաշտոնյաների, դատավորների, տարբեր աստիճանների զինվորական և մունիցիպալ պաշտոնատար անձանց, ինչպես նաև բանակի հավաքագրման և կենսապահովման կարիքն ավելացավ: Առաջնորդների ժողովի պարտականությունները և պատասխանատվությունը աճեցին, և ըստ երևույթին այն այլևս

դակներն են գերակայող պետականության այս կամ այն մոդելի (նմուշ-օրինակի) կազմավորման դեպքում:

Այժմ անդրադառնանք ռեսուրսների պակասի կամ միջավայրի սահմանափակվածության գործոնին: Այս գործոնի մասին կարելի է խոսել, երբ համայնքի կենսոլորտը սահմանափակված է հստակ աշխարհագրական սահմաններով, երբ համայնքը մեկ այլ վայր տեղափոխվելու կամ հողատարածքներն ավելացնելու հնարավորություն չունի, կամ էլ ինչ-ինչ պատճառներով վերափոխված միջավայրի մարտահրավերներին նոր պատասխաններ տալու անհրաժեշտություն է ծագել: Միջավայրի սահմանափակվածության գործոնի իր բացատրությունն է առաջարկել Ռ.Կարնեյրոն: Ըստ այս տեսակետի՝ անցումը դասակարգային հասարակության հնարավոր է զարգացած երկրագործական այնպիսի տնտեսության առկայության դեպքում, որը տվյալ պետական մոդելի տնտեսության հիմքն է: Սակայն խոսքը ոչ թե առհասարակ երկրագործական հասարակությունների մասին է, քանի որ պատմության մեջ բազմաթիվ են դեպքերը, երբ հասարակությունը երկրագործական է, բայց հավելյալ արդյունք չի տալիս, այլ այն երկրագործական հասարակությունների մասին, որոնք հավելյալ արդյունք արտադրելու տեխնիկական հնարավորություններից զատ ունեն այդ արդյունքն արտադրելու սոցիալական մեխանիզմներ[1]: Սոցիալական այդ մեխանիզմը Կլաուսենի նշած խթանող իրադարձությունն է, որի և հասարակության մեջ առկա պայմանների համադրությամբ էլ ի հայտ է գալիս պետությունը[2]:

Փորձենք նախնական դիտարկումներ անել Հայկական լեռնաշխարհի վաղ պետական միավորների առաջացման սոցիալական մեխանիզմների մասին:

ունակ չէր կառավարելու: (Морган 1935: 148): Կլաուսենը որպես անհրաժեշտ պայմաններ նշում է պաշտպանության կազմակերպման անհրաժեշտությունը, կոլեկտիվ աշխատանքներ կատարելու, խիտ բնակեցված տարածքներում կարգ ու կանոն հաստատելու անհրաժեշտությունը (Claessen 2002: 106) Լ.Գրինինը պատմականորեն ծագած առաջին պայման է համարում բարձրարդյունավետ և լայնամասշտաբ ոռոգելի տնտեսությունը, ավելի ուշ շրջաններում՝ գութանային հողագործության և մետաղագործության զարգացումը, ռազմական տեխնիկայի և պատերազմներ վարելու ձևերը, փոխառությունները (գրային համակարգ, իրավական համակարգ, զարգացած կրոն) և այլն: (Гринин 2001: 25). Առ այսօր գոյություն ունեցող տեսակետների քննարկումը տե՛ս Гринин 2007: 39. Сорокин 1992: 521:

[1] Карнейро 2006: 58-59.

[2] Claessen 2002: 110.

Հայկական լեռնաշխարհը ներառված էր տարածաշրջանի սոցիալ-մշակութային վերածնումների մեջ՝ սկսած մ.թ.ա. X-VIII հազարամյակներից: «Կենսապահովման համակարգը համեմատաբար կարճ պատմական ժամանակահատվածում պետք է հանգեցներ ժողովրդագրական «պայթյունի» և հանրության զբաղեցրած կենսախորշի վրա ժողովրդագրական աննախադեպ ճնշմանը, ինչն իր հերթին պետք է ծներ այդ հանրության տրոհման-սեգմենտավորման պահանջ՝ առաջացնելով քաղաքակրթության նախաշեմին գտնվող կամ քաղաքակրթության «հորձանուտի» մեջ քաշված հասարակություն»[1]:

Ո՞ր գործոնները կարող էին նպաստել Հայկական լեռնաշխարհում գոյություն ունեցող «կոմպլեքսային հասարակությունների» կայացման փուլում[2] գտնվող հանրույթների՝ պետականության վերաճելուն[3]: Ճգնաժամային ի՞նչ ազդակ կարող էր ունենալ իր դերակատարումը:

Կարծում ենք, որ այդ խթանի դերում կարող էին հանդես գալ երկու գործոններ, նախ՝ միջավայրի սահմանափակվածության գործոնը, տվյալ դեպքում՝ կլիմայական փոփոխությունները, որոնք լուրջ ազդեցություն են ունեցել տնտեսության վրա. «Ք.ա. 3250-2900 թթ. և Ք.ա. 2350-2000 թթ. նկատվում է խոնավ կլիմայի և տեղումների լուրջ անկում, որի հետևանքը Վանա լճի, Եփրատի, Տիգրիսի և Առաջավոր Ասիայի այլ ջրային ռեսուրսների խիստ նվազումն է, նաև անտառածածկույթի էական կրճատումը»[4]: Ավելացնենք, որ հենց այս ժամանակաշրջանն է Պ.Ավետիսյանը նշում որպես Հայկական լեռնաշխարհում վաղ պետականությունների սաղմնավորման և արմատավորման շրջան[5]: Դրան հավելենք Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական և բնակլիմայական առանձնահատկությունները (կտրտված ռելիեֆ, կլիմայական հակադրություններ, երկրագործության և ընդհանրապես կենսապահովման համար անբարենպաստ պայմաններով աչքի ընկնող զգալի տարածքներ և այլն)[6], և միջավայրի սահմանափակվածության գործոնը մեր պարագայում առավել առարկայական բնույթ կստանա:

Որպես ևս մեկ ազդակ, որը կարող էր գործի դնել պետականության առաջացման մեխանիզմը, Պ.Ավետիսյանը նշում է առևտուրը, մանավանդ կապված Խարբերդ-Մալաթիա շրջանի հետ, որտեղ առևտու-

---

[1] Ավետիսյան 2014: 14-15:
[2] Նույն տեղում:
[3] Ավետիսյան 2014: 14-67:
[4] Քոսյան 2013: 14:
[5] Ավետիսյան 2014:14-67:
[6] Քոսյան 2014: 5:

ը և փոխանակության վերահսկողության ապահովման և կազմակերպման անհրաժեշտությունը նույնպես կարող էին հանդես գալ որպես նախադրյալներ[1]:

Նշենք, որ սրանք նախնական դիտարկումներ են, որոնք անհրաժեշտ է լրացնել աշխարհագրական և սոցիալական միջավայրերի ու զարգացման դրսևորվող միտումների հետագա ուսումնասիրությամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ասատրյան Գ.Ե. 2014, Հումանիզմի հիմնախնդիրը Հեգելի փիլիսոփայական ուսմունքում, ԼՀԳ 1, 161-171:

Ավետիսյան Պ. 2014, Հայկական լեռնաշխարհը մ.թ.ա. XXIV-IX դարերում (սոցիալ-մշակութային ձևափոխումների դինամիկան ըստ հնագիտական տվյալների), գիտական զեկուցում, Երևան:

Քոսյան Ա.Վ. 2013 (խմբ.), Հայաստանի հարակից երկրների պատմություն, հատոր I, Երևան:

Քոսյան Ա. 2014, Հայոց վաղ պետականության մի խնդրի շուրջ, Բանբեր հայագիտության, Երևան 1(4), 5-25:

Амброзино Дж.Н. 1995, Внешние контакты между обществами и возникновение государства, в сб. Ранние формы политической организации: от первобытности к государственности, Москва, 69-76.

Асмус В.Ф. 1986, Комментарий к Государству Платона. Сочинения в четырех томах, том 3, часть 1, 628-668.

Аристотель. 1983, Политика, Книга 1:8 в Аристотель, Сочинения в четырех томах, том IV, Москва.

Березкин Ю.Е. 2012, Археология, этнография и политогенез, в РФПС, 135-158.

Бондаренко Д.М. 2012, Родственный и территориальный принципы организации общества и феномен государства, в РФПС, 99-134.

Венгеров А.Б. 2000, Теория государства и права, Москва.

Гринин Л.Е.2001, Генезис государства, часть I, Философия и общество 4,5-60.

Гринин Л.Е. 2007, Государство и исторический процесс, Москва.

Гринин Л.Е. 2012, Ранние государства и их аналоги в политогенезе: типологии и сопоставительный анализ, в РФПС, 9-98.

Гринин Л.Е, Бондаренко Д.М., Крадин Н.Н., Коротаев А.В. (ред) 2006,

---

[1] Ավետիսյան 2014: 63:

Раннее государство, его альтернативы и аналоги, Волгоград.
Дьяконов И.М. (ред) 1989, История древнего мира, том 1, Ранняя древность, Москва.
Дьяконов И.М. 1994, Пути истории: от древнейшего человека до наших дней, Москва.
Карнейро Р. 2006, Теории происхождения государства, в Раннее государство, его альтернативы и аналоги, 55-70.
Классен Х.Дж. М. 2000, Проблемы, парадоксы и перспективы эволюционизма, в сб. Альтернативные пути к цивилизации.
Клягин Н.В. 1996, Происхождение цивилизации (социально-философский аспект), Москва.
Коротаев А.В. 2003, Социальная эволюция: факторы закономерности, Москва.
Кочакова Н.Б. 1995, Размышления по поводу раннего государства, в сб. Ранние формы политической организации: от первобытности к государственности, Москва.
Крадин Н.Н. 1995а, От однолинейного взгляда на происхождения государства к многолинейному, в сб. Альтернативные пути к ранней государственности, Владивосток.
Крадин Н.Н. 1995б, Вождество: современное состояние и изучения, в сб. Ранние формы политической организации: от первобытности к государственности, Москва, 11-62.
Крадин Н.Н. 2012, Археологические критерии цивилизации: кросс-культурный анализ, в РФПС 2012, 159-180.
Куббель Л.Е. 1988, Очерки потестарно-политической этнографии, Москва.
Лозный Л. 1995. Переход к государственности в Центральной Европе, в сб. Альтернативные пути к ранней государственности, Владивосток, 105-116.
Лынша В.А. 2001. Гордон Чайльд и американский неоэволюционизм, Этнографическое обозрение 5, 3-17.
Морган Л. 1935, Древнее общество или исследование линий человечекого прогресса от дикости через варварство к цивилизации, Ленинград.
Назаретян А.П. 2004а, Антропогенные кризисы: гипотеза техно-гуманитарного баланса, ВРАН 74/4, 319-330.
Назаретян А.П. 2004б, Цивилизационные кризисы в контексте Универсальной истории, Москва.
Павленко Ю.В. 1989, Раннеклассовые общества: генезис и пути развития, Киев.

Платон 1986, Сочинения в четырех томах, том 3, часть 1.
Сорокин П.А. 1992, Человек. Цивилизация. Общество, Москва.
Февр Л. 1991, От Шпенглера к Тойнби, в сб. Бои за историю, Москва.
Фролов Э.Д. 1988, Рождение греческого полиса, Ленинград.
Тойнби А. 2010, Постижение истории. Москва.
Carneiro R.L. 1991, The Nature of Chiefdom as Revealed by Evidence from Cauca Valley of Colombia, Profiles in Cultural Evolution, Michigan.
Childe V.Gordon. 1950. The Urban Revolution, The Town Planning Review, Vol. 21, No. 1 (Apr., 1950), 3-17.
Claessen H.J.M., Skalnik P. 1978 (eds.), The early state. The Hague.
Claessen H.J.M. 2002, Was the State Inevitable? Social Evolution & History. Volume 1, Number 1, 100-117.
Fried M.H. 1967. The evolution of political society; An essay in political anthropology. New York.
Service E.R. 1971. Primitive social organization. New York.
Steward J.H. 1955. Theory of culture change. Urbana,

ABOUT SOCIAL MECHANISMS OF THE GENESIS OF EARLY STATES

Khanzadyan Mariam
(Institute of Oriental Studies, NAS RA)

Genesis and typology of early states are amongst the most serious and discussed topics of history which were influenced greatly by the social-philosophical systems.

Already by the second half of the XX century there arose the "Crisis Theory", which suggested that states weren't imposed by external factors. The main emphasis was placed on the objective developments that started first during the "homo" specie evolution and then were conditioned also by the changes in environment.

Behind the transition to the "Production economy" again there were the Crisis phenomena, which once even endangered the existence of mankind itself. Humans reacted to that Crisis by core revision of their social and economic organization, and one of the key reflections of this reconstruction was the new form of government, from the Neolithic or urban revolution to the emergence of early states.

What kind of impact should have this Crisis on early societies of the Armenian Highland in bringing them together?

Two factors could have been crucial. At the first place, the environmental factor, namely the climate changes, which had serious impact on the economy. "In 3250-2900's and 2350-2000's B.C there was a significant decline in humidity and precipitation, which resulted in sharp decline in Lake Van, Euphrates, Tigris and other western water resources, as well as a substantial reduction of forested areas. We would like to note, that P.Avetisyan named this very time frame as the period of emergence and establishment of early statehood in the Armenian Highland. If we add to these also the geographic and climatic features of the Armenian Highland (sharp cut reliefs, climatic contrasts, considerable areas unsuitable for agricultural production and living in general) then the environmental factor becomes more apparent.

As a second factor for the emergence of the statehood P.Avetisyan mentions trade, especially in connection with the Kharberd-Malatia region, where the trade and hence the need to organize and control that exchange could also have been a precondition for the emergence of statehood.

Բ.գ.դ. Խաչիկյան Մարգարիտ
(ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ)

ԽՈՒՌԻ-ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՆԱԽԱԼԵԶՎԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՓՈՐՁ

Ստորև կփորձեմ շատ հակիրճ ներկայացնել իմ պատկերացումները խուռի-ուրարտական նախալեզվի մասին:

Ինքնին հասկանալի է, որ որևէ լեզվաընտանիքի նախալեզվի վերականգնումը խիստ պայմանական բնույթ է կրում և չի կարող հավակնել լիակատարության: Խնդիրն առավել է բարդանում, երբ լեզվաընտանիքը ներկայացված է ընդամենը երկու մոտ ցեղակից մեռած լեզուներով, որոնց ուսումնասիրվածության աստիճանը հեռու է կատարյալ լինելուց: Այդպիսին է վիճակը խուռիերենի և ուրարտերենի դեպքում: Այդուհանդերձ, այն հանգամանքը, որ խուռիերեն տեքստերն արտացոլում են լեզվի զարգացման տարբեր փուլեր, փոքր-ինչ մեծացնում է ուսումնասիրողի հնարավորությունները:

Խուռիերեն աղբյուրների վերլուծությունը բերում է հեղինակին այն եզրակացության, որ խուռիերենում կարելի է առանձնացնել զարգացման երեք փուլ՝ վաղ, հին և նոր:

Վաղ փուլը ներկայացված է մ.թ.ա. III հզ. վերջերով թվագրվող արձանագրությամբ՝ Ուրկեշի (հյուսիսարևմտյան Սիրիա) առաջնորդ Տիժադալի կողմից տաճարի հիմնադրման մասին, հին փուլը՝ Մարիում (Եփրատի միջին հոսանք) և հարավային Միջագետքում հայտնաբերված մ.թ.ա. II հզ. սկզբի հմայական տեքստերով, միջին խեթական շրջանի (մ.թ.ա. 15-14դդ.) խուռի-խեթական երկլեզու տեքստով, ինչպես նաև Բողազքյոյում գտնված մի շարք այլ տեքստերով[1], նոր փուլի կարևորագույն ներկայացուցիչը Միտաննիի արքա Տուշրատտայի փարավոն Ամենհոտեպ III-ին հասցեագրված նամակն է (մ. թ. ա. 14դ. կեսեր)

Ուրարտական տեքստերի խիստ ստանդարտացված բնույթը լեզվի զարգացման փուլերի բացահայտումը դարձնում է անհնարին:

Վաղ խուռիերենի ուշագրավ առանձնահատկությունն այն է, որ, չնայած լեզվում թեք հոլովների առկայությանը, ենթական և ուղիղ խնդիրն

---

[1] Հատուկ տեղ է զբաղեցնում Ուգարիթում հայտնաբերված շումերա-խուռիական բառացանը: Վերջինիս բայաձևերը տարբերվում են թե՛ հին, թե՛ նոր խուռիականներից: Հավանաբար այս տեքստում արտացոլված է հին խուռիերենի առանձին բարբառ:

աննշույթ են: Ի տարբերություն հին և նոր խուռիերենի՝ այստեղ *-š/ž* ցուցիչը հանդես է գալիս ոչ թե էրգատիվ (անցողական բայերի ենթակայի հոլով էրգատիվ տիպաբանության լեզուներում), այլ կրավորական/օբյեկտակենտրոն նախադասություններում գործող անձն արտահայտող թեք հոլովի դերում: Հին խուռիերենում այդ ցուցիչը հանդես է գալիս թե՛ էրգատիվ, թե՛ թեք հոլովի իմաստով, մինչդեռ նոր խուռիերենում և ուրարտերենում այն պահպանում է միայն էրգատիվ հոլովի իմաստը: Ելնելով բայի էրգատիվ խոնարհման ցուցիչների և ստացական դերանվանական ածանցների ծագումնաբանական կապից՝ կարող ենք ենթադրել, որ էրգատիվ հոլովի ցուցիչը սկզբնապես արտահայտել է սեռական/ստացական/հարաբերական հոլովի իմաստ: Ուստի կարելի է եզրակացնել, որ խուռի-ուրարտական նախալեզվում առկա էին սեռական հոլովի երկու տարբեր ցուցիչներ՝ խուռիերենից և ուրարտերենից մեզ հայտնի **-we* (> խուռ. *-we*, ուր. *-y*) և **-š*[1]:

Զգալի նմանություն է նշմարվում ուրարտերենի և հին խուռիերենի միջև, հմմ. բացարձակ հոլովի հոգնակի թվի արտահայտումը 3-րդ դ. Հոգնակի անձնական դերանվանական ածանցի (խուռ. *–l*(*la*), ուր. *-le*) միջոցով, ժամանակի քերականական կարգի բացակայությունը, կերպային (կատարյալ : անկատար) տարբերությունների արտացոլումը բացառապես անցողական բայերում, կատարյալ կերպի և անիրական եղանակների կրավորական/օբյեկտակենտրոն բայաձևերում վիճակի բայերի ցուցիչ *-o-* թեմատիկ ձայնավորի ներկայությունը: Միևնույն թեմատիկ ձայնավորի գործածությունից թե՛ անցողական բայերի կատարյալ կերպի և թե՛ անցողական բայերի կրավորական ձևերում հետևում է, որ կատարյալ կերպի անցողական բայերի խոնարհման հիմքում ընկած են կրավորական ձևերը[2]:

Նոր խուռիերենի համար բնորոշ է կերպային համակարգի փոխարինումը ժամանակի քերականական կարգով, որն ընդգրկում էր ոչ միայն անցողական, այլև անանցողական բայերը: Ներկա ժամանակի աննշույթ ձևերին հակադրված էին անցյալի *-ož-* և ապառնիի *-ed*-ցուցիչները, որոնք ավելի վաղ շրջանում հանդես էին գալիս հիմքակազմիչ ածանցների դերում:

Ժամանակին առաջ քաշված վարկածը, որ խուռիերենն ու ուրարտերենը պատկանում են հյուսիսարևալակովկասյան լեզվաընտանիքին[3],

---

[1] Այդ մասին մանրամասն տե՛ս Khachikyan 2014:

[2] Տե՛ս Хачикян 2014: 170-171:

[3] Տե՛ս Diakonoff-Starostin 1986:

վերջերս ենթարկվել է վերանայման: Ըստ նորագույն բառավիճակագրական հետազոտության՝ խուռի-ուրարտերենը և հյուսիսկովկասյան լեզուները պատկանում են հիպոթետիկ չինա-կովկասյան մակրոընտանիքի առանձին ճյուղ կազմող ցեղակից, բայց միմյանցից անկախ լեզվաընտանիքների[1]:

Խուռի-ուրարտական նախալեզվի տրոհման ժամանակը պարզելը կապված է որոշակի բարդությունների հետ: Այն փաստը, որ ուրարտերենում հարաբերական դերանվան իմաստով գործածվող *al-* արմատը վաղ խուռիերենում հանդես է գալիս ցուցական (անաֆորիկ) դերանվան գործառույթով, կարծես վկայում է այն մասին, որ նախաուրարտական բարբառը նախալեզվից պետք է անջատված լիներ նախաուրկեշյան ժամանակաշրջանում: Մյուս կողմից՝ էրգատիվ հոլովի և էրգատիվ շարքի բայական ցուցիչների համընկնումը երկու լեզուներում այն պարագայում, երբ վաղ (ուրկեշյան) խուռիերենը նախաէրգատիվ լեզու էր[2], խոսում են այն մասին, որ տրոհումը տեղի է ունեցել հետուրկեշյան շրջանում:

Եթե տրոհումը տեղի է ունեցել նախաուրկեշյան շրջանում, ապա երկու լեզուներում միմյանցից անկախ առաջացած էրգատիվ ցուցիչների համընկնումը, ամենայն հավանականությամբ, զուգահեռ զարգացման արդյունք է, իսկ հետուրկեշյան շրջանում տրոհման դեպքում խուռի-ուրարտական հարաբերական դերանվան փոխարինումը ցուցականով ավելի ուշ, զուտ ուրարտական երևույթ պետք է համարել:

Հնչյունական համակարգ

Խ.-ու. նախալեզվին, ըստ ամենայնի, հայտնի էին երկու լեզուներին հատուկ *a, i, e, u, o* ձայնավորները:

Այն փաստից, որ խուռիերենի բաղաձայնական համակարգը բաղկացած էր պարզ (ձայնեղ և խուլ դիրքային տարբերակներով) և կրկնակ/լարված, իսկ ուրարտերենինը՝ ձայնեղ, խուլ (շնչեղ՞) և կոկորդային/աբրուպտիվ շարքերից, կարելի է ենթադրել, որ նախալեզվին հատուկ էին առնվազն հետևյալ երեք շարքերը՝ պարզ (ձայնեղ և խուլ ենթահնչույթներով), կրկնակ/լարված, կոկորդային/աբրուպտիվ:

Հետագա զարգացումների արդյունքում խուռիերենում կոկորդային բաղաձայները կորցրին կոկորդային հատկանիշը՝ վերածվելով պարզ բաղաձայնների (դա հետևում է ուրարտերենի կոկորդային բաղաձայնների համապատասխանությունից խուռիերենի պարզերին): Ուրարտերենում տեղի է ունեցել կրկնակ բաղաձայնների պարզեցում (դրա վկայությունն է

---

[1] Տե՛ս Kassian 2011:

[2] Տ՛ես Khachikyan 2016: 49-51:

խուռիերենի կրկնակ բաղաձայնների համապատասխանությունն ուրարտերենի պարզերին) և պարզերի տրոհում ձայնեղ և խուլ շարքերի:

Ձևաբանական կառուցվածք

Դատելով խուռիերենի և ուրարտերենի ձևաբանական կառուցվածքից՝ նախալեզուն կարելի է դասել կցական վերջածանցային լեզուների շարքում:

Գոյականները ենթադրաբար բաշխված էին ըստ դասերի՝ ակտիվ/շնչավոր : ինակտիվ/անշունչ: Այս վարկածը հիմնված է սեռական հոլովի երկու տարբեր ցուցիչների ենթադրական գոյության վրա, որոնցից մեկը հետագայում վերաիմաստավորվեց էրգատիվ հոլովի ցուցչի (տե՛ս վերևում): Բավական զարգացած՝ ստացական/հարաբերական/սեռական, տարածական և այլ թեք հոլովներ ընդգրկող հոլովական համակարգին, ըստ ամենայնի, բնորոշ էր ենթական և ուղիղ խնդիրն արտահայտող հոլովների բացակայությունը, ինչպես և վաղ խուռիերենում (տե՛ս վերևում):

Բայերը նախալեզվում սկզբնապես բաժանված են եղել երկու խմբի՝ գործողության և վիճակի (*-*i*- и *-*o*- թեմատիկ ձայնավորներով համապատասխանաբար): Խուռիերենին և ուրարտերենին հայտնի -*a*- թեմատիկ ձայնավորով անանցողական բայերի առանձնացումը գործողության բայերի դասից ակնհայտորեն ավելի ուշ երևույթ է: Դա հետևում է այն փաստից, որ երկու լեզուների անիրական եղանակների համակարգում թե՛ անցողական, թե՛ անանցողական բայերի հետ գործածվում էր գործողության բայերի -*i*- թեմատիկ ձայնավորը[1]:

Գործողության սուբյեկտն արտահայտվում էր բային կցվող հին խուռիերենից և ուրարտերենից հայտնի, բայց նոր խուռիերենում կորսված դերանվանական *-*b* տարրով: Վիճակի սուբյեկտն աննշույթ էր: Օբյեկտն արտահայտվում էր *-*n* տարրով, որը նոր խուռիերենում վերաիմաստավորվել էր՝ վերածվելով աբսոլյուտիվ շարքի (անցողական բայի ենթական և անանցողական բայի խնդիրը արտահայտող) 3դ. եզակի դերանվանական ցուցչի[2]:

Նախալեզվին, ըստ երևույթին, բնորոշ էր օտարելի և անօտարելի պատկանելության տարբերակումը: Այս վարկածի հիմքում ընկած են շումերա-խուռիական բառարանում (3րդ դ. եզակի –di/e) և խուռի-խեթական տեքստում վկայված ստացական դերանվանական ածանցների գործածության եզակի օրինակները (2րդ դ. հոգնակի –*š*(*še*)/*ž*), որոնք դուրս են մնում ստացական դերանվանական հարացույցից: Վերջիններս հավա-

---

[1] Տե՛ս Хачикян 2014: 168:

[2] S'ես Khachikyan 2016: 45-48:

նաբար, այլ՝ կորսված անօտարելի(՞) պատկանելության համակարգի բեկորներ են:

Շարահյուսություն

Ենթակայի և ուղիղ խնդրի համար հատուկ հոլովների բացակայությունը ենթադրում է կայուն ենթակա-խնդիր-բայ շարադասություն: Դա մասնավորապես երևում է Ուրկեշի արձանագրությունից, որտեղ շրջուն շարադասության դեպքում ունենք կրավորական բայաձևեր:

Այն փաստից, որ հին խուռիերենում և ուրարտերենում գոյականը, որին ուղղված է անանցողական բայի գործողությունը, աննշույթ է, կարելի է եզրակացնել, որ նախալեզվին հատուկ էր ոչ թե ուղիղ : անուղղակի, այլ մերձավոր : հեռավոր խնդիրների հակադրությունը[1]:

Վերոնշյալ առանձնահատկությունները միանշանակորեն վկայում են այն մասին, որ նախալեզուն ոչ թե էրգատիվ, այլ ակտիվ տիպի լեզու էր:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Diakonoff I.M., S.A.Starostin 1986, Urartian as an Eastern Caucasian Language, Münchener Studien zur Sprachwissenschaft, Beiheft 12. Neue Folge, München.

Kassian A.S. 2011, Hurro-Urartian from the Lexicostatistical Viewpoint, Ugarit-Forschungen, Bd. 42, 383–451.

Khachikyan M. L. 2014, Reflections on the Origin of the Hurrian Ergative Case-marker *-š* and the Correlative Particle – *šše*, AJNES VIII, 215-218.

Khachikyan M. L. 2016, On the Initial Function and Subsequent Evolution of some Hurrian Affixes and Constructions, AoF 43, 1-8.

Климов Г. А. 1977, Типология языков активного строя, Москва.

Хачикян М. Л. 2014, К генезису тематического гласного *–о-* в старохурритских транзитивных формах на *–о-т*, Հին Արևելք 1(6), 166-173.

[1] Մերձավոր խնդիրը, որ իր ընդգրկմամբ ուղիղ խնդրից լայն է, արտահայտում է այն առարկան, որին ուղղված է ոչ միայն անցողական, այլև անանցողական բայի գործողությունը: Климов 1977:119:

AN ATTEMPT AT RESTORING THE HURRO-URARTIAN PROTOLANGUAGE

Khachikyan Margarit

(Institute of Oriental Studies NAS RA)

The author presents her vision of the Hurro-Urartian protolanguage. Characteristic of it was the presence of three sets of consonants (simple, geminate/tense, glottal/abruptive), the division of the substantives into the active and inactive and of the verbs into the active and stative classes, the distinction of the alienable and inalienable possession, the unmarkedness of the core constituents of the clause, the opposition of the near and distant object.

Պ.գ.թ. Խորիկյան Հովհաննես
(ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ)

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Մասնագիտական գրականության մեջ սատրապությունների թվարկման հերթականությունը միշտ էլ տարակարծությունների տեղիք է տվել: Օրինակ, Ի. Դյակոնովի կարծիքով պատմահայր Հերոդոտոսի ցուցակում սատրապությունները թվարկված են նրանց՝ Մարական, այնուհետև Աքեմենյան տերությանը միացնելու հերթականությամբ[1]: Նրա համոզմամբ I-XII սատրապությունները առաջ են տարվել Հոնիան առանձնացնելու համար, և այս խումբը պետք է հաջորդեր XIII-XVII (կամ XVIII) սատրապություններին: Համաձայն մեկ այլ տեսակետի՝ արևմտյան սատրապությունների՝ առաջինը հիշատակվելը պարզապես պայմանավորված է հին հունական ավանդույթներով (օրինակ, Տրոյական պատերազմում հակառակորդ բանակների նկարագրությունը) կամ հոնիացիների աշխարհագրական պատկերացումներով[2], այսինքն՝ խոսքը վերաբերում է Հերոդոտոսի հելլենակենտրոն մտածողությանը:

Մեր կարծիքով արևմտյան սատրապություններին և առաջին հերթին փոքրասիական սատրապություններին վարչական տեսանկյունից նախապատվություն տալը պայմանավորված էր ոչ միայն այդ երկրների համար խորթ պարսկական տիրապետության ամրապնդման մտահոգությամբ, այլև ռազմավարական տեսանկյունից ավելի հեռուն գնացող ծրագրերով, որոնք երկար սպասել չտվեցին: Հաստատելով իր նախորդների տիրույթների սահմանները և իր հերթին նույնպես ընդլայնելով կայսրության սահմանները՝ Դարեհ Ա-ն՝ որպես հեռատես պետական գործիչ, լավ էր հասկանում, որ պարսից տիրապետության ամրապնդման հեռանկարները Փոքր Ասիայում, Թրակիայում, Էգեյան ծովի կղզիներում անկայուն կլինեն այնքան ժամանակ, քանի դեռ Բալկանյան թերակղզու հույները կպահպանեն իրենց քաղաքական ազատությունը: Այս էր պատճառը, որ Դարեհը վարչական վերափոխումները նախ և առաջ սկսեց

---

[1] Дьяконов 1956: 342 և այլն: Ջ.Քամերոնի կարծիքով խոսքը ոչ թե սատրապությունների ցուցակի մասին է, այլ թվարկվում են սոսկ հպատակ ժողովուրդները (տե՛ս Cameron 1973: 47-56):

[2] Armayor 1978: 1ff.

արևմտյան Փոքր Ասիայում, քանի որ այս շրջանները պետք է հանդիսանային այն սկզբնական ամրակետը, որտեղից սկսվելու էր պարսից արտաքին քաղաքական ծավալման նոր փուլը՝ սկզբում դեպի սևծովյան սկյութական տարածություններ, այնուհետև՝ Բալկաններ: Եվ շատ չանցած՝ մ.թ.ա. 499թ. հոնիական ապստամբությունը ցույց տվեց Դարեհի քաղաքական հեռատեսությունը:

Վարչական վերափոխումները Փոքր Ասիայից սկսելը պայմանավորված էր նաև մի շատ կարևոր հանգամանքով, այն է՝ Բեհիսթունի արձանագրությունում Եփրատից այն կողմ՝ դեպի արևմուտք ընկած ոչ մի երկիր չի հիշատակվում Դարեհի դեմ ապստամբած մյուս երկրների շարքում, ինչը և զգալիորեն պայմանավորել է, որ ապստամբությունների ճնշումից հետո վերափոխումները սկսվեին համեմատաբար կայուն այդ տարածքներից[1]: Այս համատեքստում հետաքրքիր է Բ.Հարությունյանի այն տեսակետը, թե սատրապությունների թվարկման հերթականությունը պայմանավորված է նրանց ձևավորման ժամանակագրական հերթականությամբ: Համաձայն այդ տեսակետի՝ սատրապությունների կազմավորումը ժամանակագրական հերթականությամբ բաժանվում է հինգ փուլերի՝ ա) I-VI սատրապություններ, բ) VII-XI սատրապություններ, գ) XII-XIII սատրապություններ, դ) XIV-XVII սատրապություններ և ե) XVIII, XIX, XX սատրապություններ[2]: Ժամանակագրական փուլերի՝ առանձնացումը ցույց է տալիս, որ աշխարհագրական հերթականությունը ցուցակում գրեթե պահպանված չէ, քանի որ այս կամ այն սատրապությունը տվյալ աշխարհագրական միջավայրից (օրինակ՝ արևմուտքից) անմիջապես թռիչք է կատարում Կենտրոնական Ասիա և, ընդհակառակը, արևելյան շրջաններից՝ դեպի հարավ: Աշխարհագրական հերթականությունը պահպանվում է VIII-XI, XV-XVI, XVIII-XIX սատրապությունների պարագայում: Եվ ընդհանրապես, ինչպես աքեմենյան սեպագիր արձանագրություններում թվարկվող երկրները, այնպես էլ սատրապությունները թվարկվում են ոչ խիստ ընդգծված աշխարհագրական հերթականությամբ: Մեր կարծիքով սատրապությունների ձևավորման նման ժամանակագրական պայմանականությունը բացատրվում է այն քաղաքականությամբ, որը Դարեհ Ա-ն իրա-

---

[1] Հերոդոտոսը հաղորդում է, որ Դարեհի համար ծանր ժամանակներում Փռյուգիայի, Լյուդիայի, Հոնիայի սատրապ Օրոյտեսը չի օգնում արքային և զբաղված էր չարագործություններ կատարելով (Հերոդոտոս: III, 120-128), սակայն Օրոյտեսի վերաբերմունքը Դարեհի նկատմամբ չի վերածվում բացահայտ զինված անհնազանդության, և շուտով գահի վրա ամրապնդված Դարեհի հրամանով Օրոյտեսը սպանվում է:

[2] Հարությունյան 1999: 49-53:

կանացրեց ապստամբ երկրների նկատմամբ, որպեսզի հնարավորինս կանխի հետագա խռովությունները պետության դեմ: Վերևում նշեցինք, թե ինչով էր պայմանավորված նախ կայսրության արևմտյան հատվածում (I-VI սատրապությունները) վարչական վերափոխումների իրականացումը: Մեր համոզմամբ կայսրության համեմատաբար խաղաղ շրջաններում սատրապությունների ձևավորումից հետո պարսից արքունիքի ուշադրությունը կենտրոնանում է արդեն այն երկրների վրա, որոնք չէին ընդունել Դարեհի իշխանությունը և ապստամբել էին նրա դեմ:

Այսպես, VI սատրապությունից հետո հիշատակվող սատրապություններն ուղղակի կամ անուղղակի եղել են կա՛մ որպես ապստամբ երկրներ, կա՛մ էլ պատերազմական գործողությունների թատերաբեմ: VII սատրապության մեջ, ի թիվս այլ ժողովուրդների, հիշատակվում են նաև սատտագյուտները, իսկ Բեհիսթունի արձանագրությունում Դարեհը Սաթագուշը հայտարարում է ապստամբ երկիր, չնայած արձանագրության հետագա շարադրանքում ավելի ստույգ տեղեկություններ չի տալիս[1]: Բեհիսթունի արձանագրության պարսկերեն տեքստում (նաև էլամերեն տարբերակում) Դարեհը Արաքոսիայում Վահյազդատայի ուղարկած բանակին հաղթելուց հետո հայտնում է, որ այդ էր իր կատարածը Արաքոսիայում[2]: Սակայն արձանագրության աքքադերեն տարբերակում Դարեհը, խոսելով նույն իրադարձությունների մասին, հայտնում է Սատտագյուտիայի Գանդատամակի (պարսկերեն տեքստի Գանդուտավան է) վայրի մոտ տեղի ունեցած ճակատամարտի մասին և վերջում ավելացնում, որ այդ է իր կատարածը Սատտագյուտիայում և Արաքոսիայում[3]:

Բերված տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ Սատտագյուտիայում Դարեհի բանակը գործել է Արաքոսիային սահմանակից շրջանում, և հավանաբար, Վահյազդատայի ուղարկած բանակին հաղթելուց հետո Արաքոսիան մտնում է VII սատրապության մեջ: Փաստորեն, ինչպես տեսնում ենք, չնայած Վահյազդատան Արաքոսիայում և Սատտագյուտիայում պատերազմում էր Վիվանայի դեմ իր ուղարկած բանակի միջոցով, այդուհանդերձ VII սատրապությունը կարելի է համարել այն

---

[1] Արձանագրությունում Եգիպտոսը ևս հայտարարված է ապստամբ երկիր, բայց այլ տեղեկություններ նրա մասին չունենք: Մեզ համար առավել ընդունելի է Է. Բիքերմանի կարծիքը, համաձայն որի՝ Եգիպտոսում Դարեհի կառավարման սկզբին ոչ մի ապստամբություն էլ չի եղել, եթե չհաշվենք Լիբիայի ժամանակավոր անջատումը և անկախությունը (հարցի մանրամասն քննությունը տե՛ս Дандамаев 1985: 104-105):

[2] Kent 1953: 128.

[3] Malbran-Labat 1994: 117-118.

սատրապություններից մեկը, որտեղ տեղական իշխանությունը, հանձին Արաքոսիայի սատրապ Վիվանայի, պահպանում է հավատարմությունը Դարեհի նկատմամբ: Այսինքն՝ Դարեհը վարչական վերափոխումները նախ իրականացնում է կայսրության համեմատաբար կայուն նահանգներում՝ I-VII սատրապություններում, որից հետո ձեռնամուխ է լինում արդեն այն նահանգների վարչական վերափոխումների իրականացմանը, որոնք նրա գահակալության առաջին տարիներին դիմել էին բացահայտ զինված ապստամբության և չէին ճանաչել նրա իշխանությունը: Ապստամբ այդ երկրների մի մասն այս կամ այն վարչական փոփոխություններով մտնում է VIII-XI սատրապությունների մեջ:

Արևմուտքում ամբողջությամբ և արևելքում մասամբ վարչական վերակազմություններ կատարելուց հետո Դարեհն իր ուշադրությունը կենտրոնացնում է կայսրության կենտրոնական նահանգների վրա, որոնք խռովությունների ժամանակահատվածում կրել էին մարդկային և նյութական մեծ կորուստներ, այսինքն՝ տվյալ նահանգներում նոր խռովությունների վտանգ վերափոխումների տվյալ փուլում այլևս հնարավոր չէր, և միանգամից կազմավորվում են 4 սատրապություններ: Սպասելի էր, որ այս երկրների հետ Հայաստանը ևս կենթարկվեր վարչական վերակազմության, սակայն հաջորդ երկիրը, որն իր հավատարմությունը պահպանել էր Դարեհի նկատմամբ ապստամբությունների ժամանակաշրջանում, Բակտրիան էր, որը մինչև Այգլերի երկիրը ընդգրկվեց XII սատրապության կազմի մեջ: Արդեն իսկ նկատված աշխարհագրական նմանատիպ թռիչքային փոփոխությունները ցույց են տալիս, որ պարսից արքունիքն ընդհանրապես խուսափում էր ամբողջական վարչական վերափոխումներ իրականացնելուց միևնույն աշխարհագրական տարածքում, և այդպիսի կտրուկ թռիչքները ընդհանուր վարչական վերափոխումների շղթայի միջանկյալ օղակներն էին, որոնք կայսրության տվյալ հատվածում մինչև մյուս սատրապության կամ սատրապությունների ձևավորումը ամուր հիմք պետք է հանդիսանային վարչական բնույթի հետագա գործողությունների իրագործման համար: Եվ, բնականաբար, այդ ճանապարհին եղած դժվարությունները պարսից արքունիքը փորձում էր լուծել ոչ թե միանգամից և ուժերի մեծ լարումով, այլ հատված առ հատված, ինչը թույլ կտար տեղերում կայսերական քաղաքականությունն իրականացնել առավել արդյունավետ և հեռատեսորեն:

Այդ իսկ պատճառով հաջորդ երկիրը, որը համառ և երկարատև դիմադրություն էր ցույց տվել Դարեհին, Հայաստանն էր, որ ենթարկվեց

վարչական վերակազմության և ներառվեց XIII սատրապության մեջ[1]: Ըստ էության պարսից արքունիքի համար Հայաստանի նշանակությունն այնքան զգալի է եղել, որ վերջինս չէր միավորվել VIII-XI սատրապությունների հետ վարչական վերակազմության նույն փուլում: XIII սատրապությանը հաջորդող XIV սատրապության կազմում հիշատակվող ուտիները թերևս կապված էին Դարեհի դեմ ապստամբած ժողովուրդների հետ:

Բեհիսթունի արձանագրության մեջ հիշատակված Յուտիյան, որի Թարավա քաղաքում ապստամբեց Վահյազդատան[2], Յ. Մարքվարտի կողմից նույնացվել է XIV սատրապության ուտիներին[3], որոնք հավանաբար Վահյազդատային օգնելու համար դուրս են բերվում Պարսքի կազմից և հարկատու դառնում: XV և XVI սատրապությունները սահմանակցել են Բակտրիական սատրապությունից հյուսիս ընկած շրջանում[4]: XV սատրապության սակերը, հավանաբար, մասամբ կապված են Բեհիսթունի արձանագրության V սյունակում հանդես եկող սակերին[5], իսկ XVI սատրապության պարթևները վրկանների հետ միասին ապստամբել էին Դարեհի դեմ: Պարիկանիներից և Ասիայի եթովպացիներից կազմված XVII սատրապությունը խռովությունների ժամանակաշրջանում խաղաղ էր մնացել, և այս սատրապության ձևավորումը հող նախապատրաստեց քիչ ավելի ուշ հարևան՝ XX սատրապության կազմավորման համար: Վարչական վերափոխումների արդյունքում առաջացած XVIII և XIX սահմանային սատրապությունները ձևավորվում են Սև ծովի հարավարևելյան և Կովկասյան մեծ լեռնաշղթայից հարավ ընկած շրջաններում[6]: Հարավում հզոր և հարուստ սատրապական Հայաստանի առկայությունը թույլ է տալիս պարսից արքունիքին էթնիկական առումով խայտաբղետ այդ շրջաններում միանգա-

---

[1] Է. Հերցֆելդը Հայաստանը համարում է X սատրապությունը՝ վերջինիս մեջ ընդգրկելով նաև XVIII և XIX սատրապությունների ցեղերին (տե՛ս Herzfeld 1968: 313; Hewsen 1983: 123-143):

[2] Kent 1953: 127.

[3] Marquart 1901: 30. Ապստամբությանը ուտիների մասնակցության մասին տե՛ս Дандамаев 1960: 19.

[4] Տե՛ս, օրինակ, Հարությունյան 2004: 17:

[5] Մ. Դանդամանն այս սակերին նույնացնում է տիգրախաուդա սակերի հետ, սակայն կարծում է, որ Դարեհի արշավանքը պատժիչ բնույթ չի ունեցել, քանի որ նրանք մինչև Դարեհը անկախ են եղել (տե՛ս Дандамаев 1985: 103): Սակայն պետք է նկատի ունենալ, որ Սակա երկիրը Դարեհի կողմից հիշատակվում է ապստամբ երկրների շարքում:

[6] Այս սատրապությունների տեղադրության մասին մանրամասն տե՛ս Խորիկյան 2014:

մից ձեռնամուխ լինել երկու սատրապությունների ձևավորմանը: Իսկ վարչական վերակառուցումների վերջին փուլում ծայր արևելքում կազմավորվում է XX՝ հնդկական սատրապությունը: Սակայն սրանով վերջանում է սոսկ սատրապական ցուցակը, որտեղ թվարկվում են 20 սատրապությունները: Իրականության մեջ գոյություն ուներ ավելի ուշ ձևավորված XXI սատրապությունը, որը սեպագիր արձանագրություններում ներկայացված է Սկուդրա, «անդրծովյան սկյութներ» և «վահանակիր հույներ» աշխարհագրական անուններով: Այսպիսով, առաջանում է վարչական բաժանման մի համակարգ, որի ձևավորման սկզբունքը ուղղակիորեն հիշատակում է Հերոդոտոսը: Պատմահայրը գրում է.«Յուրաքանչյուր ազգի նա (իմա՛ Դարեհ Ա - Խ.Հ.) կցեց մերձակա հարևաններին և, բացի այդ, հեռավոր ազգություններին միացրեց այս կամ այն իշխանությանը»[1]:

Ինչպես տեսնում ենք, բերված տեղեկության մեջ արտացոլված է վարչական բաժանման երկու սկզբունք: Առաջինն այն էր, որ պարսից արքունիքը միևնույն ժողովրդին ընդգրկում էր ոչ թե տարբեր սատրապությունների մեջ, այլ մի քանիսին ներառում էր մեկ վարչական միավորի մեջ: Հարկավ, ինչպես իրավացիորեն նկատվել է, սատրապությունների ստեղծումով վարչական բաժանման հիմքում դրվեց միանգամայն նոր գաղափար՝ վարչական մեկ միավորի մեջ ներառել մի քանի երկրներ կամ ժողովուրդներ, որոնց գլուխ կանգնած պարսից սատրապը միշտ էլ կարող էր, նրանց միմյանց դեմ գրգռելով և հակադրելով, ապահովել պարսից գերիշխանությունը կամ տիրապետությունը[2]:

Ինչ վերաբերում է երկրորդ սկզբունքին՝ «հեռավոր ազգություններին միացրեց այս կամ այն իշխանությանը», ապա այս սկզբունքի արտացոլումը Հերոդոտոսի մոտ այնքան էլ հստակ չէ: Անշուշտ, հարցի լուծման բանալին պետք է փնտրել հենց նույն սատրապությունների ցուցակում, և ըստ այդմ էլ, այս հարցում մեր պարզաբանումներն այսպիսին են: Հեռավոր ազգությունները պետք է այլ կարգավիճակ ունենային, որպեսզի չհիշատակվեին հենց սատրապությունների կազմում, մյուս ժողովուրդների հետ միասին: Իսկ միևնույն սատրապության ցեղերից մեկին փնտրել տվյալ սատրապության սահմաններից հեռու, հակասում է պարսից արքունիքի վարչական քաղաքականության սկզբունքներին, ինչպես ենթադրում է, օրինակ, Ի. Պյանկովը[3]: Վերջինս IX սատրապության օրթոկորյուբանտիներին՝ հին պարսկական արձանագրությունների տիգրախաու-

---

[1] Հերոդոտոս, III, 89:

[2] Հարությունյան 1999: 50:

[3] Хорикян 2015: 128-132.

դա սակերին, նույնացնում է դերբիկների հետ և տեղադրում Կասպից և Արալյան ծովերի միջև, իսկ XII սատրապության մեջ հիշատակվող Այգլերի երկիրն էլ նույնացնում է Պտղոմեոսի Ἀυγαλοί-ին[1], որը Բակտրիայից բաժանված էր սոգդերով[2]: Մեր կարծիքով հեռավոր ազգություններն այն ժողովուրդներն էին, որոնք Դարեհին, հարկերից բացի, ինչպես վկայում է Հերոդոտոսը, նաև ընծաներ էին մատուցում[3] և մասնակցել էին Քսերքսեսի հունական արշավանքին: Եթովպացիները, կոլխերը և նրանց հարևանները, արաբները՝ որպես ծայրամասային ժողովուրդներ, այլ հարաբերություններով էին կապված Աքեմենյան Պարսկաստանի հետ, քանի որ նրանց բնակության շրջաններում պարսից իշխանությունն ավելի թույլ էր, և նշված ցեղերն ունեին որոշակի առավելություններ մյուս ժողովուրդների նկատմամբ: Չնայած այն հանգամանքին, որ նրանք ընծաներ և հարկեր էին մատուցում պարսից արքունիքին, այդուհանդերձ նրանց պարտավորությունները համեմատաբար մեղմ էին:

Սակայն պետք է նշել, որ ժամանակ առ ժամանակ նրանց պարտավորությունները եղել են նույնը, ինչ որ մյուսներինը: Օրինակ՝ Քսերքսեսի ժամանակ նշված ժողովուրդները պարտադիր մասնակցել են հունական արշավանքին, ընդ որում նրանցից կազմված զորամասերը գլխավորել են պարսիկ զորահրամանատարները: Հետաքրքիր է նաև, որ եթովպացիների, կոլխերի, արաբների շարքում հիշատակվում են Նյուսե սրբազան երկրի բնակիչները, որոնց Հերոդոտոսը տեղադրում է Հնդկաստանում՝ ասիական եթովպացիների երկրում[4]: Սակայն դատելով այն հանգամանքից, որ Նյուսեի և Եգիպտոսին սահմանակից եթովպացիներն ընծաները միասին են բերում, նշանակում է, որ Նյուսե սրբազան երկիրը նույնպես

---

[1] Claudii Ptolemaei Geographia 1845: VI, 12, 4. Սակայն մասնագիտական գրականության մեջ կարծիք կա, որ խոսքը Բակտրիայի մեջ մտնող Մարգիանայի մասին է (տե՛ս Sarre, Herzfeld 1910: 26): Ինչևէ, «բակտրիացիներից մինչև Այգլերի» ցույց է տալիս, որ այս երկրները անմիջական հարևաններ են եղել: Եթե ինչ-որ տեղ ենթադրենք, որ Այգլերի երկիրը գտնվել է Մարգիանայում, ապա Մարգիանայում ապստամբությունը ճնշելուց հետո Դարեհը, հավանաբար, քաղաքական նպատակներով վարչաքաղաքական կացությունը տեղում ձևավորել էր նոր, հավատարիմ ցեղի, թերևս սկյութականի (հմմտ. Массон 1959: 149; Junge 1942: 1486) շուրջ: Չի բացառվում, որ Այգլերի երկիրը գտնվել է XII սատրապության ծայր հյուսիսում, որտեղ սկյութական տարրի առկայությունն ակնհայտ էր:

[2] Пьянков 1965: 43-44, прим. 68.

[3] Հերոդոտոս III, 97; Herodotus 1957: III, 97; Геродот 1972: III, 97.

[4] Անդ:

գտնվել է արևմտյան եթովպացիների երկրում[1]: Եթե կոլխերի պարագայում կարելի է ասել, որ միացված են եղել XIX սատրապությանը[2], ապա եթովպացիները վարչական առումով, ըստ էության, միացված են եղել եգիպտական սատրապությանը, իսկ արաբները կարող էին հանդես գալ և՛ V, և՛ IX սատրապությունների կազմում, չնայած Քսերքսեսի հունական արշավանքին արաբները և արևմտյան եթովպացիները միավորվում են մեկ հրամանատարության ներքո, ընդ որում՝ նրանց առաջնորդում է Արսամեսը՝ Դարեհի և Արտիստոնեի՝ Կյուրոսի դստեր որդին[3], ինչը, իրոք, վկայում է նրանց առանձնահատուկ կարգավիճակի մասին:

Պարսկական սեպագիր աղբյուրներում Եթովպիան հիշատակվում է Քուշ անվան ներքո, որը Դարեհը համարում է իր տերության երկրներից մեկը, որտեղ ձգվում էին թագավորության սահմանները, և որտեղից բերվում էր արքունիքին անհրաժեշտ փղոսկրի մի մասը[4], ինչի մասին գրում է նաև Հերոդոտոսը: Հետևաբար, եթովպացիների վրա պարսիկների իշխանությունն իրական էր, քանի որ կոլխերի դեպքում էլ Հերոդոտոսը նշում է, որ պարսիկները տիրում էին մինչև Կովկաս լեռը: Ինչ վերաբերում է արաբներին, ապա նրանց մասին խոսել ենք վերևում և վերջում ավելացնենք միայն, որ փաստացի կային արաբական որոշ ցեղեր, որոնց հետ պարսիկների հարաբերությունները դաշնակցային էին, և այդ ցեղերը վարչական առումով ոչ մի հարաբերություն չունեին Աքեմենյան Պարսկաստանի սատրապական համակարգի հետ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Խորիկյան Հ. 2006, Աքեմենյան Պարսկաստանի XIX սատրապության էթնիկական կազմի վերաբերյալ, ԲԵՀ 2, 114-126:

Խորիկյան Հ. 2014, Հայաստանը և Այսրկովկասը Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումներում (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն), Երևան:

Հարությունյան Բ. 1999, Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, Հանդէս Ամսօրեայ, Վիեննա, 1-12, 49-53:

Հարությունյան Բ. Հ. 2004, Հայաստանի պատմության ատլաս (Ա մաս),

---

[1] Հմմտ. Herodotus 1957: III, 97, n. 1, էջ 125: «Probably the mountain called Barkal in Upper Nubia; this is called "sacred" in hieroglyphic inscriptions».

[2] Խորիկյան 2006: 114-126:

[3] Հերոդոտոս VII, 69:

[4] Kent 1953: 136, 143:

Երևան:
Հերոդոտոս 1986, Պատմություն ինը գրքից, թարգմանությունը Ս. Կրկյաշարյանի, Երևան:
Геродот 1972, История в девяти книгах, перевод и примечания Г. Стратановского, Ленинград.
Дандамаев М. А. 1960, Восстание Вахьяздаты (из истории народных движений в древней Персии) ВДИ 1, 11-20.
Дандамаев М. А. 1985, Политическая история Ахеменидской державы, Москва.
Дьяконов И. М. 1956, История Мидии, Москва-Ленинград.
Массон В. М. 1959, Древнеземледельческая культура Маргианы, Материалы и исследования по археологии СССР, вып. 73, Москва-Ленинград.
Пьянков И. В. 1965, «История Персии» Ктесия и среднеазиатские сатрапии Ахеменидов в конце V в. до н. э., ВДИ 2, 35-51.
Хорикян О. Г. 2015, Об этническом составе X сатрапии ахеменидской ерсии, «Метаморфозы истории», научный альманах, Псков, вып. 6, 128-132.
Armayor O. K. 1978, Herodotus' Catalogues of the Persian Empire in the Light of the Monuments and the Greek Literary Tradition, Transactions of the American Philological Association 108, 1-9.
Cameron G. G. 1973, The Persian satrapies and related matters, JNES 32/1-2, 47-56.
Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. II, Lipsiae, 1845.
Herzfeld E. 1968, The Persian Empire. Studies in Geography and Ethnography of the Ancient Near East, Wiesbaden.
Hewsen R. 1983, The Boundaries of Achaemenid «Armina», RÉA XVII, Paris, 123-143.
Herodotus 1957, with an English translation by A. D. Godley, Vol. II, Cambridge-Massachusetts- London (Loeb Classical Library).
Junge J. 1942, Orthokorybantioi, Pauly's Realencyclopädie der classischen Altertumswissenschaft, Stuttgart, 1484-1490.
Kent R. 1953, Old Persian. Grammar. Texts. Lexicon. 2nd ed., New Haven.
Malbran-Labat F. 1994, La version akkadienne de l'inscription trinlingue de Darius á Behistun, Roma.
Marquart J. 1901, Ērānšahr nach der Geographie des Ps. Moses Xorenac'i, Berlin.
Sarre F., E.Herzfeld 1910, Iranische Felsreliefe, Berlin.

PRINCIPLE OF ADMINISTRATIVE DIVISION OF ACHAEMENID PERSIA

Khorikyan Hovhannes
(Institute of Oriental Studies NAS RA)

The enumeration sequence of the Satrapies in scholarly literature has always caused controversy. After the formation of the Satrapies in relatively peaceful regions of the Empire to the west of the Euphrates, the attention of the Persian court was already focused on those countries which had not adopted Darius' royal power and had rebelled against it.

The study shows that the enumeration sequence of the Satrapies is determined by their chronological formation order, which has taken place through five phases.

Պ.գ.դ. Յակոբեան Ալեքսան
(ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտ)

ԿՐԿԻՆ ԱՐՏԱՋ ԳԱՒԱՌՈՒՄ ԱՒԱՐԱՅՐԻ ԴԱՇՏԻ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

«Ես յաճախ մտովի կ'այցելեմ մեր հին ու նորագոյն ռազմավայրերը, մեր պարտութեան եւ յաջողութեան պատճառներն ինձ համար պարզելու ցանկութեամբ»:

Գարեգին Նժդեհ

Մեզ յուզող տեղորոշման խնդրին ողջ ծաւալով վերջինը 1988 թ. անդրադարձած Հմ. Մարտիրոսեանը քննութիւնն սկսում է հետեւեալ իրաւացի հաւաստումներով. «Սկսած XVIII դարից (առաջին փորձը կատարել են Վենետիկի Մխիթարեանները՝ 1751 թ.) պատմաբանները ձգտում են պարզել Աւարայրի դաշտի տեղը, որտեղ 451 թ. մայիսի 26-ին պատմական ճակատամարտ տեղի ունեցաւ հայկական եւ պարսկական զօրքերի միջեւ: Այդ ուղղութեամբ ձեռնարկուած պրպտումները դժուարանում են նրանով, որ պատմիչ եւ Աւարայրի ճակատամարտի մասնակից Եղիշէի վկայութիւնները բաւարար չեն խնդրոյ առարկայ դաշտավայրի ճիշտ տեղադրութիւնը որոշելու համար: Նրա երկում պահպանուած տեղեկութիւնները սահմանափակում են հետեւեալով՝ դաշտավայրը գտնուել է Արտազ գաւառում, այնտեղ եղել է Աւարայր գիւղը, որի մերձակայքում ընկած էր Տղմուտ գետով կիսուած դաշտը: V-VI դդ. հեղինակ Ղազար Փարպեցու «Հայոց պատմութեան» մէջ, որի երկրորդ մասը նուիրուած է Աւարայրի ճակատամարտին, կան լրացուցիչ մանրամասներ: Այսպէս, հաղորդելով պարսկական զօրքերի շարժման մասին, պատմիչը նշում է, որ նրանք հասան «Գաւառն Արտազ, հուպ ի գեօղն որ կոչի Աւարայր, ի շրջափակ տեղի Տղմուտ դաշտին»: Ձեռքի տակ ունենալով այդքան աղքատիկ նիւթ՝ պատմաբանները հարկադրուած են եղել դիմելու ամենատարբեր մտայանգումների ու ենթադրութիւնների, որոնք ընկած են Աւարայրի դաշտի տեղադրութեան վերաբերեալ մի ամբողջ շարք վարկածների ու տեսակէտների հիմքում: 1967 թ. դրանց մեծ մասն ամփոփեց Հ. Աղաբէկեանը՝ առկայ պատմական նիւթի եւ հին ժամանակի ռազմական արուեստի տուեալների վերլուծութեան հի-

ման վրայ առաջարկելով Աւարայրի դաշտը տեղադրել Կարազիադինի հարթավայրի մօտ՝ Կոտուր գետի ձախ վտակ Ակ-չայի ափերին»[1]:

Իրօք, Հ. Աղաբէկեանն առաջին անգամ էր մանրակրկիտ անդրադառնում Աւարայրի տեղորոշման փաստարկներին, ընդ որում նախապէս ժամանակագրական հերթականութեամբ եւ 8 կէտերում ամփոփելով տուեալ հարցադրման մասին մինչ այդ եղած գրեթէ բոլոր տեսակէտները[2]: Մեզ համար առաւել արդիւնաւէտ կը լինի՝ վերաշարադրելու փոխարէն ստորեւ թարգմանաբար վերարտադրել (որոշ ծանօթագրումների յաւելումով) Հ. Աղաբէկեանի այդ կէտերի բովանդակութիւնը.

«1. Հայաստանի քարտէզում, որը կազմուել է 1751 թ. Վենետիկի Մխիթարեանների կողմից, Տղմուտը արդի Մակու-չայ (Զանգեմար) կոչուող գետն է: Իսկ նրանց իսկ կողմից 1849 թ. հրատարակուած քարտէզում որպէս Տղմուտ է նշուած Մակու-չայի վտակ Ղըզլար-չայը: Այդ քարտէզում Զէյա բնակավայրի շրջանը[3] նշուած է որպէս Աւարայրի դաշտ, հետեւաբար նաեւ որպէս 451 թ. ճակատամարտի վայր:

2. Պատմաբան Կ. Կոստանեանցը Աւարայրի ճակատամարտի վայր էր համարում Ղարազիադինի դաշտավայրը՝ Զուրսից (Զորսից) հիւսիս[4]: Այդ հարցում նա համաձայն էր Գ. Շիրմազանեանի հետ, որը դեռեւս 1877 թ. «Արարատ» հանդէսում ապացուցում էր, որ ճակատամարտի վայրը նշուած դաշտավայրն է, իսկ Աղ-չայը[5] հին Տղմուտ գետն է[6]: Գ. Շիրմազանեանի տեսակէտը, Կ. Կոստանեանցից բացի պաշտպանում է պրոֆ. Ե. Տէր-Մինասեանը[7]:

---

[1] Մարտիրոսյան 1988, 82-88:

[2] Агабекян 1967, 91-114.

[3] Խորհրդային 1:200000 մասշտաբով ռազմական քարտէզում Զանգեմարի (նաեւ՝ Զենգեմար) նշեալ ձախ վտակը կոչւում է Ղզըլ-չայ (Кызылчай), իսկ այս գիտը՝ Զաւիէ (Զաւիէ-Փային եւ Զաւիէ-Բալա երկու գիտեր Ղարաէյնի աւանից 10 կմ հիւսիս-արեւմուտք): Նշելի է, որ այս հովիտը Վասպուրական նահանգի **Մարդաստան** գաւառի հարաւային հատուածն էր:

[4] Կոստանեանց 1877, 119:

[5] Այս Աղ-չայը Վասպուրական նահանգի Թոռնաւան եւ Ճուարշ-ռոտ (նաեւ՝ Ճուաշռոտ) գաւառների տարածքով արեւմուտքից արեւելք հոսող՝ Կարմիր – Կոտոր գետի ձախակողմեան ամենամեծ վտակ պատմական Ճուարշն է, որի անունը պահպանուել է մեր ժամանակների Զորս-Զուրս գիւղանուան մէջ (գետի ստորին հոսանքում, Ղարազիադին-Կարազիադին աւանի մօտ): Տե՛ս Երեմյան 1963, 64; Հարությունյան 2001, 366-367:

[6] Տե՛ս Շերմազանեանց 1863; 1872, 423-427, 463-470; 1873, 185-188:

[7] Եղիշե 1946, 300, ծնթ. 135՝ «Արտազու դաշտ...» (Բ, լրացեալ հրատ. մէջ՝ նոյ-

3. Ղեւոնդ Ալիշանը հետեւում էր այն կարծիքին, որ Մակու-չայ գետը նոյն ինքը Տղմուտն է, այսինքն՝ այն գետը, որի ափերին տեղի է ունեցել Աւարայրի ճակատամարտը: Ն. Ադոնցը եւ Լէօն Աղ-չայն են համարում Տղմուտը: Այս երեք պատմաբաններից ոչ մէկը ճակատամարտի որոշակի տեղը չի նշում[1]:

4. Ակադ. Յ. Հ. Մանանդեանը Աւարայրի ճակատամարտի վայր էր համարում Ղարաէյնիից հարաւ ընկած շրջանը, իսկ Ղարա-բուլաղ գետն էլ (Մակու-չայի [ձախ] վտակը)՝ Տղմուտը[2]:

նն է, տե՛ս Եղիշե 1958, 205, ծնթ. 118): Այս տեղադրութիւնն ընդունում էր դեռ Արսէն Թոխմախեանը (Թոխմախեան 1882, 31. «Աւարայրի դաշտի միջից է անցնում Տղմուտ գետը, որ գլխաւորապէս սկսում է Տաճկահայաստանի արեւելեան սահմանագլխի Շաւարշ (Շաւարէշ) լեռների հարաւային կողմերից եւ հոսելով արեւմուտքից դէպի արեւելք, երկու հաւասար մասի բաժանելով Աւարայրի դաշտը, Մարիքենդ գիւղի մօտ խառնւում է Կարմիր կամ Կօթուր գետին եւ նրա հետ թափւում է Երասխի մէջ Դարաշամ գիւղի մօտից»):

[1] Ալիշան 1890, 491; Адонц 1908, 316; Լեո 1966, 158: Յաւելենք, որ ճակատամարտի ճշգրիտ տեղին չեն անդրադառնում նաեւ Հ. Ղ. Ինճիճեանը, ով գիտէր լոկ այդ վայրի՝ Շաւարշանի մօտ լինելը (Ինճիճեան 1822, 202, 205, հմմ. Ինճիճեան 1835, 158), Հ. Ս. Էփրիկեանը, ով միայն յղում է Հ. Ղ. Ինճիճեանի, Կ. Կոստանեանցի եւ Գ. Շերմազանեանցի աշխատանքներին (Էփրիկեան 1902, 332), ինչպէս նաեւ նորերս՝ Ռոբերտ Հիւսընը (Hewsen 1987, 32).

[2] Մանանդյան 1936, 151-156 (=Մանանդյան 1966, 175-180): Նշելի է, որ հեղինակի մօտ կոպիտ սխալ կայ. մի տեղ դիպուկ նկատելով, որ Աւարայրով անցած Խոյ – Արտաշատ հին մայրուղին, համաձայն Պեւտինգերեան քարտէզի՝ պիտի գնացած լինէր Ս. Թադէի վանքի մօտով՝ նա միա դրուագում շտապում է տարուել Ղարաէյնիի մօտերքի Թեղնուտ (Օրթա- եւ Յուխարի-Թեգնիտ, արդի՝ Թեգնետ-Սոֆլա եւ Թեգնետ-Բալա) գիւղերի անուան ու Տղմուտ գետանուան արտաքին նմանութեամբ եւ այդ մայրուղին տանում է Ղարաբուլաղ գետի ձորահովտով (կոչուած՝ Տայ-զաւար կամ Պաիզաար), որով անցնում էր ուշ միջնադարից յայտնի Խոյ – Ղարաէյնի – Բայազէտ մայրուղին (նրա մասին տե՛ս ԺԹ դ. գրողներ գեն. Գարդանի եւ Ջ. Մորիերի ուղեգրութիւններում, ըստ՝ Հակոբյան 1934, 106-108, 260-268; Մանանդյան 1966, 173-186): Բայց չէ՞ որ Ղարա-բուլաղը Մակու – Զանգեմարի ձախ վտակ Ղըզլար – Ղզըլ-չայի աջ վտակն էր, որը հոսում էր Ս. Թադէի վանքից 15 կմ արեւմուտք եւ նրա հովտից բաժանուած էր Շաւարշանի բարձր լեռնաշղթայով: Իր վրիպումը շարունակելով՝ Յ. Մանանդեանը քարտէզներից մէկում (էջ 155 կամ 179) Ս. Թադէի վանքը նշում է Ղարաէյնիից մօտ 7 կմ էլ արեւմուտք:

5. Դոցենտ Համօ Յարութիւնեանը ենթադրում է, որ Աւարայրի ճակատամարտի վայրն ինչ-որ տեղ է Աղ-չայ գետի վերին հոսանքի հովտում՝ Քիւրդքենդ, Զուրաւա եւ Ղարադերէ բնակավայրերի միջեւ: Աղ-չայ գետը, նրա կարծիքով, հէնց հին Տղմուտ գետն է[1]:

6. Դոկտոր Յարութիւն Աստուրեանը որպէս Աւարայրի ճակատամարտի վայր է նշում Մակու քաղաքից 6-7 կմ հիւսիս ընկած շրջանը, իսկ Մակու-չայի ձախ վտակ Սարիսու գետն էլ՝ Տղմուտը[2]:

7. Ակադ. Ս. Տ. Երեմեանը թէպետ համաձայն է Մանանդեանի հետ՝ դէպի ճակատամարտի վայրը պարսկական զօրքերի շարժման երթուղու եւ Աւարայրի տեղադրութեան վերաբերեալ[3], սակայն ճակատամարտի տեղը նա ցոյց է տալիս Ղարաքիլիսա գիւղի շրջանում, այսինքն՝ Մակու քաղաքից 22-23 կմ հարաւ[4]: Այդ շրջանը Ս. Տ. Երեմեանից առաջ Աւարայրի ճակատամարտի վայր էր համարում Կ. Բասմաջեանը[5]: Ղարաքիլիսայի շրջանը Աւարայրի ճակատամարտի վայր է համարվում նաեւ «Մեծ սովետական հանրագիտարանում» եւ «Սովետական պատմական հանրագիտարանում»[6]: Ըստ այդմ, այդ վայրն ընդունվում է ինչ-որ իմաստով պաշտօնապէս:

8. Վերջապէս յաւելենք, որ Երեւանի Պատմութեան պետական թանգարանում, հին Հայաստանի ռելիեֆային քարտէզում Աւարայրի ճակատամարտի վայրը նշուած է Մակու-չայ գետի ստորին հոսանքում, Յուլագելդի բնակավայրից արեւելք»[7]:

---

[1] Հարությունյան 1947, 130-133: Բայց չէ՞ որ այս Աղ-չայ գետը հոսում է ոչ թէ **Արտազ**, այլ **Թոռնաւան** եւ **Ճուարշ-ռոտ** գաւառների տարածքով:

[2] Աստուրեան 1947, 137: Պէտք է նկատի ունենալ, որ այս Սարի-սու – Արուն-գետի հովտի մեծ մասը Այրարատի **Կոգովիտ** գաւառի տարածքում էր:

[3] Հեղինակը նկատի ունի այն, որ Ս. Երեմեանը յղում է Յ. Մանանդեանի «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները...» երկը եւ նրա էջ 155-ի քարտէզը:

[4] Տե՛ս Еремян 1951, 58, прим. 1. Հմմ. նաեւ էջ 49-ի «Армения и соседние страны в 450-451 гг.» քարտէզը: Ռուսական 5- եւ 10-վերստանոց քարտէզներում Ս. Թադէի վանքի գիւղը՝ **Ղարաքիլիսան**, այլ անուն ունի՝ **Քիլիսա-քենդ**:

[5] Բասմաջեան 1914-1927, 247:

[6] Տե՛ս БСЭ, 1949, т. I, 61 (հմմ. նոյնը նաեւ 3-րդ հրատարակութեան մէջ՝ 1970, 48); СИЭ, 1970, т. I, 61 (բնագիրը գրեթէ նոյնն է БСЭ-ի հետ՝ **«Аварайрская битва 451** – произошла 26 мая на Аварайрском поле (южнее совр. Маку)...», սակայն տրւում է նաեւ գրականութեան մէկ յղում՝ «Еремян С. Т., Народно-освободительная война армян..., ВДИ, 1951, № 4»).

[7] Агабекян 1967, 91-92. Այս վերջին վայրին շատ մօտ է տեղադրուած «Աւարայրի դաշտը» նաեւ Բաբկէն Յարութիւնեանի քարտէզներում (Մակուի եւ Յու-

Աւարտելով Հ. Աղաբէկեանի յօդուածից այս օգտակար մէջբերումը՝ կարող ենք ասել, որ նա չի նշել միայն երկու նախկին տեղորոշման մասին (ամենեւին էլ՝ միւսներից ոչ աւելի հաւաստի): Առաջինը 1606 թ. «երկրիս Գեղամայ» «պարոնաց պարոն» Մէլիք Շահնազարի պատուէրով Դաւիթ եպիսկոպոսի նորոգած Աւետարանի յիշատակարանում է, որտեղ Տղմուտ գետն ընկալուել է Սալմաստում («Յորժամ եհաս ատրս աշնան, դարձեալ եկն Ջըղալի որդին բազում զօրօք, եհաս **ի Սալմաստ՝ ի գետն Տղմուտ**»)[1], որը գտնւում է Ուրմիա լիճը թափուող Զոլա-չայի (Թովմա Արծրունու մօտ՝ Տարաւնոյ գետ[2]) հովտում: Երկրորդը Ռաֆֆու տեսակէտն է (ճիշտ է, այն նշուած է Հ. Աղաբէկեանի յօդուածի յաջորդ՝ տեսակէտների վերլուծութեան հատուածում), ով Գ. Շերմազանեանցի հետ փոխադարձաբար խիստ կրքոտ մի բանավէճում յամառօրէն պնդում էր Աւարայրի՝ Կոտոր գետի վրայ, **Խոյ քաղաքի** շրջագծում եղած լինելու իր վարկածը[3]:

Հ. Աղաբէկեանն այնուհետեւ անցնում է Յ. Մանանդեանի տեղորոշման փաստարկումների քննութեանը[4], այդ թւում իրաւացիօրէն նշելով, որ Ղարա-բուլաղ վտակի հովիտը դուրս էր Արտազի տարածքից եւ մաս էր կազմում նրանից արեւմուտք ընկած Մարդաստան-Մարդուցայք գաւառի, իսկ Ս. Թադէի վանքը գտնւում է քարտէզում Յ. Մանանդեանի նշած տեղից (Ղարաէյնիից արեւմուտք) մօտ 20 կմ արեւելք: Թերեւս, նա իրաւացի է նաեւ, որ **Թեղնուտ** գիւղանունը ճիշտ կը լինէր կապել ոչ թէ հայերէն «տիղմ» բառի (իբրեւ թէ՝ **Տղմուտ → Թեղնուտ**), այլ «թեղի» բուսանուան հետ[5]: Սակայն նրա միւս փաստարկներն առնուազն անուղղակի են, օր.՝ կիլոմետրերով ու մղոններով հաշիւները, քարտէզներով կարճ ուղիներ (փոխանակ՝ պատմականօրէն վկայուածներ) փնտրելը, ինչպէս նաեւ այն, որ Յ. Մանանդեանի առաջարկած՝ Հայկական Պարի Կուջաղի լեռնանցքով (=Որկովի՝ Մեծ Մասիսի արեւմտեան լանջին) երթուղին ամենաարագը չէ՝ համեմատած Երասխի ձախ կամ աջ ափերով ենթադրաբար անցած ճանապարհների հետ (ըստ Պլինիոս Աւագի եւ Կոնրադ Միլլերի):

Յ. Մանանդեանի փաստարկների քննադատութիւնից յետոյ Հ. Աղաբէկեանն այս կամ այն մանրամասնութեամբ փորձում է հերքել նաեւ

լագելդիի միջեւ. արդեօ՞ք հիմք ընդունելով մօտակայ «Խանդաւար» գիւղանուան վերջնամասի կամ էլ «Արաբլար» դաշտանուան սկզբնամասի զուգորդութիւնը): Տե՛ս Հարությունյան 2004, 49; Հարությունյան 2008, 34:

[1] Տե՛ս ԺԷ դարի հիշատակարաններ 1974, 218:

[2] Թովմա 1887, 260 (գլ. Գ.իթ); Թովմա 2006, 287; Թովմա 2010, 263:

[3] Տե՛ս «Մշակ», 1872, 7 Փետրուարի (հմր 7):

[4] Агабекян 1967, 93-95.

[5] Նոյն տեղում, էջ 96-97:

Համօ Յարութիւնեանի տեղորոշումը (ով Աւարայրը դնում էր Աղ-չայի վերնահովտում), ապա վենետիկեան հայրերինը (ովքեր տեղադրում էին Ղզըլ-չայի հովտում), Յ. Աստուրեանինը (ով տեղադրում էր Մակուից հիւսիս) եւ Պատմութեան թանգարանի քարտէզինը (որը դաշտը Մակու-չայի ստորին հոսանքում է նշում)[1], ինչից յետոյ կանգ է առնում Ս. Երեմեանի տեսակէտի («Մակուից հարաւ, Ղարաքիլիսայի շրջակայքում») քննադատութեան վրայ՝ փորձելով մատնանշել ինչ-ինչ փաստարկներ[2], սակայն զարմանալիօրէն բոլորն էլ՝ ակնյայտ սխալ: Օր.՝ որ իբրեւ թէ Ս. Թադէի ձորահովիտը հեռու էր հնում յայտնի մեծ ճանապարհներից (՞), կամ՝ որ վանքից հարաւ ընկած ընդարձակ «Շաւարշականի սարահարթով» հոսող Մակու-չայ գետն իբրեւ թէ փոքր է՝ Աւարայրի դաշտի Տղմուտը համարուելու համար (՞): Այդ կերպ է նրան հեշտ թւում ընթերցողին մատուցել Կոտորի Աղ-չայ վտակի ափերին, այսինքն՝ Արտազի սահմաններից դուրս ընկած Ղարազիադինի դաշտի տարբերակը: Անշուշտ, աղբիւրագէտն իրաւունք չունի այդ աստիճան անտեսել մատենագրական ուղիղ տեղեկութիւնները Աւարայրի՝ Արտազ գաւառում գտնուելու մասին, բայց բառացի հէնց դա է անում Հ. Աղաբէկեանը՝ գրելով. «...դաշտը պէտք է գտնուի կա՛մ Հերի եւ Զարեւանդի հիւսիսային մասում, կա՛մ էլ Ճուարշ-ռոտում, իսկ քանի որ նշուած վայրերում միայն մէկ գետ կայ՝ Աղ-չայ գետը, հետեւաբար եւ Աւարայրի դաշտը պէտք է այստեղ գտնուի»[3]: Թէպէտ՝ յանուն արդարութեան նաեւ նշելի է, որ Արտազի յիշատակումների նմանատիպ անթոյլատրելի անտեսման վրայ է հիմնուած Աւարայրի տեղորոշման տարբերակների կէսից աւելին (7-8-ը):

1988 թ. Հ. Աղաբէկեանի տեսակէտը հիմնատրապէս քննադատուեց Հմ. Մարտիրոսեանի կողմից[4], սակայն չնայած դրան՝ ներկայումս այն ամենից շրջանառուն է դարձել: Կարծում ենք, որ դրա պատճառը խիստ պարզունակ է. Հ. Աղաբէկեանի վարկածը հասցրել է թափանցել մի շարք ընդհանրացնող գործեր՝ «Հայկական սովետական հանրագիտա-

---

[1] Նոյն տեղում, էջ 97:

[2] Նոյն տեղում, էջ 97-98:

[3] Նոյն տեղում, էջ 113: Հմմ. Մարտիրոսյան 1988, 82-83:

[4] Մարտիրոսյան 1988, 83-85: Ցաւօք, այդ հիմնատր քննութիւնից յետոյ հեղինակը փորձում է Աւարայրի դաշտը տեղադրել Մակու-չայի ձախ վտակ Ղարասուի (նաեւ՝ Աղ-չայ, Աւաջիկչայ՝ ակունքը Վասպուրականի լեռներում, գետաբերանը՝ Մակուից քիչ արեւմուտք) հովտի Օվաջիք գաւառակում՝ Քիլիսաքենդ գիւղի շուրջը, որի միջով անցնում է Խոյ – Ղարաէյնի – Բայազէտ վերոնշեալ մայրուղին: Բայց չէ՞ որ այդ շրջանը մաս էր կազմում ոչ թէ **Արտազի**, այլ նրա արեւմտեան հարեւան **Մարդաստան** գաւառի:

րան», «Հայկական համառօտ հանրագիտարան»)[1] եւ «Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան»[2]: Եւ ահա, առանց յատուկ փաստարկելու՝ Ղարագիադինի այդ վարկածը կրկնում է այնպիսի լուրջ աշխատանքներում, ինչպէս Հայկ Յակոբեանի 2003 թ. ծաւալուն յօդուածն է[3] եւ Արմէն Այվազեանի 2016 թ. ռուսերէն հիմնարար մենագրութիւնը[4]:

Իրականում Աւարայրի դաշտի ճիշտ տեղորոշմանն ամենից մօտ է եղել պատմական աշխարհագրութեան հմուտ գիտակ ակադ. Ս. Երեմեանը, ով ճակատամարտի վայր էր նշում Ս. Թադէի վանքից հարաւ ընկած Չալդրանի սարահարթը, որով հոսում է Զանգեմար – Մակու-չայ կոչուող (հին, խորհրդային եւ «Գուգլի» քարտէզներում) Տղմուտ գետի գլխաւոր օժանդակը: Նախ՝ հէնց սրա ձորահովիտն էին արեւմուտքից ու հարաւից շրջապատում այն լեռները, որոնք հին քարտէզներում (ռուսական 5-, 10-վերստանոց եւն) կոչուած են «Շաւարշ», «Շաւարէշ», «Շիւարէշ», իսկ այդ անուան կապը Արտազ գաւառի **Շաւարշան** քաղաքի (եւ գաւառամասի)[5] հետ ակնյայտ է: Բացի այդ, հէնց նշուած օժանդակի ափերով էր անցնում

---

[1] Տե՛ս Հ. Աղաբէկեանի՝ «Աւարայր [գիւղ]» եւ «Աւարայրի ճակատամարտ 451»՝ արդէն յետմահու յօդուածները «Հայկական սովետական հանրագիտարանում» (հտ. 1, 1974, 607), որոնք արտատպուած են նաեւ «Հայկական համառօտ հանրագիտարանում» (հտ. 1, 1990, 304-305):

[2] Հակոբյան, Մելիք-Բախշյան, Բարսեղյան 1986, 359:

[3] Հակոբյան 2003, 40-67:

[4] Айвазян 2016 (516 с. + илл.).

[5] Շաւարշան – Արտազի մասին տե՛ս նախ Պատմահօր մօտ (Խորենացի 1913, գլ. Բ.ծբ, 182). «Եւ հրամայեալ Արտաշիսի բնակեցուցանել զնոսա [Ալանաց ներգաղթեալներին] ի հարաւոյ յարեւելից կուսէ Մասեաց, որ կոչէր **Շաւարշական գաւառ**, ի վերայ պահելով զբնիկ անունն **Արտազ**. քանզի եւ աշխարհն, ուստի գերեցանն՝ Արտազ [var. Արտոզ, Արդոզ] կոչի մինչեւ ցայսաւր ժամանակի» (այստեղ եւ ստորեւ բոլոր ընդգծումները մերն են): ԺԳ դարում Վարդան Արեւելցին գրում էր. «Արտազ գաւառն Մակու է, ուր կայ Սուրբ առաքեալն Թադէոս» (Վարդան վարդապետ 1960, 16, 32): Ըստ այսմ, ակադ. Լեւոն Խաչիկեանի խօսքերով՝ Արտազը «հնում կոչուել է Շաւարշաւան գաւառ, իսկ միջնադարում Մակու կամ Առաքելոց երկիր» (Խաչիկեան 1999, 43): Հ. Ղ. Ալիշանի կարծիքով՝ գաւառը Շաւարշան է կոչուել «գուցէ անուամբ Հայկազն պայազատաց մէկուն, որ կոչուէր Շաւարշ» (Ալիշան 1901, 62): Այդ անունը պահպանել է նաեւ Մամիկոնեան նահատակին նուիրուած «Իմ Հայրենեաց հոգի Վարդան» ազգային երգը («Որ Հայրենեաց շողայ արեւ / **Շաւարշանայ դաշտին** վերեւ...»): Ողջ երկրամասի մանրամասն նկարագրութիւնը տե՛ս Տէմիրճեան 1974; Հախնազարյան 2012, 9-26:

Ատրպատականն ու Մեծ Հայքի հարաւ-արեւելքը (Հեր գաւառը) Կոգովիտով անցնող Արտաշատ – Տիգրանակերտ «Արքայական ճանապարհին» (նրանով էլ՝ Այրարատեան ոստանին) կապող հինաւուրց մայրուղին:

Ս. Թադէի վանքի տակ ընկած ձորահովտով անցնող այդ մայրուղու մասին են վկայում, օր.՝ Մովսէս Խորենացու մօտ, «Արտազեան յիշատակարանում» եւ Թադէոս առաքեալի նահատակութեան պատումի մէջ պահպանուած, ինչպէս եւ վերջինին յարող՝ Լուսաւորչի հօր՝ Անակ Պարթեւի երթուղու մասին ցուցումները: Պատմահօր բնագրերն են. «...յառաջագոյն գրեալ յայլոց՝ զգալուստ առաքելոյն Թադէի ի Հայս, եւ հաւատալ Սանատրկոյ, եւ թողուլ զհաւատսն յերկիւղէ նախարարացն Հայոց, եւ կատարումն առաքելոյն եւ որք ընդ նմա՝ **ի գաւառին Շաւարշան**, որ **այժմ կոչի Արտազ**, եւ պատառումն քարին եւ յիրեարս գալ եւ ընդունել զմարմին առաքելոյն, եւ առնուլ անտի աշակերտացն եւ թաղել **ի դաշտին**, եւ մարտիրոսանալ դստերն արքայի Սանդխտոյ **հուպ ի ճանապարհն**. եւ աստ ուրեմն յայտնել նշխարաց երկոցունց **եւ փոխել յառապարն**»; «Որոց /Խոսրով Մեծի առաքած գնդին/ պատահեալ Անակայ՝ ածեն զնա հրամանաւ թագաւորին **ի գաւառն**, որ անուանեալ կոչի **Արտազ**, ի տեղի **դաշտավայրս**, ուր յայտնեցան նշխարք սրբոյ եւ մեծի առաքելոյն մերոյ Թադէի... Արդ՝ ի բնակելն Անակայ **ի դաշտին Արտազու**՝ պատահէ նմա **տեղի աւթարանին** մաւտ առ դիրս սրբոյ առաքելոյն, որպէս թէ ի ներքսագոյն սրսկապանի խորանին, եւ անդ ասեն զյղութիւն մաւր սրբոյ եւ մեծի մերոյ Լուսաւորչին»[1]: Այս դրուագն ունի նաեւ Ագաթանգեղոսի երկի «Վարք» տարբերակի ասորական խմբագրութիւնը («Երբ նա [Անակը] հասաւ մի **քաղաքի** /այլուր՝ Շաւարշան – Ա. Յ./, նրա **բանակը** դադար առաւ այնտեղ: Իսկ ինքը բարձրացաւ այն բլուրը, որտեղ պսակի էր արժանացել Ադդէ առաքեալը, եւ այդ գիշեր ննջեց իր կնոջ հետ: Վերջինս յղացաւ նրանից այս Գրիգորին, որը լուսաւորեց ողջ Հայաստանը»)[2]: Մի՞թէ պարզ չէ, որ Անակի **օթարանը** եւ իր «բանակի» կայանատեղին մեծ մայրուղու վրայ պիտի լինէին:

Է դարում կազմուած «Արտազեան յիշատակարանը» սրանց յաւելում է. «եւ անտի եկն [Թադէոսը] ի **գաւառս Շաւարշան քաղաք** Հայաստանի, յամս Սանատրուկ թագաւորի Արշակունեաց եւ լուսաւորեաց անդ...»[3]: Իսկ «Վկայաբանութիւն Թադէոսի առաքելոյն...» եւ «Գիւտ նշխարաց Թադէոսի առաքելոյն [եւ Սանդուխտ կոյսի]» վերնագրեր կրող վար-

---

[1] Խորենացի 1913, 157 (գլ. Բ.լդ); 212 (գլ. Բ.հդ):

[2] Տե՛ս Տեր-Պետրոսյան 1988, 45:

[3] Տե՛ս [Մանկունի Վ. վրդ.] 1868, 102:

քագրական երկի (Ե դ. վերջ կամ Զ դ. սկիզբ)[1] հաղորդումները հետեւեալն են. «Եւ ինքն սուրբ առաքեալն առնոյր զաշակերտսն եւ փութով հասանէր յաշխարհն Հայոց, առ թագաւորն Սանատրուկ, ի **գաւառին Արտազ**, ի **քաղաքագեղն Շաւարշան**, **յապարանս արքունի**, ուր էին **հովոց գետինք** թագաւորացն Հայոց: Եւ քարոզէր անդ զբանն կենաց եւ առնէր նշանագործութիւն[ս] **ի դրան արքունի** [եւ] ի համաշխարհազարդ **բանակսն**...»; «Ես՝ Կիրակոս... բնակէի ի սնարս **լերին Սանատրուկ**՝ ի յայրին, մաւտ **ի Շաւարշան**... յայտնեցաւ ինձ ի քուն գիշերի յայտնապէս տեսիլ հրաշալի, ի մէջ **Սանատրուկ դաշտի**...»; «...եւ պատմէր /ոմն յՌշտունեաց/ սքանչելի տեսիլ... ի տեսլեան գիշերի աղջիկ մի գեղեցիկ տեսլեամբ եւ ասէր՝ Ես եմ Սանդուխտ, արի եւ գնա ի **գաւառն Արտազ**, ի **քաղաքագեղն Շաւարշան**, ի **դաշտն Սանատրուկ**, ի **կայս հանգստեան** մերոյ...»[2]: Արդեօք ակնյայտ չէ՞, որ ըստ այս բնագրերի՝ **արքայական ամառանոց** Շաւարշան քաղաքի (կամ քաղաքագիւղի) **դաշտը**, ուր նահատակուել էին Առաքեալն ու իր աշակերտ արքայադուստր Սանդուխտը եւ որտեղից նրանց մասունքներն ինչ-որ ժամանակ անց բարձրացրել ու ամփոփել էին գետափից 1 կմ արեւելք, «առապար» ձորալանջի Ս. Թադէի վանքում, հէնց վերջինից ներքեւ հոսող Զանգեմար գետի հովիտն էր:

Անշուշտ, այս նոյն **արտազեան** մայրուղով էր շարժուել (այլ ոչ թէ՝ Մարդաստան-Մարդուցայք գաւառով անցնող ուշմիջնադարեան Ղարաէյնի – Բայազէտ մայրուղով) Սասանեան արքայ Խոսրով Ա Անուշիրուանի (531-579) բանակը, ինչի մասին վկայութիւն է պահպանել Սեբէոս պատմիչը («...արքայն Պարսից, կոչեցեալ Անուշ Ըռուան Խոսրով, հանդերձ **բազմութեամբ** սպառազէն **զաւրացն** եւ **փղաւք բազմաւք**, եւ ճանապարհ կալեալ **ընդ գաւառն Արտազու**՝ գնաց **ընդ Բագրեւանդ**, զանց արարեալ զԿարնոյ քաղաքաւ»)[3]: Թերեւս՝ նոյն մայրուղով պիտի 484 թ. Դուինից դէպի Հեր գաւառի Նուարսակ գիւղ իջնէր (պարսիկ զօրավար Նիխորի հետ բանակցելու) Վահան Մամիկոնեանը, ով ճանապարհին իր գնդերով դադար էր առել «ի գաւառն, որ կոչի **Արտազ**, ի գեաւղն, որ անուանեն **Եղինդ**», որն արդի Իրինդն է՝ Մակուից 6 կմ հիւսիս-արեւելք[4]: Վերջապէս,

---

[1] Այդ բնագրի բանասիրական քննութիւնը տե՛ս Ակինեան 1969, 399-426; Van Esbroek 1972, 243-283; Վարդանյան 2001, 61-70:

[2] Անանուն 2004, 6, 19-21: Այս երկի բնագիրն առաջին անգամ հրատարակել է Հ. Ղ. Ալիշանը (տե՛ս Սոփերք Հայկականք 1853, 9-75, 87-97):

[3] Սեբէոս 1939, 27; Սեբէոս 1979, 68:

[4] Փարպեցի 1904, 164 (գլ. Գ.ղա, հմմ. «Մատենագիրք Հայոց», հտ. Բ, 2003, 2357): Նշուած ժամանակագրութեան համար տե՛ս Իւզբաշեան 2005, 118-162 («Պարսկի առն երկիր ո՛չ պագցուք» գլուխը):

կարծես թէ, այդ հին մայրուղին է ծառայել անգամ ասորեստանցի Սարգոն Բ-ին (Ք. ա. Ը դար), ով իր վիմագրում յիշում է **Սուրզի** աւանը (Խունդուրնա – Խանդաւարի, Զիրմա – Սուրմի, Էլիյադինիա – Էլիդարայի, Խուռնուկու – Փուռնակի կողքին)[1], որը համադրելի է Զանգեմար օժանդակի ափին, Բարուն գիւղի մօտ գտնուող **Ծործորի** վանքի անուան հետ[2]: Ի դէպ, հնարատր է, որ նոյն «Ծործոր» տեղանունն է նշուած Պեւտինգերեան քարտէզի Արտաշատ – Խոյ ճանապարհահատուածում (Անտեբա – Խանդաւարի կողքին)՝ աղճատուած Սորէ (Sorvae) ձեւով (վերականգնելի՝ Սորզէ կամ Սորսէ, հմմ. **Ծործոր**)[3]:

Այսպիսով, Աւարայրի դաշտը պէտք է փնտրել միմիայն այս՝ բազմիցս վկայուած հին մայրուղու վրայ (անկախ այլ, սակայն մեծ բանակների ու փղերի համար անյարմար ուղիների գոյութիւնից), այսինքն՝ Մակուի գետի հիմնական օժանդակի ափերին, Ղըրմըզիդաշ-Չալդրան գիւղից մինչեւ Ծործորի վանք միջակայքում[4]: Յաւօք, նախկինում մեր պատմաաշխարհագէտները (Ս. Երեմեան, Թ. Յակոբեան, Բ. Յարութիւնեան եւն) կարող էին փնտրել լոկ խորհրդային զինուորական 5-կիլոմետրանոց մասշտաբով քարտէզում (արտերկրի աւելի մեծ մասշտաբով պլանշետները խիստ գաղտնի էին): Բայց 3 տարի առաջ համացանցում, բարեբախտաբար, դրուեցին մեր հարեւան տարածաշրջանների 2-կիլոմետրանոց (1:200000) մասշտաբով զինուորական քարտէզներ: Եւ ահա, դրանց մի պլանշետում (2k-j38-09)՝ 4-5 կմ Ս. Թադէի վանքից իջնող արահետով հիւսիս-արեւմուտք[5], Զանգեմար օժանդակի աջ, արեւելեան ափին նշուած է **Աբարաբաշի** գիւղակը (Մակու քաղաքից ուղիղ գծով՝ 22 կմ հարաւ, Ղըրմըզիդաշ-Չալդրան գիւղից՝ 6-7 կմ հիւսիս-արեւելք, ծովի մակերեւոյթից՝ 1720 մ բարձրութեան վրայ)[6]: «Գուգլում» այն նոր անուն ունի՝ Էմամղոլի-Օլլա, որը,

---

[1] Thureau-Dangin 1912, 38-39; Дьяконов 1951, 328; Mayer 1984, 92-93.

[2] Տե՛ս Յակոբեան 2017: Ի դէպ, Ծործորը **Զուրզուա** անուանաձեւով (*var.* Զուրզուրա) ծանօթ էր դեռ Պտղոմէոսին. տե՛ս Ptol. 2006, 552, 553 (V, 13, 16). Հմմ. Hewsen 1982, 140; Հարությունյան 1988, հմտ 4, 56; Арутюнян 2015, 256). Ծործորի վանքի մասին տե՛ս, օր.՝ Հախնազարյան 2012, 187-205:

[3] Մանանդյան 1936, 153-156 (=Մանանդյան 1966, 177-180, 184):

[4] Պարսկաստանի Արեւմտեան Ատրպատական նահանգի Մակու գաւառի Չալդրան, «Չարդերուն (Չալդորան, Չիալ-Դերուն)» գաւառակի՝ մահալի մասին տե՛ս Հախնազարյան 2012, 24:

[5] Դա՝ ուղիղ գծով, իսկ ասֆալտէ ուղիներով պէտք է 33 կմ պտոյտ կատարել:

[6] Աբարաբաշի գիւղը նշուած է նաեւ վերջերս «Անուշաւան Բարսեղեան» ԱՁ-ի հրատարակած մեծադիր, կաւճապատ, 1:220000 մասշտաբով «Հայաստանի Հանրապետութիւն եւ ԼՂ Հանրապետութիւն» քարտէզում:

գուցէ, զուգորդել են 2 կմ հիւսիս նոյն ափին գտնուող Էմամղոլի-Բալա գիւղակի հետ (սա նշուած է նաեւ զինուորական 5-կիլոմետրանոց քարտէզում՝ Իմամկուլի-Բալա): Թւում է, թէ «Մեծ-Աբարա» կամ «Աբարա-գլուխ» նշանակող այս Աբարա-**բաշիի** համընկնումը հինաւուրց **Աւարայր** գիւղի հետ, որի մօտ տեղի էր ունեցել 451 թ. Մայիսի 26-ի պատմական ճակատամարտը, կարելի է անվիճելի համարել[1]: Այդ դէպքում սպասելի է, որ տուեալ ձորահովտի բնական առանձնայատկութիւնները պիտի օգնեն մեզ՝ վերջապէս ճշգրիտ ընկալելու Աւարայրի ճակատամարտի բնոյթի եւ ընթացքի մասին մատենագրական տեղեկութիւնները: Պարզւում է՝ աւելի քան:

Բանն այն է, որ Ս. Թադէի վանքից ներքեւ ընկած այդ իրօք լեռնափակ ձորահովտով ընթացող Խոյ – Արտաշատ հինաւուրց մայրուղին հարաւից հիւսիս անցնում է իրարից 1,5 կմ հեռու երկու գետանցներով, Աբարաբաշի գիւղի մօտ՝ դէպի արեւմուտք, ապա Էմամղոլիի մօտ՝ դէպի արեւելք (սրանից հիւսիս կայ եւս մի՝ պակաս յարմար գետանց), ընդ որում 2-2,5 կմ փռուած արեւմտեան ափաշերտի յետեւը փակում է ժայռոտ ձորակներով կտրտուած բարձր բլրաշարը: Երկրորդ գետանցից յետոյ մայրուղին աջ ափով դէպի հիւսիս է ձգւում 2780 մ բարձրութեամբ Ղարադաղ լեռան բարձրադիր լանջերով (քանի որ վերջինիս եւ արեւմուտքից 2665 մ բարձրութեամբ Ղարաաղաչ, 5-վերստանոց քարտէզի՝ Ղարախաչ, լեռնազանգուածի միջեւ սեղմուած Զանգեմարը մտնում է Ծործորի խորաձորը՝ կանիոնը, այժմ՝ Բարունի ջրամբարի տակ), ապա մի լեռնանցքով իջնում դէպի Խանդաւար եւ Մակու: Աբարաբաշիի հովտի ահա այս բնական առանձնայատկութիւնն է, որ թոյլ է տալիս (մատենագրական վկայութիւնների ուշադիր վերլուծութեան հետ համադրուած) առարկայօրէն ընկալել Վարդանանց ծրագրած Աւարայրի ճակատամարտի իրական բնոյթը եւ ընթացքը:

Այժմ արդէն պարզ է թւում, որ Հայոց սպարապետը ծրագրել էր այդ 2-2,5 կմ ձգուող լեռնափակ հովիտ-կիրճի («ի շրջափակ տեղի») 3 գետանցների յետեւի նեղ ափաշերտում **կասեցնել** առնուազն կրկնակի խոշոր **Պարսից բանակի ռազմերթը** եւ զրկելով լայն ծաւալուելու հնարաւորութիւնից ու ջախջախելով նրա յետնապահ զօրախումբը (իր ձախ թեւում Աբարաբաշիի գետանցն արեւելք-արեւմուտք անցնելով)՝ վերջինս «գլորել» կենտրոնի ուժեղ մարտաշարքերի վրայ ու իրագործել ողջ հսկայ զօրքին խուճապի (ապա եւ՝ փախուստի) մատնելու արդիւնը (էֆեկտը): Հին ռազմարուեստին լաւ ծանօթ հէնց նմանատիպ խուճապի արդիւնի շնորհիւ էր Տիգրան Մեծի՝ գետափի նեղ շերտով ձգուած հսկայ բանակի դէմ յաղ-

---

[1] Ի դէպ, մեզանից անկախ՝ Աբարաբաշի – Աւարայր համադրումը կատարուած է նաեւ քարտէզագիր Գր. Բեգլարեանի հեղինակած նոր քարտէզներում:

թանակ տարել Լուկուլլոսը Տիգրանակերտի Ք. ա. 69 թ. ճակատամարտում[1]: Իսկ Վարդանի այդ գործուն ծրագիրը յաջող չիրացուեց լոկ այն պատճառով, որ իրենց աջ թեւում գլխովին ջախջախուած պարսիկները «գլորուեցին» ոչ թէ կենտրոնի վրայ, այլ դէպի յետեւի ձորակները (արդեօ՞ք յիրաւի դիւահնար մի հրամանի հետեւելով, թէ՞ զուտ ճակատագրական դիպուածով), իսկ այդ ցրիւ ձորակներում նրանց հետապնդմամբ ու ոչնչացմամբ տարուած հայերի ձախ թեւի զօրախմբի դէմ բազմափորձ զօրավար Մուշկան Նիսալատուրտը հասցրեց շրջել իր ուժեղ կենտրոնի մարտական կազմակերպուած շարքերը:

Պատկերն ամբողջացնելու համար ստորեւ բերում ենք Եղիշէի, Ղազար Փարպեցու եւ Թովմա Արծրունու բնագրերի հիմնական կտորները (մեր որոշ ոչ մեծ կէտադրման սրբագրումներով)՝ ընդգծելով դիմակայութեան յատկանշական դրուագների եւ բուն Աւարայրի ճակատամարտի ընկալման համար առաւել ցուցիչ արտայայտութիւնները[2]:

Եղիշէ. «[Ե յեղանակ, էջ 99-100[3], նախ. 6-10, էջ 634-635] Քանզի ինքն իսկ [Վարդանը] բռնացեալ ունէր զթագաւորանիստ տեղիսն միաբանութեամբ նախարարացն, որ ոչ քակեցան ի սուրբ ուխտէն, **հրաման տուեալ ամենայն զաւրացն ժողովել յԱրտաշատ քաղաք**, փոխանակ յետս կացելոցն, որ ելին զհետ իշխանին Սիւնեաց, զեղբարս կամ զորդիս կամ զեղբարցն որդիս ի տեղի նոցա մատուցանէր... Եւ փութով ամենեքեան **ի տեղի պատերազմին եկեալ հասանէին** իւրաքանչիւր զաւրաւք եւ

---

[1] Այդ ճակատամարտի մասին մանրամասն տե՛ս Ռուբէն Թարումեան-Յակոբեանի մօտ (Акопян 2016, 95-126), յատկապէս՝ էջ 119, 121, 122-ում:

[2] Մեր միա մատենագիրներն Աւարայրի մասին էական տեղեկութիւններ չունեն: Տե՛ս, օր.՝ Ասողիկի մօտ. «Իսկ սուրբն Վարդան միաժողով կալեալ զնախարարսն Հայոց ամս ԺԹ *[var. ԺԲ]* եւ պատերազմեալ ընդ Յազկերտի Պարսից արքայի՝ մեռանի ի վերայ սուրբ ուխտի եւ քրիստոսական հաւատոց ի դաշտին Աւերայրի, ի գաւառին Արտազու» (Ասողիկ 1885, գլ. Բ.բ, 78; Ասողիկ 2011, 687): Բանասիրական խորը խնդիրների համար յղելով Կարէն Իւզբաշեանի եւ Արմէն Այվազեանի ամփոփիչ հետազօտութիւններին (Իւզբաշեան 2005; Айвазян 2016)՝ այստեղ լոկ համառօտ նշենք, որ իր հաւաստիութեամբ աչքի է ընկնում Եղիշէի շարադրանքը, սակայն՝ որոշ անհասկանալի պակասներով: Աւելի համառօտ Ղազար Փարպեցու մօտ յաճախ նկատւում է նաեւ վատ իմացութիւնից բխող բռնազբօսիկութիւն, բայց ինչ-ինչ դէպքերում նա լրացնում կամ գոնէ հաստատում է Եղիշէի պատմածը:

[3] Ըստ՝ Եղիշէ 1957: Բացի քննական հրատարակութեան այս էջերից՝ նշում ենք նաեւ «Մատենագիրք Հայոց»-ի հտ. Ա-ում (Անթիլիաս, 2003) վերահրատարակուած այդ բնագրի նախադասութիւնների համարները եւ էջերը:

ամենայն պատրաստութեամբ, նոքա եւ որ **բունքն հաստատուն կացեալ էին ի տեղւոջն**... /30 անուն ցանկից յետոյ/ ամենեքեան համագունդք հասանէին **ի գործ պատերազմին ի դաշտն Արտազու**, եւ լինէր հանդէս համարուն **վաթսուն եւ վեց հազար** այր **ընդ հեծեալ** եւ **ընդ հետեւակ**:

[էջ 105-106, նախ. 51-56, էջ 641-642] Զայս ասէր /Վարդանն իր ճառը/, եւ **անդէն ի դաշտին զտեղի առեալ՝ զզաւրսն զետեղէր** եւ յամենայն կողմանց տակաւ զայրուձին կազմէր: Իսկ յետ բազում աւուրց զաւրագլուխն Պարսից խաղայր գայր ամենայն հեթանոսական բազմութեամբն: Եւ **եկեալ հասանէր յաշխարհն Հայոց ի Հեր եւ ի Զարեւանդ գաւառ**, եւ անդէն ի գաւառին զտեղի առեալ՝ բանակ բոլորէր, փոս հատանէր, պատնէշ կանգնէր, շերտաւոր փակէր, ամրացուցանէր իբրեւ զքաղաք ամենայն պատրաստութեամբ: Գունդ բազում հատանէր ի զաւրաց նորա, ասպատակաւ արշաւէր, յաւարի առնուլ կամէր զգաւառս բազումս: Զայն իբրեւ լուան զաւրքն Հայոց, սեպուհ մի յազգէն Ամատունեաց՝ Առանձար անուն ընտրեցին յամենայն զաւրականէն... Եւ ընդ առաջ նորա **հազարաւք երկու, հար սատակեաց զբազմութիւն գնդին**, եւ զմնացեալսն ի նոցանէ անդրէն փախստական ի բանակն արկանէր:

[էջ 114-120, նախ. 115-120, էջ 652-660] Յետ այսորիկ իբրեւ ետես զաւրավար գնդին Պարսից, եթէ հատան պատգամատրքն ի միջոյ **խաբել զնոսա** եւ բարձաւ **յոյս ակնկալութեան իւրոյ ցրուել զնոսա յանքակ միաբանութենէն**, յայնմ ժամանակի յառաջ կոչէր զանաւրէնն Վասակ եւ զամենայն ուրացեալ իշխանսն, որ էին ընդ նմա յաշխարհէն Հայոց[1]. հարցանէր զնոսա եւ ուսանէր ի նոցանէ զինարագիտութիւն յաղթութեան: Եւ իբրեւ ուսեալ տեղեկացաւ զառն առն իւրաքանչիւր քաջութիւնս, կոչէր եւ զբազումս ի զաւրագլխացն, որ էին ընդ իւրով ձեռամբ, եւ հրամայէր ածել զառաջեաւ զերամակս փղացն եւ ի գունդս գունդս զգազանսն բաժանէր եւ **առ մի մի փիղ երեք հազար սպառազէնք**... Կարգէր կազմէր զզաւրսն ամենայն, եւ տարածանէր երկայնէր **զճակատն յերկայնութիւն դաշտին** մեծի... զընտիր ընտիր նահատակացն շուրջ զիւրեաւ գումարէր եւ այսպէս ամրացուցանէր զգունդն Մատեան իբրեւ զաշտարակ մի հզաւր եւ կամ իբրեւ զբերդ մի անմատոյց: Նշանս բաշխէր, դրաւշս արձակէր եւ ի ձայն մեծի փողոյն պատրաստ հրամայէր լինել: Իսկ զգունդն Ապարհացի եւ զԿատշացն եւ զՀոնաց եւ զԳեղաց եւ զայլս եւս ամենայն զընտիր ընտիր մարդիկ զաւրուն

---

[1] Այս հատուածի շարադրանքի բովում Եղիշէն, կարծես թէ, բաց է թողել Պարսից բանակի՝ Խոյից դէպի Աւարայր զօրաշարժի նկարագրութիւնը (այն ունի Ղազար Փարպեցին):

ի մի վայր ժողովէր, եւ **հրաման պատուիրանի տայր ընդ յաջմէ կողմանէ իւրոյ գնդին պատրաստ լինել ընդդէմ Հայոց զաւրավարին**[1]:

Իսկ արին Վարդան յառաջ մատուցեալ եւ զաւագանին հարցանէր եւ միաբան ամենեցուն խրատու զզաւրագլուխսն կարգէր: Զգունդն առաջին տայր ի ձեռն իշխանին Արծրունեաց, եւ նիզակակից նմա՝ զմեծ իշխանն Մոկաց... Եւ զգունդն երկրորդ տայր ի ձեռն Խորենայ Խորխոռունւոյ, եւ նիզակակից նմա՝ զԸնծայինն եւ զՆերսեհ Քաջբերունի: Եւ զգունդն երրորդ մատուցանէր ի ձեռն Թաթլոյ Վանանդացւոյ, եւ նիզակակից նմա հրամայէր զՏաճատ Գնթունի... **Յանձն իւր առնոյր զգունդն չորրորդ**, եւ նիզակակից իւր զքաջն Արշաւիր եւ զհարազատ եղբայրն իւր զՀամազասպեան: **Կարգէր եւ կազմէր զճակատն՝ յորդորելով ընդ ամենայն երեսս դաշտին** դէմ յանդիման Արեաց գնդին, **առ ափն Տղմուտ գետոյն**[2]: Եւ իբրեւ այս այսպէս պատրաստեցան, երկոքեան կողմանքն լի սրտմտութեամբ եւ մեծաւ բարկութեամբ զայրանային եւ **գազանացեալ զաւրութեամբ յիրեարս յարձակէին**, եւ ամբոխ աղաղակին երկոցունց կողմանց իբրեւ **ի մէջ ամպոց շփոթելոց ճայթմունս գործէր**, եւ հնչումն ձայնից **զքարանձաւս լերանցն** շարժէր... Անդ էր տեսանել շտապ մեծի տագնապին եւ զաղէտս անբաւ տարակուսանացն երկոցունց կողմանցն՝ առ ի յանդուգն յարձակմանէն զմիմեանս բախելով... Եւ խումբ արարեալ ամենայն բազմութեանն՝ **զգետն ի մէջ փակէին**, եւ զանգիտեալ գունդն Պարսից ի դժուարութենէ գետոյն՝ **զտեղեաւն զեռալ** սկսան: **Իսկ գունդն Հայոց հասեալ անցանէին, ձի ի վերայ առեալ՝ յարձակէին մեծաւ զաւրութեամբ**, սաստկապէս բախեալք ընդ միմեանս՝ յերկոցունց կողմանց բազում վիրատրք յերկիր անկեալ դիաթաւալ խաղային:

---

[1] Այս վերջին՝ խիստ կարեւոր հատուածն ակնարկում է, որ ճակատամարտի նախորդ օրը հայկական ձախ՝ Խորէն Խորխոռունու թեւը ծրագրի համաձայն հետեւողականօրէն **սեղմել է** (Տղմուտի արեւելեան ափին իջնող բլրաշարի վրայից) Պարսից զօրքի ռազմերթի յետնապահ խմբերին դէպի Աբարաբաշիի գետանցի արեւմտեան ափը, ինչով նրանց **աջ թեւում** («յաջմէ կողմանէ իւրոյ գնդին») յատուկ լարում է ստեղծել:

[2] Ի դէպ, նշելի է, որ Եղիշէն Աւարայր անունը լոկ մի տեղ է տալիս, այն է՝ իր երկի աւարտական բանաստեղծական զեղումների կտորում. «...նովաւ եւ վկայքն ցնծացեալ բերկրին: Նովաւ եւ **դաշտն Աւարայրի** պայծառացեալ ծաղկալից լինի, ոչ յանձրեւաբեր ամպոց, այլ ի սուրբ եւ յարիւնաբուխ վկայից ցանեալ եւ ցրուեալ սպիտակութիւն սուրբ ոսկերացն: Յորժամ կոխեսցեն ամենավաստակ ոտք խոստովանողին զլայնատարած **տեղիս պատերազմին**... կենդանի առ կենդանիս երթեալ՝ ամենայն աշխարհին կրկին լինի կենդանութիւնն» (Եղիշէ 1957, Է յեղանակ, 188-189, նախ. 58-59):

Յայնմ մեծ տագնապի ի վեր հայեցաւ քաջն Վարդան եւ տեսանէր զընտիր ընտիր քաջ նահատակաց Պարսից զաւրուն, զի **զձախակողմն շարժեցին զՀայոց գնդին. մեծաւ ուժով յարձակէր ի տեղին, եւ զաջ թեւն Պարսից գնդին բեկեալ՝ արկանէր զգազանաւքն, եւ շրջան առեալ՝ կոտորէր մինչեւ ի նոյն տեղի**: Եւ այնպէս շտապ տագնապի ի վերայ հասուցանէր, մինչեւ **գունդն Մատեան քակեալ բաժանեցան** ի մեծ ամուր պատրաստութենէն, դեռ եւս քաջ քաջ ի փախուստ դառնային: Ապա դէտակն ի վեր ամբառնայր Մուշկան Նիսալաւուրտ, **քակեալ զոմանս տեսանէր ի գնդէն Հայոց եւ զկնի մնացեալ ի հովիտս լերանցն**: Վասն որոյ զաղաղակ բարձեալ՝ **քաջալերէր շուրջ զիւրեաւ զզաւրս Արեաց, որք զտեղի առեալ կային ընդդէմ գնդին Վարդանայ**: Եւ անդէն ի տեղւոջն երկոքին կողմանքն զպարտութիւն խոստովանէին, եւ առ յոյժ թանձր անկեալ դիականցն իբրեւ զքարակոյտս դերբկաց երեւէին: Զայն **իբրեւ ետես Մուշկան Նիսալաւուրտ, մնայր գազանացն Արտաշրի**, որ ի վերայ նոցա նստէր ի բարձր դիտանոցին իբրեւ յամուր քաղաքի. եւ ի ձայն մեծ գալարափողոցն **զիւր գունդսն ստիպէր** եւ յառաջամարտիկ զաւրաւքն զնա ի մէջ փակէր:

Իսկ կորովին Վարդան իւրովք քաջ նիզակակցաւքն ոչ սակաւ նախճիրս ի տեղւոջն գործեաց, **յորում տեղւոջ եւ ինքն իսկ արժանի եղեւ առնուլ զկատարեալ նահատակութիւնն**:

Եւ յերկարել գործոյ պատերազմին՝ **աւրն տարաժամէր** եւ մաւտ առ երեկս կարճատէր. բազմաց ապրահասք մահու հասանէին, մանաւանդ ի թանձրութենէ անկեալ դիականց մաւտ առ մաւտ խտացեալ իբրեւ զփայտահարս մայրատրաց: Անդ էր տեսանել զբեկումն նիզակացն եւ զխորտակումն աղեղանց. վասն այնորիկ եւ ոչ կարէին կալ ճշմարտիւ ի վերայ սուրբ մարմնոյ երանելեացն... Եւ որք մնացեալքն էին՝ **վատնեալք եւ ցրուեալք լինէին ի լեռնադաշտս ամուր ձորոցն**. եւ յորժամ պատահէին միմեանց՝ դարձեալ միւս անգամ զմիմեանս սատակէին... Եւ **քանզի գարնանային էր ժամանակն**, ծաղկալից դաշտքն դառնային յորդահոսանս արեանց բազմաց: Մանաւանդ յորժամ տեսանէր ոք զբազմակոյտ դիականցն անկելոց, սիրտն բեկանէր եւ աղիքն գալարէին՝ լսել զմնչիւն խոցելոցն եւ զմռնչիւնս բեկելոցն, զթաւալգլոր խաղալ սողալ վիրատրացն, զփախուստ վատացն, զթաքուստ լքելոցն... զվայ եւ զաւաղ բարեկամացն: **Քանզի ոչ եթէ կողմ էր՝ որ յաղթեաց, եւ կողմ էր՝ որ պարտեցաւ, այլ քաջք ընդ քաջս ելեալ՝ երկոքին կողմանքն ի պարտութիւն մատնեցան**: Բայց քանզի անկեալ էր զաւրավարն Հայոց ի մեծ պատերազմին, ոչ ոք գոյր այնուհետեւ ի մէջ գլխաւոր, յոր յեցեալ ժողովէին գունդք մնացելոցն: Թէպէտ եւ բազում այն էր, որ ապրեցան, քան թէ՝ որ մեռանն, սակայն ցանեալ

ցրուեցան, եւ **հասեալ անկանէին ի տեղիս տեղիս յամուրս աշխարհին,** եւ բռնանային ի վերայ բազում գաւառաց եւ բերդից, զոր եւ ոչ առնուլ իսկ ոք կարէր:

Եւ այս անուանք են քաջ նահատակացն, որ անդէն ի տեղւոջն կատարեցան.

Յազգէն Մամիկոնէից Քաջն Վարդան հարեւր երեսուն եւ երեք արամբք. յազգէն Խորխոռունեաց Խորէնն Կորովի իններեւտասն արամբք. յազգէն Պալունեաց Արին Արտակ յիսուն եւ եւթն արամբք. յազգէն Գնթունեաց Զարմանալին Տաճատ իններեւտասն արամբք. յազգէն Դիմաքսենից Իմաստունն Հմայեակ քսան եւ երկու արամբք. յազգէն Քաջբերունեաց Հրաշակերտն Ներսեհ եւթն արամբք. յազգէն Գնունեաց Մանուկն Վահան երիւք արամբք. յազգէն Ընծայնոց Արդարն Արսէն եւթն արամբք. յազգէն Սրուանձտայ Յառաջադէմն Գարեգին երկու հարազատաւքն եւ ութուտասն արամբք: Այս երկերիւր ութսուն եւ եւթն նահատակք, ընդ ինն մեծամեծ նախարարսն անդէն ի տեղւոջն կատարեցան: Եւ յարքունի տանէն եւ ի տանէն Արծրունեաց եւ յիւրաքանչիւր յայլոց նախարարաց տանէն... եւ այլ եւս եւթն հարեւր եւ քառասուն այր, որք զանուանս իւրաքանչիւր ի դպրութիւն կենաց գրեցին... Եւ միահամուռ լինի ամենայն **հազար եւ երեսուն եւ վեց**: Իսկ ի կողմանէ ուրացելոցն[1] *[Ա ձեռ.* եւ հեթանոսաց*]* անկանէր յայնմ

---

[1] Տեղին նշենք, որ ինչպէս ցոյց տուեց Մորուս Հասրաթեանի 1966 թ. «Որտե՞ղ է թաղուած Վարդան Մամիկոնեանը» յօդուածի (տե՛ս Հասրաթեան 1985, 65-78) հետքերով «Երկիր եւ մշակոյթ» միութեան կազմակերպած Անգեղակոթի գիտարշաւը (24-25 Յուլիս, 2017), ըստ ամենից հաւանական վարկածի, անկախ ժողովրդական աւանդութիւնից՝ հէնց Անգեղակոթի վերին տապանատան՝ թէկուզեւ հետագայում ժողովրդի կողմից «Վարդանի գերեզման» անուանուած կոթողի կամ կոթողների (Եղիշէի խօսքով՝ «Բազում արձանք կանգնեալ էին յանուն նոցա *[Վարդանանց]*») տակ են թաղուած (ինչպէս որ մի մասն էլ, թերեւս՝ Շաղատի եկեղեցու առջեւ) Աւարայրի ճակատամարտի մասնակից՝ Վասակ Սիւնու կողմնակից սիւնեցի ազնուական զոհերի (Եղիշէի՝ «ուրացելոցն») մարմինները, որ Վասակը ճակատամարտի յաջորդ օրը, անկախ որեւիցէ դժուարութիւնից պիտի ուղարկած լինէր Սիւնիք (այն դարերում ընդունուած պարտադիր կարգի համաձայն՝ հայրենի կալուածքում ամփոփելու համար): Հաւանական է, որ այդ սգո թափորի մէջ նա տեղաւորել էր նաեւ իր պատուաւոր աւարը դարձած՝ սպարապետի եւ Վարդանանց միւս 8 կամ 9 ազնուազարմ նահատակների մասունքները, որոնց, սակայն, թաղել են մէկ այլ տեղ՝ Անգեղակոթից Շաղատ իջնող ճանապարհին գտնուող «Սուրբ Վարդան» կիսաժայռափոր մատուռի խորանում կամ մուտքի առջեւ:

աւուր **երեք հազար հինգ հարիւր քառասուն եւ չորք** այր[1]: **Ինն այր ի նոցանէ ի մեծ պատուաւորացն էր**, վասն որոյ եւ կարի յոյժ ի խոր խոցեցաւ Մուշկան Նիսալաւուրտ: Մանաւանդ իբրեւ ետես զանհնարին հարուածսն **երեքպատիկ զիւրոյ գնդին քան զՀայոցն**, բեկաւ անկաւ զարտութիւն ուժոյն իւրոյ, եւ ոչ հանդարտէր կալ ի վերայ խորհրդոց մտացն...»:

Ղազար Փարպեցի. «[գլ. Բ.լէ, էջ 69[2], նախ. 8-13, էջ 2265-2266] ... առաքէր երանելի սպարապետն Հայոց Վարդան... սեպուհ մի յազգէն Ամատունեաց, որում անուն էր **Առանձար**, իբրեւ երեք հարիւր հեծելով՝ **երթալ լրտեսել զբազմութիւն զաւրացն Պարսից**... Եւ երթեալ Առանձար եւ գունդն, որ ընդ նմա՝ ... զիզաւր վերջապահ թեւով միով անկեալ՝ **զբազումս հանէին ընդ սուր, եւ զայլս փախստականս արարեալ արկանէին** ի զաւրն Պարսից. եւ ինքեանք դարձեալ **ողջանդամք հասանէին ուրախութեամբ ի գունդն Հայոց**... Պատմէին եւ վասն զաւրագլխացն, թէ Մուշկանն Նիւսալաւուրտ եւ Դողվճն *[ձեռ.՝ Դողովճն]* են. տային գիտել եւ զայն եւս սթափութեամբ **հասանել ի միջոյ կողման աշխարհիս**: Զոր լուեալ երանելոյ սպարապետին Հայոց եւ որ ընդ նմայն էին՝ եւս առաւել ճեպէին երթալ ընդդէմ նոցա. նախ՝ վասն վաղվաղակի պատահելոյ նոցա ժամու մարտիրոսութեան... եւ երկրորդ՝ ասէին, **թերեւս անդէն ի տեղւոջն ի Հեր եւ ի Զարեւանդ գաւառին վճարին ելք գործոյն պատերազմին**, եւ ոչ ոք լինէր արգել զաւրուն Պարսից հասանել յաշխարհն Հայոց սպանութեամբ եւ գերելով յարձակել եւ վնասել: Եւ սոցա թէպէտ եւ ածեալ զայսպիսի ինչ զմտաւ կամէին փութալ՝ սակայն եւս առաւել ստիպով եկեալ հասանէին գունդն Պարսից **ի գաւառն Արտազ, հուպ ի գեաւղն, որ կոչի Աւարայր, ի շրջափակ տեղի Տղմուտ դաշտին**, զոր **ընտրեաց յաղագս երկիւղի զաւրացն Հայոց**. ամուր ապաստանի անձանց համարէին պատշաճ, եւ ի միջի նորա ածեալ ղակիշ բանակէին:

[գլ. Բ.լթ, էջ 71-73, նախ. 1-12, էջ 2268-2269] Վասն զի **մերձեալ էր այնուհետեւ ժամ ելից արեգական**, եւ գունդն Պարսից **ճակատել ի պատերազմն պատրաստէին եւ վառէին**, եւ սուրբն Վարդան՝ տէրն Մամիկոնէից, բաժանեալ զիւր գունդն յերիս առաջս՝ միջոցի գնդին կարգէր գլխաւոր զտէրն Արծրունեաց եւ զմարդպետն Միհրշապուհ՝ հանդերձ իշխանաւն Արշարունեաց Արշաւրաւ եւ երանելի արամբն Արտակաւ՝ իշխանաւն Մոկաց, եւ այլ աւագ նախարարաւքն. եւ կողմանն աջոյ կարգէր աւագ՝ զերա-

---

[1] Այսպիսով, ճակատամարտի վճռորոշ արդիւնքներից մէկն էլ այն էր, որ պարսիկների կորուստները **3,5 անգամ** աւելի էին, քան հայերինը:

[2] Ըստ՝ Փարպեցի 1904: Նշում ենք նաեւ «Մատենագիրք Հայոց»-ի հտ. Բ-ի (Անթիլիաս, 2003) բնագրի էջերը եւ նախադասութիւնների համարները:

նելին Մա[ղ]խազ Խորէն[1], հանդերձ երանելեաւն Թաթլաւ, տեառն Վանանդայ, եւ սուրբ արամբն Ներսեհիւ Քաջբերունոյ եւ այլ աւագ նախարարաւքն. եւ ընդ ահեկէն կողմանէ պատրաստէր զինքն իւրով գնդովն եւ իշխանաւն Առաւեղենից Փափագաւ եւ այլ իշխան նախարարաւքն Հայոց. քանզի յայն կողմանէ առաւելապէս երեւէր ղակիշ գնդին Սիւնի զաւրուն եւ այլ զաւրատր արանց նշանք դրաւշիցն: Եւ զՀամազասպեան զիւր եղբայրն թողոյր վերջապահ եւ պատուիրէր նմա՝ մի՛ զոք բռնադատել, այլ յորդորել միայն բանիւք՝ յաղագս իւրեանց փրկութեան:

Եւ այսպէս բաժանեալ յերիս առաջս զզաւրսն Հայոց սրբոյն Վարդանայ, եւ **աւրհնեալք ի բերանոյ սուրբ քահանայիցն**, աւրհնաբանելով զԱստուած՝ **յարձակէին ի վերայ միմեանց երկոքին կողմանքն**, Հայոց եւ Պարսից: Եւ ելեւելս արարեալ այնուհետեւ՝ յառաջէին արք ցանկացաւղք մարտիրոսութեան պսակին, **եւ զզաւրսն Պարսից ի փախուստ դարձուցանէին զառաջինն**: Իսկ այլ բազմութիւն զաւրացն Հայոց, որք առ հարկի եւ ոչ կամաւ, մանաւանդ զի եւ զայլս... դարձուցանելոյ յետս, որք երկնից բարութեանց ցանկացեալք էին՝ անդէն ի փախուստ դարձեալ կորնչէին զյաւիտենից կորուստն: Եւ տեսեալ զաւրացն Պարսից զգունդն Հայոց լքեալս եւ պարտասեալս առ ի կոտորել զազգն իւրեանց, հայեցեալ եւ յայն եւս, զի փախուցեալ երթային զաւրքն Հայոց, ի մէջ առեալ շուրջ զնոքաւք՝ պատեալ ծովանային. ուր եւ ցանկալի խնդրոյն դիպեալք՝ կատարէին այնոքիկ: Ստիպով այնուհետեւ զհետ փախստէիցն Հայոց անցանէին զաւրքն Պարսից. որոց հասեալ՝ զոմանս կոտորէին, եւ զայլ ոմանս արգելեալ ի տեղի ինչ ամրոց արգելուին. որոց ոմանք հատեալ զնիզակափակ գիշերոյն պահապանացն եւ զբազումս ի նոցանէ կոտորեալ՝ գնացին ողջանդամք: Եւ այգոյն ի փախստէիցն Հայոց ձերբակալ արարեալ՝ աճին ի բանակն եւ կոտորեցին սրով, եւ զայլս բազումս արկեալ՝ զփղաւք սպանանէին. եւ մնացորդք փախստէիցն յայլ եւ այլ տեղիս Հայաստան աշխարհիս ցրուեցան: Բայց որ ի ժամուն երանելի եւ երկնաւոր կոչմանն եղեն արժանաւորք ընդ սրբոյն Վարդանայ եւ նահատակեցան՝ են այսոքիկ... [նոյն՝ Եղիշէի թուարկած նախարարական անուններն են...] Եւ **որպէս շատ խուզիւ եւ բազում քննութեամբ հարցեալ եւ ուսաք զնահատակելոցն թիւս**, որք ի տեղւոջ պատերազմին պսակեցան ընդ աւագ նախարարսն՝ երկերիւր եւ աթանասուն եւ վեց այր: Եւ զորս յամրոցացն իջուցեալ սպանին սրով եւ կամ փղաւք կոխեցին՝ եւ աթն հարիւր եւ յիսուն այր. որք լինին միահամուռ **հազար երեսուն եւ վեց այր**... Իսկ ի զաւրացն Պարսիցն, որք

---

[1] Խորէն Խորխոռունու եւ Ներսեհ Քաջբերունու մասին Փարպեցու այս տուեալը ճիշտ չէ, քանի որ նրանք եղել են զօրքի **ձախ** թեւում եւ զոհուել այնտեղ՝ ի տարբերութիւն միւս երկու թեւերի հրամանատարների:

անկան ի պատերազմին յատուն յայնմիկ, զոր ստուգիւ համարեալ, **պատմեցին մեզ, տեղեկացեալք ի զաւրագլխացն Պարսից՝ երեք հազարք հինգ հարիւր քառասուն եւ չորս այր»:**

Թովմա Արծրունի, գլ. Բ.ա[1]. «Բայց իբրեւ եղեւ մեծ պատերազմ սրբոյն Վարդանայ ընդ Մշկանին եւ ընդ զաւրս Պարսից ի **յԱւարայրեան դաշտին, յԱրտազական գաւառին**... Եւ անդ Վահան Արծրունի խոյակապ եւ յականաւոր քաջամարտութեամբ ընդ սրբոյն Վարդանայ ճակատ առ ճակատ վառեալ զպատերազմն, իբրեւ հուր ընդ եղեգն ճեմելով ի մէջ քաջ ախոյեանացն Պարսից: Եւ իբրեւ ռազմ երկոցունց կողմանցն խռնեցաւ, եւ ձախոյ կողման թեւն Հայոց պարտել սկսաւ, եւ սրբոյն Վարդանայ մտրակեալ զերիվարն ի փախուստ զախոյեանսն Պարսից դարձուցեալ եւ զկողմն իւրոյ ձեռին գնդին զաւրացուցեալ՝ անդ Վահան Արծրունի, **ընդմիջեալ զգունդն Պարսից**՝ դարձուցանէ ընդդէմ Վարդանայ. եւ անյապաղ ... ընկեցեալ ի զաւրացն Պարսից գունդ մի հարուստ՝ արք իբրեւ ՃԽ: Ի վեր կառուցեալ զաչս սրբոյն Վարդանայ՝ տեսանէ զանպտէնն Վասակ Սիւնեաց տէր, եւ զհետ նորա աճապարեալ՝ **արկանեն զնա ի յամրափակ զինեալ վաշտն ի մէջ փղացն.** եւ քաջն Վահան Արծրունի ընդ նմա նիզակակցեալ՝ մեռանին ի միասին քաջքն եւ ընտիրքն, մեծ նահատակք Վարդան եւ Վահան, եւ զվկայիցն անուն ժառանգեալ՝ կատարեցան ի Քրիստոս սուրբ գունդն Հայոց, ՈՂՋ ոգիք: Եւ պատմի այս **ի համառաւտութեան Աբրահամու Խոստովանողի**: Բայց թէ է՞ր աղագաւ պատմութիւն վկայութեան Վահանայ ոչ է գրեալ ի գիրս Եղիշէի պատմագրի՝ ստուգապէս առանց յերկուանալոյ ցուցանեմ քում ուսումնասէր քաջահմտութեանդ»[2]:

Ահա այս բնագրերն են ամրապնդում մեր համոզումը, որ Աւարայրի ճակատամարտն ունեցել է հէնց վերոնշեալ՝ **բնական յարմար դիրքում ռազմերթը կասեցնելու բնոյթը**, այլ ոչ թէ՝ բաց դաշտում **իրար դիմաց երկար կանգնելու** եւ չգիտես ինչու՝ հէնց փոքրաթիւ Հայոց զօրքի գրոհելու, ինչպէս որ դա ընկալում են Ղարազիադինի բաց դաշտի վարկածը պնդողները (ինչ-որ տեղ՝ ստիպուա՞ծ): Ընդ սմին՝ ախոյեանները ե՛ւ բուն մարտի ընթացքում, ե՛ւ նախորդիւ դրսեւորել են սպասելի ռազմական հմտութիւն ու հետեւողականութիւն: Արտաշատի զօրահաւաքից յետոյ Հայոց բա-

---

[1] Թովմա 1887, 79-80; Թովմա 2006, 91; Թովմա 2010, 117-118:

[2] Մ. Դարբինեան-Մէլիքեանն այս յղման համար ծանօթագրում է. «Յատկանշական է, որ Վահան Արծրունու անհաւաստի պատմութեան միակ աղբիւրն է մեզ չհասած Աբրահամ Խոստովանողի Համառօտութիւնը, որի գոյութեան մասին հաղորդում է առաջին անգամ եւ միայն Թով. Արծ[րունի]: Այդ հանգամանքը դարձնում է կասկածելի սոյն վկայակոչման ճշմարտութիւնը»: Վերջին պնդումը, սակայն, չափազանց խիստ է թւում:

նակն իջել է իր ծրագրած բախման վայրը՝ «Արտազու» (նոյն՝ Աւարայրի) դաշտ, անցկացրել զօրատես (ըստ Եղիշէի՝ 66 հազ. հեծեալ ու հետեւակ) եւ նախապատրաստել տարածքը: Սահմանային Հերում կիտուող պարսիկներն ու «ուրացողները» նախ ձգտել են մեծաքանակ ուժի ցուցադրումով եւ քրիստոնէութեան թոյլատրման կեղծ (յամենայն դէպս՝ վստահելի չերաշխաւորուած) խոստումով կոտրել հայերի դիմադրելու կամքը եւ լոկ դրա տապալումից յետոյ են դասական ռազմերթի կարգով շարժուել դէպի Արտաշատ մայրաքաղաք: Իրենց դէմ ուղարկուել է Արտազի տէր Ամատունիներից Առանձար սեպուհի մոբիլ ջոկատը (2 հազ. հեծեալ), որը մեծ վնասներ է պատճառել մթերք ամբարող (ֆուրաժիր) խմբերին, ապա Պարսից բանակն իր յետեւից «բերել» վաղօրօք ընտրուած վայրը («զոր ընտրեաց յաղագս երկիւղի զաւրացն Հայոց»)՝ «ի շրջափակ տեղի Տղմուտ դաշտին»[1]:

Պարսիկներին թոյլ են տուել անցնել Աբարաբաշիի գետանցը, բայց յաջորդ գետանցի դիմաց նրանք տեսել են զինավառ Հայոց գնդերին, ում ողջ տեսքն ասում էր, որ լոկ իրենց յաղթելու դէպքում թշնամին կը շարունակի ճանապարհը՝ առաջ կամ յետ: Անշուշտ, Վարդանի խնդիրը հակառակորդին պարզապէս ռազմերթի վրայ անսպասելի դիմաւորելը չէր (Մուշկանի լաւ վարժուած զօրքը պարտաւոր էր պատրաստ լինել նաեւ նման՝ երթից անվնաս ծաւալուելու ռազմագործողութեանը), այլ նրա մտայղացումն էր՝ ոսոխին ճակատամարտ պարտադրել ա՛յն բնական դիրքերում (կոնկրետ՝ բնական արգելք գետանցների միջեւ), որտեղ Հայոց զօրքը կ'ունենար լիարժէք ծաւալուելու տարածք, իսկ առնուազն կրկնակի գերակշռող եւ փղերով ու գամակով ծանրացած այդ ոսոխը՝ ոչ: Նման կերպ պարսիկներին ստիպել են սեղմուելով տեղաւորուել 3 գետանցների յետեւում, ուր եւ նրանք սկսել են հնարաւորինս ծաւալուել («տարածանէր երկայնէր զճակատն յերկայնութիւն դաշտին մեծի»): 3 գետանցների առջեւ 3 գնդեր դասաւորած Վարդանը, տեսնելով թշնամու «տարածուելը» (այլ ոչ թէ՝ հէնց ընթացքից կենտրոնով գրոհելը), կատարել է իր մշակած ծրագրի յաջորդ քայլը. նա իր առանձնացրած չորրորդ՝ հարուածային հեծեալ գնդով («յանձն իւր առնոյր զգունդն չորրորդ»), ըստ ամենայնի՝ գաղտնի (այսինքն՝ գիշերը եւ երկու գիւղերի միջեւ գետի արեւելեան ափին իջնող բլրաշարի թիկունքով) տեղափոխուել է հայկական ձախ թեւի դիրքերը, որտեղից էլ Մայիսի 26-ի վաղ առաւօտեան («մերձեալ էր այնուհետեւ ժամ ելից արե-

---

[1] Առանձարի գործողութիւնների վերլուծութիւնը տե՛ս Хачатурян 1992, 129; Айвазян 2016, 212-215. Կը ցանկանայինք նշել, որ վերջին մենագրութիւնը յանգամանալից պատասխան է տալիս ծագող գրեթէ բոլոր մեծ ու փոքր հարցերին եւ դրանով այլ հետազօտողի համար ստեղծում ոչ մի կարեւոր իրողութիւն բաց թողած չլինելու վստահութեան մեծարժէք պատեհութիւն:

գական») Խորէն Խորխոռունու ճախակողմեան գնդի հետ միասին Աբարաբաշիի գետանցով շեշտակի անցել է Տղմուտի արեւմտեան ափը (ծագող արեւի կողմից) ու գրոհել թշնամու աջ թեւի, այսինքն՝ համալրուած յետնապահի եւ գումակի վրայ («գունդն Հայոց հասեալ անցանէին, ձի ի վերայ առեալ՝ յարձակէին մեծաւ զարտութեամբ, սաստկապէս բախեալք»):

Այդպիսի գրոհի նպատակն էր՝ ջախջախել թերի ծաւալուած եւ գլխաւոր ուժերը կենտրոնում դասաւորած (այդ թւում՝ մեծահռչակ «Մատեան» գունդը) թշնամու աջ թեւի մարտաշարքերը, դրանց մնացորդները շպրտել («գլորել») կենտրոնի շարքերի վրայ ու ծագած խուճապի արդիւնի շնորհիւ փախուստի մատնել ամբողջ հսկայ բանակին: Նոյն պահին գրոհ են սկսել նաեւ միւս երկու ճակատները, սակայն այնտեղ մինչեւ վերջ գերակշռել են նետաձգութիւնն ու նիզականետութիւնը («ի մէջ ամպոց շփոթելոց ճայթմունս գործէր»), իսկ գետանցում չի արուել («խումբ արարեալ ամենայն բազմութեանն՝ զգետն ի մէջ փակէին, եւ զանգիտեալ գունդն Պարսից ի դժուարութենէ գետոյն՝ զտեղեաւն զեռալ սկսան»):

Հայոց ճախակողմեան գնդերին գրեթէ յաջողուել է կատարել խնդիրը եւ, ջախջախելով Պարսից աջ թեւը՝ ընդհուպ մօտենալ կենտրոնին («մինչեւ գունդն Մատեան քակեալ բաժանեցան ի մեծ ամուր պատրաստութենէն, դեռ եւս քաջ քաջ ի փախուստ դառնային»): Տարաբախտաբար՝ հայ զինվորներից շատերն սկսել են հետապնդել ու ոչնչացնել՝ աւելի մեծ չափով դէպի յետեւի ճորակները նահանջող պարսիկներին («ի գնդէն Հայոց եւ զկնի մնացեալ ի հովիտս լերանցն»), ինչը կազմակերպական չնորոտող թերութիւն է եղել: Այդ ընթացքում Մուշկանը հասցրել է համախմբել ուժերը («քաջալերէր շուրջ զիւրեաւ զզարս Արեաց, որք զտեղի առեալ կային ընդդէմ գնդին Վարդանայ») եւ իր կենտրոնի մարտունակ գնդերը շրջել Վարդանի զօրախմբի դէմ՝ ի վերջոյ, օղակելով նրան («մնայր գազանացն Արտաշրի, որ ի վերայ նոցա նստէր ի բարձր դիտանոցին... ի ձայն մեծ գալարափողոցն զիւր գունդսն ստիպէր եւ յառաջամարտիկ զարտաւքն զնա ի մէջ փակէր»): Չնայած դրան՝ անզիջում մարտը շարունակուել է մինչեւ մայրամուտ («յերկարել գործոյ պատերազմին՝ աւրն տարաժամէր եւ մաւտ առ երեկս կարճատէր») ու դադարել լոկ Հայոց սպարապետի, Վահան Արծրունու (կենտրոնի գնդից արիաբար ճեղքելով նրա շրջապատուած խմբին միացած) եւ արդէն ոսոխի «նախճիրը» գերխնդիր դարձրած իրենց զօրակիցների նահատակութիւնից յետոյ («կորովին Վարդան իւրովք քաջ նի-

զակակցաւքն ոչ սակաւ նախճիրս ի տեղւոջն գործեաց, յորում տեղւոջ եւ ինքն իսկ արժանի եղեւ առնուլ զկատարեալ նահատակութիւնն»)[1]:

Սակայն թէկուզ այդ ծանր կորուստներով՝ թշնամուն շատ աւելի մեծ վնասներ պատճառած Հայոց բանակն Աւարայրում պահպանուեց եւ, գիշերը կազմակերպուած նահանջելով, երկրի ամրոցներում ու ծայրագաւառներում դեռ նոր ահեղ մարտեր մղեց. այնքա՛ն ամիսներ, մինչեւ, ի վերջոյ, եկաւ Սասանեանների իրական զիջումների օրը: Եւ դրանից յետոյ Եղիշէն արդէն կարող էր տալ Աւարայրի ճշգրիտ գնահատականն իր դիպուկ արտայայտութեամբ. «Քանզի ոչ եթէ կողմ էր՝ որ յաղթեաց, եւ կողմ էր՝ որ պարտեցաւ, այլ քաջք ընդ քաջս ելեալ՝ երկոքին կողմանքն ի պարտութիւն մատնեցան»: Իսկ մեզ մնում է քաջ նահատակների համար լոկ սերնդէ սերունդ կրկնել. «Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի՛»[2]:

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ալիշան Հ. Ղ. 1890, Այրարատ. Բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ – Ս. Ղազար:

Ալիշան Հ. Ղ. 1901, Հայապատում, հտ. Բ, Վենետիկ – Ս. Ղազար:

Ակինեան Հ. Ն. 1969, Թադէի եւ Սանդխտոյ վկայաբանութիւնը, ՀԱ, Վիեննա, 399-426:

Անանուն 2004, Վկայաբանութիւն Թադէոսի Առաքելոյն ... Գիւտ նշխարաց Թադէոսի Առաքելոյն, Առաջաբանը եւ բնագիրը՝ Յ. Քէոսէեանի, «Մատենագիրք Հայոց», հտ. Գ, Զ դար, Անթիլիաս, 1-22:

---

[1] Ուշագրաւ է, որ անկախ որոշ շեղումներից՝ ճակատամարտը նոյնանման փուլերով է դիտարկում նաեւ Արմէն Այվազեանը (Айвазян 2016, 281-309).

[2] Այս յօդուածին յաւելուած՝ Ռ. Թարոմեան-Յակոբեանի սիրալիր օժանդակութեամբ մեր ձեւաւորած «Աւարայրի դաշտի տարբերակները» եւ «Աւարայրի ճակատամարտը» քարտէզներում փորձել ենք դիտարժան ձեւով ցոյց տալ պատմական ճակատամարտի վայրի տեղորոշման բոլոր վարկածներն ու նրա ընթացքում կողմերի իրական զօրաշարժերը: Յաւարտս նաեւ նշենք, որ 2016 թ. Յուլիսի 15-ին՝ Արտազի Ս. Թադէի վանքի ուխտի օրերի առիթով «Անի տուր» գործակալութեան հաւաքած 10-հոգանոց խմբով Աւարայր-Աբարաբաշիի դաշտ իջանք այդ ուխտի կազմակերպիչ երկու նուիրեալների՝ ՀԱԵ Ատրպատականի թեմի աշխատակիցներ Կարէն եւ Քրիստ Մկրտչեան եղբայրների ու մի քուրդ տեղացու ուղեկցութեամբ (շնորհակալութի՛ւն բոլորին): Հայր Աթանաս վրդ. Մովսէսեանը հոգեհանգստի կարգ կատարեց Աւարայրի նահատակ-հերոսների յիշատակին, իսկ մենք Երեւանից տարած ծաղկեպսակն իջեցրինք Տղմուտ՝ Էմամղոլի-Բալայի գետանցի մօտ:

«Անուշաւան Բարսեղեան» ԱՁ-ի՝ «Հայաստանի Հանրապետություն եւ ԼՂ Հանրապետություն» քարտէզ (մասշտաբ՝ 1:220000):
Ասողիկ 1885, Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, Աշխատութեամբ Ստ. Մալխասեանց, Ս. Պետերբուրգ:
Ասողիկ 2011, Պատմութիւն Տիեզերական, Երկասիրութիւնը՝ Գ. Մանուկեան, «Մատենագիրք Հայոց», հտ. ԺԵ, Ժ դար, Անթիլիաս:
Աստուրեան Յ. 1947, Պատմութիւն Հայոց, Բուենոս-Այրես:
Բասմաջեան Կ. 1914-1927, Իսկական պատմութիւն Հայոց, Կ.-Պոլիս:
Եղիշե 1946, Եղիշեի Վարդանանց պատմությունը, Թարգմանությամբ, ներածական ուսումնասիրությամբ եւ ծանոթագրություններով պրոֆ. Ե. Տեր-Մինասյանի, Եր. (նոյնը՝ լրացեալ՝ Եր., 1958):
Եղիշէ 1957, Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց... Ե. Տէր-Մինասեան, Եր.:
Երեմյան Ս. Տ. 1963, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (Փորձ VII դարի Հայկական քարտեզի վերակազմության...), Եր.:
Էփրիկեան Հ. Ս. 1902, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հտ. Ա, Վենետիկ – Ս. Ղազար:
Թոխմախեան Ա. 1882, Մասիս լեռների հարաւային ստորոտներ, Հրապարակախօսութիւն..., Մասն Ա, պրակ Բ, Թիֆլիս:
Թովմա 1887, Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, Ի լոյս էած Ք. Պ[ատկանեան], Ս. Պետերբուրգ:
Թովմա 2006, Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, Քննական բնագիրը... Մ. Հ. Դարբինյան-Մելիքյանի, Եր.:
Թովմա 2010, Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, Աշխատասիրութեամբ՝ Գ. Տէր-Վարդանեան, «Մատենագիրք Հայոց», հտ. ԺԱ, Անթիլիաս:
ԺԷ դարի հիշատակարաններ 1974, Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հտ. Ա (1601-1620 թթ.), Կազմեցին Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Եր.:
Ինճիճեան Հ. Ղ. 1822, Ստորագրութիւն Հին Հայաստանեայց. Մեծ Հայք, Վենետիկ – Ս. Ղազար:
Ինճիճեան Հ. Ղ. 1835, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հտ. Ա, Վենետիկ – Ս. Ղազար:
Իւզբաշեան Կ. 2005, Աւարայրի ճակատամարտից դէպի Նուարսակի պայմանադրութիւնը, Եր.:
Լեո 1966, Երկերի ժողովածոյ, հտ. 1, Եր.:
Խաչիկեան Լ. Ս. 1999, Արտազի հայկական իշխանութիւնը եւ Ծործորի դպրոցը (Խաչիկեան Լ. Ս., Աշխատութիւններ, հտ. Բ, Եր., 43-121):

Խորենացի 1913, Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Աշխատութեամբ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս:
Կոստանեանց Կ. 1877, Հիւսուածք Հայոց մարզպանների պատմութեան առաջին մասի համար, գիրք Գ, Վիեննա:
Հախնազարյան Ա. 2012, Արտազի երեք վանքերը, Եր.:
Հակոբյան Թ. Խ. Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ. 1986, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 1, Եր.:
Հակոբյան Հ. 1934, Ուղեգրություններ, հտ. Զ, ԺԹ դարի առաջին քսանամյակ (1800-1820), Եր.:
Հակոբյան Հ. 2003, Աւարայրի ճակատամարտը (Պատմաքննական տեսություն), ՊԲՀ 1, 40-67:
Հասրաթեան Մ. 1985, Պատմա-հնագիտական ուսումնասիրութիւններ, Եր.:
Հարությունյան Բ. Հ. 2008, Հայաստանի ազգային ատլաս, հտ. Բ, Եր.:
Հարությունյան Բ. Հ. 2004, Հայաստանի պատմության ատլաս (Մաս Ա), Եր.:
Հարությունյան Բ. Հ. 1988, Հայ Արշակունիների ձեռական իշխանության կալվածքների հարցի շուրջը, ՊԲՀ 3, 56-67; 4, 44-60:
Հարությունյան Բ. Հ. 2001, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Մաս Ա, Եր.:
Հարությունյան Հ. 1947, Վարդանանց պատերազմը, Եր.:
Մանանդյան Հ. 1936, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պեւտինգերյան քարտեզի, Եր. (նույնը՝ Մանանդյան Հ. 1966, Երկեր, հտ. 1, Եր., 78-218):
[Մանկունի Վ. վրդ.] 1868, Անընդհատ շարունակութիւն Առաքելական յաջորդութեան ուղղափառ Սուրբ Եկեղեցւոյ Հայաստանեայց, «Արարատ», 54-56, 86-89, 102-105:
Մարտիրոսյան Հ. 1988, Աւարայրի ճակատամարտի տեղը, ԼՀԳ 6, 82-88:
«Մշակ», 1872, 7 Փետրուարի (հմ 7):
Յակոբեան Ա. 2017, Սարգոն Բ-ի արշաւանքն Ուրարտու եւ հին Հայաստանի պատմական աշխարհագրութիւնը, Մաս Բ, «ՎԷՄ», Թ(ԺԵ) տարի (հրատ. ընթացքում):
[Շերմազանեանց Գ.] 1863, Գ. Շ.-ի օրագրից..., «Կռունկ Հայոց աշխարհին», հմ 6:
Շերմազանեանց Գ. 1872, Թէ՝ ո՞ւր են Աւարայր եւ Տղմուտ, «Արարատ», 423-427, 463-470:

Շերմազանեանց Գ. 1873, Դարձեալ թէ՝ ո՞ւր են Աւարայր եւ Տղմուտ, «Արարատ», 185-188:
Սեբէոս 1939, Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն, Չորրորդ տպագրութիւն, բաղդատութեամբ ձեռագրաց... ի ձեռն Ստ. Մալխասեանց, Եր.:
Սեբէոս 1979, Պատմութիւն Սեբէոսի, Աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Եր.:
Սոփերք Հայկականք 1853, հտ. Ը, Վենետիկ – Ս. Ղազար:
Վարդան վարդապետ 1960, Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի, Քննական հրատարակութիւն Հ. Պերպերեանի..., Բարիզ:
Վարդանյան Ռ. 2001, Թադէոսի Առաքյալի եւ Սանդուխտ կոյսի վկայաբանությունը եւ նրա ժամանակը, «Հայոց սրբերը եւ սրբավայրերը. Ակունքները, տիպերը, պաշտամունքը», Եր., 61-70:
Տէմիրճեան Վ. ծ. վրդ. 1974, Ատրպատական. Աշխարհագրական ծանօթութիւններ, Պէյրութ:
Տեր-Պետրոսյան Լ. 1987, Ագաթանգեղոսի ասորական խմբագրությունը, «Էջմիածին» ԺԱ-ԺԲ, 83-89; 1988, Ե-Զ, 44-54; 1989, Դ-Զ, 90-99:
Փարպեցի 1904, Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Մալխասեան, Տփղիս:

Агабекян Г.О. 1967, К вопросу о месте Аварайрского сражения, ИФЖ 4, 91-114.
Адонц Н. 1908, Армения в эпоху Юстиниана. Политическое состояние на основе нахарарскаго строя, СПб.
Айвазян А. 2016, Армяно-персидская война 449-451 гг., Ер.
Акопян Р. Х. 2016, Локализация Тигранакерта и Тигранакертское сражение 6 октября 69 г. до н. э., Части 1 и 2, «Метаморфозы истории», Псков, № 7, 39–99; № 8, 95–126.
Арутюнян А. Ж. 2015, Армения, государства Восточного Средиземноморья и Иран (189 г. до н. э. – 298 г. н. э.), Ростов-на-Дону.
БСЭ, 1949, Большая советская энциклопедия, 2-е изд., т. I, Москва.
Дьяконов И. М. 1951, Ассиро-вавилонские источники по истории Урарту, ВДИ 2(36), 257-358.
Еремян С. Т. 1951, Народно-освободительная война армян против персов в 450-451 гг. (К 1500-летней годовщине), ВДИ 4, 41-60.
СИЭ, 1970, Советская историческая энциклопедия, т. I, Москва.
Хачатурян В. Н. 1992, Вопросы военного искусства в книге Егишэ «О Вардане и войне Армянской», ВОН, 126-139.

Hewsen R. H., 1982, Ptolemy's chapter on Armenian investigation of his toponyms, RÉA XVI, 111-150.
Hewsen R. H., 1987, Avarayr, «Encyclopaedia Iranica», III, Fasc. I, 32.
Mayer W. 1984, Sargons Feldzug gegen Urartu – 714 v. Chr., Berlin.
Ptol. 2006, Klaudios Ptolemaios, Handbuch der Geographie, Griechisch – Deutsch, Herausgegeben von A. Stückelberger und G. Grasshoff, Basel.
Thureau-Dangin F. 1912, Une relation de la huitième campagne de Sargon (714 av. J. C.), Paris.
Van Esbroek M. 1972, Le Roi Sanatruk et l'Apôtre Thaddée, RÉA IX, 243-283.

AGAIN ON THE PROBLEM OF THE LOCALIZATION OF AWARAYR FIELD IN ARTAZ PROVINCE

Hakobyan Aleksan
(Institute of Oriental Studies, NAS RA)

The analysis of newly published large scale maps and Armenian classic sources (Ełishē, Łazar P'arpetsi etc.) shows that we should look for Awarayr field at Maku river's main upper inflow Zangemar's valley, near a small village named Abarabashi (cf. Abarabashi – Awarayr), which is located 4 km north-west from St. Thaddē monastery in Artaz province (gavar). In that canyon the ancient trail from south to north, from Khoy city to Artashat capital passes through two river crossings, near Abarabashi and Emamgole-Bala villages (2 km away from each other). It also helps us to understand the nature of commander-in-chief Vardan Mamikonean's plan about the Awarayr battle. He was planning to get Sasanian Persian's twice larger army on surprise while marching (between 2 river crossings) and by destroying Persian's rearguard (that is at the right) at their left wing (by crossing the river near Abarabashi from east to west), implement the effect of creating a panic among the remaining part of the Persian army. The idea didn't come to a success, because the Persians, who lost their right wing, managed to turn their strong center against Armenian army's left wing quickly.

Պ.Գ.Թ. Հասմիկ Հմայակյան
(ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ)

ՀԱՅՈՑ ՀՆԱԳՈՒՅՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԽԵԹԱ-ԽԱԹԱ-ԼՈՒՎԻԱԿԱՆ ԵՆԹԱՇԵՐՏԸ

Հայոց հնագույն մշակույթը բարդ և բազմաշերտ երևույթ է, որի ուսումնասիրությամբ զբաղվում են գիտնականները XIX դարից սկսած: Մեր նպատակն է ներկայացնել հայոց մշակույթի խաթա-խեթա-լուվիական ենթաշերտը, որը, սակայն, ծավալուն թեմա է, և այս հոդվածում մենք կներկայացնենք այս առումով կատարված դիտարկումների մի հակիրճ մասը միայն, մասնավորապես կանդրադառնանք մի շարք դիցաբանական զուգահեռների, որոնք առկա են խեթա-լուվիական և հայկական հավատալիքներում:

Խեթական վաղ շրջանի հավատալիքներում ակնհայտ հնդեվրոպական ծագում ունի պահապան-աստված Պիրվան, որն իր անվամբ ու կերպարով, հիմնական հատկանիշներով հանգում է հնդեվրոպական Ամպրոպի աստծո անվանը՝ լիտվ. Perkūnas, լատվ. Perkõns, պրուս. Perkunz, հին սլավ. Perunъ:

Պիրվան հեծյալ աստված էր[1], որը հիշատակվում է Քանեսի հնագույն բնիկ աստվածությունների շարքում[2]: Նոր խեթական ժամանակներում այս աստվածությունը փոխարինվում է խուռիական Շավուշկա աստվածուհով[3]: Հայկական ավանդության մեջ այս հնդեվրոպական աստծո համար վերականգնվող *p[h]er(k[h]o)u-no- անվան և նրանից բխող խեթական ᴰPirva դիցանվան համարժեքն է համարվում հայկական Երվանդ հնագույն դիցանունը: Նրա կերպարի մանրամասն վերլուծությունը՝ ծնունդը, արտաքինը և անվան կրած պատմական հնչյունափոխությունը, հնարավորություն են տվել Ս. Հարությունյանին Երվանդին համադրելու այս հնդեվրոպական ամպրոպային աստծո կերպարի և անվան հետ[4]:

Հաջորդ բուն հնդեվրոպական աստվածությունը, որն առկա է խեթական դիցարանում, Օրվա լույսի աստված լուվիական Տիվատն է և «Մեր աստված» կոչվող šiušummiš-ը: Այս երկու դիցանունների անվանումները հանգում են հնդեվրոպական գլխավոր «հայր-աստծո» անվանման համար վերականգնվող *t'ieu(s)-p[h]H t[h]er- ձևին, որի առաջին

---

[1] Otten 1951: 62-74, White 1993: 321.
[2] Taracha 2009: 27.
[3] Гамкрелидзе, Иванов 1985: 550, прим 1.
[4] Հարությունյան 2000: 103-122:

բաղադրիչը՝ *t'ieu(s)-p[h]H t[h]er- վերականգնվում է որպես «աստված» բառի ընդհանուր անվանում, մասնավորապես «Արևի աստված», «Երկնքի աստված», օրինակ՝ խեթ. šiuš, որից էլ ծագում է վերոնշյալ šiušumas աստծո անունը[1]:

Այն հանդիպում է խեթական ամենավաղ թվագրվող (Ք.ա. XVII դար) Անիտտաս արքայի տեքստում, որտեղ նա հանդես է գալիս որպես ցեղային գլխավոր աստված, որին կոչում էին նաև «Մեր Արևի աստված»[2]: Նրա պատվին տաճար և արձան են կանգնեցնում, որն Անիտտասը վերադարձնում է խեթական Նեսա քաղաք[3]: Վերոնշյալ համահնդեվրոպական աստծո անվանումը ստուգաբանորեն կապված է *tei- «լուսավորել, փայլել» արմատի հետ, որից էլ բխում է լուվիական Տիվատ և խեթական Սիվատ աստվածությունների անվանումը: Նրան համարժեք են «օր» կամ «ցերեկ» նշանակությամբ լատ. diēs «օր», հին իռլ. dīe «օր», հին հնդկ. divā,, հայ. տիւ բառերը[4]:

Խեթական դիցարանում «Այս օրվա լույսի աստծո»՝ Շիվատի տեղը հետագայում գրավել է խաթական «Արևի աստված» Էստանը: Շիվատ աստծո անունն իր զուգահեռն ունի ուրարտական դիցարանի Շիվինի «Արևի աստծո» հետ, որի պաշտամունքային կենտրոնը գտնվում էր Վանա լճի շրջակայքում: Ուրարտական դիցարանում այն, հավանաբար, խեթական փոխառություն է[5]:

Ինչպես նշվեց, վերոնշյալ *tei- արմատը հայերենում պահպանվել է «տիւ»՝ «ցերեկ» բառում, և բացառված չէ, որ հայերը ևս ունեցել են «տիւ» անվանումով «աստված»: Ըստ Գ.Ջահուկյանի՝ դա երևում է ուրարտական barzudibiduni պաշտամունքային ինչ-որ շինության անվանումից և չի բացատրվում ուրարտերենով: Գ. Ջահուկյանն այն փորձում է բացատրել հայերենով (*բարձու տիւի տուն), «բարձր աստծո տուն կապակցությամբ», որտեղ տիւ «օր» բառն ի հայտ է գալիս որպես «աստված»[6]:

Խեթական տեքստերում, ինչպես նշեցինք, վկայված են բուն լուվիական ծագման աստվածություններ, որոնց շարքում Արևի աստված Տիվատի հետ հիշատակվում է Arma լուսնի աստվածություն[7]: Կարծիք է հայտնվել, որ հայկական «Հարմա» անձնանունը և Արմավիր քաղաքա-

---

[1] Гамкрелидзе, Иванов 1985: 791.
[2] Singer 1995: 343-349.
[3] Taracha 2009: 30; Иванов 1977: 38-39.
[4] Гамкрелидзе, Иванов 1985: 791.
[5] MHM 591, Համայկյան 1990: 45-46:
[6] Ջահուկյան , 1986: 16; 1992: 16:
[7] Taracha 2009: 107.

նունը ծագել են վերոնշյալ խեթա-լուվիական Arma լուսնի աստծո անունից[1]: Հայտնի է նաև Պատմահայր Խորենացու հաղորդումն այն մասին, որ Արմավիրում հայոց Վաղարշակ թագավորը (որն իշխել է Ք.ա. II դ. երկրորդ կեսին) կառուցել է մեհյան և արձաններ կանգնեցրել արեգակին, լուսնին և իր նախնիներին[2]:

Արմավիրը՝ որպես գուշակության հնագույն կենտրոն, կապվում է նաև Արա Գեղեցիկի թոռան՝ Սոսանվեր Անուշավանի հետ: Խորենացու հաղորդմամբ նա, պաշտամունքի համաձայն, նվիրված էր Արմենակի՝ Արմավիրում գտնվող սոսի ծառերին, որոնց տերևների սոսափյունից, նայելով քամու ուժին և ուղղությանը, մեր Հայոց աշխարհում սովորեցին գուշակություններ անել և այն էլ՝ երկար ժամանակ[3]: Հայտնի է, որ Արմավիրը՝ նույն ուրարտական ժամանակաշրջանի Արգիշտիխինիլին, պաշտամունքային կենտրոն է եղել[4]: Սակայն վերջին տարիների հնագիտական պեղումների արդյունքում Արմավիրի բլրի լանջին բացվել է նախաուրարտական դարաշրջանի մի սրբազան տաճարային համալիր[5], որը հիմք է տալիս ենթադրելու, որ Արմավիրը հնագույն մինչուրարտական պաշտամունքային կենտրոն է եղել՝ հավանաբար նվիրված լուսնի աստծուն[6]:

Հաջորդը, Հայոց Մուշ տեղանունը նույնացվել է Մուշեղ անձնանվան հետ[7], իսկ հայկական Մուշեղ անձնանունը բխեցվել է խեթական արքայանուն հանդիսացող Մուրսիլիսից[8]: Մուրսիլիսի անվան զուգահեռն է արևմտափոքրասիական Լյուդիայի (նրա կազմի մեջ մտնում են Մյուսիան և Մեոնիան) առասպելական արքա Մյուրսիլոսի անունը[9]: Փաստորեն խեթական Մուրսիլիսի և լյուդիական Մյուրսիլոսի անունները պահպանվել են հայկական Մուշեղ անձնանվան մեջ, որն էլ իր հերթին կապված է Տարոն գավառի կենտրոն հանդիսացող Մուշի անվան հետ:

Հայտնի է, որ Մյուսիայի արքա Տելեփոսի անունը կապվում է խեթական առասպելաբանության անհետացող-վերադարձող, գարնան զարթոնքի հետ կապված աստված Տելեպինուսի անվան հետ[10], իսկ

---

[1] Ջահուկյան 1987: 315:
[2] Մովսես Խորենացի 1968: Գիրք II, գլուխ Ը:
[3] Մովսես Խորենացի 1968: Գիրք I, գլուխ Ի:
[4] Пиотровский 1959. 73.
[5] Карапетян 2004. 268-274.
[6] Պետրոսյան 2006: 38:
[7] Հարությունյան 2000: 117:
[8] Աճառյան 1946: 455:
[9] Պետրոսյան 1997ա: 55:
[10] Гамкрелидзе, Иванов 1985. 903.

Մյուսիայի անվանումը, ինչպես նշեցինք, հնարավոր է՝ պահպանված է հայկական Մուշ տեղանվան մեջ: Հետաքրքրական է, որ խեթական վերոնշյալ Տելեպինուս աստծո անունը պահպանված է համարվում նաև Հայկական լեռնաշխարհով հոսող Տելեբոաս-Մեղրագետի անվան մեջ: Եվ պատահական չէ, որ Մեղրագետը սկիզբ է առնում հենց Մշո դաշտի արևելյան մասից[1]: Սկզբնապես Գ.Ջահուկյանը մյուսիացիների, մուշկերի և Մուշ քաղաքի անունների զուգորդումը համարում էր պատահական նմանություն[2], սակայն հետագայում նա ընդունում է, որ միսիացիների անունը պահպանվել է Մուշ տեղանվան մեջ:

Հաջորդ աստվածությունը խեթական ^{D}Araš-ն է[3], որը Գ. Ղափանցյանը, օգտվելով այն ժամանակ իրեն հայտնի (այսօր արդեն բավականին հնացած) նյութերից, հենվելով Հ.Էհելոլֆի դիտարկումների վրա, համարել է «դաշտային, բուսականության հետ առնչվող աստվածություն»: Այս հատկանիշներից ելնելով՝ նա խեթական ^{D}Araš-ին համադրում է հայկական Արա Գեղեցիկ մեռնող-հարություն առնող և բնության զարթոնքի հետ կապված աստվածության հետ[4]: Առաջին հայացքից կարելի է ենթադրել, որ այս համադրման դեպքում առկա է գործառութային առումով անհամապատասխանություն, քանի որ խեթական ^{D}Araš-ն այսօր մեկնաբանվում է որպես օրենքի, իրավունքի հետ կապված աստվածություն: Նրա անունը բխում է հնդեվրոպական *ar-[t $^{[h]}$ə] «համապատասխանել» իմաստից, որը ծիսական առումով նշանակում է. «համապատասխանել դրվածքին, կանոնակարգին»: Նրա զուգահեռներն են հին հնդկերեն ɟtá - «սուրբ օրենք», ավեստ. Arəta հին պարսկ. Arta- «իրավունք», սուրբ իրավունք և այլն[5]: Ճիշտ է, հայկական Արան մեռնող-հարություն առնող աստվածություն է, սակայն Ա.Պետրոսյանի վերլուծությամբ հայկական Արայի անվան նախաձևը պետք է համարել *rə-to-, *ar(ə)- արմատը, որով, ինչպես նշվեց, կոդավորվում էին տիեզերական և սոցիալական կարգեր նշանակող բառերը[6], և ինչպես տեսանք, վերջիններս ընկած են նաև խեթական ^{D}Araš աստվածության անվան հիմքում: Ըստ Գ. Ջահուկյանի՝ Արայի անունը բխում է հե. *er- «շարժել, բարձրացնել», արմատի ձայնադարձային *jə ձևից կազմված դերբայական *rə-to- հիմքից՝ ուղղականում հատուկ անունների յ-ի սովորական կորստով և թեք հոլովների

---

[1] Սրվանձտյանց 1978: 417:

[2] Ջահուկյան 1970: 58:

[3] Капанцян 1957: 274-276.

[4] Ղափանցյան 1944; Մատիկյան 1930:

[5] Гамкрелидзе, Иванов 1985. 710.

[6] Պետրոսյան 1997բ: 105:

համաբանական, «ի»-ով հիմքով՝ Արա, Արայի, և իր սկզբնական իմաստով պիտի նշանակեր «հարուցյալ, վեր կացած, հարություն առած»[1]:

Փաստորեն երկու ուսումնասիրողներն էլ մի փոքր տարբերությամբ ընդունում են, որ հայկական Արա դիցանվան հիմքում ընկած է *rê-to- արմատը: Նույն արմատն է ընկած նաև, ինչպես նշեցինք վերևում, խեթական ᴰAraš-ի հիմքում: Այս մեկնաբանությունները գալիս են հաստատելու այն տեսակետը, որ այս երկու աստվածությունները, հնարավոր է, փոխառնչություններ են հանդես բերում:

Ընդհանրապես այլ հնդեվրոպական, մասնավորապես հնդիրանական առասպելաբանություններում օրենքի, իրավունքի պահպանման գործառույթներով օժտված աստվածություններն ունենում են նաև Արևի աստծո հատկանիշներ: Օրինակ՝ հին իրանական Միթրան, որի անունը մեկնաբանվում է հենց որպես «դաշինք, համաձայնություն», հանդես է գալիս նաև որպես Արևի աստված: Պտղաբերության և արևի պաշտամունքի գործառույթներն առավել բնորոշ են արևմտյան միթրայիզմին, ինչպես նաև նրանց ժառանգորդը հանդիսացող հայկական Միհրին: Այս ամենից կարելի է հնարավոր ենթադրություն անել, որ խեթական ᴰAraš-ը, որի անվան ստուգաբանությունը հնարավորություն է տալիս նրան վերագրելու «իրավունքի և բարոյականության» հատկանիշներ, հնդիրանական ու արևմտյան Միթրայի և հայկական Միհրի նման կարող էր ունենալ նաև պտղաբերության աստծո գործառույթներ, ինչը գործառութային առումով նրանց հարազատացնում է հայկական Արայի հետ:

Հաջորդը «աստուած» բառի հնարավոր խեթա-լուվիական ստուգաբանություններն են:

Օրինակ՝ Վ.Խաչատրյանը հայերեն «աստուած» բառը բխեցնում է խեթական հիերոգլիֆիկ արձանագրություններում հիշատակվող Á-s-ta-wa-su-s աստծո անունից, որը թարգմանում է որպես «Աստա քաղաքի բարության Á-s-ta-wa-su-s աստված»[2]: Այս տեսակետն ընդունելի կլիներ, եթե հիմնավորվեր, թե ինչու են հայերը փոխառել Աստա քաղաքի բարության աստծո անունը, սակայն այդ առումով հիմնավոր փաստարկներ չեն բերվում: Ժամանակին Գ. Ջահուկյանը ևս փորձել է հայ «աստուած» բառի ստուգաբանությունը գտնել խեթա-լուվիական լեզուներում: Նա առաջարկում է հիեր. խեթերեն (լուվիերեն) Á-s-ti-wa-su-s անձնանունը և Astuwatīmaīs (իշխանի անուն, որ թարգմանվում է «այն թող լինի անունը»)

---

[1] Ջահուկյան 1992: 18:

[2] Խաչատրյան 1967: 76-78:

անձնանունները համադրել հայերեն «աստուած» բառի հետ[1]: Սակայն հետագայում Գ.Ջահուկյանը գերադասելի է համարում հայ «աստուած» բառի բուն հայերենով արվող մեկնաբանությունների փորձերը[2]:

Ուշագրավ ստուգաբանություն է առաջարկում Հ. Մարտիրոսյանը, ով, մանրամասն քննարկելով առ այսօր «աստուած» բառի վերաբերյալ արված ստուգաբանությունները և չհիմնավորված համարելով Ն.Մառի տեսակետը, ամենահեռանկարայինը համարում է Ե.Խաչատուրովայի՝ առ այսօր բոլորի կողմից անուշադրության մատնված համեմատությունը՝ խեթ. aššu – «լավ» և լուվ. Tiwaz - «արևի աստված» բառերի համադրությունից ստացված aššuTiwaz բաղադրությունը: Եվ զարգացնելով այս տեսակետը՝ Հ. Մարտիրոսյանը եզրակացնում է, որ հայ «աստուած» բառը հավանաբար փոխառվել է անատոլիական որևէ ձևից, որ կարող է վերականգնվել որպես *AššuTiuwaz, և որը նշանակել է «լավ օր, բարի արշալույս, բարի աստված»[3]:

Հաջորդ զուգահեռը, որին կցանկանայինք անդրադառնալ, Մովսես Խորենացու պատմության մեջ պահպանված՝ Արտաշեսի որդի Մաժանի անվան և հնարավոր է նաև կերպարի առումով խեթա-լուվիական ենթաշերտի բացահայտումն է: Գ.Ղափանցյանը համարում է, որ այս պատմականացված անձը՝ Մաժանը, որը Արամազդի տաճարի քրմապետն էր, հնագույն հայկական աստվածություն է եղել, ինչպես Վահագնը կամ «Վիպասանքի» Արտավազդը, Տորքը և այլք: Նա մի շարք փաստարկներ է ներկայացնում այս առումով:

1) Մաժանին Արտաշեսն ուղարկում է «վիշապազունների», այսինքն՝ մեդացի Արգամի դեմ, որը բնակվում էր Մասիսի ստորոտին, և Մաժանը, հավանաբար չկարողանալով հաղթել վերջիններիս, առևանգում է Արգամի հարճին՝ Մանդուին, «որ կարի չքնաղ էր գեղով և մնացեալ գնացիք»: Ըստ Ղափանցյանի՝ Մաժանն այս դրվագում որոշակի կապեր է հանդես բերում վիշապազունների հետ:

2) Մաժանին Արտաշեսը նշանակում է Արամազդի՝ Անի-Կամախում գտնվող տաճարի քրմապետ:

3) Երրորդ և դիցաբանական առումով ամենաբնութագրական հատկանիշն այն է որ, ըստ Խորենացու վկայության, հանգուցյալ Մաժանի եղբայրը (Մաժանը սպանվում է որսի ժամանակ իր եղբայրների ձեռքով)՝ վերջին Տիգրանը, իր եղբոր շիրիմը մեծարելու համար, որ գտնվում էր

---

[1] Ջահուկյան 1970: 161:

[2] Ջահուկյան 1986: 51, 52:

[3] Մարտիրոսյան 2010: 53-55:

Բագրևանդ գավառի Բագավան վայրում, այնտեղ կառուցել է տալիս բագին և զոհաբերությունների կարգ սահմանում ու իջևանատեղի կառուցում, որպեսզի այդ զոհաբերություններից օգտվեն նաև ճամփորդները և օթևան ունենան: Այս նույն վայրում Վաղարշ թագավորը սահմանում է «տօն աշխարհախումբ»՝ համաժողովրդական տոներ, որոնք անցկացվում էին Նոր տարվա սկզբին՝ Նավասարդի (օգոստոսի) 11-ին:

Ընդհանրացնելով Գ.Ղափանցյանը եզրակացնում է, որ Մաժանը՝ որպես աստված կամ աստվածացված անձ, կապված է վիշապազունների հետ, համարվում է գլխավոր աստծո՝ Արամազդի պատգամախոսն ու գլխավոր քրմապետը և հյուրընկալ - աստված է, որի պատվին Նոր տարվա սկզբին համաժողովրդական տոնակատարություններ էին անցկացվում, և վերջինս այս առումով նույնանում է Ագաթանգեղոսի մոտ հիշատակվող Վանատուրի հետ: Գ.Ղափանցյանի այս դիտարկումները հետագայում լիովին ընդունել է Գ.Վարդումյանը, ում կարծիքով Մաժանի՝ հյուրընկալության և քրմական գիտության հետ ունեցած առնչությունները հետագայում անցել են այլ աստվածությունների, իսկ Մաժանը դարձել է պատմականացված անձ՝ Արտաշեսի որդին[1]:

Ինչ վերաբերում է Մաժանի անվան ստուգաբանությանը, ապա Գ.Ղափանցյանն այն բխեցնում է լիդիական Masanes դիցանունից[2]:

Մաժանը, ըստ Աճառյանի, իրանական ծագում ունի, բայց աղբյուրը չի նշվում, իսկ Գ.Ջահուկյանն այն բխեցնում է թրակա-դակամիսիական massan-es անձնանունից[3]:

Մեր կարծիքով, եթե Մաժան անունն իսկապես փոքրասիական ծագման է, ապա այն կարելի է համադրել նաև լուվ. maššana բառի հետ, որ նշանակում է «աստված»[4]: Հնարավոր է համարվել նաև, որ «լուսին» բառի հնագույն անվանումը մի շարք անատոլիական լեզուներում նշանակել է ընդհանրապես «աստված», օրինակ՝ լուվիերեն maššani/a-, լյուկ. mahan-, կար. Massan-, mesn-, լիդ. *masneli-, էտր. masn-, ինչպես նաև հիերոգլիֆիկ լուվ. Masna-ãī[5]:

Մենք առավել հավանական ենք համարում, որ հայերեն Մաժանի անունը փոխառված լինի վերը նշված անատոլիական ձևերից որևէ մեկից և ունենա «լուսնաստված» կամ պարզապես «աստված» իմաստը, ինչը մեկ անգամ ևս կարող է հաստատել այն դիտարկումը, որ Մաժանը հնագույն

---

[1] Вардумян 1991. 75.

[2] Капанцян 1957. 282-290.

[3] Ջահուկյան 1970: 72, 73:

[4] Гамкрелидзе, Иванов 1985. 860.

[5] Топоров, 1985. 123, прим. 46.

դիցաբանական կերպար է, որ հետագայում դարձել է պատմականացված անձ:

Ընդհանրացնելով վերոնշյալը՝ կարելի է փաստել, որ խեթա-լուվիական ժողովուրդները հզոր ենթաշերտային ազդեցություն են թողել հայոց հոգևոր մշակույթի ու հավատալիքների վրա, ինչը պատմալեզվական այլ իրողությունների հետ համադրելիս հնարավորություն է տալիս ենթադրելու, որ հայ-խեթա-լուվիական շփումները հավանաբար ուղղակի բնույթ են կրում և պետք է որ թվագրվեն խեթական կայսրության գոյության ժամանակաշրջանով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աճառյան Հր. 1946, Հայոց անձնանունների բառարան, Հ-Գ, Երևան:

Հարությունյան Ս. 2000, Հայ առասպելաբանություն, Բեյրութ:

Խաչատրյան Վ. 1967, Խեթա-հայկական դիցաբանական ընդհանրություններ, ԼՀԳ 8, 71-79:

Հմայակյան Ս. 1990, Վանի թագավորության պետական կրոնը, Երևան:

Մատիկյան Ա. 1930, Արա Գեղեցիկ, Վիեննա:

Մարտիրոսյան Հ., 2010, Հնդեվրոպական «Երկնային Հայր, Աստված» բառի հետքերը հայերենում», Խալդյան զորությամբ..., Հոդվածների ժողովածու նվիրված Բ.Պիոտրովսկու 100-ամյակին, Երևան:

Ղափանցյան Գ. 1944, Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան:

Պետրոսյան Ա., 1997ա, Հայկական էպոսի հնագույն ակունքները, Երևան:

Պետրոսյան Ա., 1997բ, Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգածագման խնդիրը, Երևան:

Պետրոսյան Ա. 2006, Հայոց ազգածագման հարցեր, Երևան:

Ջահուկյան Գ. 1970, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Երևան:

Ջահուկյան Գ. 1987, Հայոց լեզվի պատմություն, Նախագրային ժամանակաշրջան, Երևան:

Ջահուկյան Գ. 1986, Հայկական շերտը ուրարտական դիցարանում, ՊԲՀ 1, 43-58:

Ջահուկյան Գ. 1992, Լեզվական նոր տվյալներ հայոց նախաքրիստոնեական կրոնի և հավատալիքների մասին, ՊԲՀ 1, 14-27:

Մովսես Խորենացի 1968, Պատմություն Հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Երևան:

Սրվանձտյանց Գ. 1978, Երկեր, հատոր I, Երևան:

Вардумян Г. 1991, Дохристианские культы армян, Армянская этнография и фольклор. Материалы и исследования, 18.

Гамкрелидзе В., Иванов В. 1985, Индоевропейский язык и индоевропейцы, т. II, Тбилиси.

Иванов В. 1977, Луна, упавшая с неба, Москва.

Капанцян Г. 1957, Историко-лингвистические работы: К начальной истории армян. Древняя Малая Азия, т. I, Ереван.

Карапетян И., Ж. Хачатрян, А. Канецян 2004, Доурартский Армавир, ИФЖ 2, 268-274.

Пиотровский Б. 1959, Ванское царство (Урарту), Москва, 1959.

Топоров В. 1985, Хетт.-лув. Kamrušepa: мифологический образ, Древняя Анатолия, Москва, 106-128.

Otten H. 1951, Pirva der Gott auf dem Pferde, Jahrbuch für kleinasiatischen Forschungen, Band 2/3, 62-74.

Taracha P. 2009, Religions of Second Millennium Anatolia, Wiesbaden.

Singer I. 1995, "Our God" and "Their God" in the Anitta Text, *in* O. Carruba – M. Giorgeri – C. Mora (eds), *Atti del Congresso Internazionale di Hittitologia: Pavia , 28 giugno – 2 luglio 1993*. Studia Mediterranea 9, Pavia. 343-349.

White Grace Kate-Sue 1993, The Religious Iconography of Cappadocian Glyptic in the Assyrian Colony Period and its Significance in the Hittite New Kingdom (Diss., Chicago-Illinois, December, 1993).

THE HITTITE-HATTIC-LUWIAN SUBSTRATE OF ANCIENT ARMENIAN CULTURE

Hasmik Hmayakyan

(Institute of Oriental Studies, NAS RA)

In the article the author presents a number of mythological parallels related to the Hittite-Hattic-Luwian substrate in the Armenian culture.

Pirwa, the guardian god of the early Hittite beliefs with evident Indo-European origin was the first deity compared with ancient Armenian theonym Erwand.

Luwian Tiwatt (the deity of the daylight) and "Our god" Šiušummiš are etymologically related to the Indo-European root *t'eiç- "to lighten, to shine". Latin diÙs, Old Irish. dÐe, Sanskrit divŒ, Armenian unhı 'day, daytime' also

trace back to the same root. As supposed by G.Jahukyan, the Armenians also may have had a deity named *tiw*.

Armenian proper name *Harma* and the toponym *Armawir* may have originated from Luwian moon deity Arma attested in Hittite texts.

Similarly it is assumed that the Armenian proper name *Mušeł* may have originated from Hittite royal name Muršilis. The name of the Hittite deity ^{D}Araš can be compared with the first element of the Armenian god *Ara Gełec'ik;* their characters are also compatible. The author also discusses possible Hittite-Luwian etymologies for the Armenian word *astwac* 'god'.

The personal name Mažan, son of the Armenian king Artašēs, may be another example of the Hittite-Luwian substrate.

Summarizing the above said it is possible to state that the Hittite-Luwian peoples had powerful substrate impact on the Armenian culture and beliefs which enable us to suppose through interrelation of historic, linguistic and other evidences that the Armenian-Hittite-Luwian contacts in all probability have been of direct nature and should be referred to the period of existence of the Hittite Empire.

Պ.գ.թ. Մելիքյան Արթուր
(Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ)

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍԱՍԱՆՅԱՆ ԹԱԳԱԺԱՌԱՆԳՆԵՐԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

III դ. Հայաստանում Սասանյան գահաժառանգների կառավարման հիմնահարցին անդրադարձել են տակավին XIX դ.: Հետագայում Հ. Աստուրեանը, Կ. Թումանովը, Հ. Պերպերյանը, Մ. Լ. Շոմոնը, Ս.Երեմյանը, Գ.Սարգսյանը, Ռ.Մանասերյանը և այլք փորձել են ճշտել խնդրո առարկա իրողության ժամանակագրական սահմաններն ու քաղաքական բովանդակությունը: Ընդհանուր առմամբ նշված ուսումնասիրողները Հայաստանում Սասանյան արքայազների գահակալության շրջանը նույնացրել են Մ.Խորենացու առաջադրած «ժամանակս անիշխանութեանն»[1] եզրույթով հասկացվող տասնամյակների հետ՝ թվագրելով այն Մեծ Հայքում Արշակունիների գահակալության ժամանակավոր անկումից մինչև Տրդատ III Արշակունու գահակալությունը[2]: Գրեթե բոլոր դեպքերում խնդրո առարկա երևույթը բացատրվել է իբրև նվաճված Մեծ Հայքում պարսկական տիրապետության ամրապնդման միջոց: Մինչդեռ անտեսել կամ թերագնահատել են այն քաղաքական դրդապատճառները, որոնք պաշտոնական Տիզբոնին մղում էին նվաճված Հայաստանի կառավարումը հանձնել բացառապես Սասանյան գահաժառանգներին:

Այս հոդվածի շրջանակներում կփորձենք պարզել, թե վաղ սասանյան ռազմավարչական համակարգում գահաժառանգներին վերապահված ինչ բացառիկ դերով էին պայմանավորված Մեծ Հայքում նրանց նշանակումները, համահո՞ւնչ են արդյոք «ժամանակս անիշխանութեանն» և «Հայաստանում Սասանյան թագաժառանգների գահակալության շրջան» հասկացությունները:

Սասանյան գահաժառանգներն իբրև «արքայից հետո երկրորդ»

Հայտնի է, որ Սասանյաններն Իրանի գահին տիրացել էին որպես տոհմ, որի միասնությունը նրանք մշտապես ընդգծում էին: Այդ պատճառով էլ, թվում է, գահաժառանգության հարցում տիրապետող պետք է

---

[1] Խորենացի 1913. II, ՀԵ:

[2] «Անիշխանության ժամանակ»-ի տևողության մասին հայ մատենագիրների տվյալների համեմատական աղյուսակը տե՛ս Սարգսյան 1965: 91:

դառնար նահապետական սկզբունքը: Մինչդեռ Արտաշիր I-ը, ով ուներ ավագ եղբայրներ[1], գահաժառանգ հայտարարեց Արշակունիներից սերող Միրոդ թագուհուց ունեցած որդուն՝ Շապուհին: Գահի փոխանցման հաստատագրված մեխանիզմների բացակայության պայմաններում Արտաշիրը կայացրած վճիռը հիմնավորելու և գործնականում ամրապնդելու նպատակով փորձել է շաղկապել նախորդ իրանական հարստությունների օրոք գործածված տարատեսակ ծիսական և իրավաքաղաքական մեխանիզմները: Մասուդիի վկայությամբ Արտաշիրը **«գնահատում էր նրան (Շապուհին-Ա.Մ.) որպես իր բոլոր որդիների մեջ ամենաազնվազարմի, ամենախոհեմի, ամենաքաջի և ամենահաջողակի»** և մեծամեծերի մի հավաքի ժամանակ հայտարարել է իր հաջորդը[2]: Սրանից ակնհայտ է, որ. ա) Շապուհի ընտրության գործում վճռորոշ են եղել նրա անձնական որակները, բ) Արտաշիրը փորձել է իր ընտրությունն օրինականացնել՝ գահաժառանգին հանդիսավորապես ներկայացնելու (*ἀνάδειξις*) հին աքեմենյան կարգը վերակենդանացնելու միջոցով: Ինչպես երևում է, նույն նպատակին են ծառայեցվել նաև, այսպես կոչված, «*pasāgrīw*»-ի՝ «արքայից հետո երկրորդ»-ի հաստատության առանձին բաղադրատարրերը: Այդ նպատակով Արտաշիր I-ը, պաշտոնական աստիճանակարգության մեջ «արքայից հետո երկրորդ»-ի դիրքը Աքեմենյանների օրինակով վերապահելով բդեշխներին, պատկերագրական տեքստերում, ինչպիսիք սասանյան ժայռաքանդակներն են, այն արժևորել է դինամիկ իմաստով և վերապահել է գահաժառանգին:

Առաջին անգամ դա արտահայտվել է ինվեստիտուրայի թեմայով ստեղծված Նախշ-ի Ռաջափ III[3] և Փիրուզաբադ II[4] ժայռաքանդակների վրա, որտեղ, իրենից հետո պատկերվելու պատիվը վերապահելով որդուն, Արտաշիրը, ինչպես Դարեհ I-ն ու Քսերքսես I-ն իրենց պերսեպոլիսյան հարթաքանդակների վրա[5], պարզորոշ ազդարարում էր, թե ով է լինելու Իրանի ապագա տիրակալը: Իսկ իր գահակալության վերջերին ստեղծած Փիրուզաբադ I[6] ժայռաքանդակի վրա Արտաշիրն իրենից հետո պատկերել է տվել Շապուհին՝ Արտավան V-ի մեծ վեզիրին ձիուց ցած տապալելիս[7]:

---

[1] al-Tabarī, 1999: 8.

[2] See Shahbazi 2002.

[3] Hinz 1969: 122, Tafel 57.

[4] Hinz 1969: 121, Tafel 56.

[5] Меликян 2013. 104, рис. 1, 107, рис. 2, 3.

[6] Hinz 1969: 117, Tafel 51.

[7] Փիրուզաբադ I-ի հորինվածքի այլընտրանքային մեկնաբանությունները տե՛ս Фаррох 2009. 198-199. Grabowski 2011: 207-233: Soudavar 2009: 427, n. 30.

Այսպես նա թափանցիկ ի ցույց է դրել Արշակունիների տիրապետության անկման գործում որդու ունեցած անմիջական մասնակցությունը:

Սակայն հայտնի է, որ գահաժառանգների քաղաքական դիրքերի ամրապնդման վերոնշյալ քարոզչական միջոցը Աքեմենյան տերության մեջ ի զորու չեղավ ապահովելու գահի սահուն անցումը[1]: Հավանաբար դրա գիտակցումով է, որ Արտաշիրը «արքայից հետո երկրորդ»-ի դիրքերի ամրապնդման վաղաքեմենյան քարոզչաձևը փորձել է լրացնել պարթևական փորձով՝ թագաժառանգին համապետական բնույթի ռազմական գործառույթ և տերության կազմում իբրև ոստան ռազմավարական նշանակություն ունեցող երկրամաս տրամադրելով[2]:

Առաջին հայացքից գահաժառանգ Շապուհի կրած զորապետական գործառույթի վերաբերյալ առաջադրվող դրույթը հակասում է վաղ սասանյան տերության ռազմական կազմակերպության մասին գոյություն ունեցող պատկերացմանը: Դրա համաձայն, Իրանի ռազմական գործակալությունը ստեղծվել է տակավին Աքեմենյան դարաշրջանում և հետագայում ժառանգվել է պարթև Արշակունիների, ապա և Սասանյանների կողմից[3]: Շապուհ I-ի Քաաբա-ի Զարդուշտի (ŠKZ) և Ներսեհի Պայկուլեի (NPi) արձանագրություններում Իրանի սպարապետի (*Ērān-Spāhbed*) պաշտոնով անձանց հիշատակությունները, թվում է, մեկընդմիշտ բացառում են վաղսասանյան գահաժառանգների ռազմական գործառույթների հնարավորությունը: Սակայն սա կլինի բավական *apriori* գնահատական, քանի որ այնքան էլ հստակ չէ, թե ինչ է ներկայացրել իրենից *Ērān-Spāhbed*-ի պաշտոնը պարթևական դարաշրջանում, և ինչպիսին է այն ժառանգվել վաղսասանյան պետական համակարգի կողմից: Այս առումով ուշագրավ է, որ Արտաշիր I-ի հոր՝ Պապակի արքունի ցուցակում Spāhbed պաշտոնյա հիշատակված չէ, իսկ Արտաշիր I-ի արքունի ցուցակում *Spāhbed* Ռախշը հիշատակված է միայն XVII տեղում՝ Արտաշիրին հպատակ չորս արքաներից, Պապակի մայր Դինակից, Արտաշիրի մայր Ռոդակից, Պապակի դուստր և «թագուհիների թագուհի» Դինակից, բդեշխից, հազարապետից ու Իրանի ամենաանվանի տոհմերի ներկայացուցիչներից (*wuzurgān*) հետո[4]: ŠKZ-ի Շապուհ I-ի արքունի ցուցակում *Ērān–Spāhbed*-ը

---

[1] Меликян 2013: 109-114.

[2] Մելիքյան 2002: 24-26:

[3] Хуршудян 2003: 164. Էդ.Խուրշուդյանը հավանական է համարում, որ հայերեն սպարապետ բառը վաղմիջինպարթևերեն (Ք.ա. II – Ք. Հ. II դդ.) *spāδpet բառի ադապտացիան է (Хуршудян 1992: 178): Դա ընդունում է նաև Ա. Մուշեղյանը (Մուշեղյան 2007: 266, ծան. 5):

[4] Sprengling 1953: 18.

ընդհանրապես բացակայում է: Նրա փոխարեն ցուցակի XII տեղում հիշատակված է հեծելազորի պետ (միջ. պարսկ.՝*a'sppt*, պարթ.՝*a'sppty*) Պերոզը[1]: ŠKZ-ի երեք արքունի ցուցակներում Ērān-Spāhbed-ի «էպիզոդիկ» դիրքը թույլ է տալիս եզրակացնել, որ պարթևական դարաշրջանից եկող իներցիայով վաղ սասանյան փուլում էլ բանակի ղեկավարությունը գործնականում իրականացրել են պարսից արքաներն ու գահաժառանգները: Ուղղակի թե անուղղակի այս իրողությունը հաստատում են գրավոր աղբյուրները[2]: Կարելի է կարծել, որ Արտաշիր I-ի և Շապուհի կառավարչակցության շրջանում՝ 240-242թթ., հավանաբար ավագ վեհապետի վատառողջության պատճառով իրանական տերության ռազմական կյանքի ասպարեզն ամբողջապես տրամադրված էր նրան[3]:

Գահաժառանգ Շապուհը «Հայաստան»-ի կառավարիչ

Գրավոր և պատկերագրական նյութերից ակնհայտ է, որ Արտաշիրը յուրացրել է գահաժառանգի դիրքերի ամրապնդման պարթևական փորձի նաև երկրորդ՝ տերության ռազմաքաղաքական ակտիվ ճակատային տեղամասում հատուկ ուստանի տրամադրման բաղադրամասը: Հիմնախնդրի լուսաբանության առումով սկզբունքային նշանակություն ունի «Մանիի Քյոլնյան ժողովածուն», որտեղ կարդում ենք. **«Ես դարձա քսանչորս տարեկան այն տարում[4], երբ Պարսից արքա Դարի Արտաշիրը գրավեց Հաթրա քաղաքը, որում Փարմուդի (Նիսան) ամսի 8-րդ օրը (240թ. ապրիլի 12) արքա Շապուհի՝ իր որդու գլխին դրեց ավագ դիադեման»[5]:**

Միանշանակ է, որ Մանիի վերոնշյալ հաղորդման մեջ խոսքը Արտաշիրի կողմից որդուն կառավարչակից հայտարարվելու մասին է: Սակայն տվյալ դեպքում ուշադրություն է պահանջում հեղինակի՝ «(Ար-

---

[1] Ա.Մուշեղյանը aspptу բառը թարգմանում է «սպարապետ» (Մուշեղյան 2007: 266), մինչդեռ իրավացի պետք է համարել Մ.Շպրենգլինգի թարգմանությունը այն է՝ «Horse-lord», այսինքն՝ հեծելազորի պետ (Sprengling 1953: 19):

[2] Herodianus, V, 5-6; SHA, Alexander Severus, LVI. 7; Ibid. , Gordiani tres, XXVII. 5. Խորենացի Մ., II, ՁԷ:

[3] Hinz 1969: 145-152; Shahbazi 2002.

[4] Մանին ծնվել է 216թ. ապրիլի 14-ին (*Acta Iranica*, 9 (1975), vol. II, p. 1; Sundermann 2009): Հետևաբար՝ վերը նշված թվականը համապատասխանում է 239թ. ապրիլի 14-ից մինչև 240թ. ապրիլի 13-ն ընկած ժամանակահատվածին: Այս թվականն է ցուցում նաև «Օգոստոսների պատմությունը» (SHA, Gordiani tres, XXVI):

[5] Herichs and Koenen 1970: 120; Henrichs 1979: 339-367; Sundermann 1986: 49.

տաշիրը) **արքա Շապուհի՝ իր որդու, գլխին դրեց ավագ դիադեման»** ձևակերպումը: Նախադասության կազմության մեջ գահաժառանգի համար իբրև որոշիչ գործածված **«արքա Շապուհ»** արտահայտությունը պարզորոշ փաստում է, որ նախքան հոր կողմից Իրանի կառավարչակից վեհապետ թագադրվելը Շապուհն արդեն կրել է արքայական տիտղոս, հետևաբար՝ նաև հպատակ արքայի պատվանշան՝ «կրտսեր դիադեմա»: Ըստ այդմ՝ կասկածից վեր է դառնում այն, որ գոյություն է ունեցել ինչ-որ մի տարածք, որտեղ Շապուհի արքայական տիտղոսը ներդաշնակել է տերության գահաժառանգի կարգավիճակի և դրա հետ կապված զորապետական գործառույթի հետ: III դ. երկրորդ քառորդին պարսկա-հռոմեական և պարսկա-հայկական հակամարտությունների վերաբերյալ մեր պատկերացումները, հատկապես առաջին Սասանյանների արևմտյան ուղղությամբ դրսևորած տարածքային հավակնությունները[1] հիմք են տալիս պարսից գահաժառանգի ոստանը փնտրելու երեք երկրների սահմանագլխին: Մեր խորին համոզմամբ Շապուհի ենթադրվող արքայական իշխանությունը կայացել է մասնավորապես Հայաստանի հարավային՝ Տավրոսյան լեռնաշղթայի երկայնքով ձգվող Անգեղտուն *(Ἰγγηλνή)*, Մեծ Ծոփք *(Σοφηνή)*, Արզան *(Ἀρζανηνή)*, Կորդուք *(Καρδουηνή)*, ինչպես նաև վերջինիս սահմանակից Ծավդեք *(Ζαβδικηνή)* երկրամասերում, որոնք հռոմեական աղբյուրներում հիշատակվում են **«*regiones transtigritianas*-անդրտիգրիսյան գավառներ»** ընդհանրական անվամբ[2]: Ավրելիուս Վիկտորն այդ տարածքը բնութագրում է **«մեզ (հռոմեացիների-Ա.Մ.) համար կարևոր հողեր»** արտահայտությամբ՝[3] դրանով իսկ ակնարկելով երկրամասի համազոր նշանակությունը նաև պարսիկների համար: Իսկ Ամմիանուսը, արտահայտելով իր զայրույթը Հովիանուս կայսեր կողմից 363թ. անդրտիգրիսյան գավառներն ու հարակից շրջանները պարսիկներին հանձնվելու կապակցությամբ, գրում է. **«Հարկ էր, որ մենք տասն անգամ մարտնչեինք՝ նախքան այդ պահանջներից մեկը կատարելը»**[4]:

Ոչ բոլոր ուսումնասիրողներն են նկատել պարսիկների կողմից անդրտիգրիսյան գավառների վաղ բռնակցման փաստը: Իսկ ովքեր էլ որ նկատել են, պարսիկների կողմից դրանց յուրացումը տեղադրել են հայ մատենագիրների հիշատակած Խոսրով II արքայի սպանությունից հետո և գնահատել իբրև պարսից տիրապետության տակ հայտնված Հայաստա-

---

[1] Herodianus, VI, 2. 1-2; VI, 4.5; Dio Cass., LXXIX, 40. 4: Shahbazi 2001, pp. 62-64; Dignas and Winter 2007: 53-56.

[2] Ammianus, XXV. 7, 9.

[3] Avrelius Victor, XXXIX.

[4] Ammianus., XXV, 7, 10.

նից միակողմանի անջատման արդյունք[1]: Սակայն մի շարք իրողություններ ստիպում են մեզ չհամաձայնել այդ կարծիքին: Նախ՝ ասորի մատենագիր Մշիխա Զեխան պարզորոշ փաստում է, որ մինչև Արտավան V Արշակունու դեմ վճռական գոտեմարտը, հավանաբար 223թ., Արտաշիրը Ադիաբենեի արքա Շարհատի և Քարքա Սլոխի արքա Դոմիտիանի հետ նվաճել է Միջագետքը, Բեյթ-Արամայեն, Բեյթ-Զաբդեյը (հայ. Ծավդեք) և Արզուն (հայ. Արզան)[2]: Ֆարկին-Տիգրանակերտի հունարեն արձանագրության մեջ էլ հեղինակը հիշատակում է Ֆարկինի, իսկ եթե արձանագրության մեջ առկա **«*η πολιτείας ὑμῶν* - ձեր համայնքը»**[3] արտահայտությունը հասկանանք հելլենիստական ժամանակի իմաստով, ուրեմն՝ ողջ Մեծ Ծոփք գավառի ապստամբության և պարսիկներին[4] հարելու մասին: Վերջապես վերոնշյալ կարծիքի դեմ է խոսում հայկական Միջնաշխարհի հետ անդրտիգրիսյան նահանգների հյուսիսային սահմանների անկանոնությունը, որն արձանագրված է «Աշխարհացոյց»-ում և Բ.Հարությունյանի իրավացի դիտարկմամբ պայմանավորվել է IIIդ. հայ-պարսկական հակամարտության ելևէջումներով[5]: Այս ամենը ցույց է տալիս, որ հարավհայկական գավառների նվաճումը կատարվել է տակավին Արտաշիր I-ի օրոք և կրել է ոչ թե նվաճված Հայաստանից միանվագ բռնանջատման, այլ փուլային բռնազավթման բնույթ: Հատկանշական է, որ 298թ. Մծբինի պարսկա-հռոմեական բանակցություններում «անդրտիգրիսյան» կոչված հայկական գավառների հարցը քննարկվում էր Մեծ Հայքի վերամիավորումից անջատ, և որ Հռոմը դրանք ստացավ ոչ թե հայերից՝ իբրև Հայաստանի վերամիավորման գործում ունեցած մեծ ներդրումի հատուցում, այլ պատերազմում պարտված պարսիկներից՝ իբրև անեքսիա: Դա լրացուցիչ խոսում է այն մասին, որ Անգեղտունը, Մեծ Ծոփքը, Արզանը՝ հարակից գավառներով, Կորդուքն ու Ծավդեքը պարսիկների կողմից նվաճվել են Մեծ Հայքի՝ Տավրոսից հյուսիս ընկած բուն տարածքներից վաղ, և որ դրանք պարսից տիրապետության տակ մինչև 252/253թթ. Հայաստանի վերջնական նվաճումը ունեցել են առանձին վարչամիավորի կարգավիճակ: Շատ հավանական է, որ պարսիկների կողմից նվաճված վերոնշյալ գավառները նրանց վարչական տերմինա-

---

[1] Հարությունյան 1982: 82:

[2] Մշիխա Զեխա, 1976: 82-83: Համեմատի՛ր The Chronicle of Arbela, 8:

[3] Саркисян 1960: 81

[4] Մելիքյան 2008: 135:

[5] Հարությունյան 2001: 139, 174, 208-211:

բանությամբ կոչված լինեն «Հայաստան» անվամբ[1], և դրա հիման վրա է, որ դարեր անց Տաբարին, ալ Յակուբին, Բալամին ու Իբն-ի Ատիրը Հայաստանի հպատակեցումը վերագրել են Արտաշիր I-ին[2]՝ առանց խորամուխ լինելու, որ ենթադրվող պարսկական «Հայաստանը» բնավ էլ նույնական չէ Մեծ Հայքին:

Հայաստանից բռնազավթված մասերում Շապուհի գահակալության օգտին ամենածանրակշիռ փաստարկը տալիս է Մեծ Հայքի Զարեհավան գավառում՝ Սալմաստից ոչ հեռու ստեղծված ժայռաքանդակը: Այս հուշարձանի համակողմանի քննությունը թույլ է տալիս հաստատապես ասել, որ այն պատկանում է ոչ թե «հաղթանակի», այլ ինվեստիտուրայի ժանրին և ստեղծվել է 272թ. Հայաստանի Սասանյան կառավարիչ Որմիզդ-Արտաշիրի կողմից: Հուշարձանի վրա ներկայացված են Սասանյան առաջին երկու տիրակալների կողմից իրենց գահաժառանգներին արքայական իշխանությամբ պսակելու միանման տեսարաններ[3]: Ժայռաքանդակի ձախակողմյան պատկերախմբում հեծյալ դիրքով պատկերված է Արտաշիր I-ը, իսկ նրա դիմաց հետիոտն դիրքով ներկայացված է Շապուհը՝ մազերի ինքնատիպ ուռուցիկ հարդարանքով և իրանական հագուստով: Երկուսն էլ պատկերված են աջ ձեռքերը իրար մեկնած, մի դիրքով, որը կատարելապես համապատասխանում է սասանյան ինվեստիտուրային քանդակների «տալու-ստանալու» պատկերագրական սխեմային: Ճիշտ է, քանդակագործը փոխանցվող առարկան «թաքցրել է» Արտաշիրի ձիու գլխի հետևում, սակայն Սալմաստի ժայռաքանդակի երկու պատկերախմբերի ընդհանուր սիմետրիայից կարող ենք ասել, որ ինչպես աջակողմյան պատկերախմբում, այստեղ ևս Արտաշիրի կողմից գահաժառանգին հանձնվող առարկան օղակ է: Ընդ որում՝ հատկանշական է, որ այն ժապավենազուրկ է՝ նման Սասանյան վեհապետների կողմից իրենց հպատակ արքաներին շնորհվող կամ էլ Սասանյան գահաժառանգների կողմից ի տես հանվող օղակներին: Իսկ քանի որ օղակը ոչ թե ինվեստիտուրայի ծեսում իրապես շնորհվող պատվանշան էր, այլ այդ ծեսի

---

[1] Համեմատելի փաստ է օրինակ այն, որ Դիոկղետիանոս կայսեր վարչական ռեֆորմի արտահայտությունը հանդիսացող «Վերոնյան ցուցակ»-ում և Պողեմիոս Սիլվանի՝ IVդ. վերջերին ստեղծած «Laterculus»-ում Հռոմեական կայսրության վարչական համակարգում հիշատակված են «Մեծ Հայք» անունով նահանգներ (Ադոնց 1987: 101-104), թեև ակնհայտ է, որ դրանցում խոսքը ոչ թե բովանդակ Մեծ Հայքի, այլ նրա՝ հռոմեական տիրապետությանն անցած արևմտյան գավառների մասին է (Մելիքյան 2006ա: 116):

[2] Shavarebi 2014: 126.

[3] Մելիքյան 2016: 55, 163:

գեղարվեստական կերպավորման ժամանակ գործածվող խորհրդանշական տարր[1], միանգամայն արդարացված կլինի այն շնորհելու տեսարանը Մանիի ակնարկած «կրտսեր դիադեմա»-ով թագադրության պատկերագրական համարժեքը համարելը[2]:

Իհարկե, որոշ հակասություն է առաջանում այն առումով, որ ŠKZ-ի Արտաշիր I-ի արքունի ցուցակում արձանագրության հեղինակ Շապուհ I-ը իրեն չի հիշատակել որպես հպատակ երկրի թագավոր: Տեսականորեն դա կարելի է բացատրել նրանով, որ Հայաստանի մեծագույն մասը Արտաշիր I-ի օրոք մնում էր աննվաճ, և իրեն «Հայաստանի թագավոր» տիտղոսով հիշատակելու դեպքում նա ոչ միայն կմեղանչեր «ճիշտ խոսքի» զրադաշտական պատգամից, այլև ընթերցողին կգցեր մոլորության մեջ[3]: Սակայն մեզ ավելի հավանական է թվում երկրորդ բացատրությունը. ŠKZ-ի ստեղծման ժամանակ արքայից արքա Շապուհ I-ը կարող էր և չհիշել «Հայաստանի արքա»-ի իր անցյալ կարգավիճակը, քանի որ այն ածանցված էր Իրանի գահաժառանգի ու զորահրամանատարի իր համապետական կարգավիճակից և ստվերվել էր այն մեծ փառքով ու հեղինակությամբ, որ նա ձեռք էր բերել 230-ական թթ. վերջերից Վերին Միջագետքում և Ասորիքում ծավալված ռազմական գործողությունների ժամանակ: Այս վարկածի օգտին է խոսում այն փաստը, որ ŠKZ-ի Արտաշիր I-ի արքունիքի թվարկության մեջ Շապուհն իրեն ընդհանրապես չի հիշատակում: Բնականաբար, դրանից բնավ էլ չի հետևում, թե Իրանի գահաժառանգի և փաստացի զորահրամանատարի դերն ու նշանակությունն այն աստիճան ցածր են եղել, որ նա դուրս է մնացել պաշտոնական ցուցակից: Ընդհակառակը, դա հաստատում է մեր այն դրույթը, որ Շապուհը՝ իբրև գահաժառանգ, ստորադասված լինելով Արտաշիր I-ին, միևնույն ժամանակ գերադաս դիրք է զբաղեցրել Իրանի վեհապետին ենթակա ամբողջ

---

[1] von Gall 1990: 107.

[2] Մելիքյան 2016: 118:

[3] Բավական է հիշել, որ ŠKZ-ից շուրջ 30 տարի անց ստեղծված Պայկուլեի արձանագրության մեջ էլ արքայից արքա Ներսեհը, դարձյալ ընթերցողին թյուրիմացության մեջ չգցելու նկատառումով, խախտել է գահակալության առթիվ իրեն շնորհավորելու եկած կառավարիչների ու դեսպանների թվարկման ձևական սկզբունքը և Տրդատ III Արշակունուն հիշատակել է միայն «արքա» տիտղոսով՝ առանց նշելու նրա ներկայացրած երկիրը (Humbach and Skjaervø 1983, § 92). չէ՞ որ այս դեպքում էլ Մեծ Հայքի արևելյան՝ մեծագույն մասը գտնվում էր պարսից տիրապետության ներքո, և Տրդատ III-ի՝ Մեծ Հայքի արևմտյան մասում ունեցած «արքա» տիտղոսը նրա վրա չէր տարածվում (Մելիքյան 2008: 142):

նվիրապետական համակարգի նկատմամբ: Այս իրողությունն իր արտահայտությունն է ստացել Արտաշիրի Փիրուզաբադ II ժայռաքանդակի վրա: Այստեղ Արտաշիրից անմիջապես հետո պատկերված է արքայի հովհարակիրը: Սակայն քանդակագործն աստիճանակարգության հնամենի կանոնից կատարված շեղումը հաջողությամբ շտկել է չափական հարաբերության միջոցով՝ հովհարակրին պատկերելով անհամեմատ փոքր, քան հաջորդող երեք պատկերները: Նրանց մեջ Շապուհը, ով նույնականացվում է, շնորհիվ սաղավարտին քանդակված զինանշանի, ներկայացվել է առաջ, քան մյուս երկու պատկերները, որոնք նույնականացվում են Արտաշիրի համանուն եղբոր և որդու՝ Մերվի և Սակաստանի կառավարիչների հետ: Պատկերների գծային դասավորության պարագայում հստակ ընդգծված դիրքային առավելությունից զատ՝ Շապուհի գերապատվությունը նրանց նկատմամբ արտահայտված է նաև ծոծրակին արված հանգույցից կախ ընկած երկար ժապավեններով դիադեմայով, մինչդեռ մյուս երկուսը, որոնք ŠKZ-ում (միջ. պարսկ. 29-րդ տող) հիշատակվում են արքա (*šahrdār*) տիտղոսով, ներկայացվել են պարթևական ժամանակների «սատրապական» դիադեմաներով:

Ե՞րբ է պարսից գահաժառանգ Շապուհը նշանակվել Հայաստանից բռնազավթված մասերի արքա: Ցավոք, այս հարցի վերաբերյալ ո՛չ սասանյան վիմագրերը, ո՛չ էլ մյուս գրավոր աղբյուրները ոչինչ չեն հաղորդում: Նմանապես ոչինչ վկայված չէ նաև հայկական պատմական ավանդության մեջ[1]: Այս պայմաններում մեր պատասխանը հիմնվում է բա-

---

[1] Հայկական ավանդության մեջ որպես «անիշխանության ժամանակ»-ի Հայաստանի Սասանյան կառավարիչներ հիշատակված են միայն «Արտաշիրն» ու նրա որդի Շապուհը (Խորենացի Մ. II, ՀԶ, ՀԷ), որոնց ուսումնասիրողները նույնականացնում են Շապուհ I-ի գահաժառանգ Որմիզդ-Արտաշիրի և թոռան՝ Որմիզդակի հետ: Ընդհանուր առմամբ համաձայնելով այս նույնականացումների հետ՝ հարկ ենք համարում նկատել երկու կարևոր հանգամանք, որոնք կարող են լուսաբանել Հայաստանում Արտաշիր I-ի գահաժառանգ Շապուհի գահակալության փաստի նկատմամբ հայկական ավանդության լռությունը. ա) Արտաշիրի կերպարը խիստ վիպականացած է, և նրա մեջ Արտաշիր Պապականի ու Որմիզդ-Արտաշիրի կերպարներից բացի, վիպական բաղարկման են ենթարկված ոչ միայն Շապուհի, այլև Վարահրան I-ի, Վարահրան II-ի, 276-293թթ. Հայաստանում կառավարած Ներսեհի, հնարավոր է նաև հավանաբար 273-276թթ. այստեղ իշխած Վարահրանի (ապագա Վարահրան II) կերպարները, բ) հայկական ավանդությունը հերոսական պատումին հատուկ տրամաբանությամբ Մեծ Հայքում պարսից տիրապետությունը հաշվել է՝ սկսած վիպական Խոսրովի սպանությունից:

ցառապես պատկերագրական նյութի վրա: Սալմաստի և Նախշ-ի Ռուստամ I ժայռաքանդակների վրա Արտաշիր I-ի թագի և հանդերձանքի ոճական ընդհանրությունները, թվում է, բավարար հիմք են տալիս համարելու, որ Շապուհի խնդրահարույց թագադրությունը տեղի է ունեցել Արտաշիր I-ի գահակալության վերջերին, բայց առաջ, քան 240թ. ապրիլ ամիսը, երբ նա հայտարարվեց կառավարչակից: Սակայն Արտաշիր I-ի Նախշ-ի Ռաջափ III և Փիրուզաբադ II ժայռաքանդակների պատկերագրական նյութի համեմատական քննությունն առաջարկում է այլ թվագրություն: Առաջին հուշարձանը, որն իր հորինվածքի և կատարողական տեխնիկայի համեմատաբար պարզ մակարդակի հիման վրա համարվում է Արտաշիրի անդրանիկ ժայռաքանդակն ու թվագրվում է 230-ական թթ. սկզբներով[1]: Երկրորդ ժայռաքանդակի ստեղծումը Վ.Լուկոնինը թվագրում է 235-238թթ.՝ մատնացույց անելով այն փաստը, որ նրա վրա Արտաշիրը կրում է այնպիսի թագ, որպիսին նախապես ներկայացվել էր 235-238թթ. թողարկված, այսպես կոչված, V6 տիպի դրամների վրա[2]: Վերոնշյալ ժայռաքանդակներից առաջինի վրա գահաժառանգ Շապուհը ներկայացվել է Արտաշիրից անմիջապես հետո՝ առաջին պլանում, բայց գահաժառանգի խորհրդանշանից զատ ուրիշ պատվանշան չի կրում: Նույն պատվանշանը նա կրում է Փիրուզաբադ II ժայռաքանդակի վրա, սակայն, ինչպես վերը նշվեց, այստեղ պարսից գահաժառանգը կրում է նաև ծոծրակից կախ ընկած երկար ժապավեններով արքայական դիադեմա: Դա թույլ է տալիս Շապուհի՝ իբրև Հայաստանից նվաճված մասերի արքայի, թագադրությունը տեղադրել նշված երկու ժայռաքանդակների ստեղծման միջև ընկած ժամանակահատվածում՝ 231-238թթ.[3]:

Հայաստանում Որմիզդ-Արտաշիրի գահակալության սկզբնատարին

240թ. Արտաշիր I-ը Հաթրայում գահաժառանգ Շապուհին պսակեց «ավագ դիադեմայով»՝ նրան հայտարարելով կառավարչակից վեհապետ: Այս հանգամանքը, թերևս, կարճում էր պարսից գահաժառանգի՝ դեպի վեհապետական գահ տանող ճանապարհը, բայց չէր վերացնում ո՛չ նրա

Մոռացության տալով նախընթաց ժամանակահատվածում պարսիկների կողմից Հայաստանից տարածքային բռնակցումների փաստը՝ հայկական պատմական ավանդությունը դրանով իսկ Արտաշիրի գահաժառանգ որդուն «զրկել է հողից»՝ նրա գահակալության իրողությունը դատապարտելով արագ մոռացության:

[1] Луконин 1979. 18-19.

[2] Луконин 1969. 48, прим. 26. Там же, 185.

[3] Մելիքյան 2016: 132, 133:

զորապետական գործառույթը, ո՛չ էլ պարսկական զորակայանի վերածված հարավհայկական գավառների անմիջական կառավարչի դերը: Փոփոխություն տեղի ունեցավ միայն Արտաշիր I-ի վախճանից հետո, երբ Շապուհը միանձնյա ստանձնեց վեհապետական իշխանությունը:

Գործելով Արտաշիր I-ի նշած ուղեգծով՝ Շապուհ I-ը «Պարսկական Հայաստանի» գահը հանձնեց որդուն՝ Որմիզդ-Արտաշիրին: Այս իրադարձությունն իր պատկերագրական արտացոլումն է ստացել Սալմաստի ժայռաքանդակի աջակողմյան պատկերախմբում, որտեղ ձի հեծած Շապուհը իշխանության օղակ է մեկնել Որմիզդ-Արտաշիրին, իսկ վերջինս էլ դեպի վեհապետն է մեկնել աջ ձեռքը՝ ստանալու արքայական իշխանության խորհրդանշանը[1]: Պատմագիտության մեջ Որմիզդ-Արտաշիրի այս թագադրությունը թվագրել են 261թ.[2]:

Սալմաստի ժայռաքանդակին նվիրված ուսումնասիրության մեջ քննության ենք առել նաև վերոնշյալ կարծիքը[3]: Անշուշտ, այն հայկական պատմական ավանդության, «Օգոստոսների պատմության» և ŠKZ-ի տվյալների հաշտեցման մի հետաքրքիր փորձ է, որը, սակայն, տեղիք է տալիս բազում առարկությունների, և որ կարևոր է, չի հիմնավորվում Սալմաստի ժայռաքանդակի պատկերագրական տվյալներով: Այսպես, դեռևս 1938թ. Է.Հերցֆելդն էր նկատել, որ Սասանյան արքաներից յուրաքանչյուրն ունեցել է ինքնատիպ տիարա: Այս աքսիոմն ուղղակի բացառում է Որմիզդ-Արտաշիրի թագադրությունը Շապուհ I-ի պաշտոնական ինվեստիտուրայից (242թ. ապրիլի 12) առաջ բերելու հնարավորությունը, քանզի այդ դեպքում անպատասխան է մնում բնականից առաջացող այն հարցը, թե ինչու Շապուհ I-ը չի պատկերվել իր անձնական՝ պարսպատամի զարդով տիարայով, որը լավ հայտնի է նրա դրամներից ու ժայռաքանդակներից: Մինչդեռ Է.Հերցֆելդի հայտնի աքսիոմը ինքնին հասկանալի է դարձնում վիճահարույց իրադարձության ճիշտ ժամանակը. այն փաստից, որ թագադիր Շապուհը ներկայացվել է ոչ թե իր անձնական, այլ Արտաշիր I-ի թասակաձև-կոռոմբոսավոր տիարայով, հետևում է, որ Որմիզդ-Արտաշիրի թագադրությունը՝ իբրև Հայաստանից նվաճված երկրամասերի արքա, կատարվել է Արտաշիր I-ի վախճանից[4] մինչև Շապուհ

---

[1] Մելիքյան 2016: 135:

[2] Երեմյան 1966: 65, 66: ՀԺՊ 1984: 51: Frye 2000: 126; Daryaee 2009: 8; Հարությունյան 2001: 345:

[3] Մելիքյան 2016: 61-68:

[4] Արտաշիր I-ի կառավարման վերջի և մահվան թվականի հարցերը ցայսօր բանավեճի առարկա են: «Մանիի Քյոլնյան ժողովածու»-ի տվյալների հիման վրա ներկայումս ընդունված է համարել, որ Արտաշիրը վախճանվել է 242թ.

I-ի ինվեստիտուրան ընկած սեղմ ժամանակամիջոցում՝ 242թ. փետրվարի սկզբներից մինչև 242թ. ապրիլի 12-ը:

Տաբարիի հաղորդման համաձայն՝ Որմիզդ-Արտաշիրի մայրը եղել է Միհրակ արքայի դուստրը և կոչվել է Խուռահ[1], իսկ Համզա ալ Իսպահանին նրա մորը կոչում է Գարդզատ[2]: Պատմագիտության մեջ ընդունված է այն տեսակետը, որ Որմիզդ-Արտաշիրը Շապուհի և կայսրության թագուհի Խորանզեմից ծնված դստեր՝ թագուհիների թագուհի Ադուր-Անահիդի որդին էր[3]: Վ.Հինցի մոտավոր հաշվումներով նա վախճանվել է 273թ. 42 տարեկանում[4], հետևաբար՝ Շապուհի կողմից թագադրվելու պահին նա պետք է ընդամենը 11 տարեկան լիներ: Սակայն այս հաշվարկն ավելի քան վիճարկելի է, քանի որ Սալմաստի ժայռաքանդակի վրա Որմիզդ-Արտաշիրը պատկերված է թեթև բեղ-մորուքով և գոտուց կախված սրով, ինչից հասկանալի է դառնում, որ նա արդեն հատել է պատանեկության վերին սահմանը:

Մինչ օրս բանավեճի առարկա է այն հարցը, թե ինչով է պայմանավորվել Շապուհի լիիրավ չորս որդիներից երրորդի՝ Որմիզդ Արտաշիրի ընտրությունը որպես գահաժառանգ: Ռ.Ֆրայը, ելնելով այն փաստից, որ Վարահրանը Շապուհ I-ի օրոք մեծ հեղինակություն չէր վայելել և անվանական կրակի տաճար ունենալու պատվին չէր արժանացել, ենթադրում է, որ նա ծնվել է համեմատաբար ստորակարգ թագուհուց կամ էլ եղել է հարճորդի[5]: Մ.Հաթթերի կարծիքով գահաժառանգության հարցում Շապուհի ավագ որդու՝ Վարահրանի շրջանցման պատճառը եղել է վերջինիս զրադաշտական հայացքները, որոնք չեն գոհացրել նրա՝ զրվանական դավանանքի հետևորդ հորը[6]: Թ.Դարյային Որմիզդ-Արտաշիրին գահաժառանգ ճանաչելու գործում վճռորոշ է համարում զորավարական այն մեծ տաղանդը, որ նա դրսևորել է 260-ական թթ. ռազմական գործողությունների ընթացքում:[7]

փետրվարի սկզբներին (Henrichs & Koenen 1982: 4ff., 44; Wiesehöfer 1986: 371-376):

[1] al-Tabarī 1999: 41.

[2] Hamzah al-Iṣfahānī 1932.

[3] Hinz 1969: 124, 126; Chaumont 1969: 67. Ֆ.Ժինյուի կարծիքով Ադուր-Անահիդի «թագուհիների թագուհի» տիտղոսն ավելի շատ արտահայտում է նրա հասարակական դիրքը, քան ընտանեկան դրությունը (Gignoux 1983: 472):

[4] Hinz 1969: 139.

[5] Frye 2000: 127.

[6] Hutter 1993: 11.

[7] Daryaee 2009: 10.

Վերը նշված բոլոր վարկածներն էլ հարուցում են բազմաթիվ առարկություններ, որոնցից հատկապես նշելի են երկուսը: Նախ, ինչպես արդեն ասվեց, վաղսասանյան տերության մեջ դեռևս Արտաշիր I-ի կողմից նախապատվություն էր տրվել ոչ թե «ավագության կարգ»-ին, այլ «նիզակի նվաճման» իրավունքից բխող արքայի կամայական ընտրության սկզբունքին[1]: Ուստի Շապուհ I-ը այս հարցում միանգամայն ազատ էր՝ հիմնվելու հոր հեղինակավոր նախադեպի վրա և գործադրելու նրանից ժառանգած «կամայական ընտրության» սկզբունքը: Մյուս կողմից՝ հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ եթե անգամ տիրապետող լիներ առաջնածնության սկզբունքը, ապա այս կամ այն պատճառով Վարահրանի թեկնածությունը մերժվելու դեպքում գահաժառանգության իրավունքը պետք է անցներ ոչ թե Որմիզդ-Արտաշիրին, այլ Շապուհ I-ի մյուս որդուն՝ Շապուհին:

Ինչ վերաբերում է Թ.Դարյաիի վարկածին, ապա պետք է նշել, որ որևէ առիթ չկա կարծելու, որ IIIդ. Սասանյան արքաները Աքեմենյանների օրինակով գահաժառանգի ընտրությունը թողել են վերջին պահին[2]: Ընդհակառակը, Սալմաստի ժայռաքանդակի վրա Շապուհ I-ի տիարայի ձևն ու Որմիզդ-Արտաշիրի երիտասարդ տարիքը ցույց են տալիս, որ նրա առաջադրումը «Հայաստանի» արքայի, հետևաբար՝ բանակի զորագլխի պաշտոնում կատարվել է Շապուհ I-ի գահակալության սկզբներին, երբ երիտասարդ գահաժառանգն իր տաղանդը դրսևորելու հնարավորություն ունենալ դեռ չէր կարող: Այդուհանդերձ, ինչպես երևում է, Որմիզդ-Արտաշիրի ընտրության գործում կարևորվել են հենց նրա անձնական որակները: Տաբարին Որմիզդ-Արտաշիրի մասին հաղորդում է. **«Նա**

---

[1] Ըստ հելլենիստական դարաշրջանից եկող իրավական սկզբունքի՝ «նիզակի նվաճման» իրավունքով ձեռք բերված արքայական իշխանությունը, ինչպես մասնավոր սեփականության ցանկացած այլ ձև, կարող էր ժառանգվել և նոր տիրոջ կողմից տնօրինվել սեփական հայեցողությամբ (Бикерман 1985: 20):

[2] Համաձայն Տաբարիի հաղորդման. «Երբ Շապուհը մահամերձ էր, նա իր որդի Որմիզդին նշանակեց իբրև կառավարիչ և նրան տվեց հանձնարարական խորհուրդներ՝ պարտավորեցնելով նրան գործել դրանց հիման վրա» (al-Tabarī 1999: 39): Սակայն հազիվ թե այս վկայությունը վավերական է, քանի որ այլ աղբյուրներից հայտնի է, որ իրանական արքունիքներում ընդունված էր վաղ պատանեկան տարիքից գահաժառանգների դաստիարակությունը որևէ հեղինակավոր մեծատոհմիկի վստահելու փորձը (Christensen 1944: 290,274; Widengren 1969: 69-82): Սրա օրինակը տեսնում ենք Մեծ Հայքի Արշակունիների մոտ՝ հանձինս գահաժառանգի և մարդպետի հարաբերության:

կոչվել էր «Քաջ» և մարմնի կառուցվածքով և արտաքին տեսքով նման էր Արտաշիրին... Նա ականավոր էր... ատլետիկ կառուցվածքով»[1]: Իրանական միջավայրում ֆիզիկական կատարելությունն ու գեղեցկությունը գահաժառանգի ընտրության վճռորոշ գործոններից էին[2]: Եվ եթե վստահենք իր թոռների մեջ ժրամանուկ Որմիզդ-Արտաշիրի նկատմամբ Արտաշիր I-ի հատուկ վերաբերմունքի մասին «Կարանամակ»-ի հաղորդմանը[3], ապա կարելի կլինի մտածել, որ Որմիզդ-Արտաշիրի քաղաքական կարիերան կանխորոշվել է դեռևս պապի գահակալության օրոք:

Ակնհայտ է, որ անգամ որդուն պարսկական զորագլխի և «Հայաստանի» արքայի կապակցված պաշտոններում նշանակելուց հետո նրա քաղաքական կարիերան շարունակել է մտահոգել Շապուհ I-ին: Դրանով կարելի է բացատրել այն, որ հոր օրինակով նա ևս զուգակցել է գահաժառանգի դիրքերն ամրապնդելու աքեմենյան և պարթևական քարոզչաձևերը: 250-ական թթ. վերջերին կերտված Նախշ-ի Ռաջափ IV ժայռաքանդակի վրա Որմիզդ-Արտաշիրը պատկերվել է արքաների արքայից անմիջապես հետո, բայց իր բոլոր եղբայրներից առաջ, որով և փաստագրվել է նրա «արքայից հետո երկրորդ»-ի կարգավիճակը[4]: Որմիզդ-Արտաշիրը երկիցս հիշատակված է նաև մոտավորապես 261թ. ստեղծված ŠKZ-ում: Սասանյան արքայատան անդամների պատվին կրակի տաճարներ հիմնելու կապակցությամբ արված թվարկման ընթացքում «մեծ թագավոր Հայոց» Որմիզդ-Արտաշիրի կրակի տաճարը հիշատակվում է Շապուհ I-ի և, նրա կնոջ՝ Ադուր-Անահիդի կրակի տաճարներից անմիջապես հետո և նախորդում է իր եղբայրների՝ Մեսենի արքա Շապուհի և Սակաստանի, Թուրանի և Հինդի արքա Ներսեհի կրակի տաճարներին: Իսկ ŠKZ-ի այն պարբերության մեջ, որտեղ խոսվում է կրակի տաճարներին կատարվելիք զոհաբերությունների մասին, նա հիշատակված է Գիլյանի արքա Վարահրանից և Մեսենի արքա Շապուհից[5] հետո, բայց Սակաստանի, Թուրանի և Հինդի արքա Ներսեհից առաջ: Որմիզդ-Արտաշիրի այս երկակի դրությունը բացատրվում է նրանով, որ առաջին դեպքում Սասանյան արքայազները հիշատակվել են ըստ Շապուհ I-ի

---

[1] al-Tabarī, 1999: 41-42.

[2] Ксенофонт 1976: I, 2.1: Հերոդոտոս, 7, 187:

[3] Книга деяний Ардашира сына Папака 1987. XVIII, 19-20.

[4] Луконин 1979. 17.

[5] Վ.Լուկոնինը, ելնելով այն փաստից, որ ŠKZ-ն (պարթ. 25-րդ տող) Մեսենի կառավարիչ է հիշատակում Շապուհի կնոջը՝ Դանեկ թագուհուն, եզրակացնում է, որ արձանագրության ստեղծման պահին Շապուհն արդեն վախճանված էր և արձանագրության մեջ հիշատակվել է հետմահու:

արքունիքում զբաղեցրած պատվո աստիճանի, իսկ երկրորդ ցուցակում՝ ըստ իրենց տարիքի[1]:

Տաբարին Որմիզդ-Արտաշիրի մասին հաղորդում է. «Երբ Արտաշիրը վախճանվեց, և թագավորական իշխանությունն անցավ Շապուհին, նա Որմիզդին նշանակեց Խորասանի նահանգապետ և ուղարկեց այնտեղ: Որմիզդը վարեց ինքնուրույն քաղաքականություն, իրեն ենթարկեց հարևան երկրամասերի ժողովուրդների տիրակալներին և իրեն դրսևորեց որպես միանգամայն հպարտ և շնորհալի կառավարիչ»[2]: Ակնհայտ է, որ հեղինակն այստեղ շփոթել է պարսից գահաժառանգի կառավարած երկրի անունը՝ Հայաստանի փոխարեն նշելով Խորասան անունը: Այդ շփոթն ակնհայտ է դառնում նաև նրանով, որ IIIդ. առաջին կեսին Սասանյանների արտաքին քաղաքականության արևմտյան ուղղվածության պայմաններում պարսկական զորքի ռազմավարական հենակետի դերը վերապահված էր ոչ թե Երանշահրի արևելքում տարածվող Խորասանին, այլ Հռոմեական Արևելքի և Արշակունիների հայկական պետության գլխին կախված հարավհայկական գավառներին: Սակայն տվյալ դեպքում կարևոր է այն, որ Տաբարին, հստակ նշելով Որմիզդ-Արտաշիրի նշանակման ժամանակը (Արտաշիր I-ի մահ (242թ.) = Շապուհ I-ի միանձնյա գահակալություն = Որմիզդ-Արտաշիրի նշանակում), նաև համակցում է վերջինիս գահաժառանգի կարգավիճակը նրա իրականացրած ռազմավարչական գործառույթների հետ:

«Անիշխանության ժամանակ»-ի սկիզբը

IIIդ. 40-ական թվականներից Հռոմի դեմ պայքարում պարսիկները փոխեցին իրենց ռազմավարությունը: Նախկին միամյա արշավանքների փոխարեն պարսկական զորքերը սկսեցին տարբեր ուղղություններով ծավալել տևական ռազմական գործողություններ: Այս փոփոխությունը Որմիզդ-Արտաշիրին դարձրեց Շապուհ I-ի նվաճողական քաղաքականության կենտրոնական դեմքերից մեկը՝ նրան ընձեռելով ինքնուրույնություն և նախաձեռնություն:

Ինչպես երևում է, առաջին հերթին նրա ուսերին է դրվել 244թ. Միսիխիսի պայմանագրով Մեծ Հայքի պարսկա-հռոմեական բաժանման իրագործման խնդիրը, մի պայմանագիր, որը Հայաստանի և Միջագետքի քարտեզը խմբագրել էր հօգուտ Սասանյանների, բայց գործնականում մնացել էր անկատար մի կողմից՝ հայոց արքա Տրդատ II-ի դիմադրության,

---

[1] Weber 2007: 387-418; Shayegan 2004: 462.

[2] al-Tabarī 1999: 41-42.

մյուս կողմից՝ պարսից դեմ նրա պայքարին Ֆիլիպ Արաբ կայսեր օժանդակության պատճառով[1]: 252/253թթ. պարսից գահաժառանգին հաջողվեց կոտրել հայոց դիմադրությունը և ստիպել Տրդատ II-ին հեռանալ Հռոմեական կայսրության տարածք[2]:

Հայագիտության մեջ տարածված կարծիքի համաձայն՝ Տրդատ II-ից հետո պարսիկների համաձայնությամբ հայոց գահին նստել է նախ նրա գահաժառանգ որդին՝ Խոսրովը, որը կառավարել է 252/253-257/258թթ. և սպանվել պարթև Անակի կողմից, ապա, դարձյալ պարսիկների համաձայնությամբ, երկիրը կառավարել է ոմն Արտավազդ: Համաձայն նույն կարծիքի՝ Շապուհ I-ը միայն Եդեսիայի մոտ Վալերիանոս կայսեր դեմ 259թ. տարած հաղթանակից հետո է որ, ապահով զգալով իրեն, գահընկեց է արել հիշյալ Արտավազդին և Հայաստանը հանձնել իր գահաժառանգ որդի Որմիզդ-Արտաշիրին: Սրանով էլ սկսվել է այսպես կոչված «անիշխանության ժամանակը»[3]:

Սակայն այդ մեկնաբանության մեջ անքննադատորեն, իսկ որոշ դեպքերում կանխակալ ձևով են կարևորված հայկական և հռոմեական աղբյուրների, ինչպես նաև ŠKZ-ի տվյալները[4]: Ավելորդ համարելով վերստին այդ հարցին անդրադառնալը՝ նշենք միայն մի կարևոր հանգամանք. իսկապես Շապուհ I-ի Նախշ-ի Ռուստամի ժայռաքանդակը և ŠKZ-ն, որտեղ Որմիզդ-Արտաշիրը հիշատակված է «մեծ թագավոր Հայոց» տիտղոսով, ստեղծվել են Վալերիանոսի դեմ Շապուհ I-ի տարած տպավորիչ հաղթանակից հետո: Սակայն դրանից բնավ էլ չի հետևում, թե նա այդ պաշտոնում նշանակվել է հենց Վալերիանոսի պարտությունից հետո: ŠKZ-ում այդ երկու իրողությունները որևէ կերպ աղերսված չեն:

1898թ. Յ.Մարկվարտը, կատարելապես անհաղորդ լինելով ŠKZ-ին, կարծիք է հայտնել առ այն, որ Հայաստանը պարսիկների կողմից նվաճվել է 252թ. ոչ շատ անց[5]: Հետագայում Մ.Ռոստովցևը, Հ. Պէրպէրեանը, Վ.Լուկոնինը, Կ.Թումանովը, Է.Քեթենհոֆենը[6] և այլք, ավանդական աղբյուրներից զատ տնօրինելով նաև ŠKZ-ի ընձեռած տվյալները, Հայաստանում «մեծ արքա հայոց» Որմիզդ-Արտաշիրի գահակալության, հետևա-

---

[1] Մելիքյան 2006բ: 50-52:

[2] Zonaras, XII, 21.

[3] Երեմյան 1966: 62-64; 1975: 13-21: Մարտիրոսյան 1975: 151-171; 1977: 204, 205; 1979: 46, 47:

[4] Մելիքյան 2016: 61-68:

[5] Marquart 1895, 652.

[6] Rostovtzeff 1943: 33; Պէրպէրեան 1944: 171: Луконин 1969б: 33; Toumanoff 1969: 254; Kettenhoffen 1982: 41. 84; Shayegan 2004: 462.

բար և «անիշխանության ժամանակ»-ի սկզբնատարին համարել են 252/253թթ.: Այս մեկնաբանությունը թվում է ավելի կուռ և տրամաբանված. Սասանյանների մեծապետական ծրագրերում Հայաստանին վերապահված դերը և հատկապես Հռոմեական Արևելքի նկատմամբ նրա ունեցած ռազմավարական դիրքն իսկապես բացառում են, որ տևական պայքարի արդյունքում նրան տիրանալուց հետո Սասանյաններն այստեղ ճանաչեին տապալված արքայատան ներկայացուցչի իշխանությունը[1]: Ռազմավարչական նպատակահարմարությունից ելնելով՝ այն պետք է դրվեր գահաժառանգ և զորահրամանատար Որմիզդ-Արտաշիրի իշխանության ներքո:

Որմիզդ-Արտաշիրի կողմից Հայաստանի վերջնական նվաճման 252թ. է մատնացույց անում նաև «Օգոստոսների պատմություն»-ը: Կյուրիդասի կենսագրության մեջ հաղորդվում է, թե սա **«Մերձենալով արքա Շապուհի հետ և դառնալով նրա դաշնակիցը՝... հռոմեական երկիր բերեց նաև Օդոմաստեսին, ապա Շապուհին»**[2]: Դեռևս Թ.Նյոլդեքն իրավացիորեն *Odomastes*-ը համարել է *Ōr(o)mazdēs*–Որմիզդ անվան լատինականացված Oromastes ձևի աղավաղումը[3]: Այս լուծումը, որի հետ համաձայնել են նաև այլ ուսումնասիրողներ, թույլ է տալիս կարծելու, որ Հռոմի դեմ Շապուհ I-ի երկրորդ պատերազմի սկզբներին Որմիզդ-Արտաշիրն ինքնուրույն ռազմական գործողություններ է իրականացրել Կապադովկիայում[4], իսկ այստեղից ուղղվել է դեպի Ասորիք՝[5] հոր հետ միացյալ

---

[1] Մեր կարծիքով անընդունելի է վիպական «Խոսրով»-ի կերպարը անդամահատելը և իրական Տրդատ II-ից հետո գահաժառանգ Խոսրովին գահակալության ժամանակ և տարածք հատկացնելը: Տրդատը հայոց արքան էր, որը հանգամանքների բերումով ստիպված էր լքել իր երկիրը, իսկ Խոսրովը նրա գահաժառանգն էր, որ հոր փախստյան պարագայում պետք է հետևեր նրան: Պարզապես հայկական պատմական ավանդությունը տևական ժամանակի ներգործությամբ, բանավոր հիշողությանը բնորոշ հերոսապատումի տրամաբանությամբ և վերջապես, Տրդատ III-ին մշակութային հերոսի տիպարին հարմարեցնելու հրամայականով նախ «գահ է շնորհել» վերջինիս հորը՝ Խոսրովին, ապա նրան է վերագրել Տրդատ II-ի գործունեությունը և վերջապես նույն նպատակադրումով նրա փախուստը վերափոխել հարազատի (ըստ Եղիշեի՝ եղբոր)՝ Սուրենյան (Արշակունի) Անակի կողմից դավադիր սպանությամբ:

[2] SHA, Tyranni Triginta, II, 2.

[3] Nöldeke 1878: 69, Anm.1.

[4] Rostovtzeff 1943: 26, 42:

[5] Weber 2007: 418; Shayegan 2004: 463.

ուժերով գրոհելու «ողջ արևելքի քաղաքամայր» Անտիոքը[1]: Տվյալ դեպքում խիստ ուշագրավ է այն, որ ŠKZ-ն հաղորդելով, որ Հռոմի դեմ երկրորդ պատերազմի ժամանակ պարսկական զորքերը հասել են մինչև Դոմանա և Սատաղ, գրավված քաղաքների ցուցակում Մեծ Հայքի որևէ բնակավայր չի հիշատակում: Մեր համոզմամբ դա լրացուցիչ անգամ խոսում է այն մասին, որ Հռոմի դեմ մեծ պատերազմի սկսվելուց (253թ.) առաջ պարսիկներն արդեն նվաճել էին ողջ Մեծ Հայքը և այն համարում էին պարսկական տիրույթ:

Վերոնշյալ դիտարկման տեսանկյունից միանգամայն այլ լույսով է իմաստավորվում Ագաթանգեղոսի վկայությունը հայոց Խոսրով (իմա՝ Տրդատ II) արքայի՝ Արտաշիրի դեմ մղած տասնմեկամյա պատերազմի մասին[2]: Հ.Աստուրեանի գնահատմամբ մատենագրի այդ վկայությունը. **«Օդոյ մեջ կախուած խոսք մ' է. Վասնզի չենք գիտեր թէ երբ կը սկսին անոնք և երբ կը վերջանան»[3]:** Սակայն այն դադարեց «օդի մեջ կախված» մնալ այն պահից, երբ հասկացվեց հայկական պատմական ավանդության մեջ «Արտաշիր»-ի և «հայոց Խոսրով արքայի» կերպարների կոնտամինացիոն բնույթը[4]: Այժմ մեզ հայտնի առանցքային փաստերի համադրությամբ միանգամայն վստահ կարելի է նշել Ագաթանգեղոսի հիշատակած 11-ամյա պայքարի ստորին և վերին ժամանակային սահմանները:

Տակավին 242թ. հարավհայկական երկրամասերի արքան և այստեղ տեղակայված պարսկական զորքերի զորագլուխը, հետևաբար՝ նաև Հայաստանի մյուս մասերի նվաճման համար ջանքեր գործադրողը նույն Որմիզդ-Արտաշիրն էր, որի կերպարը անունների նմանության պատճառով հայկական ավանդության մեջ հարակցվել է «Արտաշիր»-ի հավաքական կերպարի մեջ: Եվ եթե Որմիզդ-Արտաշիրի գահակալության առաջին տարվանից՝ 242թ., հաշվենք 11 տարի, կստացվի 252/253թթ., ինչը համապատասխանում է Գալլուս կայսեր կառավարման վերջին տարվան: Հետևաբար, միանգամայն արդարացված կլինի այդ թվականը պարսիկների կողմից Հայաստանի վերջնական նվաճման և հայոց պատմության մեջ այսպես կոչված «անիշխանության ժամանակ»-ի սկզբնավորման տարին համարելը:

Անշուշտ, առանձին վերցրած Արտաշիրի դեմ Խոսրովի պայքարի 11-ամյա տևողության մասին Ագաթանգեղոսի հաղորդումը սկզբունքորեն

---

[1] Zosimos, I, 28, 32.

[2] Ագաթանգեղոս, 23:

[3] Աստուրեան 1912: 242, ծան. 1:

[4] Աբեղյան 2013: 182, 183; Մանանդյան 1957: 85; Kettenhoffen 1982: 38-42:

հակասում է հեղինակի ավելի վաղ կատարած վկայությանը, ըստ որի՝ հայ-պարսկական պատերազմը սկսվել է Արտավան Արշակունու սպանության հաջորդ տարվա (225թ.) սկզբներին[1]: Սակայն, կարծում ենք, շփոթի պատճառն այստեղ ոչ թե հեղինակը, այլ նրան հասած բանավոր ավանդությունն է, որտեղ Արտաշիրի կերպարն արդեն խորապես վիպականացել էր և իրեն էր հարակցել նաև Որմիզդ-Արտաշիրի կերպարը: Ամենայն հավանականությամբ, Որմիզդ-Արտաշիրի դեմ հայոց արքայի 11-ամյա պայքարի մասին փաստը Ագաթանգեղոսին հայտնի է եղել ինչ-որ վավերական աղբյուրից, և նա այն ներառել է իր «Պատմութիւն Հայոց»-ի մեջ՝ չնկատելով, որ հայոց Խոսրով (Տրդատ II) արքայի գահակալության վերջին 11 տարվա ընթացքում նրա դեմ պայքարած «Արտաշիր»-ը չէր կարող նույնական լինել Արտավան Արշակունուն տապալած Արտաշիր Պապականի հետ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Մ. 2013, Երկեր, հ. Ա, Երևան:

Ագաթանգեղոս 1983, Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, աշխ. թարգմ. և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան:

Ադոնց Ն. 1987, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան:

Աստուրեան Հ. 1912, Քաղաքական վերաբերութիւններ ընդ մեջ Հայաստանի և Հռովմայ 190-էն ն. Ք. մինչև 428 յ. Ք., Վիեննա:

Երեմյան Ս. 1966, Նախշ-ի Ռուստամի «Քաաբա-ի Զարդուշտ» հուշարձանի վկայությունները Հայաստանի մասին, ՊԲՀ 2, 59-72:

Երեմյան Ս. 1975, Հայաստանի քաղաքական վիճակը Արտավազդ V-ի ժամանակ (252/253-261), ԼՀԳ 1, 13-22:

Խորենացի Մ. 1913, Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Տփղիս:

Հարությունյան Բ. 1982, Մեծ Հայքի թագավորության հարավ-արևմտյան երկրամասերի վարչաքաղաքական կացությունը, ԲԵՀ 2, 79-93:

Հարությունյան Բ. 2001, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան:

Հերոդոտոս 1986, Պատմություն ինը գրքից, Երևան:

Մանանդյան Հ. 1957, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, մաս Ա, Երևան:

---

[1] Ագաթանգեղոս, 19:

Մարտիրոսյան Ա. 1975, Հայաստանը և առաջին Սասանյանները, ՊԲՀ 3, 149-172:
Մարտիրոսյան Ա. 1979, Սասանյանները և Հայաստանի քաղաքական շրջադարձը III դարում, ՊԲՀ 1, 45-59:
Մարտիրոսյան Ա. 1977, Սասանյանների արևմտյան նվաճումները և Հայաստանը, ՊԲՀ 1, 195-206:
Մելիքյան Ա. 2003, Մեծ Հայքի Արշակունի արքաների Պարթևական տերության երկրորդը լինելու հարցի շուրջ, ԼՀԳ 1, 18-28:
Մելիքյան Ա. 2006ա, Տրդատ III Արշակունու գահակալության հարցի շուրջ, ԲՎՊՄԻ1, 112-117:
Մելիքյան Ա., 2006բ, Պարսկա-հռոմեական հակամարտության և Միսիխիսի պայմանագրով Հայաստանի դե յուրե բաժանման հարցի շուրջ, ՎԱ 1 (56), 50-52:
Մելիքյան Ա. 2008, Տիգրանակերտի հունարեն արձանագրության ժամանակի և նշանակության մասին, ԲՎՊՄԻ 3, 132-144:
Մելիքյան Ա. 2008, Մեծ Հայքի 276 թ. պարսկա-հռոմեական բաժանումը, ՎԱ 2-3, 25-39:
Մելիքյան Ա. 2016, Սալմաստի ժայռաքանդակը: Պատմական Հայաստանի Սասանյան մի հուշարձանի մեկնաբանություն, Երևան:
Մշիխա Զեխա, 1976, Ադիաբենեի եկեղեցու պատմություն, թարգմ. Բնագրից, առաջաբան և ծանոթ. Հ.Գ.Մելքոնյանի, ՕԱՀՀՄ, Ասորական աղբյուրներ, հ. 8, Երևան, 63-116:
Մուշեղյան Ա. Վ. 2007, Մովսես Խորենացու դարը, Երևան:
Պէրպէրեան Հ. 1944, Որմիզդ-Արտաշիր մեծ արքա Հայաստանի, Զվարթնոց II, 167-173:
Սարգսյան Գ. 1965, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը, Երևան:
Бикерман Э. 1985, Государство Селевкидов, Москва.
Книга деяний Ардашира сына Папака, 1987, перевод Чунакова О. М., ППВ LXXVIII, Москва.
Ксенофонт 1976, Киропедия, Барухович Б. Г, Фролов Э. Д., Москва.
Луконин В. Г. 1969а, Культура Сасанидского Ирана, Москва.
Луконин В. Г. 1969б, Завоевание Сасанидов на Востоке и проблема абсолютной кушанской хронологии, ВДИ 1-2, 20-44.
Луконин В. Г. 1979, Иран в III веке, Москва.
Меликян А. 2013, Институт «Второй после царя» в иранской государственной системе Ахеменидской эпохи, МИ 4, 88-118, Псков.
Саркисян Г. 1960, Тигранакерт, Москва.

Фаррох К. 2009, Персы: армия великих царей, Москва.
Феофилакт Симокатта 1957, История, Памятники средневековой истории народов Центральной и Восточной Европы, пер. С.Кондратьева, прим. К. Осиповой, Москва.
Хуршудян Эд. 1992, Иранская военно-административная терминология и проблема четырехчленного деления Сасанидского Ирана, ИФЖ 1, 175-186.
Хуршудян Эд. 2003, Армения и Сасанидский Иран (историко-культурологическое исследование), Алматы.
Шмидт А. Н. 1958, Материалы по истории Средней Азии и Ирана, УЗИВАН XVI, 471-474, Москва-Ленинград.
al-Tabarī 1999, The History of al-Tabarī (Ta'rīkh al-rusul wa'l-mulūk): Vol.V, The Sāsānids, the Byzantines, the Lakhmids and Yemen. Transl. and annotated by C. E. Bosworth, Albany, New York.
Ammianus 1874-1875, Ammiani Marcellini Rerum gestarum libri qui supersunt. Rec. V. Gardthausen, Vol. 1-2, Lipsiae.
Avrelius Victor 1994, De Caesaribus. Translated with an Introduction and commentary by H. W. Bird, Liverpool.
Chaumont M-L. 1969, Recherches sur L'Histoire D'Arménie, Paris.
Christensen A. 1944, L'Iran sous les Sassanides, 2nd ed., Copenhague.
Daryaee T. 2009, Sasanian Persia: The Rise and Fall of an Empire, London, New York.
Dignas B., and Winter E. 2007, Rome and Persia in Late Antiquity: Neighbours and Rivals, Cambridge.
Dio Cassius MCMXIV – MCMLV, Dio's Roman History in Nine Volumes, with an English Translation by Earnest Cary on the Basis of the Version of Herbert Baldwin Foster London-Cambridge, Massachusetts.
Frye R.N. 2000, The Political History of Iran Under The Sasanians, CHI III(I), 116-180, Cambridge.
Gignoux Ph. 1983, Ādur-Anāhīd: 3-rd Century CE Sasanian "queen of queens", EIr, Vol. I, Fasc. 5, 472.
Ghirshman R. 1962, Iran: Parthes et Sasanides, Paris.
Gnoli T. 2002, 'Pasgribā' at Hatra and Edessa, Ideologies as Intercultural Phenomena. Proceedings of the Third Annual Symposium of the Assyrian and Babylonian Intellectual Heritage Project. Held in Chicago, USA, October 27–31, 2000 (ed. A.Panaino and G.Pettinato), Milano, 79-87.
Grabowski M. 2011, Ardašīr's Struggle against the Parthians: Towards a

Reinterpretation of the Fīrūzābād I Relief, IrAn 46, 207-233.
Hamzah al-Iṣfahānī 1932, Annals, Transl. from Arabic by U.M. Daudpota, Bombay.
Henrichs A. 1979, The Cologne Mani Codex Reconsidered, HSCPh 83, 339-367.
Henrichs A. & Koenen L. 1982, Der Kölner Mani-Kodex (P. Colon. inv. nr. 4780), ZPE 48, 1-85.
Henrichs A. and Koenen L. 1970, Ein grieshischer Mani-Codex, ZPE 5, 97-216.
Herodianus 1970, Ab excessu divi Marci libri octo, London.
Herzfeld E. 1932, A New Inscription of Xerxes from Persepolis, Chicago.
Hinz W. 1969, Altiranische Funde und Forschungen, Berlin.
Humback H. and Skjaervø P. O. 1983, The Sasanian Inscription of Paikuli, Part 3.1. Restored text and translation, Wiesbaden.
Hutter M. 1993, Manichaeism in the Early Sasanian Empire, Numen, Vol. 40/1, 2-15.
Kettenhoffen E. 1982, Die römisch-persischen Kriege des 3 Jahrunderts n. Chr. Nach der Inschrift Šāhpuhrs I. an der Kaabe-ye Zartošt (ŠKZ), Wiesbaden.
Marquart J. 1895, Beiträge zur Geschichte und Saga von Ērān, ZDMG 49, 628-672.
Nöldeke Th. 1878, Geschichte des Artachšîr i Pâpakân, Bezzenberger's Beiträge zur Kunde der indogermanischen Sprachen 4, 22-69.
Nöldeke Th. 1879, Geschichte der Perser und Araber zur Zeit der Sassaniden - Aus der arabischen Chronik des Tabari, Leiden.
Rostovtzeff M.L. 1943, Res Gestae Divi Saporis and Dura, Berytus 8, 17-60.
The Scriptores Historiae Augustae, 1991, 1993, 1982, ed. and tr. David Magie, 3 vols., Cambridge.
Shahbazi Sh. 2001, Early Sasanians' Claim to Achaemenid Heritage, Nāme-ye Irān-e Bāstān 1, 61-73.
Shahbazi Sh. 2002, Shapur I. i, History, EIr, Originally Published: July 20. http://www.iranicaonline.org/articles/shapur-i
Shavarebi E. 2014, A Reinterpretation of the Sasanian Relief at Salmas, IrCa 18, 115-133.
Shayegan R. 2004, Hormozd I, EIr XII, Fasc. 5, 462-464.
Soudavar A. 2009, The Vocabulary and Syntax of Iconography in Sasanian Iran, IrAn 44, 417-460.
Sprengling M. 1953, Third century Iran, Sapor and Kartir, Chicago.

Sundermann W. 1986, Studien zur kirchengeschichtlichen Literatur der iranischen Manichäer I, AoF 13, 40-92.
The Chronicle of Arbela, 1985, Engl. transl. by T. Kroll, Corpus Scriptorum Christianorum Orientalium, Scriptores Syri, t.200, Lovanii.
The Letter of Tansar, 1968, translated by M. Boyce, Roma.
Toumanoff C. 1969, The Third Century Armenian Arshacids. A Chronological commentary, REA VI, 333-381.
von Gall H. 1990, The Figural Capitals at Taq-e Bostan and the Question of the so-called Investiture in Parthian and Sasanian Art, SRAA I, 99-122.
Weber U. 2007, Hormezd I, Kung der Kung von Ērān und Anērān, IrAn 42, 387-418.
Widengren G. 1969, Der Feudalismus im alten Iran, Cologne and Opladen.
Wiesehöfer J. 1986, Ardašir I i. History, EIr II, Fasc. 4, 371-376.
Zonaras Joannes 1868-75, Ioannis Zonarae Epitomae Historiarum, ed. L. Dindorf, 6 vols. in 3, Leipzig.
Zosimos 1967, Historia nova; the decline of Rome. San Antonio.

ON THE SASANIAN CROWN PRINCES ENTHRONEMENT ORIGIN AND SIGNIFICANCE IN ARMENIAu

Melikyan Arthur
(Vanadzor State Pedagogical University)

The exploration of writing sources and the Sasanian reliefs shows that the ruling of Sasanyan crown princes in Great Armenia began earlier than it was usually imagined in historiography. It was sourced in undertigrisian provinces Angeghtun, Mets Tsopk, Arzan, Tsavdeq, Korduq, which were conquered from Great Armenia by Persians in the 220th. Here sucessively ruled the inheritor of Artashir the 1st and the commander of the Persian army Shapuh (from 230 to 242), then the latter's crown prince Hormizd-Artashir (from 242 to 253). Therefor, its not right to identifie the terms "The ruling of Sasanian crown princes in Armenia" and "The time of anarchy" both in time and in content.

In 252 Hormizd-Artashir conquered the other parts of Great Armenia forcing the Armenian king Tiridat to leave the country. After that the Persian crown prince Hormizd-Artashir became the ruler of Great Armenia. Therefor after the definitive conquest of Armenia in 252, it should be noted the «time of anarchy» of Armenian history. Our investigation shows that we have no

tendency to present this country ruled by the Sasanyan crown princes in Armenia in the 3-rd century within the Sasanyan military-administrative system. Actually that phenomenon was the part of the Sasanian first ruler's policy to solve the crowning problems. Choosing the crown in the way of monopoly the Sasanian king of kings did their best to srenghten their smart sets positions as much as they could. For the transferation of the throne they chose the types of iconography preaching used in earlier Achaemenid Empire with the military-administrative mechanisms used in Parthian Empire. Particularly after the example of the Parthian Arshakids, the Sasanyan Emperors gave the crown princes a chance to gain some military-administrative experience providing them with the Persian troops guidance, as well as with separate points of support in the country's outer front-line and accentuated their "Second position after the sovereign" in the government state system.



1



2

Նկ. 1. Պաղատ լեռան դիրքը (1, 2)

1

2

3

Նկ. II. Պաղատ լ. և Կանգվարը (1), Բութը կիրճի մոտ (2), Բութի քարանձավի ժայռապատկերը (3)





Նկ. 3. Վիշապաքարեր





Աւարայրի դաշտ
(Էմամղոլի-Բալայի
գետանցը)





Աւարայրի դաշտ
(Աբարաբաշիի գետանցը)

Աղյուսակ I



Նկ. 1. Զորաց քարեր հնավայրի ընդհանուր տեսքը հարավից:



Նկ. 2. Բնակավայրի պարսպաշարի տարբեր հատվածների մնացորդները հարավից և արևմուտքից:

Աղյուսակ II



Նկ. 1. Սարդուրի II-ի տարեգրության պահպանված մասը (Վան, 1916 թ.):

Նկ. 2. Սարդուրի II-ի տարեգրության հայտնաբերման վայրը (Վան, «Գանձադուտ» 1916 թ.):

Նկ. 1. Արգիշթի II-ի Թանահատի արձանագրության դիմային և հակադարձ նիստերը:



Նկ. 2 Ռուսա II-ի Այանիսի արձանագրության անհրաժեշտ հատվածը:

Նկ. 1. Միջինբրոնզեդարյան (մ.թ.ա. XX-XVIII դդ.) և ուշբրոնզեդարյան (մ.թ.ա. XV-XIII դդ.) գտածոներ Զորաց քարերից (Ստ. Լիսիցյանի հավաքածու):

Նկ. 2. Գավազանի բրոնզե վերնամաս և զրահաշապկի բրոնզե թիթեղ Զորաց քարերի երկաթեդարյան դամբարաններից (Օ. Խնկիկյանի պեղումներ):



Նկ. 3. «Աստղադիտարան» հորջորջվող դամբարանից 2014 թ. հայտնաբերված երկաթեդարյան (մ.թ.ա. X-VIII/VII դդ.) խեցեղեն և երկաթե նիզակների մասեր (Ա. Փիլիպոսյանի պեղումներ):

Աղյուսակ V



Նկ. 1. Զորաց քարերի «աստղադիտարան» հորջորջվող դամբարանի ընդհանուր տեսքը վերևից:

Աղյուսակ VI



Նկ. 2. Զորաց քարերի «աստղադիտարան» հորջորջվող դամբարանի դրոմոսի մուտքն արևմտյան կողմից (2015 թ.):

Աղյուսակ VII



Նկ.1 Գյոբակլի թեփե (Փոքր Ասիա)
Նկ.2 Կառնակ (Բրետան, Ֆրանսիա)
Նկ.3 Կալլանիշ սթոունզ (Շոտլանդիա)
Նկ.4 Սթոունհենջ (Անգլիա)
Նկ.5 Կաուրիա-ստանտարի (Սիցիլիա)
Նկ.6 Կարնատակա (Հնդկաստան)
Նկ.7 Ռալ-Պալա (Կորսիկա)
Նկ.8 Կրոմլեխ Ասոտա (Պակիստան)

Պ.գ.թ. Ցականյան Ռուսլան
(ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ)

«ՏՈՒՆ ԹՈՐԳՈՄԱ»-Ն ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

Ներածություն

Ք.ա. VIIIդ. վերջին տասնամյակներում Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջաններում ընթացող էթնոքաղաքական բուռն տեղաշարժերն աղերսվում էին Փոքր Ասիայի արևելյան հատվածում և Եփրատի աջափնյակում գտնվող *«Տուն Թորգոմա»* պետության հետ և, ամենայն հավանականությամբ, ղեկավարվում կամ օժանդակվում էին նրա կողմից: Վերջինիս՝ որպես նշված դարաշրջանի ռազմաքաղաքական գործոնի մասին պատկերացումների աղբյուրագիտական, ինչպես նաև անվանաբանական հիմքը բազմազան է և շատ դեպքերում հակասական:

1. *Հիշատակությունը սեպագիր աղբյուրներում՝ Հին ասսուրական աղբյուրներ:*

Հին ասսուրական սեպագիր աղբյուրներում *«Տուն Թորգոմա»*-ն հանդես է գալիս ***Tégarama,*** իսկ նորասորեստանյան աղբյուրներում՝ ***Til (բնակավայր, բլուր)-Garimmu***[1] ձևով: Դրա առաջին հիշատակությունները հասնում են մինչև Ք.ա.XXդ. (Աշշուրի կառավարիչներ Իլուշումմայի (Ք.ա.1962-1942?թթ.) և Էրիշում I-ի (Ք.ա.1941-1902թթ.) ժամանակաշրջաններ[2]): Մոտավորապես Ք.ա.XXդ. Աշշուրի առևտրականները զանգվածաբար ներթափանցում են Փոքր Ասիա և այնտեղ հիմնում առևտրական գաղութներ (***kāru(m), bīt kāri(m)*** – «նավակայան, հանգրվան, շուկա և այլն[3]): Այդպիսի գաղութներից էր նաև Թեգարաման՝ ***kārum Tégarama*** կամ ուղղակի ***Tégarama***[4]: Խոշոր kārum-ներից էին Քանիշ/Քանես/Նեսան

---

[1] Nashef 1991: 117; Parpola 1970: 353; Арутюнян 1985: 184; հմմտ. Քոսյան 1998: 6-10:

[2] Eppihimer 2013: 36-39; Barjamovic 2011: 131-133; Veenhof 1995: Veenhof 2008: 199-246.

[3] CAD 1971, K, 226-240.

[4] Veenhof 2006: № 5, l. 4, № 43, ll. 21; CCT, I: № 29, l. 10; CCT, III, № 44b, l. 8; CCT V, № 3b, l. 9-10; № 11b, ls. 5, 13; № 27; № 30a, l. 14; Lewy 1937: № 60, l. 7; Gelb 1935: XV, 21, 2-6; Hecker 1966: № 24, l. 3; Hecker - Kryszat –Mateuš 1966: № 470, l. 18; № 723, l. 8; Gwaltney 1983: № 27, ll. 7-9; Michel and Garelli 1997: № 11, l. 9; № 50, l. 9; № 198, l. 3; Albayrak 2006: № 34, l. 18;

(Kültepe հնավայրը), Ալիշարը (Alişarhöyük), Վախսուսանա, Պուրուսխանդա և այլն[1]: Շնորհիվ հնագիտական պեղումների՝ ասսուրական ներկայությունը փոքրասիական առևտրական գաղութներում Ք.ա.1920-1840թթ. և Ք.ա.1798-1720թթ. բավական հստակ է թվագրվում[2]: Քանիշից հայտնաբերված սալիկների շնորհիվ պարզվել է նաև Աշշուր-Քանիշ առևտրական ուղին, որը կարևորագույն կապող օղակ էր բոլոր կայանների համար. դրանցից մեկն էլ Թեգարաման էր[3]: Որոշ առևտրական նամակների համաձայն՝ Թեգարաման հանդես է գալիս որպես ասորեստանցիների բնակավայր[4]: Քաղաքում, *kārum*-ից բացի, գոյություն ունեին նաև պալատ և առևտրական գրասենյակ[5]: Քանիշից հայտնաբերված նամակներից պարզվում է, որ, ի թիվս այլ բարիքների, աշշուրցիների առևտրական հետաքրքրությունները Թեգարամայում ներառում էին անագ, տեքստիլ, բուրդ, գինի և այլն[6]:

Վերոնշյալ նամակներից մեկում նամակագիր Իբաան հայտնում է, որ Թեգարամայից ոչխար, սննդամթերք, գործվածքներ է ուղարկել քարավանատեղի: Նշում է նաև, որ ինքն ու Իդի-Սուենը շրջանառվող գումարից արծաթ և իրենց հաշվին սերմեր են վերցրել Թեգարամայից[7]: Մեկ այլ նամակից հայտնի է դառնում, որ Քանիշից Թեգարամա բանագնացներ ուղարկելու համար վճարվել է 7 սիկղ անագ[8]:

Ք.ա.XIXդ. Հյուսիսային Միջագետքի ամորեական ցեղերից մեկի առաջնորդ Շամշի-Ադադ I-ին (Ք.ա.1813–1781թթ.) հաջողվեց գրավել Աշշուրը[9]: Շատ չանցած այստեղ Սիրիայի հյուսիսային շրջաններում խուր-

---

Veenhof 2006: № 18, l. 4; № 21, l. 35; № 56, l. 5; № 60, l. 9; Kt a/k № 345, l. 18, Kt g/k № 220, Kt m/k № 141, l. 17; Kt r/kú № 1, l. 1; Kt 87/k № 41; Barjamovic 2011: 122-133.

[1] Larsen 1977: 119–145; տե՛ս նաև՝ Steadman and McMahon 2011 ժողովածուն:

[2] Veenhof and Eidem 2008: 27-33, 41-61, 143f.; Barjamovic 2008: 87-100.

[3] Veenhof and Eidem 2008: 136.

[4] Veenhof and Eidem 2008: 161; Barjamovic 2011: 131.

[5] Veenhof and Eidem 2008: 154.

[6] Barjamovic 2011: 133.

[7] «1. 1 UDU 1 um-ṣa-am 2. pá-na-ra-am 3. i-na Té-ga-ra-ma 4. a-na É ub-ri 5. a-dí-in gám-ru-um 6. ša i-a-tí ù 7. I-dí-Sú-en$_6$ 8. 1 GÍN 24 ŠE KÙ.BABBAR 9. i-na šu-ra ḫa-ra-nim 10. a-na-ku ù I-dí-Sú-en$_6$11. iš-tù Té-ga-ra=ma 12. ni-li-kà=ni 13. i-li-bi! 14. I-dí-Sú-en$_6$15. I-ba-a 16. i-šu» (CCT V, № 27).

[8] «8. ... 7 GÍN 9. AN.NA a-na ši-ip-ri-ma ša 10. [a-Te-ga]-ra-ma ni-iš-pu-ru» (CCT I, № 29).

[9] Bloch 2014: 191-210.

րական իշխանությունների հզորացման և դեպի Արևելյան Փոքր Ասիա նրանց տեղաշարժերի արդյունքում դադարում են Աշշուրի գաղութների մասին հիշատակությունները[1]: Ավելին, Kültepe-ի Ib-2 (հետաշշուրական) շերտը վկայում է ռազմական ճանապարհով քաղաքի ավերման մասին[2]: Ըստ երևույթին, նվաճումների ալիքը չի շրջանցել նաև Թեգարաման:

Ք.ա.XVIIIդ. Արևելյան Փոքր Ասիայում քաղաք-պետությունների միջև գերիշխանության համար պայքար էր ընթանում: Կուսսարի արքա Անիտտայի արձանագրությունը հայտնում է, որ նրա հայր Պիթխանան նվաճել է Նեսան[3]: Հոր արշավանքները շարունակեց նաև Անիտտան: Դեռևս 1954թ.՝ Քյուլթեփեի պեղումների ժամանակ, հայտնաբերվեց Անիտտային պատկանող դաշույն, իսկ նրա վերոհիշյալ արձանագրությունը հայտնաբերվել է Alişar 10T շերտից: Եվ եթե Alişar 10T-ն իսկապես համապատասխանում է Kültepe Ib շերտին[4], ապա կարելի է ենթադրել, որ քաղաքն ավերվել է Անիտտայի կառավարման ժամանակահատվածում[5]: Անիտտայի կառավարման ինչ-որ մի պահի Քանիշը նվաճվում և ավերվում է անհայտ ուժի կողմից[6]: Սկսած Ք.ա. XVIIդ.՝ *«Տուն Թորգոմա»*-ն քիչ թե շատ կանոնավոր սկսում է հիշատակվել խեթական աղբյուրներում:

2. Խեթական և նորասորեստանյան սեպագիր աղբյուրներ

Խեթական սեպագիր աղբյուրներում *«Տուն Թորգոմա»*-ն հանդես է գալիս ***Ta/e/ig/k/qaram(m)a***[7] ձևերով: Թեգարաման աշխարհագրական

---

[1] Kulakoğlu 2011: 1027-1028; Veenhof and Eidem 2008: 143-145; Bryce 2005: 55ff.; Քոսյան 2013: 174; Аветисян 1984: 9-11, 34-37.

[2] Veenhof and Eidem 2008: 143.

[3] Collins 2007: 29f.; Bryce 2005: 35f.

[4] Burney 2004: 160-164.

[5] Bryce 2005: 24f., 36ff.; Гиоргадзе 1965: 87-111.

[6] Ա. Քոսյանը ենթադրում է, որ այն կարող է լինել նախկինում նվաճված Սալատիվարան (Քոսյան 2013: 175): Վերջինս գտնվում էր Վախսուսանայի և Պուրուխանդայի (տե՛ս նաև՝ Kuzucuoğlu 2011: 25-33) թագավորություններն իրար կապող ճանապարհի վրա՝ Bryce 2005: 38:

[7] KUB, XXXI 64 iii 11; KUB, XXXI 64 ii 37; KUB, VI 45 ii 67 = 46 iii 33; KUB, XIII 2 iii 33; KUB, L 91 iv 17; KUB, VI 45 ii 66 = 46 ii 32; KUB, LVIII 75 ՀԿ. 7, 9, 10; KUB XXXVI 98 ԴԿ. 6; 2BoTU, 23A i 39; 2BoTU 23A, 23C ii 6; KBo, I 1 ԴԿ 13, 20, 22; KBo, V 6 ii 27, 30, 38; KBo, I 2 ԴԿ1, 2; KBo, IV 4 iii 19, 20, 21; KBo XIV 10, 9; KBo, VI 28 ԴԿ12; KBo XII 140 ՀԿ 8՝ հղումներն ըստ Քոսյան 2004: 92-93; տե՛ս նաև՝ del Monte 1992: 154;del Monte 1978: 383; Хачатрян 1971: 94-96.

առումով գտնվում էր Միջագետքի, Սիրիայի ու Փոքր Ասիայի միջև ընկած առևտրական ուղու վրա: Ուստի այդ ուղու մի զգալի հատված պետք է հայտնվեր վերելք ապրող խեթական պետության հետաքրքրությունների շրջանակում: Ելնելով Խաթթուսիլիս I-ի (Ք.ա. 1650-1620 թթ.[1]) նվաճումների աշխարհագրությունից՝ կարելի է ենթադրել, որ ամենայն հավանականությամբ այս արքան նվաճած պիտի լիներ նաև Թեգարաման: Պետության սահմանն արևելքում հասնում էր մինչև վերինեփրատյան գոտի, իսկ հարավ-արևելքում՝ Հյուսիսային Սիրիա[2]: Խեթական աղբյուրներում Թեգարամա քաղաքի առաջին հիշատակությանը հանդիպում ենք Խաթթուսիլիս I-ի հաջորդ Մուրսիլիս I-ի (Ք.ա. 1620–1590 թթ.) տարեգրության՝ արևելյան արշավանքը նկարագրող հատվածում՝ *URU**Ta-ga-ra-mi*** (KUB XXXI 64 II 37')[3]:

Ք.ա. մոտ. 1595 թ. Մուրսիլիս I-ը հեռավոր արշավանք ձեռնարկեց դեպի Բաբելոնիա, սակայն վերադարձից հետո պալատական դավադրության զոհ գնաց[4]: Մուրսիլիսի սպանությունից հետո Խաթթիի իշխանությունը նվաճված շրջաններում, մասնավորապես արևելյան և հարավ-արևելյան սահմանագծի երկայնքով՝ սասանվեց: Նոր արքա Խանտիլիս I-ը (Ք.ա. 1590-1560 թթ.) մեծ ջանքեր գործադրեց Հյուսիսային Սիրիայում Խաթթիի հեղինակության վերականգնման համար: Այդ պայքարը հաջողություն չբերեց, և նա ստիպված եղավ վերադառնալ: Հետդարձի ճանապարհին Խանտիլիս I-ը եղավ Թեգարամայում[5]:

Խանտիլիս I-ի մահից հետո, ընդհուպ մինչև Տելեպինոսի (Ք.ա. 1525-1500 թթ.) գահակալումը, Խաթթիում ներքին և արտաքին քաղաքական լուրջ խնդիրներ կային: Երկրում գահակալական կռիվներ էին ընթանում, իսկ նվաճված տարածքների զգալի մասն ազատվել էր Խաթթիի գերիշխանությունից: Արտաքին հարձակումների դեմ Տելեպինուսը ստիպված էր պայքար մղել գրեթե բոլոր ուղղություններով: Նրա մահից հետո պետությունն արտաքին ասպարեզում լուրջ խնդիրների առջև կանգնեց: Հզորացող Միտտանին ձգտում էր հաստատվել Հայկական Տավրոսից հյուսիս և Եփրատի աջափնյակում: Այս առնչությամբ Հ.Ավետիսյանը նշում է, որ Ք.ա.XVդ. սկզբին Հայկական լեռնաշխարհի

---

[1] Խեթական արքաների ժամանակագրությունը տրվում է ըստ Թ. Բրայսի (Bryce 2005: XV, հմմտ. նաև՝ Collins 2007: 38):

[2] Collins 2007: 39; Bryce 2005: 70ff.

[3] Քոսյան 2004: 92, անունը ներկայացված է տրական հոլովով, տե՛ս նաև՝ Хачатрян 1971: 97:

[4] Collins 2007: 40; Bryce 2005: 100.

[5] Bryce 2005: 100; Ղազարյան 2016: 20-22:

հյուսիսարևմտյան, արևմտյան և հարավարևմտյան շրջաններում ձևավորվում են Հայկական պետականության ակունքները համարվող Հայասա-Ազզի, Իսուվա, ***Թեգարամա*** (ընդգծումը մերն է - Ռ.Յ.), Արմատանա, Արավաննա, Ալզի պետական կազմավորումները[1]: Բնականաբար նաև բախումը խեթերի հետ դառնում էր անխուսափելի: Ելնելով Թուդխալիաս II-ի (Ք.ա.XVդ. II կես) և Առնուվանդաս I-ի (Ք.ա.XVդ. վերջին քառորդ - XIVդ. սկիզբ) նվաճումների աշխարհագրությունից՝ Թեգարաման գտնվում էր խեթական պետության կազմում[2]: Իսկ ահա Թուդխալիաս III-ի (Ք.ա. XIVդ. I կես) կառավարման վաղ փուլում, ըստ Խաթթուսիլիս III-ի (Ք.ա. 1267-1237թթ.) տեքստի, պետության տարածքի մի զգալի մասը նվաճվել էր կամ պարբերաբար ասպատակվում էր բոլոր հարևան երկրների կողմից[3]: Խաթթուսիլիս III-ն իր հուշակագրում արձանագրում է. «Իսկ Իսուվայի [թշնամին] եկավ [և] ***Թեգարամա*** [երկիրը] նվաճեց»[4]:

Թեգարամայի նվաճումը Իսուվայի (հետագայում՝ Ծոփք) կողմից, հավանաբար, տեղի է ունեցել Թուդխալիաս III-ի կառավարման վերջին շրջանում[5]: Իսկ ըստ Սուպպիլուլիումա I-ի (Ք.ա. 1350-1322 թթ.) և Միտտանիի արքա Շատտիվազայի միջև կնքված պայմանագրի՝ խեթահպատակ 16 քաղաք-պետությունների բնակչությունն ապստամբել և լքել էր իր բնակավայրերը՝ արտագաղթելով հարևան երկրներ, այդ թվում Իսուվա և Հայասա. «***Թեգարամա*** երկրի բնակչության կեսը, Թեպուրզիյա քաղաքի մարդիկ, Խազգա քաղաքի մարդիկ և Արմատանա երկրի մարդիկ ապստամբեցին (Խաթթիի դեմ) հորս ժամանակ»[6]: Սակայն Սուպպիլուլիումա I-ին հաջողվեց հնազանդեցնել ապստամբ քաղաքներին, նվաճել Թեգարաման և ներխուժել Միտտանիի տարածք[7]: Խեթական պետության և Միտտանիի միջև սկսված «Սիրիական» պատերազմներում Փոքր Ասիայի հարավարևելյան շրջանները վեր են ածվում ռազմական գործողությունների թատերաբեմի: Սուպպիլուլիումա I-ից շուրջ 20 տարի պա-

---

[1] Ավետիսյան 2002: 5:

[2] Bryce 2005: 127-145; Քոսյան 2000: 167-173; Kosyan 2006: 72-97; Քոսյան 2016: 108-109; Քոսյան 2013: 178-179:

[3] Քոսյան 2016: 109:

[4] Քոսյան 2016: 71, նույն տեղում տե՛ս արձանագրության ամբողջական տառադարձումը, թարգմանությունն ու ծանոթագրությունները (էջ 68-81), նաև՝ Քոսյան 2000: 166; Քոսյան 2013: 179:

[5] Քոսյան 2016: 125:

[6] Beckman 1996: 6A § 1-2; Bryce 2005: 155f.; Քոսյան 2016: 112 ծնթ. 187; Аветисян 1984: 45-46.

[7] Bryce 2005: 161ff.; Аветисян 1984: 58.

հանջվեց վերականգնելու կորցրած տարածքները[1]: Պատերազմներից մեկի ժամանակ Սուպպիլուլիումասը Թեգարամայի Տալպա քաղաքում զորատես անցկացրեց, որտեղից խեթական զորքը գահաժառանգ Առնուվանդասի և թիկնազորի պետ Ցիտայի գլխավորությամբ հատեց Միտտանիի սահմանը: Քիչ անց արքայի գլխավորությամբ խեթական մյուս բանակը դուրս եկավ Թեգարամայից և հասավ Կարքեմիշի սահմաններին[2]:

Բնակավայրի անունը հիշատակվում է նաև Մուրսիլիս II-ի (Ք.ա. 1321–1295 թթ.) «ժամանակագրության» մեջ: Մուրսիլիսը դեպի Հյուսիսային Սիրիա անհաջող արշավանքից հետո, ըստ «Ընդարձակ» տարեգրության, Կարքեմիշից շարժվում է Թեգարամա[3], սակայն, ըստ «Տասնամյա» տարեգրության, արքան գտնվում էր Կիցցուվատնայում[4]: Մուվատալլիս II-ի (Ք.ա. 1295-1272 թթ.)[5] և Խաթթուսիլիս III-ի (Ք.ա. 1267-1237 թթ.) կառավարման ժամանակահատվածում Թեգարաման հավանաբար գտնվել է խեթական պետության ենթակայության տակ և մնացել նրա կազմում ընդհուպ մինչև նրա տրոհումն ու անկումը[6]:

Շուտով տարածաշրջանում ի դեմս Ասորեստանի հայտնվեց նոր ահեղ հակառակորդ: Վերջինիս հարվածներից ընկավ Միտտանին, իսկ քիչ անց՝ Ասորեստանի արքա Թուկուլթի-Նինուրտա I-ը (Ք.ա. 1234-1197 թթ.) իր կառավարման առաջին տարում, Նիխրիյայի մոտ հաղթում է Թուդխալիաս IV-ին (Ք.ա. 1237-1228 և 1227-1209 թթ.) և մերձեփրատյան գոտուց տեղահանում 28.800 խեթահպատակ բնակչություն[7]: Սակայն ասորեստանցիները չամրացան Եփրատի աջափնյակում, և այն նախկինի

---

[1] Քոսյան 2016: 78:

[2] Bryce 2005: 177; Аветисян 1984: 80.

[3] «Երբ Կարգամիշ երկիրը ամրացրի, Կարգամիշ երկրից բարձրացա և մտա Թեգարամա երկիրը: Երբ ես հասա Թեգարամա քաղաք, մատռվակ Նուվանցան և բոլոր հրամանատարները Թեգարամա քաղաքում ինձ դիմավորեցին, ինձ հետ հանդիպեցին» (KBo, IV 4 iii 19, 20, 21; Капаницян 1947: 31, 35; Ավետիսյան 2002: 80):

[4] Ղազարյան 2013: 57-59:

[5] Թեգարաման հիշատակվում է նաև Մուվատալլիս II-ի՝ Ամպրոպի աստծուն նվիրված աղոթքում «Թեգարամայի Ամպրոպի աստվածը, արական աստվածները, իգական աստվածները, Թեգարամա երկրի լեռների ու գետերի աստվածները» (Singer 2002: § 58 [ii 66-67]).

[6] Bryce 2005: 256ff.

[7] Grayson 1987: A.0.78.23, ll. 27-42; Bryce 2005: 314-318; Քոսյան 1999: 19-20, 74:

պես շարունակեց մնալ Թուդխալիաս IV-ի իշխանության ներքո[1]: Խեթական պետության տրոհումից հետո նրա տարածքում առաջացան մի շարք նորխեթական կամ լուվիական փոքր պետություններ[2]:

Հետխեթական կամ լուվիական պետությունների թվին էր պատկանում նաև Մելիդը[3]: Մելիդը բավական կենսունակ պետական կազմավորում էր, նրա արքաներն արևմտյան հարևանների նկատմամբ վարել են նվաճողական քաղաքականություն և թողել հիերոգլիֆային արձանագրություններ: Դ. Հոքինսը, ուսումնասիրելով Մալաթիայի նրա շրջակայքի հնագիտական նյութերը, ինչպես նաև Արսլանթեփեի արձանագրությունները, եկել է այն եզրակացության, որ Մելիդի ազդեցությունը տարածվում էր Եփրատի աջափնյա հարթավայրի վրա, նաև դեպի հյուսիս-արևմուտք առնվազն մինչև Հեքիմհան ու Գյուրյուն՝ ներառելով նաև Էլբիստանի հովիտը[4]: Փաստացի Մելիդի պետությունն ընդգրկում էր նաև Թեգարամայի տարածքը: Լուվիական հիերոգլիֆային տեքստերից հայտնի է *Lá/í/u-ka+ra/i-ma (Karahöyük, 1-3)*[5] անունով մի քաղաք, որը մասնագետների կողմից ընկալվում է որպես Թեգարամայի լուվիական տարբերակը: Խեթա-լուվեզուներում t:l հերթագայության առկայությունը թույլ է տալիս ենթադրելու այս տեղանվան և Թեգարամայի նույնությունը: Մինչ նորասորեստանյան ժամանակաշրջանը աղբյուրների սղության պատճառով Թեգարամայի վերաբերյալ հետագա հիշատակությունները բավական կցկտուր են:

Տարածաշրջանի մասին կարևոր հիշատակություն է թողել Ասորեստանի արքա Թիգլաթպալասար I-ը (Ք.ա.1115-1077թթ.): Նրա կառավարման ժամանակ ասորեստանցիները երկու արշավանք կազմակերպեցին

---

[1] Bryce 2005: 324.

[2] Վերջիններիս մասին մանրամասն տե՛ս Bryce 2012; Косян 1994:

[3] Bryce 2012: 98-110; Косян 1994: 17-29.

[4] Hawkins 2000: 283f.; հմմտ. նաև՝ Косян 1994: 17.

[5] «10, § 16. POCULUM.PES. *67 (REGIO)-wa/i-mu-tá- ´ 3 URBS-*Ml*-ní-zi/a La/i/u-kar-ma (URBS) FRONS?. *282-pi-i(a) (URBS) Zu(wa)-ma-ka (URBS) DOMINUS-na-ti DARE-mi-zi/a» - «POCULUM երկր(ում) երեք քաղաք՝ Լուկարմա, Խանտ-...պիյա (և) Զու(վա)մակա (որոնք) ինձ տրված են Աստծու կողմից» (թարգմանությունը ըստ Դ.Հոքինսի՝ Hawkins 2000:290, հմմտ. նաև՝ Косян 1994: 22-23). Իսկ արձանագրության հեղինակ Իր-Թեշուբն իրեն անվանում է «մեծ արքա» (MAGNUS.REXI(a)+ra/i-TONITRUS MAGNUS.REX), նույն տեղում՝ 289 (Ք.ա.մոտ. 1200թ.); հմմտ.՝ Zsolt 2013: 823-832; Bryce 2012: 85ff.; Косян 1994: 112, прим. 9; Իր-Թեշուբի ժամանակաշրջանի և նույնացման համար տե՛ս Gilbert 2015: 140 n. 17:

դեպի Փոքր Ասիա: Առաջինը տեղի ունեցավ Ք.ա. մոտ. 1112/1111թ.: Ասորեստանյան զորքն անցավ Եփրատն ու ներխուժեց Խանիգալբատում գտնվող ըմբոստ Մելիդի տարածք: Ինչպես հայտնում է Թիգլաթպալասար I-ը, նա քաղաքը չի պաշարում, այլ պարտադրում է տարեկան հարկ վճարել, որից հետո պատանդներ վերցնելով՝ հետ է վերադառնում[1]: Իսկ հաջորդ արշավանքը տեղի ունեցավ արդեն Ք.ա.1100թ. սահմաններում[2]:

Երկար ընդմիջումից հետո «Թեգարամա» անվանումը հերթական անգամ հանդիպում է Սալմանասար III-ի (Ք.ա.859-824թթ.) կառավարման 24-րդ տարում՝ Ք.ա.835թ. Մելիդի և Թաբալի դեմ կատարած արշավանքի ընթացքում: Սալմանասարի արձանագրության մեջ անվանումը վնասված է՝ «a-na ^{URU}*Ta-ga-ri*[...]»[3]: Յամադան առաջարկում է վերականգնել «a-na ^{URU}*Ta-ga-ri*[*-im-mu* ālī dannūtīšu aqṭirib]» - «և մոտեցա Թագարիմուին՝ նրա ամրացված քաղաքին»[4]:

Արձանագրության համապատասխան տողերի վերականգնման առումով Շ.Յամադան նշում է, որ չնայած նրան, որ նման վերականգնումը ոչ մի կերպ չի հաստատվում, բայց բավական նման է հինասորեստանյան և խեթական տեքստերի հիշատակած Թեգարամա/Թակարամա-ին[5]:

Ոչ միայն նշված տողի, այլև Սալմանասար III-ի կառավարման ամբողջ 24-րդ տարվա նկարագրության՝ Շ.Յամադայի վերականգնումը տեղավորվում է իրադարձությունների համատեքստում: Մեզ հետաքրքրող հատվածի բովանդակությունը հետևյալն է. «[Իմ 23-րդ palû-ում] (182) ես անցա Եփրատը (և) ստացա [Խաթթիի արքաների տուրքը]: (183) Ես մեկնեցի քաղաքներից (Խաթթի երկրի), (184) անցա լեռը Պալա[...] և գնացի [Լալլա մելիդցու քաղաքները (կամ Մելիդի Լալլայի քաղաքները)]: (185) Ես [պաշարեցի և նվա]ճեցի Ուե[տաշը, նրա ամրացված քաղաքը (և)] (186) [վերցրեցի] նրա ավարը: [Ես հեռացա Ուետաշից] (187) [և մոտեցա] *Թագարի[մմուին*, նրա ամրացված քաղաքին] (188) եկավ ինձ մոտ (Լալլան(?) - Ռ. Ց.) [և գրկեց իմ ոտքերը: Նրա ընծան] (189) Ես ստացա [և նրա վրա դրեցի] հարկ ու տուրք: (190) Ես հեռացա [*Թագարիմմուից*] (և) մոտեցա քաղաք [...]»[6]:

---

[1] Grayson 1991: A.0.87.1, col. V, ll. 33-41. A.0.87.4, ll. 31-33.

[2] Grayson 1991: A.0.87.4, ll. 31-33.

[3] Grayson 1996: A.0.102.16, l. 187.

[4] Yamada 2000: 214ff.

[5] Yamada 2006: 225f.

[6] *«[ina 23 palêya] 182. ÍD.A.RAD e-ʳbirʾ [maddattu ša šarrāni ša ^{mât}Ḫatti] 183. at-ta-ḫar TA URU.ME[Š ša ^{mât}Ḫatti attumuš] 184. $^{[KU]R}$Pala-[x B]AL-at a-[na ālāni ša ^{m}Lalla ^{KUR}Melidāya] 185. at-t[a-r]ad ^{URU}Ú-e-[ta-áš URU dannūtīšu assibi] 186. [ak-*

Այսպիսով, ըստ արձանագրության համապատասխան տողերի և մասնավորապես ըստ Շ.Յամադայի վերականգնման, Թեգարաման եղել է Մելիդի կազմում: Եվ ինչպես տեսանք, Մելիդի արքա Լալլան (Ք.ա.853-835թթ.[1]) ընդունեց Սալմանասար III-ի գերիշխանությունը: Սակայն Սալմանասարի մահից հետո Ասորեստանի արտաքին քաղաքական ակտիվությունը սկսեց նվազել, փոխարենը տարածաշրջանում, ի դեմս Բիայնիլի-Ուրարտուի, հանդես եկավ նոր ուժ: Վերջինիս արքաներ Մենուան (Ք.ա.IXդ. վերջին քառորդ – 791թթ.), Արգիշտի I Մենուաորդին (Ք.ա. 791-771թթ.) և մասնավորապես Սարդուրի II(?) Արգիշտիորդին (Ք.ա. 771-735 թթ.)[2] իրենց ուշադրությունը բևեռեցին Եփրատի աջափնյակի վրա՝ ձգտելով ամրանալ Միջագետքը Փոքր Ասիային կապող առևտրական ուղիների վրա: Մենուան հայտնում է, որ Ք.ա. մոտ. 796 թ.[3] արշավել է Մելիդ և նրա արքային հարկատու դարձրել[4]: Ք.ա. 781թ. Արգիշտի Մենուաորդին կազմակերպում է հերթական արշավանքը դեպի Մելիդ և կրկին ստիպում կանոնավոր հարկ վճարել[5]: Արգիշտիի տարեգրությունից և Սարդուրի Արգիշտիորդու մի արձանագրությունից հայտնի են դառնում նաև Մելիդի Խիլարուադա[6] արքայի անունն ու հայրանունը՝ «2. ᵐḪi-la-ru-a-da-ni ᵐŠá-ḫu-ḫi[7] LUGÁL ᵁᴿᵁMe-li-ṭè-al-ḫi-e»[8]: Ինչպես արդեն նշվեց, դեպի Մելիդ արշավանք է կատարել նաև Սարդուրի Արգիշտիորդին՝ Ք.ա.

---

t]a-šad šal-la-su [ašlula ištu ᵁᴿᵁUetaš attumuš] 187. a-na ᵁᴿᵁTa-ga-ri-[im-mu āl dannūtīšu aqṭirib ...] 188. a-na GABA-m il-li-k[a!-am-ma šēpēya iṣṣabat maddattašu] 189. at-ta-ḫar GUN ma-da-[tu ina muḫḫīšu aškun ištu ᵁᴿᵁTaganmmu] 190. at-tu-muš a-na URU [...]»(Yamada 2000:214, հմմտ.՝ Grayson 1996: A.0.102.16, ll. 181-190; Millard 1994: 29, 57),

[1] Bryce 2012: 107; Косян 1994: 20.

[2] Բիայնիլի-Ուրարտուի նշված արքաների կառավարման թվականները տրվում են ըստ Ե.Գրեկյանի ուսումնասիրության (Grekyan 2015: 91-105):

[3] Bryce 2012: 255.

[4] «16. LUGÁL ᵁᴿᵁMe-li-ṭè-i-a-al-ḫè 'a-al-du-ú-ni 17. me-[ši-ni pi]i ...»՝ Արտյունյան 2001: № 56, 16-17; Salvini 2008: A 5-5, 16-17.

[5] Ըստ Ե.Գրեկյանի՝ Grekyan 2015: 108 (Appendix 1); Ք.ա.783թ. ըստ Արտյունյան 1970: 159, և Bryce 2012: 255:

[6] Bryce 2012: 1078.

[7] Մանրամասն տե՛ս Bryce 2012: 107f.; Քոսյան 1998: 56 ծնթ. 93, 95(էջ 75, 76), 57, 64; Косян 2002: 193:

[8] Արտյունյան 2001: № 173 II, 6, 14; № 242BI, 22, 28; № 244, 2, 19, 23; Salvini 2008: A 8-3 II, 6, 14; A9-1Vo., 22, 28; A9-4, 2, 19, 23.

756/755 թ.[1]: Խիլարուադան 9 ամրոց կորցնելուց հետո ստիպված ընդունեց Սարդուրիի գերիշխանությունը և պարտավորվեց հարկ վճարել: Տարածաշրջանի երկրները հայտնվում են Բիայնիլի-Ուրարտուի ազդեցության ոլորտում:

Ք.ա.743թ. Ասորեստանի նոր արքա Թիգլաթպալասար III-ին (Ք.ա. 745-727թթ.) հաջողվեց Քիշտանի և Խալպիի մոտ ջախջախել Սարդուրի Արգիշտիորդու և նրա դաշնակիցների ուժերը: Ուրարտուի դաշնակիցների շարքում էին Մելիդը, Կումմուխը, Գուրգումը և այլ հյուսիսսիրիական և արևելափոքրասիական պետություններ[2]:

Ասորեստանյան հերթական արշավանքը դեպի տարածաշրջան տեղի ունեցավ արդեն Ք.ա. 743-738թթ.՝ Թիգլաթպալասար III-ի կառավարման ժամանակաշրջանում[3]: Ք.ա. 738թ. Թիգլաթպալասար արշավում է դեպի Զագրոս և Բիտ-Սանգիբուտիից տեղահանում ու Թեգարամայում վերաբնակեցնում 555 բնակչի[4]: Հետաքրքիր է նաև Թիգլաթպալասարի հաջորդ հաղորդումը, որտեղ Թեգարաման նշվում է որպես Գուրգումի[5] քաղաք[6]:

Թիգլաթպալասար III-ի հաջորդներից Սարգոն II-ն (Ք.ա. 722-705թթ.) իր ուշադրությունն է բևեռում տարածաշրջանի վրա, որտեղ նա դիմում է մի շարք կտրուկ միջոցառումների, որոնց թվում էր նաև ժողովրդագրական իրավիճակի փոփոխությունը[7]: Ք.ա.712թ. Ասորեստանի դեմ ապստամբեց Մելիդի (Կամմանու) արքա Թարխունազին[8]: Սարգոնն արշավեց դեպի Կամմանու և ավերեց Թարխունազիի մայրաքաղաք Մելիդը: Թարխունազին «իր կյանքը փրկելու համար» փախչում է Թիլ-

---

[1] Grekyan 2015: 109 (Appendix 2); և Ք.ա. 753/752թ. ըստ՝ Salvini 1995: 77; Bryce 2012: 266.

[2] Tadmor, Yamada 2011: № 9; № 35, I, II. 21-43.

[3] Yamada 2006: 226-229; Weeden 2010:41ff.; Melville 2010: 85-107; Hawkins, Postgate 1988: 36ff.

[4] *«8. 5 ME 55 9. [šal-la-at KUR].qu-te-e URU.É-<Sa>-an-gi-bu-ti i-na URU.DUL-kar-me (Til-kar-me - Ռ. Յ.)»* - Tadmor, Yamada 2011: № 14, I. 9; № 27, I. 1.

[5] Մանրամասն տե՛ս Bryce 2012: 122-128; Косян 1994: 46-49:

[6] «*URU.DU$_6$-kar-me* (*Til-kar-me - Ռ. Յ.*) šá KUR.Gúr-gu-me» (Tadmor, Yamada 2011: № 35, col. II, I. 14).

[7] Քոսյան 1998: 14-30:

[8] Վերջինս Մելիդի արքա էր նշանակվել Սարգոն II-ի կողմից գահազրկված Գունզինանիի փոխարեն՝ Fuchs 1994: 380-381; Bryce 2012: 109f., 285f.; Yamada 2006: 230f.; Քոսյան 1998: 16:

Գարիմմու (ᵁᴿᵁTíl-kar-me ([{Til}]-Ga-ri-im-me[1]), սակայն Սարգոնին հաջողվում է գրավել նաև Թիլ-Գարիմմուն և գերել Թարխունազիին, նրա կնոջը, ուստրերին ու դուստրերին և նրա 5 հազար ռազմիկների հետ միասին տանել Աշշուր: Թիլ-Գարիմմուն վերականգնվում և վերաբնակեցվում է[2]: Տարածաշրջանում ասորեստանյան արքաները վարում էին զանգվածային գաղթերի ու վերաբնակեցումների ինտենսիվ քաղաքականություն: Քաղաքական իրավիճակի սրումը Արևելյան Փոքր Ասիայում հանգեցրեց տարածաշրջանի էթնոքաղաքական քարտեզի վերաձևմանը[3]:

Ք.ա. 705թ. Սարգոն II-ն անձամբ ղեկավարեց իր վերջին արշավանքը դեպի Թաբալ՝ Կուլումմանցի Գուրդիի դեմ, որտեղ ասորեստանցիները պարտություն կրեցին, իսկ Սարգոնը զոհվեց ռազմի դաշտում[4]:

Թաբալյան ճակատամարտից տասը տարի անց Սարգոն II-ի հաջորդ Սինախխերիբի (Ք.ա. 705–681 թթ.) օրոք Ք.ա. 696 և 695 թթ. ասորեստանցիները կրկին հայտնվեցին արևելափոքրասիական տարածքներում: Ք.ա. 695 թ., Կադմուխիի կուսակալ Աշշուր-բէլ-ուծուրի էպոնիմատի տարում[5]՝ Սինախխերիբն արշավեց դեպի Թիլ-Գարիմմու, որը գտնվում էր Թաբալի տարածքում «*URU.DU₆-ga-rim-me a-lum ša pa-a-ṭi* ᴷᵁᴿ*Ta-ba-li*»[6]: Սինախխերիբն իր տարեգրության մեջ նշում է, որ Թիլ-Գարիմմուում մի ոմն Գուրդի[7] պետություն էր հիմնել: Ասորեստանյան զորքերը հարձակվում են Թիլ-Գարիմմուի վրա և նվաճում այն: Քաղաքն ավերվում և ամայանում

---

[1] Fuchs 1994: 127, l. 210.

[2] «*ᵈ⁽ᵢ⁾Tar-ḫu-na-zi ma-lik-šú-nu ga-du ˡᵘ́mun-daḫ-ṣe-e-šú bi-re-tu ad-[d]i-ma aššas-su mārī-šú mārātī-šú it-ti 5 lim šal-lat ˡᵘ́qu-ra-di-šu a-na ālī-ia Aš-š[ur ub]-la* ᵁᴿᵁ*Til-Ga-ri-im-me a-na eš-šu-ti a[ṣ]-bat nišī ki-šit-ti qātī-ia i-na lib-bi ú-še-rib*» (Fuchs 1994: 127, ll. 210-214).

[3] Косян 2002: 193; Ցականյան 2014: 40-60.

[4] «8. ina lim-me ᵈNIGIN.En ᴸᵁ́ša-kìn ᵁᴿᵁA-me-di LU[GAL ...] 9. ina UGU ᵈQúr(!)-di-i ᴸᵁ́Ku-lum-ma-a-a da-[...] 10. LUGAL GAZ ma-dak-tú ša šàr ᴷᵁᴿAš-šurᵏⁱ lu-[...]» - «8-10. Նասխուր-բելի էպոնիմատի տարում՝ Ամիդի նահանգապետի, ար[քան ...], ընդդեմ Գուրդիի Կուլումմանցու [...] արքան սպանվեց: Ասորեստանի արքայի ճամբարը [...]» (Milard 1994: 48, 60; Glassner 2004: Chron. 9, ll. 8-10).

[5] Millard 1994: 50, 61, 82.

[6] Grayson – Novotny 2012: № 17 Col. V ll. 2-3; հմմտ. նաև № 34, l. 19; Grayson – Novotny 2014: № 44, ll. 24-25; № 143, l. 5.

[7] Վերջինիս վերաբերյալ մանրամասն տե՛ս Քոսյան 1998: 30, 31, 39, 59; ինչպես նաև նույնի՝ 1999: 240, 248:

է[1]: Սակայն արձանագրության տվյալները պարզորոշ ցույց են տալիս, որ ասորեստանցիներն իրենց առջև դրված նպատակին չեն հասել. Գուրդին խուսափել է ասորեստանցիների դեմ բաց ճակատամարտ տալուց և իր ուժերը պահպանելու համար լքել է արքայանիստ քաղաքը: Իսկ ասորեստանցիները քաղաքը կողոպտելուց ու ավերելուց հետո հետ են վերադարձել:

Չնայած այն հանգամանքին, որ Սինախխերիբից հետո տարածաշրջանի նկատմամբ Ասորեստանի հետաքրքրությունները պահպանվում էին, այնուամենայնիվ այն արդեն փաստացի դուրս էր եկել ասորեստանյան գերիշխանությունից[2]: Թեգարամա քաղաքը դադարում է հիշատակվել ասորեստանյան արձանագրություններում:

Ա.Քոսյանի կարծիքով Սինախխերիբից սկսած՝ Մելիդի և Թաբալի տարածքում ձևավորվում է նոր պետություն (պայմանականորեն՝ Թիլ-Գարիմմու), որը բավական կենսունակ քաղաքական միավոր էր և ի վիճակի էր տարածաշրջանային լուրջ գործոնի դեր կատարելու[3]: Իսկ Ի.Դյակոնովի համոզմամբ Ք.ա.VIII դարից Փոքր Ասիայում գոյություն են ունեցել երեք հզոր թագավորություններ՝ Լիդիան, Կիլիկիան և Տուն Թորգման[4]: Մասնագետները գրեթե միակարծիք են այն հարցի շուրջ, որ Սարգոն II-ի պարտությունից հետո ասորեստանցիներին այլևս չի հաջողվել կասեցնել այդ պետության առաջխաղացումը դեպի հարավ-արևելք և արևելք՝ դեպի Եփրատ գետի ձախ ափը[5]:

Հիշատակությունը Աստվածաշնչում

«Թոգարմա - Թորգոմ»-ը Աստվածաշնչում առաջին անգամ հիշատակվում է Ծննդոց գրքում, ապա և 1-ին Տարեգրքում՝ հայերեն Աստվածաշնչի թարգմանության մեջ՝ 1-ին Մնացորդացում (1:5-6), որտեղ նա հանդես է գալիս որպես Նոյ նահապետի երեք որդիներից՝ Հաբեթի շառավիղ ու վերջինիս որդի Գոմերի որդի: «Նրանցից տարածվեցին կղզիների բնակիչները իրենց տարածքներով, բոլորը՝ ըստ իրենց լեզվի, ըստ իրենց տոհմերի և ըստ իրենց ազգությունների» (Ծնն. 10:2-5): Եզեկիելի մարգարեության համաձայն՝ նրանց զբաղեցրած տարածքը գտնվում էր հյուսիսում, որտեղ և նա հիշատակում է «Թորգոմայի տունը» (Եզկ. 38:6): Իսկ ըստ Հովսեփոս Փլավիոսի. «Նոյի որդիները սերունդներ

---

[1] Grayson – Novotny 2012: № 17 Col. V ll. 1-15.

[2] Քոսյան 1999: 240, 244, 251, 252; Ցականյան 2016:

[3] Քոսյան 1998: 32:

[4] Дьяконов 1989: 67.

[5] Ադոնց 1972: 128; Քոսյան 1998: 27; Yamada 2006: 234.

ունեին, որոնց պատվին անձինք՝ տիրելով այս կամ այն երկրին, նրանց բնակիչներին կոչեցին իրենց անուններով: Նոյի որդի Հաբեթն ուներ յոթ որդի: Վերջիններս բնակություն էին հաստատել սկսած Տավրոսի ու Ամանոսի լեռներից մինչև Թանայիս (Դոն) գետը»[1]:

Թորգոմ անունը հին եբրայերենով հիշատակված է *Twgrmh (תוגרמה, կարբերակ՝ תרגמה)*[2], իսկ Եզեկիելի մարգարեությունում արդեն խոսվում է այս անվամբ պետական կառույցի մասին՝«Տուն Թորգոմա»- *«Bêṭ-Tôgarmā» Byt-Tgrmh, Byt-Trgmh (בֵּית תֹּגַרְמָה)*[3] անվամբ, իսկ «Սեպտուագինտա»-ում համապատասխանաբար՝ *Θωγαρμά, Θεργαμά, Θωργομά, Βαιθ-Τ/Θωργο/αμά, Βαιθ-Τ/Θωγαρμά*[4]:

Ելնելով մարգարեությունում այս պետության նկարագրությունից՝ կարելի է ամենայն վստահությամբ նշել, որ այն արդեն կայացած պետական կառուցվածք ուներ, նաև բանակ, որը, բացի իր իսկ սահմանները պաշտպանելուց, կարող էր անգամ օգնություն ցուցաբերել իր սահմաններից դուրս. «Գոմերն ու նրա բոլոր զորախմբերը, *Թորգոմայի տունը*՝ հյուսիսի ամենահեռավոր վայրերից ու նրա բոլոր զորախմբերը. շատ ժողովուրդներ քեզ հետ են» (Եզկ. 38:6): Դեռ ավելին, ըստ նույն մարգարեի՝ «Տուն Թորգոմա»-ն զբաղվում էր նաև առևտրով և ձիաբուծությամբ. «Քո ապրանքները տալիս էիր *Թորգոմայի տնից* բերված ձիերի, նժույգների և ջորիների դիմաց» (Եզկ. 27:14):

Հունա-հռոմեական աղբյուրներ

III-IVդդ. հունա-հռոմեական աղբյուրներում «Տուն Թորգոման» նույնացվում է Հայաստանի հետ: Գ. Սարգսյանն այս առումով նշում է. «Թորգոմի, որպես հայերի նախահոր, գաղափարը, համենայնդեպս,

---

[1] Иосиф Флавий 1996: I, 6:1: Սակայն մեկ այլ տեղ հրեա պատմիչը, ամենայն հավանականությամբ սխալմամբ, հայերին ներառում է Նոյի որդի Սեմի սերունդների ցանկում, որտեղ նա նշում է, որ Հայաստանի սկիզբը դրել է Սեմի որդի Արամի որդին՝ Հուլը (I, 6:4):

[2] BHS 1997: בְּרֵאשִׁית 10:3.

[3] Տե՛ս BHS 1997: קַאל יָעֵן 27:14; 38:6.

[4] Η Παλαιά Διαθηκη 2003, Γενεςις, 10,3; Ιεζεκιηλ, 27, 14; 38, 6: 1401 և 1416 էջերի տողատակերում համապատասխանաբար նշված է՝«Βαιθ-Τωγαρμά. Πιθανώς η Αρμενία – հավանաբար, Հայաստան», և «Βαιθ-Τωγαρμά. Εκπροσωπούν πρωτόγονες φυλές της Αρμενίας – Թորգոմի տունը ներկայացնում է Հայաստանի պարզունակ ցեղերին»: Հետաքրքիր է նաև գրքի վերջին շապիկի վրա զետեղված քարտեզը, որտեղ ամբողջ Հայկական լեռնաշխարհի տարածքը նշված է որպես Θωγαρμά.

ավելի վաղ է վկայված, քան իրականացվել է Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը ... Այսինքն՝ Թորգոմի հայոց նախահայր լինելու գաղափարը V դարի հայ մատենագրության մեջ ծագած մի գաղափար չէ՝ հղացած սոսկ Աստվածաշնչի թարգմանության ներքո, այլ այն գոյություն է ունեցել արդեն ավելի վաղ, նախագրական շրջանում»[1]:

Թորգոմի որդիների նույնացումը հայերի հետ առկա է IIIդ. հեղինակ Հիպպոլիտոս Հռոմեացու՝ մոտ 234/235թ. գրած «Քրոնիկոնում», որտեղ կարդում ենք՝ «*47. Thorgoman, a quo Armenii*[2] (ինչպես նաև՝ «*66. Thorgoma, de quo Armenii*» և «*173. Thargama, ex quo Armeni*»[3])»: Իսկ վերջինիս զուգահեռ հունարեն տեքստում՝ «*68. Θωργαμά α'φ'οι' 'Αρμένιοι*»[4]' «*Թորգոմա, որից (են) հայերը*»: Այսպիսով, Հիպպոլիտոսը հայերի ծագումը բխեցնում է Թորգոմից: IVդ. իր «Քրոնիկոնում» նույնն է անում նաև Եվսեբիոս Կեսարացին՝ «Թորգոմ, և ի նմանէ Հայք»[5], իսկ Vդ.՝ Թեոդորետ Կիպրացին և այլք:

Հայ միջնադարյան աղբյուրները

Հայ պատմիչների երկերում *Տուն Թորգոման* նույնական կամ համարժեք է Հայաստանին[6]:

Առաջին հայ պատմիչը, ում երկում հանդիպում ենք «*տուն, ազգս Թորգոմայ*» արտահայտությունը, Ագաթանգեղոսն է[7], ապա Փավստոս Բուզանդը. «...յիշցուցիչք պատմութեանց *ազգացն Հայաստան աշխարհին որդւոց Թորգոմայ...*»[8]:

---

[1] Սարգսյան 1992: 47:

[2] Die Chronik des Hippolytos 1906: 47, S. 52.

[3] Die Chronik des Hippolytos 1906: 66, 173, S. 53.

[4] Die Chronik des Hippolytos 1906: 68, S.52.

[5] Եւսեբի Պամփիլեայ 1818: 12:

[6] Մովսիսի Խորենացւոյ 1913: I,5; Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ 1996: 14-16; Дьяконов 1968: 178-189, 227-229: Հայ միջնադարյան պատմիչների երկերում, նաև վրացական աղբյուրներում անվան օգտագործման համար տե՛ս Ջանոյան 1990: 34-40:

[7] Ագաթանգեղայի Պատմութիւն Հայոց 1983: § 116 «Ընթերցեալ *զԹորգոմայ ազգիս*, զՀայաստան աշխարհիս...»; § 776 «...յԱյրարատեան գաւառին, ի թագաւորանիստ կայեանսն, բղխեցին Հայոց *տանն Թորգոմայ* շնորհք քարոզութեան Աւետարանին ...»; § 796 «... *յաշխարհիս Հայոց տանս Թորգոմայ...*»:

[8] Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց 1987: 6; 8 «Յաղագս որ ինչ յետ քարոզութեան Թադէոսի Առաքելոյ *յերկիրն Հայաստան աշխարհին*

Սկսած V դարից՝ աստվածաշնչյան ասքերը, հայ բանավոր ավանդազրույցների հետ համադրվելով, ներթափանցեցին հայ պատմագրություն, որի արդյունքում *Թորգոմը* դարձավ հայ ազգի էպոնիմ (անվանադիր) *Հայկ* Նահապետի (հին հայկական աստված, հերոս) հայրը, որտեղից էլ պիտի սկիզբ առներ Հայկազունիների պատմաառասպելական արքայատոհմի պատմությունը: Էթնանունները շատ հաճախ ծագում են էպոնիմներից, ինչի շնորհիվ, և մեծամասամբ նրանք այս կամ այն ժողովրդի համար երկրորդ անուն են: Պատմության ողջ ընթացքում բազմաթիվ նմանատիպ փաստերի կարելի է հանդիպել: Եվ եթե Հայկը դարձավ ազգի անվանադիր, ապա Թորգոմն էլ իր հերթին պահպանեց նախահոր ու դինաստիայի հիմնադրի համբավը: Դրա վառ ապացույցը կարող է հանդիսանալ վաղմիջնադարյան պատմագրության մեջ հայ ազգին «Թորգոմածին» անվանելու փաստը: Այսպիսով, Թորգոմը սրբազաննահապետական *«Տուն-Օջախ»-ի* (հին եբր. Bêṭ և աքքադ. Bīt)»[1] անվանադիրն է: Այստեղ, ինչպես նշում է Ս.Հարությունյանը, առասպելական ժամանակը վերափոխվում էր պատմականի, առասպելական իրադարձություններն անցում էին կատարում դեպի պատմական հիմք և տեղի էին ունենում կոնկրետ-աշխարհագրական միջավայրում[2]:

Հայկական միջավայրում մինչ օրս պահպանվում են սրբազաննահապետական «Տուն-Օջախների» հետքերը: Դրանք կրում են նախնիների բոլոր հին ավանդույթները, որտեղ առաջնային է «Տուն-Օջախի» պահապանի ու շարունակողի կամքը: Հայ հասարակության մեջ առ այսօր առկա է այդ ավանդույթի ուժը, կարելի է հիշատակել թեկուզև այն հանգամանքը, որ հայկական որոշ համայնքներում և մասնավորապես գյուղական, երեխաներին անվանում են ոչ թե անուն-ազգանունով կամ հայրանունով, այլ «Տուն-Օջախ»-ի պահապանի անունով: «Տուն-Օջախներ»-ի նմանատիպ հետքեր շարունակվում են պահպանվել ոչ միայն հայկական միջավայրում, այլև կովկասյան ժողովուրդների, արաբների, հրեաների և այլոց միջավայրում:

Այսպիսով, ակնհայտ է, որ Թորգոմը հայ ժողովրդի «Տուն-Օջախ»-ի նահապետ-պահապանն է, որից էլ և Bêṭ-Torgāmā - «Տուն Թորգոմայ» կամ «Թորգոմի սերունդների տուն», այսինքն՝ Թորգոմի դինաստիա:

որդւոյ Թորգոմեայ»; 104, 284 «Կանոնք ժամանակագիրք մատենից *տան որդւոյ Թորգոմայ* աշխարհին Հայոց»:

[1] CAD 1965: B, 282-286.

[2] Арутюнян 2006: 64.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց 1983, քնն. բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի (աշխարհաբար թարգմ. և ծնթ. Ա. Տեր-Ղևոնդյանի), Երևան:

Ադոնց Ն. 1972, Հայաստանի պատմություն, Ակունքները X-VI դդ. մ.թ.ա., Երևան:

Ավետիսյան Հ.Մ. 2002, Հայկական լեռնաշխարհի և Հյուսիսային Միջագետքի պետական կազմավորումների քաղաքական պատմությունը մ.թ.ա. XVII-IXդդ., Երևան:

Եւսեբի Պամփիլեայ Կեսարացւոյ 1818, Ժամանակականք երկմասնեայ, Մասն Բ, Վէնէտիկ:

Ղազարյան Ռ. 2013, Մուրսիլի II-ի «Տասնամյա» տարեգրությունը, Երևան:

Ղազարյան Ռ. 2016, Խեթական պետության հարավարևելյան սահմանային շրջանը, ՄՄԱԵԺ XXX, 19-30:

Մովսիսի Խորենացւոյ 1913, Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ.Աբեղեան և Ս. Յարութիւնեան, Տփղիս:

Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ 1996, Պատմութիւն Հայոց (թարգմ. և ծանոթ.՝ Գ. Բ. Թոսունյանի), Երևան:

Ջանոյան Գ. Ա. 1990, Միջնադարյան աղբյուրները Թորգոմի, Թորգոմանց, Թորգոմանց Տան մասին, ԼՀԳ 11, 34-40:

Սարգսյան Գ. Խ. 1992, Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» և սեպագրական աղբյուրները (Հայկի և Հայկյանների առասպելի պատմականության և զարգացման փուլերի խնդիրը), ՊԲՀ 2-3, 27-50:

Յականյան Ռ. 2014, Ասորեստանի պատմության պարբերացման հարցի շուրջ, Մերձավոր Արևելք IX-X, 229-246:

Փաւստոսի Բիզանդացւոյ Պատմութիւն Հայոց 1987, բնագիրը Ք. Պատկանյանի, (թարգմ. և ծնթ. Ստ. Մալխասյանցի), Երևան:

Քոսյան Ա. 1998, Տուն Թորգոմայ (առասպել և իրականություն), Երևան:

Քոսյան Ա. 1999, Արամ նահապետը Կապադովկիայում (Մի վարկածի առթիվ), ՊԲՀ 1, 237-259:

Քոսյան Ա. 2000, Խեթական պետությունը և Հայկական լեռնաշխարհի երկրները մ.թ.ա XVդ., ՊԲՀ 3, 161-174:

Քոսյան Ա. 2004, Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյուրների), Երևան:

Քոսյան Ա. 2013, Հին Փոքր Ասիա, Հայաստանի հարակից երկրների պատմություն, I, Երևան, 165-222:

Քոսյան Ա. 2016, Մ.թ.ա. XIV դարի խեթա-հայասական միջպետական պայմանագրերը, Երևան:
Аветисян Г. М. 1984, Государство Митанни (военно-политическая история XVII-XIII вв. до н. э.), Ереван.
Арутюнян Н. В. 1985, Топонимика Урарту, Хурриты и урарты.1, Ереван.
Арутюнян Н. В. 2001, Корпус урартских клинообразных надписей, Ереван.
Арутюнян С. 2006, Основные черты древнеармянской мифологии, ИФЖ 3, 57-66.
Арутюнян Н. В. 1970, Биайнили (Урарту), Военно-политическая история и вопросы топонимики, Ереван.
Гиоргадзе Г. Г. 1965, «Текст Анитты» и некоторые вопросы ранней истории хеттов, ВДИ 4, 87-111.
Дьяконов И. М. 1968, Предыстория армянского народа. История Армянского нагорья с 1500 по 500 г. до н.э. Хурриты, лувийцы, протоармяне, Ереван.
Дьяконов И.М. 1989: Урарту, Фригия, Лидия, История древнего мира, кн. 2, изд. 3-е, И. М. Дьяконов и др. (ред.), Москва, 46-69.
Иосиф Флавий 1996, Иудейские древностиб в 2-х томах, пер. с греческого Г Гепкеля, Москва.
Капанцян Г. А. 1947, Хайаса – колыбель армян. Этногенез армян и их начальная история, Ереван.
Косян А.В. 1994, Лувийские царства Малой Азии и прилегающих областей в XII-VIII вв. до н.э. (по иероглифическим лувийским источникам), Ереван.
Косян А.В. 2002, Лувийцы, фригийцы и мушки (к этнополитической истории Малой Азии в VIII-VII вв. до н. э.), История и языки Древнего Востока: Памяти И.М. Дьяконова, 187-196.
Хачатрян В. Н. 1971, Восточные провинции Хеттской империи, Ереван.
Albayrak I. 2006, Kültepe Tabletleri, IV (Kt. o/k), Türk Tarih Kurumu Yayinlarinden VI/32[b], Ankara.
Barjamovic G. 2008, The Geography of Trade Assyrian Colonies in Anatolia c. 1975 –1725 BC and the Study of Early Interregional Networks of Exchange, in Anatolia and the Jazira during the Old Assyrian period, PIHANS 111, 87-100.
Barjamovic G. 2011, A Historical Geography Of Anatolia In The Old Assyrian Colony Period, CNIP 38, Copenhagen.
Beckman G. 1996, Hittite Diplomatic Texts, Atlanta.

Bloch Y. 2014, The Conquest Eponyms of Šamši-Adad I and the Kaneš Eponym List, JNES 73/2, 191-210.

Bryce T. 2005, The Kingdom of the Hittites, Oxford.

Bryce T. 2012, The World of the Neo-Hittite Kingdoms: A Political and Military History, Oxford.

Burney Ch. 2004, Historical Dictionary of the Hittites, Historical Dictionary of Ancient Civilizations and Historical Eras, № 14, Oxford.

Collins B. J. 2007, The Hittites and their World, Atlanta.

Del Monte G.F.,Tischler J., 1978, Die Orts- und Gewässernamen der hethitischen Texte, RGTC 6/1, Wiesbaden.

Del Monte G.F.1992, Die Orts- und Gewässernamen der hethitischen Texte, RGTC 6/2, Wiesbaden.

Die Chronik des Hippolytos 1906, im Matritensis Graecus 121,von Adolf Bauer, Leipzig.

Eppihimer M. 2013, Representing Ashur: The Old Assyrian Rulers' Seals and Their Ur III Prototype, JNES 72/1, 35-49.

Fuchs A. 1994, Die Inschriften Sargons II. aus Khorsabad, Göttingen.

Gelb J. I. 1935, Inscriptions from Alishar and Vicinity, Researchers in Anatolia, vol. VI (OIP XXVII), Chicago.

Gilbert A. 2015, Religion and Propaganda under the Great Kings of Karkemiš, Studia Asiana 9, Sacred Landscapes of Hittites and Luwians, Proceedings of the International Conference in Honour of Franca Pecchioli Daddi, Florence, February 6th-8th 2014 (eds. A.D'Agostino, V.Orsi, G.Torri), 137-156.

Glassner J.-J. 2004, Mesopotamian Chronicles, Atlanta.

Grekyan Y. 2015, The Regnal Years of Argšti Menuaḫi and Sarduri Argištiḫi, AJNES IX/1, 91-124.

Grayson A. K. 1987, Assyrian Rulers of the Third and Second Millennia BC (to 1115 BC), The Royal Inscriptions of Mesopotamia Assyrian Periods, Vol. 1, Toronto.

Grayson A. K. 1991, Assyrian Rulers of the Early First Millennium BC I (1114-859 BC), The Royal Inscriptions of Mesopotamia Assyrian Periods, Vol. 2, Toronto.

Grayson A. K. 1996, Assyrian Rulers of the Early First Millennium BC II (858-745 BC) Royal Inscriptions of Mesopotamia Assyrian Period, Vol. 3, Toronto.

Grayson A. K., Novotny J. 2012, The Royal Inscriptions of Sennaherib, King of Assyria (704-681 BC), Part 1, The Royal Inscriptions of the Neo-

Assyrian Period, vol. 3/2, Winona Lake.
Grayson A. K., Novotny J. 2014, The Royal Inscriptions of Sennaherib, King of Assyria (704-681 BC), Part 2, RINAP 3/2, Winona Lake.
Gwaltney J. 1983, The Pennsylvania Old Assyrian Texts (HUCA Suppl. 3), Philadelphia.
Hawkins J. D., Postgate J. N. 1988, Tribute from Tabal, SAAB II/1, 31-40.
Hawkins J. D. 2000, Corpus of Hieroglyphic Luwian Inscriptions. Vol. I: Inscriptions of the Iron Age, Berlin and New York.
Hecker K. 1966, Die Keilschrifttexte de Universitätsbibliothek Giessen, Gießen.
Hecker K. - Kryszat G. –Mateuš L. 1966, Kappadokische Keilschrifttafeln aus den Sammlungen der Karlsuniversität Prag, Prag.
Kosyan A. 2006, Arnuwandas I in the East, AJNES I, 72-97.
Kulakoğlu F. 2011, Kültepe-Kaneš: A Second Millennium B.C.E. Trading Center on the Central Plateu, in Ancient Anatolia (10.000–323 B.C.E.), 1012-1030.
Kuzucuoğlu R. 2011, Three Kültepe Texts concerning Rebellions, JNES 70/1, 25-33.
Larsen M. T. 1977, Partnership in old Assyrian trade, Iraq 39/1, 119–145.
Lewy J. 1937, Tabletts Cappadociennes, vol. III, Paris.
Melville S. C. 2010, Kings of Tabal: Politics, Competition, and Conflict in Contested Periphery, in Rebellions and Peripheries in the Cuneiform World, American Oriental Series 91 (ed. S. Richardson), 85-107.
Michel C. and Garelli P. 1997, Cuneiform Texts from Tablettes paléo-assyriennes de Kültepe, vol. 1, Paris.
Millard A. 1994, The Eponyms of the Assyrian Empire 910-612 B. C. (SAAS II), Helsinki.
Nashef K.H. 1991, Die Orts-und Gewässernamen der altassyrischen Zeit (RGTC 4), Wiesbaden.
Parpola S. 1970, Neo-Assyrian Toponyms, Neukirchen-Vluyn.
Salvini M. 1995, Geschichte und Kultur Urartäer, Darmstadt.
Salvini M. 2008, Corpus dei Testi Urartei, I, Le Iscrizioni su Pietra e Roccia i Testi, Roma.
Singer I. 2002, Hittite Prayers, Leiden.
Steadman Sh. R. and McMahon G., 2011, Ancient Anatolia (10.000 – 323 B.C.E.), Oxford.
Tadmor H., Yamada Sh. 2011, The Royal Inscriptions of Tiglath-Pileser III (744-727 BC) and Shalmaneser V (726-722 BC), RINAP 1, Winona

Lake.
Veenhof K. R. 2006, K.T.V., The Archive of Kuliya son of Alī-abum (Kt. 92/k 188-263), Türk Tarih Kurumu Yayinlarinden VI/33ᶜ, Ankara.
Veenhof K. R. 2008, Communication in the Old Assyrian Trading Society by Caravans, Travelers and Messengers, in Old Assyrian Studies in Memory of Paul Garelli (ed. C.Michel), 199-246.
Veenhof K. R. and Eidem J. 2008, Mesopotamia: The Old Assyrian Period (Orbis Biblicus et Orientalis 160/5), Freiburg.
Weeden M. 2010, Tuwati and Wasusarma: Imitating the Behaviour of Assyria, Iraq 72, 39-61.
Yamada Sh. 2000: The Construction of the Assyrian Empire: A Historical Study of the Inscriptions of Shalmaneser III (859-824 BC) Relating to His Campaigns to the West, Leiden.
Yamada Sh. 2006: The City of Togarma in Neo-Assyrian Sources, AfO 33/2, 223-236.
Zsolt S. 2013: Wer war Großkönig I(a)+ra/i-TONITRUS der KARAHÖYÜK, in L. Feliu, J. Llop, A. Millet Albà and J. Sanmartín (ed.)/ Time and History in the Ancient Near East: Proceedings of the 56th Rencontre Assyriologique Internationale of Barcelona 26-30 July 2010,Winona Lake, 823-832.
ΉΠαλαιάΔιαθηκη 2003, Μετάφρασηαπόταπρωτότυπακείμενα, Αθηνα.

THE "HOUSE OF TORGOM" IN WRITTEN SOURCES

Tsakanyan Ruslan
(Institute of Oriental Studies, NAS RA)

In the article the author presents all available written data concerning the city of Tegarama, attested to in ancient Near Eastern, classical, Biblical and medieval written sources (Old/Neo-Assyrian - *Tégarama, Til-Garimmu* Hittite - *Ta/e/ig/k/qaram(m)a*, Luwian - *Lá/í/u-ka+ra/i-ma*, Biblical - *Byt-Tgrmh, Byt-Trgmh* (בֵּיתתּ גַרְמָה), Armenian – *Թեգարամա, «Տուն Թորգոմա»*).

According to Armenian sources, Patriarch Torgom was the father of Hayk - the eponym of Armenian nation. It is obvious that Torgom was the Patriarch of a guardian "House-Hearth" of Armenian people, from whom were named Bet-Torgāmā - "Togarma's House" or "generations of the house of Togarma", i.e. "Torgom's Dynastiy". In later Armenian environment traces of the sacred-patriarchal "House-Hearth" are still visible.

Պ.գ.դ. Փիլիպոսյան Աշոտ
(Խ.Աբովյանի անվ. հայկական պետական
մանկավարժական համալսարան)

ՋՈՐԱՑ ՔԱՐԵ՞Ր, ԹԵ՞Ղ ՔԱՐԱՀՈՒՆՋ, ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆ, ԹԵ՞Ղ ՀՈՐԻՆՅԱԼ «ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆ»

Հայաստանի Հանրապետության հարավում՝ Մեծ Հայքի Սյունիք աշխարհում, առանձնանում է մեգալիթյան մի եզակի հուշարձան, որը հայտնի է Դիք-դիք կամ Ցից-ցից քարեր, Զորաց քար, Զորաց քարեր, Քարեզորք, Ղոշուն դաշ, վերջերս նաև Քարահունջ անվանական տարբերակներով:

Հնավայրի դիրքը, զբաղեցրած տարածքը, ընդհանուր տեսքը, կառուցվածքային մանրամասները, ինչպես նաև տեղանքից հայտնաբերված նյութական մշակույթի մնացորդներն արդեն մեկ դար է, ինչ ոլորտի մասնագետների ու հետաքրքրասերների ուշադրության կենտրոնում են: XIX դ. վերջին հուշարձանը հետազոտել է Եր.Լալայանը[1], 20-30-ականներին՝ Ստ.Լիսիցյանը[2], 50-60-ականներին՝ Ս.Բարխուդարյանը[3], Մ.Հասրաթյանը[4], Վ. Հարությունյանը[5] և Ս.Եսայանը[6], 70-80-ականներին՝ Օ. Խնկիկյանը[7], Է.Պարսամյանը[8], Գ.Արեշյանը, Բ.Սադոյանը, XX դ. վերջին և XXI դ. սկզբին՝ Պ.Հերունին[9] և նրա հետևորդները[10], 2010-2015 թթ.՝ Ա.Փիլիպոսյանը, Ա.Ավագյանը[11] Ա.Բոբոխյանը, Հ. Ավետիսյանը, Ա.Գնունին, Գ.Սարգսյանը[12] և այլք: Եվ այսուհանդերձ, առ այսօր հնավայրը դեռևս մասնագիտական առումով ամբողջապես ու համակողմանի ուսում-

---

[1] Լալայեան 1898: 174, 175; Լալայան 1931: 63, 66, նկ. 14:
[2] Լիսիցյան 1969: տախտակ CXIV:
[3] Բարխուդարյան 1960: 122:
[4] Հասրաթյան 1985: 175:
[5] Հարությունյան 1992: 13:
[6] Եսայան 1972: 65:
[7] Խնկիկյան 1984; Խնկիկյան 1997: 7-8; Xnkikyan 2002: 9, 25-29, 60-61, 65-67, 148, 167, pl. VI-VII, XL, pl. LIII, fig. 1-32, pl. LIV, fig. 5-9.
[8] Парсамян 1985.
[9] Հերունի 1998: 87-93; Геруни 1998: 307-328:
[10] Վահրադյան, Վահրադյան 2010; Բալյան 2010:
[11] Փիլիպոսյան, Ավագյան 2016; Փիլիպոսյան 2016: 24-43; Piliposyan 2016: 101-111:
[12] Ավետիսյան, Գնունի, Բոբոխյան, Սարգսյան 2015:

նասիրված չէ, ինչն էլ բազմաթիվ հակասական, անհավանական, երբեմն նաև բացահայտ ոչ գիտական եզրահանգումների ու մեկնաբանությունների տեղիք է տալիս:

Ակնհայտ է, որ խնդրի համակողմանի վերհանման, քննարկման և անաչառ մեկնաբանման համար առաջնային դեր կարող են խաղալ.

• հուշարձանին և հարակից տարածքներին առնչվող գրավոր աղբյուրների տվյալները,

• պահպանված ժողովրդական ավանդազրույցները,

• հուշարձանի տարածքում կատարված և կատարվելիք հնագիտական հետազոտությունների համադրված տվյալները,

• տեղում պեղված հնամարդաբանական նյութերի ուսումնասիրության արդյունքները,

• նրան առնչվող երկրաբանական, աստղագիտական, հնաբուսաբանական, հնակենդանաբանական և այլ հետազոտությունների տվյալները,

• հուշարձանի պատմամշակութային պատկանելության խնդիրը և այլն:

Այս ամենի գիտական, ամփոփ և համակողմանի ուսումնասիրությունների արդյունքում հնարավոր է.

ա) որոշել հուշարձանի զբաղեցրած իրական սահմանները և տալ դրանց հնարավոր փոփոխությունները հիմնվելու պահից մինչև ավարտը,

բ) խոսել հուշարձանի անվան և դրա հնարավոր ստուգաբանության շուրջ,

գ) հիմնավորել հուշարձանի կառուցման ժամանակն ու օգտագործման ժամանակաշրջանը,

դ) ներկայացնել հուշարձանի տեղանքի ընտրության և կենսատարածքի կազմակերպման առանձնահատկությունները, բնակավայրի և դամբարանադաշտի փոխկապակցվածության և դրանցում կիրառված շինարարական հնարքների մանրամասները,

ե) ի հայտ բերել մոտիկ և/կամ հեռու գտնվող այն քարհանքը (կամ քարհանքերը), որտեղից բերվել են բնակավայրի և դամբարանադաշտի շինարարության համար անհրաժեշտ բազալտե ժայռաբեկորները,

զ) խոսել դրանց տեղափոխման միջոցների և եղանակների մասին,

է) պարզել հնագիտական հուշարձանի դերն ու նշանակությունը,

ը) եզրահանգումներ անել այն կառուցողների և օգտագործողների մասին,

թ) ողջամիտ և իրատեսական վերակազմությունների միջոցով փորձել հուշարձանը ներառել տարածաշրջանի տարաժամանակյա պատ-

մաքաղաքական և սոցիալ-մշակութային իրողությունների ու գործընթացների ոլորտը և այլն:

Անշուշտ, վերը նշված խնդիրների ուսումնասիրման և հիմնահարցերի մեկնաբանման համար անհրաժեշտ կլինի ժամանակ և համբերատար աշխատանք, սակայն, այս ամենով հանդերձ, այժմ արդեն իսկ ձեռքի տակ առկա ուշագրավ տվյալները հուշարձանի վերաբերյալ ամենաանհավանական ու անհեթեթ տեսակետների մերժման և մի շարք նախնական եզրահանգումների առաջադրման հնարավորություն են ընձեռում:

Դիրքը: Հուշարձանը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան քաղաքից մոտ 3 կմ հյուսիս՝ ծովի մակարդակից 1770 մ բարձրություն ունեցող սարահարթում՝ Որոտան գետի Դար (երբեմն անվանում են նաև Դառը) վտակի անդնդախոր ձորի ձախակողմի քարափին (աղ. I, նկ. 1): Աշխարհագրական կոորդինատներն են՝ հս. լ. 39°33′02.52″-ը և ավ. երկ. 46°01′42.96″-ը:

Հնագույն գրավոր հիշատակումները: Քննարկվող տարածաշրջանի մասին տեղեկություններ պարունակող առայժմ ամենավաղ գրավոր սկզբնաղբյուրները Վանի թագավորության (Ուրարտուի) սեպագիր արձանագրություններն են: Վերջիններում թեև որոշակի տվյալներ չկան Զորաց քարեր մեգալիթյան հուշարձանի վերաբերյալ, սակայն հույժ կարևոր նյութեր են պարունակում այս տարածաշրջանի մ.թ.ա. VIII-VII դդ. սոցիալ-քաղաքական գործընթացների մասին: Դրանք վկայված են Սարդուրի II-ի (մ.թ.ա.764-735թթ.) Վանում կանգնեցրած քարագիր տարեգրության համապատասխան հատվածում (աղ. II, նկ. 1)[1] Սիսիանից մոտ 17 կմ արևմուտք՝ Արևիս գյուղից ոչ հեռու՝ Թանահատ վանքի ավերակներում հայտնաբերված Արգիշթի II-ի (մ.թ.ա. 714-685 թթ.) սրբատաշ կոթողի (աղ. III, նկ. 1) սեպագիր արձանագրության մեջ[2] և Արգիշթի II-ի՝ Վանա լճի հարավարևելյան ափին՝ Այանիս ամրոցում՝ Խալդի աստծուն ձոնված susi տաճարի մուտքի աջակողմյան հատվածում[3] (աղ. III, նկ. 2):

Սարդուրի II-ի տարեգրության անհրաժեշտ հատվածը[4] հաղորդում է.

13. ...i-ku-ka-ni MU ta-ra-[a]-ni uš-ta-di ^{KUR}E-ti-ú-ni-e-di ^{KUR}Li-qi-ú-e

---

[1] Меликишвили 1960: 273-275; Арутюнян 2001: 227-229; Марр, Орбели 1922.

[2] Հարությունյան 1979: 93-104; Арутюнян 1983: 195-229; Գայսերյան 1986: 67-79:

[3] Salvini 2001: 258, fig. 10-12.

[4] Меликишвили 1960: 155, A 13-21; Арутюнян 2001: 241, A 13-21.

14. e-di-a ^{KUR}E-di-a-ni URU LUGÁL-nu-si ^{m}A-bi-a-ni-i-ni-i a-gu-nu-ni ma-nu gu-nu-šá-a ḫa-ú-bi
15. ^{URU}Ir-ú-i-a-ni URU LUGÁL-nu-si ^{m}Ir-ku-a-i-ni a-gu-nu-ni ma-nu
16. gu-nu-šá-a ḫa-ú-bi ^{URU}Ir-du-a-ni URU LUGÁL-n[u]-si Ú-e-er-da-i-ni-i a-gu-nu-ú-ni
17. ma-nu gu-nu-šá-a ḫa-ú-bi LUGÁL-ni ^{URU}Bu-i-ni-al-ḫi ^{LÚ}bu-ra šá-tú-bi me-ši-ni pi-i
18. 'a-al-du-bi me-e-še ^{md}Sar$_5$-du-ri-[e a-re-e-dè i-na-ni-li IV É. GAL^{MEŠ}
19. ^{KUR}e-ba-na-ṣi-e ḫa-ú]-bi 'a-še$^{MEŠ\ SAL}$lu-tú^{MEŠ} iš-ti-ni-ni pa-ru-bi
20. III LIM V ME ár-še^{MEŠ} X LIM V LIM ^{LÚ} ú-e-di-a-ni IV LIM LÚ^{MEŠ} gu-nu-ši-ni-i
21. pa-ru-ú-bi VIII LIM V ME XXV ^{GUD}pa-ḫi-ni pa-ru-bi ^{UDU} šú- še^{MEŠ} pa-ru-bi ...

13. ... Նույն կարում երկրորդ անգամ (ես) շարժվեցի Էթիունի (երկրի), Լիքի (երկրի)
14. կողմը: Էդիանի (քաղաքը[1]), արքայական քաղաքն Աբիանի (առաջնորդի), (որ) ամրացվել էր, մարտում (ես) գրավեցի:
15. Իրուիա(նի) (քաղաքը), արքայական քաղաքն Իրկուա(ինի) (առաջ-նորդի), (որ) ամրացվել էր,
16. մարտում (ես) գրավեցի: Իրդուա(նի) (քաղաքը), արքայական քաղաքն Ուերդա(ինի) (առաջնորդի), (որ) ամրացվել
17. էր, մարտում (ես) գրավեցի: Բ/Պուինի(ալխի)[2] (քաղաքի) արքային (ես) ծառա դարձրի (և) վրան հարկ
18. կարգեցի, (որպեսզի նա) հարկատու լինի Սարդուրի (արքային): Այս չորս ամրոցները
19. երկրներում ես նվաճեցի: Տղամարդկանց, կանանց այստեղից (ես) գաղթեցրի:
20. 3500 պատանի, 15000 կին, 4000 զինվորներ
21. (ես) տարա: 8525 (գլուխ) խոշոր եղջերավոր անասուն (այստեղից ես) քշեցի: 18000 (գլուխ) մանր եղջերավոր անասուն (այստեղից ես) քշեցի...

---

[1] Տեքստում URU «քաղաք» բացահայտչի փոխարեն ուրարտացի գրչի կողմից սխալմամբ փորագրվել է KUR «երկիր» բացահայտիչը: Տեքստի շարունակությունը հաստատում է, որ խոսքը ոչ թե երկրի, այլ ամրացված «քաղաքի»՝ բնակավայրի մասին է: Վերծանման մեջ այն ներկայացվում է «քաղաք» ձևով:

[2] Քաղաքի անվանումը կարող է ընթերցվել և՛ Բուինի(ալխի), և՛ Պուինի(ալխի) ձևով, քանի որ Վանի թագավորության սեպագրության մեջ bu- և pu- վանկերը ներկայացված են միևնույն սեպանշանով:

Գ.Մելիքիշվիլու կարծիքով Սարդուրի II-ի տարեգրության անհրաժեշտ հատվածում ներկայացված են մ.թ.ա.751-750թթ. վերաբերող դեպքեր, որոնք տեղի են ունեցել Հարավային Անդրկովկասում[1]: Ըստ այդմ, ժամանակին՝ Սյունիքի հարավային հատվածի տեղանվանական հարցերը քննարկելիս, հիմնականում առաջին պլան էր մղվում այն հանգամանքը, որ տարեգրության համապատասխան հատվածում նշված է Էթիունի (հանդիպում է նաև Էթիուխի ձևով) համադաշնության անունը: Վերջինս զբաղեցնում էր մի ընդարձակ տարածք Սարիղամիշից մինչև Սևանա լիճը և Գուգարքից մինչև Արաքս գետի ավազանը[2], ուստի տեղանվանական մեկնաբանություններն էլ արվում էին այդ միջնատարածքի սահմաններում, և Էթիունիի հետ հանդիպող տեղանուններն ու ցեղանուններն ընկալվում էին որպես համադաշնության երկրամասեր՝ առանց ստույգ տեղորոշման:

Այս առումով հարցադրումն ավելի որոշակիացավ 1975թ., երբ Թանահատ վանքի մերձակայքում հայտնաբերվեց մ.թ.ա. VIII դ. վերջին կամ մ.թ.ա. VIIդ. սկզբին Արգիշթի II-ի սեպագիր քարակոթողը: Այն ուրարտական **pulusi**-ների դասական օրինակ է, քառանիստ կառուցվածք ունի և դիմային ու հակադարձ երկու լայն նիստերին սեպագիր արձանագրություններ կան: Սրբատաշ քարակոթողը, հավանաբար X-XI դդ., կրկին մշակման է ենթարկվել: Միջնադարի քարագործ վարպետը կոթողի մեկ նիստի վրա փորագրություններ է արել և այն վերածել խաչքարի՝ դրանով իսկ վնասելով այդ նիստի սեպագիր տեքստի հիմնական մասը: Կոթողի հայտնաբերումից, մաքրումից և ամրակայումից հետո վերծանվեցին, ընթերցվեցին ու հրապարակվեցին դիմային և հակադարձ նիստերին պահպանված տեքստերը[3]: Դրանք հայտնում են.

Դիմային կողմ

1. [d][Ḫal-di-e] [e-[ú-ri]-[i-e
2. [i-ni pu-lu-si mAr-giš-ti-še]
3. [m]R[u-sa-ḫi-ni-še ku-g]u-[ú-ni]
4. ul-gu-š]i-[ja-ni e-di]-ni
5. [ma-ni-ni [d][Ḫal-[di-ni-bi-di]
6. [mAr-gi-iš-ti-e]
7. [mRu-sa-a-ḫi-ni-i-e]
8. [a-ru]-ú-še [e-ku-ú-še]
9. [iš-pu-i-še ul-gu-ú-še]
10. [pi-ṣu-ú-še ai-su-še]
11. [e-ja] ar-[di-i-še]
12. [ar-a-ni uš-ma-a- še]
13. [dḪal-di-ni-ni al]-su-ši-[ni]

.....

??. [...l] UDMEŠ-ni aš-[gu-bi]

.....

---

[1] Меликишвили 1960. 300, 301, 430, 431.

[2] Арутюнян 1985. 262, 263.

[3] Арутюнян 1983. 212-215.

Հակադարձ կողմ

1. [nu]-na-bi ka-gu-ki ^{m}[... LUGÁL]
2. ^{KUR}E-ti-ú-ḫi a-[ru-me me-še]
3. ^{KUR}e-ba-ni-e a-li-li URU$^{M[EŠ]}$
4. ba-ši-a-li lu(?)-a-u-li(?) e-si
5. a-li-li gu-nu-ši-ni-e
6. a-ri bi-ri [i]š-ti-ni [LÚ-tú]-ḫi-ni
7. za-du-bi 'a-še ^{SAL}lu-tú ši-ú-bi
8. URU^{MEŠ} GIBÍL É.GAL^{MEŠ} [ḫar-ḫar-šu-bi]
9. [i-ši-a-ṣi-e šú-ga šu-i-ni-ni
10. gu-nu-še ma-a-nu ma-ri-n[i]
11. ^{KUR}Ṣu-lu-qu-ú-e [e]-di-ni
12. ^{URU}Ir-du-a-ka-l nu-na-bi
13. ka-gu-ki ^{m}Za-zi-nu bu-ra šá-tú-bi
14. me-še e-di-a te-ru-bi ^{d}Ḫal-di-ni-ni
15. al-su-i-ši-ni iš-te-di
16. ^{m}Ar-giš-ti-ni ^{m}Ru-sa-a-ḫi
17. LUGÁL DAN. NU LUGÁL ^{KUR}Bi-a-na-a-ú-e
18. a-lu-si ^{URU}Ṭu-uš-pa-a UR[U]
19. ^{d}Hal-di-ni-ni ba-ú-ši-ni
20. ^{m}Ar-giš-ti-še a-li i-si-n[i]
21. ^{d}UTU-ni-ni ni-ir-ḫi si-bi-[...]
22. a-šá-di i-ni ḫa-a-ri-[ni]
23. ^{URU}A-mu-šá-di 'a-ši-[ni-e]
24. ^{SAL}lu-tú-ni-e ^{KUR}Bi-[a-na-di]
25. ^{m}Ar-giš-ti-še [a-li-e]
26. [a]-lu-še ti-ni-ni [tú-li-e]
27. ma-si t[i-ni te-li-i e-a-i]
28. [^{KUR}Bi-a-i-ni-še e-a-i]
29. [^{KUR}lu-lu-i-ni-še e-a-i]
30. [^{d}IM-še ^{d}UTU-ni-še DINGIR^{MEŠ}-še]
31. [me-i ti-i-ni me-i]
32. [ar-mu-zi-i me-i]
33. [zi-il-bi-l qi-ú-ra-i-di]
34. [ku-li-e tú-ú-ni]

Դիմային կողմ

1. Խալդի (աստծուն), փիրոջը,
2. այս կոթողը Արգիշթին՝
3. Ռուսայի որդին կանգնեցրեց,
4. (իր) կյանքի համար:
5. Թող լինի Խալդի (աստծո) կողմից
6. Արգիշթի (արքային)
7. Ռուսայի որդուն
8. բարերարություն, ekuše (?),
9. երջանկություն, կյանք,
10. ուրախություն, վեհություն,
11. ինչպես նաև իշխանություն,
12. ուժ (և) հզորություն:
13. Խալդյան զորությամբ...

.....

??. ... մեկ օրում (ես) նվաճեցի...

.....

Հակադարձ կողմ

1. Ինձ ներկայացավ ... արքան
2. Էթիուխի երկրի, փվեց հարկը
3. (իր) երկրի: Որոշ քաղաքներ
4. լսեցին ..... տեղում:
(?) դիակիզմանը (?) [եկան ?]:
5. Որոշ զորաջոկատներ
18. Տերը Տուշպա քաղաքի:
19. Խալդյան հրամանով
20. Արգիշթին ասում է. Ամենքը (?)
21.Շիվինի աստծո [տաճարի] քրմապետի
22. Գնացի (ես) այդ ճանապարհով (դեպի)

6. ari biri (?)[1]: Այստեղ ջարդ 23. Ամուշա (քաղաքը), տղամարդկանց,
7. (ես) արեցի, տղամարդկանց, կանանց տարա, 24. կանանց քշեցի Բիայնա (երկիրը):
8. քաղաքներն այրեցի, ամրոցներն ավերեցի: 25. Արգիշթին ասում է.
9. Išiaṣie (?) բոլորը միասին: 26. ով (իմ) անունը ոչնչացնի
10. Ճակատամարտ եղավ: Մեծավորները 27. (և) իր անունը տեղադրի, լինի (նա)
11. Ծուլուկու (երկրի) այնտեղից 28. բիայնացի, (թե) լինի
12. (եկան և) Իրդուա քաղաքի դիմաց կանգնեցին 29. թշնամի, թող Խալդի (աստվածը)
13. իմ առջև: Զազինու արքային ես ստրկացրի, 30. Թեյշեբա (աստվածը), Շիվինի (աստվածը),
14. հարկ սահմանեցի: Խալդյան բոլոր (մյուս) աստվածները
15. զորությամբ արշավող (?) 31. ոչ (նրա) անունը, ոչ
16. Արգիշթին՝ Ռուսայի որդին, 32. սերմը, ոչ
17. արքա է հզոր, արքան Բիայնա (երկրի), 33. սերունդը երկրի վրա
34. չթողնեն:

Արձանագրությունը տալիս է դեպի Էթիուխի ցեղային համադաշնության արևելյան շրջաններն Արգիշթի II-ի կատարած արշավանքի նկարագրությունը: Ըստ որում, դատելով տեքստից, թեև Էթիուխիի առաջնորդն անձամբ ներկայացել է Արգիշթի II-ին, տվել համադաշնության հարկը ու հայտնել իր հնազանդությունը, այսուհանդերձ տվյալ պահին նրա իշխանության տակ գտնվող հարավային որոշ քաղաքների կառավարիչներ Ծուլուկու երկրի առաջնորդ Զազինուի գլխավորությամբ ընդդիմացել են ուրարտական արքային, զորաջոկատներ ուղարկել երկրի կոնկրետ շրջանը և պատրաստվել դիմադրության: Անհավասար մարտում ընդդիմադիրներն անհաջողություն են կրել և արդեն ստիպված, Ծուլուկուի ծերակույտը երկրի Իրդուա քաղաքի առջև ներկայացել է Արգիշթի II-ին, ընդունել նրա պարտադրած պայմանները և ողորմածություն հայցել: Զազինու առաջնորդը ստրկացվել է և պարտավորվել հարկ վճարել: Տեքստից պարզվում է, որ անգամ այս ամենից հետո Ծուլուկու երկրի մեկ այլ քաղաքի՝ Ամուշայի ըմբոստ բնակիչները չեն հնազանդվել Արգիշթի II-ին, շարունակել են դիմադրությունը, և միայն զգալի կորուստների գնով Արգիշթի II-ին հաջողվել է վերջնականապես հնազանդեցնել նրանց, բնակչության մի մասին տեղահանել ու քշել դեպի Բիայնա երկիր, ապա

---

[1] Թերևս նշանակում է «ընդդիմացան, ըմբոստացան, ապստամբեցին»:

ներկայիս Թանահատ վանքի մոտ կանգնեցնել իր հաղթական արձանագիր կոթողը: Վերջինս ոչ միայն կարևոր տեղեկատվություն է պարունակում Վանի թագավորության (Ուրարտուի) գերիշխանության շրջանում պատմական Սյունիքում և մասնավորապես ժամանակակից Սիսիան քաղաքին հարակից տարածքներում մ.թ.ա. VIIIդ. վերջին և VIIդ. առաջին քառորդին տեղի ունեցած դեպքերի մասին, այլև հնարավորություն է ընձեռում տեղանվանական վերակազմություններ իրականացնելու: Ըստ այդմ, բացառիկ նշանակություն ունի Էթիունի (Էթիուխի) համադաշնության Ծուլուկու երկրանվան հիշատակումը, որը մասնագետների կարծիքով տեղորոշվում է Սիսիանի տարածաշրջանում և ուղղակիորեն կապված է միջնադարյան Սյունիքի Ծղուկ գավառի անվան հետ[1]: Արձանագրության մեջ հիշատակվող Ծուլուկու երկրի Իրդուա և Ամուշա քաղաքների անվանումների արձագանքները ևս, Ն.Հարությունյանի կարծիքով, հնարավոր է նկատել Սյունիքի Ծղուկ գավառում XIVդ. պատմիչ Ստ. Օրբելյանի հիշատակած Մուցք, Արիտ և Արթեք բնակավայրերի անուններում[2]:

Սարդուրի II-ի և Արգիշթի II-ի վերը քննարկված տեքստերը մեզ ներկայացնում են նաև Ծուլուկու երկրի երկու առաջնորդների (գուցե՝ արքաների) անունները՝ Ուերդա և Զազինու, ովքեր շուրջ 50-60 տարվա տարբերությամբ իշխել են Ծուլուկու երկրում: Այսօր առայժմ որևէ որոշակի փաստ չկա հիմնավորելու վերջիններիս իշխանական հերթափոխությունը (նրանց միջև պետք է որ 2-3 սերնդի տարբերություն լինի) կամ ազգակցական - ժառանգական կապը, սակայն հավանական է թվում այն հանգամանքը, որ և՛ Սարդուրի II-ի մ.թ.ա. 751-750թթ. արշավանքից հետո, և՛ Արգիշթի II-ի օրոք՝ մ.թ.ա. VIIIդ. վերջին կամ մ.թ.ա. VIIդ. սկզբին (երբ Վանի թագավորության արտաքին և ներքաղաքական իրավիճակը բարդ էր) Ծուլուկու երկրի ներքին կառավարումը մնացել է տեղի վերնախավի ձեռքում: Ավելին, Սարդուրի II-ի կողմից մ.թ.ա. VIIIդ. կեսին քննարկվող տարածքից տարված 8525 գլուխ խոշոր և 18000 գլուխ մանր եղջերավոր անասունների, գերեվարված 3500 պատանիների, 15000 կանանց և 4000 զինվորների ընդհանուր քանակը (դրան ավելացրած Արգիշթի II-ի մ.թ.ա. VIII դ. վերջի կամ մ.թ.ա. VIIդ. սկզբի ավարը) վկայում է տեղում մ.թ.ա. VIII-VIIդդ. ձևավորված, տնտեսական զգալի հնարավորություններ, ինչպես

---

[1] Արտյոնյան 1981: 78-79; Արտյոնյան 1983: 217-218; Արտյոնյան 1985: 236-237; Ստեփաննոս Օրբելեան 1910: 325, 509; Աբրահամյան 1944: 350; Երեմյան 1963: 109, 110; Ստեփանոս Օրբելյան 1986: 394, 395:

[2] Արտյոնյան 1983: 218.

նաև մարդկային ու ռազմական լուրջ ներուժ ունեցող ցեղային միության, գուցեև վաղպետական կազմավորման մասին:

Այս հանգամանքը յուրովի հաստատում է նաև Վանա լճի հարավարևելյան ափին՝ Այանիս ուրարտական ամրոցում՝ Խալդի աստծո **susi** տաճարի մուտքի աջ (միջանցքային) հատվածում, Ռուսա II-ի թողած սեպագիր տեքստը: Դրա 10-11-րդ տողերում՝ արձանագրված է.

10. ᵐru-sa-a-še ᵐar-giš-te-ḫi-ni-še a-li pa-ru-ú-bi LÚ ᴹᵁᴺᵁˢlu-[tú-ni] ᴷᵁᴿlu-lu-i-na-ni ᴷᵁᴿaš-šur-ri-ni

11. ᴷᵁᴿtar-gu-ni ᴷᵁᴿe-ti-ú-ni ᴷᵁᴿtab-la-ni ᴷᵁᴿqa-i-na-ru-ú ᴷᵁᴿḫa-a-te-e ᴷᵁᴿmu-uš-ki-ni ᴷᵁᴿṢi-lu-qu-ni-ni

10. Ռուսա Արգիշթորդին ասում է. Տարա փղամարդկանց, կանանց [ու անասունը] թշնամի երկրների՝ Աշշուրի,

11. Թարգունիի, Էթիունիի, Թաբլանիի, Քայնարուի, Խաթեի, Մուշքինիի, Ծիլուկուի...

Այանիսի տեքստի բերված հատվածում հատկանշական է այն, որ Ծուլուկու երկիրը (այստեղ ներկայացված է «Ծիլուկու» տարբերակով) մ.թ.ա. VIIդ. առաջին կեսին որպես հակառակորդ կողմ հիշատակվում է Վանի թագավորության (Ուրարտուի) հզոր ախոյաններ Աշշուրի (Ասորեստան), Խաթեի (խեթական թագավորության տրոհումից հետո ձևավորված պետական կազմավորում), Մուշկերի երկրի և Էթիունիի կողքին: Այս համատեքստում շատ հրապուրիչ է թվում ժամանակին, ըստ ամենայնի, Ծուլուկու երկրի կողմից վերահսկվող տարածքում տեղորոշված Զորաց քարերի երկաթեդարյան ամուր բնակատեղին կապելու Սարդուրի II-ի և Արգիշթի II-ի մոտ հիշատակվող տեղի բնակավայրերից որևէ մեկի և մասնավորապես Իրդուա կամ Ամուշա «քաղաքների» հետ: Սակայն դա հապճեպ և առայժմ ոչնչով չհիմնավորված մոտեցում կարող է լինել: Կարծում ենք, որ հետագա պեղումները դեռ հնարավորություն կտան հուշարձանի տարածքում ավելի հիմնավոր նյութեր և, չի բացառվում, գրավոր սկզբնաղբյուրներ գտնելու ու դրանց հիման վրա ավելի որոշակիացնելու ինչպես ընդհանուր տարածքի, այնպես և բուն հուշարձանի հին անվանումները:

Այս համատեքստում, թերևս, հարկ կա անդրադառնալու նաև Զորաց քարեր հնավայրին վերջերս կամայականորեն հարմարեցված «Քարահունջ» անվանը: Բանն այն է, որ այդ «նորարարության» հեղինակ,

---

[1] Salvini 2001: 258, fig. 10-12.

ֆիզիկոս Պ.Հերունին, որոշ արտաքին կառուցվածքային նմանություններ տեսնելով բրիտանական Սթոունհենջի և հայաստանյան Զորաց քարերի միջև, փորձել է վերջինիս ևս «հնագույն աստղադիտարանի» կարգավիճակ շնորհել և որպես «լուրջ» հիմնավորում պնդել, որ Զորաց քարերի հին անվանումը Քարահունջն է[1]: Այս ենթադրության հիմքում ընկած է այն մտայնությունը, որ Սթոունհենջի անվան "stone-" արմատը և Քարահունջի «քար-» սկզբնամասը նույն իմաստն ունեն, ուրեմն խնդրո առարկա տեղանուններում նույնիմաստ կարող են լինել նաև անգլիական "-henge" և հայերեն «-հունջ» վերջնամասերը: Ըստ այդմ «Սթոունհենջ» բառացի կարող է նշանակել հենց «Քարահունջ»: Ուստի երկու հուշարձանները «նույնական են» և՛ կառուցվածքով, և՛ գործառույթով, և՛ անվանումներով: Իրականում Քարահունջ բնակավայրը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաքից մոտ 4 կմ հարավ[2], այսինքն՝ Զորաց քարեր հնավայրից շուրջ 35 կմ հեռավորության վրա և մեծագույն երևակայության դեպքում անգամ ոչ մի կերպ չի կարող նույնացվել վերջինիս հետ: Պետք է ավելացնել նաև, որ Քարահունջ անվամբ մեկ այլ բնակավայր կա Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանում, Քարահունջ գյուղատեղի (բերդ)՝ Լեռնային Ղարաբաղի Գյուլիստանի գավառում՝ Մռավ լեռան արևմտյան լանջին, Քարահունջ անվամբ լեռ և գետ՝ Արաքսի և նրա Որոտան վտակի միացման շրջանում՝ Զանգեզուրի լեռնաշղթայում, Քարինջ անվամբ բնակավայր՝ ՀՀ Լոռու մարզում և Քարինջ (Քարունջ) անվամբ գյուղ՝ Վանի նահանգի Հաքյարի գավառում[3]: Ուստի հետևելով ֆիզիկոս Պ. Հերունու վառ երևակայությանը՝ պետք է եզրակացնել, որ Հայկական լեռնաշխարհը ժամանակին ողողված է եղել Սթոունհենջ-Քարահունջ անվամբ «աստղադիտարաններով», ինչն առասպելների որոտից է[4] ...

Նյութական մշակույթը: Զորաց քարերի մասին կարևոր տեղեկություններ են տալիս նաև բուն հուշարձանից և նրա շրջակայքից հավաքված նյութական մշակույթի մնացորդները: Դեռևս 1930-ական թթ. այս տարածքից հնագիտական նյութեր է հավաքել ազգագրագետ Ստ. Լիսիցյանը (աղ. IV, նկ. 1)[5], իսկ 1980-ական թթ. Զորաց քարերում

---

[1] Հերունի 1998: 87-93:

[2] Հակոբյան, Մելիք-Բախշյան, Բարսեղյան 2001: 314, 321:

[3] Հակոբյան, Մելիք-Բախշյան, Բարսեղյան 2001: 314, 315, 321, 325, 326:

[4] http://armarchaeology.blogspot.com/2011/03/stonehenge.html, Հ. Մարտիրոսյան, *Քարահունջ - Stonehenge. Առասպելի վերջը:*

[5] Ներկայումս դրանք Հայաստանի պատմության թանգարանի թիվ 962 հնագիտական հավաքածուն են կազմում:

երկաթեդարյան դամբարաններ է պեղել Օ. Խնկիկյանը (աղ. IV, նկ. 2)[1]:

Զորաց քարերում հնագիտական աշխատանքները վերսկսվեցին 2013թ.: Դրանք մեկ անգամ ևս հաստատեցին հնավայրի տարածքում բնակավայրի և նրան կից դամբարանադաշտի առկայությունը: Բնակավայրը զբաղեցնում է հուշարձանի հյուսիսային հատվածը, շրջափակված է տեղ-տեղ մինչև 2,0 մ բարձրության հասնող կոպտաշար պարսպով (աղ. I, նկ. 2) և ունի մուտք, որը հարավային կողմից է: Բնակավայրում նկատելի են ուղղանկյունաձև կառույցների, բոլորաձև շինության, թաքստոցների և տնտեսական հորերի մնացորդներ, որոնք տևական ժամանակահատվածում (մ.թ.ա. XIXդ. մինչև մ.թ. XIVդ.) բազմիցս փոփոխվել ու վերակառուցումների են ենթարկվել:

Դամբարանադաշտը կից է բնակավայրին հարավից և տարածվում է դեպի Որոտան գետի Դար վտակի ձախակողմյան ափամերձ լանջի հատվածը: Երեք տասնյակից ավելի մեծ դամբարաններ քանդված են և թալանված: Դրանց մի մասի դամբանախցերի երկարությունը 13-15, իսկ լայնքը 3,0-4,5 մետր է: Դամբարանների կառուցման համար անհրաժեշտ շինանյութը բերվել է մոտ 1,0 կմ արևելք գտնվող բլրակից, որը ժամանակին քարհանք է ծառայել[2]: Այսօր էլ այդ տարածքում կան տեղաշարժված զանգվածեղ ժայռաբեկորներ, որոնք ժամանակին խոտանվել և թողնվել են տեղում: Վերջիններիս վրա հստակ նկատելի են հին մշակման հետքեր: Մասնակի մշակված քարաբեկորների բրգաձև կառուցվածքը ժամանակին կարևոր դեր ու նշանակություն է ունեցել: Մեծ դամբանախցերի վերին մակերեսները կրճատելու և դրանք փոքր ծածկասալերով փակելու համար անհրաժեշտ է եղել յուրահատուկ ծածկի՝ «կեղծ թաղի» կառուցում[3]: Դրա համար քարհանքում հատուկ առանձնացվել են զանգվածեղ, ծանր հիմք և նեղ ու բարակ վերնամաս ունեցող քարաբեկորները, որոնց առավել դյուրին ու անվնաս տեղափոխման համար յուրաքանչյուրի նեղ ու բարակ վերնամասում 5,0-10,0 սմ-անոց անցք է բացվել: Վերջիններիս ներքին մակերեսները հնարավորինս մշակվել են ու հարթեցվել: Դա կատարվել է, որպեսզի տեղափոխման ժամանակ անցքերով անցնող պարանները, փորվածքների ներսի հատվածին առկա անհարթություններին քսվելով, արագ չմաշվեն: Այնուհետև երկարավուն (մինչև 3,5-4,0 մ երկարությամբ), զանգվածեղ (3,0-4,0 տոննայից ոչ պակաս քաշով) այդ քարաբեկորները մեծ դամբանախցերի երկայնական երկու կողմերից

---

[1] Xnkikyan 2002: 65-67, ill. 4, pl. VI-VII, XL, pl. LIII, fig. 1-32, pl. LIV, fig. 5-9.

[2] Փիլիպոսյան, Ավագյան 2016: 12:

[3] Խաչատրյան 1982: 227-232:

տեղադրվել են այնպես, որ համեմատաբար բարակ ու նեղ հատվածները լինեն կառույցի վերնամասում, իսկ ծավալուն ու ծանր մասերը հենվեն դամբանապատերի վրա: Նման կառուցվածքի շնորհիվ «կեղծ թաղի» բրգաձև քարաբեկորները մի կողմից կրճատել են դամբանախցի վերնամասի թռիչքը, իսկ մյուս կողմից՝ իրենց վրա տեղադրված ծածկասալերի ծանրության տակ չեն շրջվել դամբանախցի մեջ:

Հենց այդպիսին է դամբարանադաշտի կենտրոնական հատվածում գտնվող և 2013-2015 թթ. Զորաց քարերի հանգիտական արշավախմբի կողմից հետազոտված այն հայտնի դամբարանը (աղ. V, նկ. 1, 2), որը մի խումբ ոչ մասնագետներ այսօր միտում ունեն նույնացնելու «աստղադիտարան» (այն էլ նեոլիթ-էնեոլիթյան ?) երևույթի հետ: Իրականում խնդրո առարկա դամբարանային կառույցն օղակված է շուրջ 18,0 մ տրամագիծ ունեցող կրոմլեխով, որի կենտրոնում մոտ 7,0 մ երկարությամբ և 3,0 մ լայնքով դամբանախուցն է՝ կողմնորոշված արևմուտքից արևելք: Կրոմլեխի ներքին տարածքը՝ մինչև դամբանախցի պատերը, ամբողջությամբ պատված է մանր քարալիցքով (աղ. VI, նկ. 1, 2): Կրոմլեխի շրջանաձև շարի արևմտյան եզրից սկսվում է մոտ 1,0 մ լայնք և շուրջ 7,0 մ երկարություն ունեցող, քարաշար, ստորգետնյա դրոմոս, որը, ձգվելով դեպի արևելք, միանում է արևմուտք-արևելք կողմնորոշում ունեցող դամբանախցին: Վերջինիս միջից պեղման աշխատանքների ընթացքում ի հայտ եկան մ.թ.ա. I հազ. առաջին կեսով թվագրվող սև, գորշ, բաց դարչնավուն խեցանոթների բեկորներ, ինչպես նաև նույն ժամանակներին (մ.թ.ա. X-VIII/VIIդդ.) վերաբերող երկաթե 2 նիզակների և կեռ դաշույնի մնացորդներ (աղ. IV, նկ. 3): Սրանք վկայում են, որ դամբանախցում արված թաղումը վերաբերում է երկաթի դարաշրջանին:

Դամբարանային կառույցն ունի մի կարևոր առանձնահատկություն ևս: Այն շրջափակված է անկանոն-շրջանաձև շարվածքով երկրորդ կրոմլեխով, որի միջին տրամագիծը շուրջ 50 մ է: Կրկնակի, նաև եռակի վերգետնյա նման շարերով դամբարաններ հայտնի են Հայաստանի ուշբրոնզեդարյան-երկաթեդարյան այլ հուշարձաններից ևս (Ներքին Գետաշեն, Քանագեղ, Վերին Նավեր, Գավառ, Թալին և այլն)[1]: Դրա պատճառն այն է, որ համեմատաբար ավելի ուշ ժամանակներում նույն դամբանախցում կրկին թաղում է իրականացվել, և վերջինիս համար շարվել է նոր կրոմլեխ: Այդ դեպքում արդեն հին դամբարանն արտաքուստ ստացել է կրկնակի կրոմլեխով շրջափակված կառույցի տեսք: Ըստ որում

---

[1] Փիլիպոսյան, Հովհաննիսյան 1991: 33-35: Փիլիպոսյան, Մկրտչյան, Կիրակոսյան 2002: 43-49; Սիմոնյան 2006: Նկ. 4, աղ. XVIII, XXIII, LIII, LXIX:

դրա երկու կրոմլեխային շարերի կառուցվածքային տարբերությունները վկայում են, որ վերջիններս տարաժամանակյա գործողությունների արդյունք են: Առաջին՝ 18-մետրանոց կրոմլեխը շարվել է ավելի վաղ (թերևս ուշբրոնզեդարյան է), իսկ երկրորդը՝ մեծը, ըստ ամենայնի, վերաբերում է մ.թ.ա. X-VIII/VIIդդ. այն թաղմանը, որի մնացորդներն արշավախումբը հայտնաբերեց 2013-2015թթ. պեղումների ժամանակ:

Դամբանախցի մաքրման ու պեղման ընթացքում ձեռք բերվեց մի կարևոր տեղեկույթ ևս: Բանն այն է, որ խցից հանված ծածկասալերի տակ, խառնված հողաշերտի մեջ հայտնաբերվեցին նաև զարգացած միջնադարին (XI-XIIIդդ.) վերաբերող խեցեղենի և մուգ կապտավուն ապակուց պատրաստված ապարանջանի բեկորներ: Այս առումով առայժմ միակ ենթադրությունն այն է, որ միջնադարում՝ հավանաբար սելջուկյան կամ մոնղոլական ավերիչ արշավանքների ժամանակ, գուցե նաև դրանցից հետո էլ, նման մեծ, գետնափոր (դրսից քիչ նշմարվող) դամբանախցերը ժամանակավոր ապաստարան կամ թաքստոց են ծառայել տեղացիների համար:

Դամբարանադաշտում նկատվում է մի հետաքրքիր առանձնահատկություն ևս: Նրա արևելյան կողմի ողջ երկարությամբ՝ քարափի եզրից (հարավից), սկսվում և գրեթե ուղղաձիգ գծով դեպի հյուսիս՝ մինչև բնակավայրի կիկլոպյան պարսպաշարն է ձգվում ուղղահայաց դիրքով միմյանցից որոշ հեռավորությամբ կանգնեցված, տարբեր չափերի (0,5–3,5 մ) ու ծավալի քարաբեկորների շարք (աղ. I, նկ. 1, աղ. V, նկ. 1), որոնց մի մասի համեմատաբար բարակ վերնամասերին դարձյալ առկա են 5,0-10,0 սմ-անոց անցքեր: Հարավից հյուսիս ձգվող այդ ուղղաձիգ քարաբեկորներին արևմտյան կողմից կից է նրան զուգահեռ ձգվող, մոտ 1,0 մ լայնությամբ և 0,3-0,5 մ բարձրությամբ պատաշար: Առայժմ դժվար է հաստատապես ասել, թե երբ և ինչ նպատակով է շարվել այդ պատը: Տպավորությունն այնպիսին է, որ պատը, թերևս, կառուցվել է պաշտպանական նպատակով, և դրանում որոշակի դեր են խաղացել ուղղահայաց դիրքով տեղադրված մեծ քարաբեկորները: Նախնական ենթադրությունն այն է, որ վերջիններիս միջնատարածքների դատարկ հատվածները շարվել են մանր քարերով, և հարավից հյուսիս ձգվող ու բնակավայրի պարսպաշարին միացող այդ կառույցը տարածքի ռազմավարական առումով առավել խոցելի հատվածում վերածվել է հավելյալ պարսպի: Ըստ որում պարսպի մեջ տեղադրված հսկա քարաբեկորները վերցվել են հենց տեղի հին դամբարանային կառույցների վրայից և վերաօգտագործվել որպես շինանյութ: Ենթադրվող այդ գործընթացի իրականացման ժամանակ ըստ ամենայնի առավել նախընտրելի են եղել խոշոր քարաբեկոր-

ների անցքավոր օրինակները, քանի որ ուշբրոնզեդարյան-երկաթեդարյան դամբարանների ծածկերի ապամոնտաժման ժամանակ ավելի հեշտ ու հարմար է անցքեր ունեցող քարերի տեղաշարժը: Այսինքն՝ հարավից հյուսիս ձգվող Զորաց քարեր հնավայրի անցքավոր քարաբեկորների շարքը լավագույն դեպքում պետք է որ ստեղծված լինի մ.թ.ա. I հազ. երկրորդ քառորդից ոչ շուտ և որևէ կապ չունի «էնեոլիթյան աստղադիտարանին» առնչվող երևակայական, ոչ հիմնավոր ենթադրությունների հետ: Հակառակ դեպքում անցքավոր քարերի դասավորությունը պետք է լիներ ոչ թե ուղղաձիգ, այլ գոնե շրջանաձև: Եվ եթե նույնիսկ մի պահ պայմանականորեն ընդունենք, որ այդ անցքերից այնուամենայնիվ դիտարկվել է երկինքը, ապա հարց է ծագում, թե որտեղ են կանգնել դիտարկողները՝ քարերի արևմտյան կողմո՞ւմ և նայել են միայն արևե՞լք, թե՞ քարերի արևելյան կողմում և նայել միայն արևմո՞ւտք: Այսինքն՝ այն ժամանակվա «աստղագետներին» հյուսիսն ու հարավն ընդհանրապես չե՞ն հետաքրքրել:

Նման անցքավոր, տարաժամանակյա մեգալիթներ պահպանվել են նաև տարածաշրջանի այլ բնակավայրերի մերձակայքում գտնվող հնավայրերում (Հարժիս, Բրուն, Սիսիան, Կապան, Սելիմ, Իշխանասար, Որոտնավանք, Ելփին, Լճաշեն, Նորատուս, Մեծամոր և այլն)[1]: Ուստի ամենամեծ ցանկության ու երևակայության դեպքում անգամ խիստ դժվար է պատկերացնել, որ դրանք բոլորն էլ առնչվել են աստղադիտարկման գործընթացների հետ: Հակառակ պարագայում, հետևելով ոչ մասնագետ մեկնաբանողների վառ երևակայությանը, ստիպված ենք ընդունել, որ Հայաստանի հարավի բրոնզեդարյան-երկաթեդարյան մեր նախնիներն այնքան ավելորդ ժամանակ ու այնպիսի տարօրինակ, անդիմադրելի ցանկություն են ունեցել, որ որտեղ և երբ պատահել է (անգամ կողք կողքի), «աստղադիտարաններ» են կառուցել...

Զորաց քարեր հնավայրը դեռևս բազմաթիվ անհայտներ ունի պարփակած իր մեջ: Դրանց վերհանումը, ուսումնասիրումն ու մեկնաբանումն անշուշտ պետք է իրականացնել հետևողականորեն՝ դիտարկելով և գիտական առումով մեկ առ մեկ արժևորելով աշխարհի տարբեր հատվածներում (Սկանդինավիա, Բրիտանական կղզիներ, Բրետանի և Պիրենեյան թերակղզիներ, Սարդինիա, Կորսիկա, Մալթա, Փոքր Ասիա, Իրանական սարահարթ, Ալթայ, Հնդկաստան, Լատինական Ամերիկա,

---

[1] Խանզադյան, Մկրտչյան, Պարսամյան 1973: 135-138, նկ. 137-142; Ավետյան 2003: Աղ. LVI, նկ. 1, 2; Simonyan 2012: 36; Ավետիսյան, Գնունի, Բոբոխյան, Սարգսյան 2015: 57-60, նկ. 13-15, աղ. 24, 36-39, 46:

Հարավային Աֆրիկա և այլուր)[1] (աղ. VII, նկ. 1-8) այդ ուղղությամբ արդեն իսկ իրականացված նմանօրինակ ուսումնասիրությունների արդյունքները[2]: Այս պարագայում Զորաց քարերն իրավամբ կարող են դառնալ ելակետային հուշարձան ոչ միայն Հին Հայաստանի, այլև ողջ Մերձավոր Արևելքի ու հարակից տարածաշրջանների բրոնզեդարյան-երկաթեդարյան մեգալիթյան հուշարձանների ուսումնասիրության համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբրահամյան Ա. 1944, Անանիա Շիրակացու մատենագիտությունը, Երևան:

Ավետիսյան Հ., Ա. Գնունի, Ա. Բոբոխյան, Գ. Սարգսյան 2015, Բրոնզ-երկաթեդարյան Սյունիքի սրբազան լանդշաֆտը, Երևան:

Ավետյան Վ. 2003, Սևանի ավազանի մշակույթը մ.թ.ա. III-II հազարամյակներում, Երևան:

Բալյան Վ. 2010, Զորաց քարերի առեղծվածը, Երևան:

Բարխուդարյան Ս. 1960, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, Դիվան հայ վիմագրության մատենաշար, Ա, Երևան:

Գայսերյան Վ. 1986, Արգիշթե II-ի Սիսիանի արձանագրությունը, ԼՀԳ 6, 67-79:

Եսայան Ս. 1972, Զանգեզուրի վաղ հնագիտական հուշարձանները, ԼՀԳ 4, 64-73:

Երեմյան Ս. 1963, Հայաստանը ըստ «Աշխահացոյց»-ի, Երևան:

Լալայեան Յ. 1898, Սիսիան, նշանավոր տեղեր և գիտ Ղոշուն Դաշ, Ազգագրական Հանդէս, գիրք Գ, 1, Թիֆլիս:

---

[1] O'Kelly 1982; Burl 1969: 1-28;, Хокинс, Уайт 2004; Хокинс 2004; Barclay 2005: 81-94; Браун 2010. http://www.dartmouth.edu/~izapa/E-35.pdf (V.Malmström, The Geography of Megalithic Settlement in Scandinavia). http://www.thehindu.com/features/friday-review/history-and-culture/megalithic-burial-site-found-in-kadapa/article3565463.ece (Megalithic burial site found in Kadapa, India, 2012) և այլն:

Լալայան Յ 1931, Դամբանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Երևան:
Լիսիցյան Ստ. 1969, Զանգեզուրի հայերը, Երևան:
Խանզադյան Է., Կ. Մկրտչյան, Է. Պարսամյան 1973, Մեծամոր (Ուսումնասիրություն 1965-1966թթ. պեղումների տվյալներով), Երևան:
Խաչատրյան Ժ. 1982, Հայաստանում «կեղծ թաղի» առաջացման հարցի շուրջ, ՊԲՀ 3, 227-232:
Խնկիկյան Օ. 1984, Սիսիանի զորաքարերը, Հայաստանի բնությունը 4:
Խնկիկյան Օ. 1997, Սյունիքը բրոնզի և երկաթի դարաշրջանում, Երևան:
Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Հ. Բարսեղյան 2001, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 5, Երևան:
Հասրաթյան Մ. 1985, Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, Երևան:
Հարությունյան Ն. 1979, Արգիշտի II-ի նորահայտ սեպագիրը, ՊԲՀ 3, 93-104:
Հարությունյան Վ. 1992, Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան:
Հերունի Պ. 1998, Քարահունջ – հնագույն աստղադիտարան Սիսիանում, Գարուն 5, 87-93:
Սիմոնյան Հ. 2006, Վերին Նավեր, գիրք Ա (1976-1990 թթ. պեղումների արդյունքները), Երևան:
Ստեփաննոս Օրբելեան 1910, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս:
Ստեփանոս Օրբելյան 1986, Սյունիքի պատմություն, Երևան: Վահրադյան Վ., Մ. Վահրադյան 2010, Քարահունջ յուշարձանի անուանման շուրջ, Բազմավէպ:
Փիլիպոսյան Ա. 2016, Զորաց քարեր հնավայրը, Պատմություն և Հասարակագիտություն, տարեգիրք 2, Երևան, 24-43:
Փիլիպոսյան Ա., Վ. Հովհաննիսյան 1991, Պեղումներ Ներքին Գետաշեն գյուղում, ՀՀ-ում 1989-1990 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկ. թեզեր, Երևան, 33-35:
Փիլիպոսյան Ա., Ռ. Մկրտչյան, Լ. Կիրակոսյան 2002, Քանագեղի դամբարանադաշտի 1999թ. պեղումները, Հայաստանի հնագույն մշակույթը 2, Երևան, 43-49:
Փիլիպոսյան Ա., Ա. Ավագյան 2016, Զորաց քարեր, Երևան:
Арутюнян Н.В. 1981, Заметки по урартской эпиграфике, в сб. Древний Восток и мировая культура, Москва.

Арутюнян Н.1983, Новая урартская надпись из Сисиана, сб. Древний Восток 4, Ереван, 195-229.
Арутюнян Н. 1985, Топонимика Урарту, Ереван.
Арутюнян Н.В. 2001, Корпус урартских клинообразных надписей, Ереван.
Браун П. 2010, Стоунхендж. Загадки мегалитов, Москва.
Геруни П. 1998, Доисторическая каменная обсерватория Карахундж-Карениш, Доклады Национальной Академии Наук Армении 4, Ереван, 307-328.
Марр Н.Я., И. А. Орбели 1922, Археологическая экспедиция 1916г. в Ван, Петроград.
Меликишвили Г.А. 1960, Урартские клиообразные надписи, Москва.
Парсамян Э. 1985, О возможном астрономическом назначении мегалистических колец Ангелакота, Բյուրականի աստղադիտարանի հաղորդումներ, պր. 57, Երևան:
Хокинс Дж. 2004, От Стоунхенджа до инков. Москва.
Хокинс Дж., Дж. Уайт 2004, Разгадка тайны Стоунхенджа. Москва.
Barclay G. 2005, The Henge and Hengiform in Scotland, in: Set in stone: new approaches to Neolithic monuments in Scotland, Oxford, 81-94.
Burl A. 1969, Henges: internal features and regional groups, Archaeological Journal 126, 1-28.
O'Kelly M. 1982, Newgrange. Archaeology, Art and Legend, London.
Piliposyan A. 2016, Zorats Karer. Megalithic Site in Soutern Armenia, in: Aegean World and Soutern Caucasus: Cultural Relations in the Bronze Age, International Workshop, September 23-25, Georgia, Tbilisi, 101-111.
Salvini M. 2001, The Inscriptions Ayanis (Rusaẖinili Eiduru-Kai): Cunieform and Hieroglyphic [in Ayanis Iṉ (Ten Years Excavations at Rusaẖinili Eiduru-kai, 1989-1998)(eds. A. Çilingiroğlu and M. Salvini], Documenta Asiana VI, Roma.
Simonyan H. 2012, Armenia at the Late Bronze and Early Iron Ages (15th-9th cc. BCE), in: Archaeological Heritage of Armenia, Yerevan.
Xnkikyan O.S. 2002, Syunik' During the Bronze and Iron Ages, Barrington.
http://armarchaeology.blogspot.com/2011/03/stonehenge.html, Հ. Մարտիրոսյան, Քարահունջ - Stonehenge. Առասպելի վերջը:
http://www.dartmouth.edu/~izapa/E-35.pdf (V.Malmström, The Geography of Megalithic Settlement in Scandinavia).

http://www.thehindu.com/features/friday-review/history-and-culture/megalithic-burial-site-found-in-kadapa/article3565463.ece (Megalithic burial site found in Kadapa, India, 2012)

ZORATS KARER OR KARAHUNJ, ARCHAEOLOGICAL MONUMENT OR FICTIONAL OBSERVATORY?

Piliposyan Ashot

(Armenian State Pedagogical University after Kh.Abovyan)

Zorats Karer archaeological site has a special place among the numerous archaeological monuments of the Syunik Marz of RA. In scientific literature the site is referred to as Dik-dik Karer, Tsits-tsits Karer, Zorats Karer, Karezork, Ghoshun Dash, and recently Karahunj. The site is situated 3 km to the north of Sisian, on the left bank of the Dar River, tributary of the Vorotan River. It is placed on a plateau unassailable from the eastern side, 1770 m above sea level. The geographic coordinates of the site are 39°33′02.52″ N and 46°01′42.96″ E.

According to the popular legends, bodies of commanders were interred underneath the large kerbs, whereas bodies of warriors were inhumed beneath the large upright stone slabs. This is why, the local people named the site "Zorqi kar, Zorats Karer" (*Arm.* Stones of Troops).

At present the earliest records about southern Armenia and the region of Sisian, in particular, are considered to be the cuneiform inscriptions of Van Kingdom (Urartu). Though the latter do not provide any direct information about Zorats Karer, they contain important data on the social and political processes of the region of the 8th–7th cc. BC. They are reflected in the chronicle of Sarduri II (764–735 BC), in the cuneiform inscription of Argišti II (714–685 BC) on the stele from Tanahat Monastery near Sisian and in the text by Rusa II (685–645 BC) found at the entrance to *susi* temple in Ayanis.

The non-contemporaneous remains of material culture gathered in the vicinity of Zorars Karer also provide some valuable information about the site. As far back as in 1930s, when the site was more known as "Ghoshun Dash", ethnographer St. Lisitsyan gathered and handed to the History Museum of Armenia interesting archaeological material found in Zorats Karer and its neighborhood. In 1980's archaeologist O.Khnkikyan excavated over a dozen of tombs at Zorats Karer. The majority of the tombs were north-south oriented cists with disintegrated corpses and archaeological material dated to the 10th–8th/7th cc. BC. The excavations at Zorats karer were restarted in 2013. The

results of the excavations once again confirm the existence of a large settlement and an adjacent necropolis within the site.

The settlement occupies the northern part of the site; it is enclosed by rough-hewn outer walls that are 2 m high in some parts and has an entrance from the south. One can discern the remains of rectangular buildings, rounded constructions, which were most probably used for military purposes, some caches and utility pits. In all likelihood, they were constantly reconstructed over the whole period from the Middle Bronze Age to the High Middle Ages (19th/18th c BC–13th/14th c. AD).

The necropolis is very close to the settlement; it occupies the southern part of the site and stretches up to the left riverbank of the Dar, the tributary of the Vorotan River. Its burial complexes are constructions related to the Middle Bronze Age, the Late Bronze Age, the Iron Age and the Antic periods.

The Zorats Karer site still contains lots of mysteries. Their revealing, study and interpretation should be carried out step by step, thoroughly studying and considering the results of research at similar sites in different parts of the world (Scandinavia, The British Isles, Brittany and the Iberian Peninsula, Sardinia, Corsica, Malta, Asia Minor, Iranian Plateau, Altai, India, etc.). In this context, Zorats Karer can indeed be considered as one of the initial monuments for the study of the Bronze and Iron Age megalithic monuments of Ancient Armenia, whole Ancient Near East and neighboring region.

Պ.գ.դ. Քոսյան Արամ
(ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ)

ԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՓՐԱՏՅԱՆ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ԳՈՏՈՒՄ Մ.Թ.Ա. II-Ի ՀԱԶԱՐԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ

Երջանկահիշատակ Գ.Սարգսյանն իր հետազոտությունների վերջին շրջանում մեկ անգամ չէ, որ անդրադարձավ հայոց վաղ պետականության և հայ ժողովրդի կազմավորման խնդիրներին՝ տուրք չտալով հակագիտականության զանազան դրսևորումներին, փորձելով հստակություն մտցնել դրանցում: Մասնավորապես, քննարկելով Մովսես Խորենացու առաջին հայկյանների տեղաշարժերի և Ուրարտու-Հայաստան խնդիրները, նա ներկայացրեց մեր օրերում դեռևս արդիական մոտեցումներ[1], որոնց ուսումնասիրությունը կարող է շարունակվել դեռ շատ երկար:

Ներկայացվող թեման մի փորձ է քննարկման դնելու վերոհիշյալ երկու խնդիրների որոշակի աշխարհագրական համատեքստը: Մի փոքր առաջ անցնելով, նշեմ, որ թե՛ մեկը, թե՛ մյուսը առկա աղբյուրների լույսի ներքո անկասկած տեղավորվում են Հայկական լեռնաշխարհի մի տարածաշրջանում, որը պարփակված է մի կողմից Վանա լճով, մյուս կողմից՝ Եփրատի ակունքների և վերին հոսանքի շրջանի ու Հայկական Տավրոսի հարավային եզրերի միջև: Հիմնականում սա ընդգրկում է պատմական Մեծ Հայքի երեք նահանգների զբաղեցրած շրջանը՝ Տարոն-Տուրուբերան, Ծոփք և Աղձնիք: Այս երկրամասը որոշ ուղղություններում ծավալվում է հյուսիսում դեպի Բարձր Հայքի մի մասը, մասնավորապես ներկայիս Երզնկայի դաշտը: Մի տարածք, որին հայագիտության դասականները, այդ թվում՝ Գ.Սարգսյանը, ժամանակին տվել էին «Նախնական Հայաստան» անվանումը:

Անզեն աչքով էլ կարելի է նկատել, ձեռքի տակ ունենալով Առաջավոր Ասիայի ֆիզիկական քարտեզը, այս տարածաշրջանի առանձնահատուկ դիրքը մի կողմից Հայկական լեռնաշխարհի մյուս շրջանների, մյուս կողմից սիրիա-միջագետքյան աշխարհի և Փոքր Ասիայի միջև: Կարելի է վստահաբար ասել, որ այստեղ «կոնտակտային գոտի» տերմինի կիրառությունը մասամբ է միայն արդարացված, քանի որ պատմական վաղ փուլերում, երբ «պետական սահմաններ» որպես այդպիսին գոյություն չունեին, փոքրասիական քաղաքակրթական տարածաշրջանի արևելքը և Հայկական լեռնաշխարհի արևմուտքը, համենայնդեպս դրա մի

[1] Սարգսյան 1988:

զգալի մասը, պետք է կազմեին մշակութային առումով մեկ քաղաքակրթական դաշտ:

Հայոց լեզվի պատմությանը և վաղ կրոնական հավատալիքներին նվիրված ուսումնասիրություններում կարևոր տեղ է զբաղեցնում փոքրասիական լեզվական շերտի խնդիրը (Ն.Մարտիրոսյան, Գր.Ղափանցյան, հետագայում նաև Գ.Ջահուկյան, Ջ.Գրեպպին և այլք)[1]: Հայոց լեզվի և փոքրասիական լեզուների միջև փոխառնչությունների խնդրին անդրադարձած հայ և օտար մասնագետները համակարծիք են հայերենում դրա հետևանքով մուտք գործած բավական ստվար բառաֆոնդի առկայության հարցում: Մասնագիտական կարծիքների միջև տարբերությունը միայն այդպիսի բառերի քանակի, փոխառության ժամանակի և եղանակի գնահատման մեջ է: Այդ փոխառությունները միանշանակ վկայում են հնագույն և տևական փոխհարաբերությունների առկայության օգտին:

Փոխառությունների ի հայտ գալը ենթադրում է որոշակի պատմական միջավայր, որտեղ հնարավոր են տևական փոխշփումներ, որոնք որոշակիորեն ուղեկցվում են համակեցության ամենատարբեր մակարդակներով: Որպես այդպիսի միջավայր հայ-փոքրասիական լեզվական, նաև կրոնա-պաշտամունքային փոխառնչություններով զբաղվող մասնագետներն իրենց ուշադրության կենտրոնում ունեն հայերենի կրողների նախնական բնակության վայրի գործոնը: Դրանով էլ պայմանավորված են նրանց եզրակացությունները և ենթադրությունները:

Գ.Ջահուկյանն առանձնացնում էր երկու տիպի փոխառություններ՝ ա. անմիջական և բ. միջնորդավորված: Առաջին կարգի ազդեցության աղբյուրը, ըստ նրա, Խեթական տերության շրջանում և դրա անկումից հետո եղած շփումներն են, իսկ երկրորդը խեթա-լուվիական լեզուներից խուրրի-ուրարտական, սեմական և այլ լեզուներ կատարված փոխառությունների, այնուհետև վերջիններից հայերեն կատարված փոխառություններն են:

Անկախ այն հանգամանքից, թե երբ և ինչպես կարող էին տեղ գտնել վերոհիշյալ փոխառնչությունները, պարզ է միայն, որ նշված տարածաշրջանում կամ դրա մի ինչ-որ հատվածում պետք է ապրեր հայախոս բնակչություն, որն էլ փոխառեր օտար բառերը: Կամ հնարավոր է մեկ այլ տարբերակ, այն է՝ հետագայի Ծոփքի տարածքում կարող էր ապրել, ի

---

[1] Капанцян 1948; Մարտիրոսյան 1961; Ջահուկյան 1970: 123հաջ.; 1987: 311հաջ.; Greppin 1978; 1982; Պետրոսյան 1997; 2006: Համեմատաբար վերջերս հայ-փոքրասիական լեզվական փոխառնչությունների խնդիրը համակողմանիորեն քննարկվեց Հ.Հմայակյանի ատենախոսության մեջ (Գր.Ղափանցյանը և խեթագիտությունը, Երևան, 2014թ.):

թիվս այլ էթնիկ խմբերի, խեթա-լուվիական լեզուներով խոսող բնակչություն, որը հայկական պետականության գոյության շրջանում ժամանակի ընթացքում պիտի ձուլվեր հայկական էթնոսի մեջ՝ նրան փոխանցելով իր լեզվի իրողությունները: Այս առումով առանձնահատուկ կարևորություն են ներկայացնում այն խեթական տեքստերը, որտեղ հիշատակվում են վերինեփրատյան կոնտակտային գոտում և դրա հարևանությամբ օտարալեզու և հատկապես խեթա-լուվիական ծագում ունեցող անձնանունների կրողները, պատմական այն փուլում, երբ վերոհիշյալ տարածքը դեռևս նոր էր նվաճվել, և ինտեգրացիոն գործընթացներն ըստ էության իրենց նախնական փուլում էին գտնվում[1]:

Հարկ է նշել, որ այս երկու տարբերակները միմյանց չեն հակասում և կարող էին գործել զուգահեռաբար:

Նախքան անցնելը եփրատյան գոտում արձանագրված ինտեգրացիոն գործընթացներին, ներկայացնեմ այդ գոտու աշխարհագրական-ռելիեֆային և կլիմայական առանձնահատկությունները, ինչպես նաև տնտեսական ներուժը:

Կոնտակտային գոտու նկարագիրը

Եփրատյան կոնտակտային գոտու արևմտյան հատվածը, որն այս ուսումնասիրության առարկան է, ընկած է Եփրատի արևմտյան և արևելյան առափնյա շրջաններում: Այն ձևաբանորեն ամենևին միատարր չէ:

Գետից արևմուտք տարածվում է Եփրատի արևմտյան վտակ Թոխմասուի ալլուվիալ հարթավայրը, որը բաղկացած է մի շարք խոր գետահովիտներից և շրջափակվում է Տավրոսի լեռնաշղթայով հարավից, արևմուտքից և արևելքից: Մալաթիայի հարթավայրը գտնվում է կենտրոնական Փոքր Ասիայից և Կիլիկիայից դեպի արևելք և այստեղից Միջագետք տանող կարևորագույն ճանապարհների խաչմերուկում: Շնորհիվ բավարար ջրային ռեսուրսների և բերրի հողի՝ հարթավայրը երկրագործական ներուժի առումով իրավամբ համարվում է ներկայիս Թուրքիայի Հանրապետության առավել բարեբեր շրջաններից մեկը:

Մալաթիայի հարթավայրից դեպի Եփրատի արևելակողմը ճանապարհն անցնում է ներկայիս Քալե քաղաքով, որի մոտ է գտնվում գետանցումը: Եփրատի այս գետանցումն օգտագործվում էր նաև հնագույն

---

[1] Այս առնչությամբ կարևոր է նշել մ.թ.ա. XVդ. երկրորդ կեսով թվագրվող երկու տեքստեր, որտեղ հիշատակվում են հստակ խեթա-լուվիական ստուգաբանություն ունեցող մի շարք անձինք՝ Kalmahaziti, Šantaš, Šantazitiš, Taraškuil, Tarhundaziti, Urawalkuiš, Walwazitiš (հանգամանալի քննարկումը տե՛ս Kosyan 2009):

ժամանակներում: Այստեղ՝ բուն Իսուվայի տարածքում են գտնվում Խարբերդի և Ալթընովայի հարթավայրերը (վերջինս ներկայումս գտնվում է արհեստական ջրամբարի հատակում): Այս երկուսը նույնպես աչքի են ընկնում բերրի հողերով[1]:

Երկրագործությունը, սակայն, Ծոփքի բնակչության գոյության միակ աղբյուրը չէր: Այս տարածքում էին գտնվում օգտակար հանածոների խոշոր հանքավայրեր[2]: Հարուստ պղնձահանքեր[3], երկաթահանքեր[4] և անագի, ոսկու ու արծաթի հանքավայրեր[5] կային կոնտակտային գոտու ողջ տարածքում:

Չնայած կոնտակտային գոտին ընկնում է ցամաքային կլիմայական գոտում, կիսաչորային կլիմայով, սակայն տարեկան տեղումների քանակը բավական բարձր է՝ 500-600 մմ, ընդ որում Արածանիից հյուսիս այն հասնում է մինչև 1000 մմ-ի, իսկ Մալաթիայում նվազում է (400 մմ)[6]:

Ինչ վերաբերում է գոտու հյուսիսային հատվածին, այն է՝ Երզնկայի դաշտին, ապա այն տնտեսական ներուժի տեսանկյունից էականորեն չի տարբերվում Մալաթիայի հարթավայրից և Խարբերդի դաշտից: Ձմռան ամիսներին այստեղ շատ ցուրտ չէ, իսկ ամառը տաք է: Լեռների ստորոտներում, ըստ Ջ.Բրանտի հուշագրությունների, ընդարձակ այգիներ կան, որտեղ աճում են բազմատեսակ մրգեր[7]: Հացահատիկի բերքատվությունը բարձր է և հասնում է մինչև 1:12-ի:

Երզնկայի դաշտի նշանակությունը պայմանավորված էր առաջին հերթին ոչ այնքան նրա տնտեսական ներուժով, որքան աշխարհա-

---

[1] Խարբերդի դաշտի երկրագործական ներուժն արձանագրել էր դեռ XIX դարի առաջին կեսին Էրզրումում անգլիական հյուպատոս Ջ.Բրանտը՝ Արևմտյան Հայաստանի մի շարք շրջաններ կատարած իր ուղևորության մասին հաշվետվության մեջ: Ըստ նրա գրառումների՝ այստեղ հացահատիկի բերքատվությունն արտակարգ բարձր է՝ 1:16 (Brant 1836: 207):

[2] Իսուվայում և հարևան շրջաններում մետաղների հանքավայրերի քարտեզը տե՛ս Bobokhyan 2008.II, Karte 4.

00[3] Էրգանի մադենի պղնձահանքերն Առաջավոր Ասիայի ամենահարուստ հանքավայրերից են՝ Կիպրոսի և Սինայի թերակղզու հետ միասին:

[4] Խոսքը Եփրատի աջակողմյան ափից ոչ շատ հեռու ընկած ներկայիս Դիվրիղիի և Հասանչելեբիի հանքերի մասին է, որոնք առ այսօր չեն կորցրել իրենց նշանակությունը:

[5] Անագի հանքավայրերը գտնվում են Մալաթիայի հարթավայրում, Քեբանում, Բաշքիլում, Խարբերդում և այլուր (Šerifoğlu 2007: 103):

[6] Šerifoğlu 2007: 103.

[7] Brant 1835: 202.

գրական դիրքով: Այն Էրզրումի դաշտի միջնորդավորմամբ, Եփրատի ակունքների և վերին հոսանքի երկայնքով Հարավային Կովկասը կապում էր Ծոփքի, իսկ այնտեղից՝ Միջագետքի և Սիրիայի հետ: Այն կարելի է վստահաբար համարել կոնտակտային գոտու հյուսիսային դարպասներ, որը կովկասյան տարածաշրջանից տարբեր ժամանակներում եկող միգրացիոն ալիքների հիմնական ուղիներից մեկն էր:

Եփրատյան կոնտակտային գոտին ընկած է առնվազն երեք տարբեր աշխարհագրական, ռելիեֆային և կլիմայական գոտիների սահմանաբաժանի երկայնքով, ինչն անմիջականորեն ազդում է այստեղի բնակչության խմբերի փոխառնչությունների վրա՝ դրանք վերածելով մշտապես առկա գործոնների:

Եփրատյան կոնտակտային գոտին ուսումնասիրվող ժամանակահատվածի ընթացքում տարբեր դերակատարումներ է ունեցել առաջավորասիական քաղաքակրթական աշխարհում՝ մարգինալությունից մինչև ակտիվ քաղաքական և տնտեսական:

Ինտեգրացիոն գործընթացները

Ստորև կներկայացնենք այս տարածաշրջանում մ.թ.ա. II հազ. – I հազ. առաջին կեսի ընթացքում արձանագրված քաղաքական գործընթացները՝ մեկ անգամ ևս վերաքննելու հայոց լեզվում առկա զգալի քանակությամբ փոքրասիական ծագման լեզվական իրողությունների պատմական համատեքստը:

Երբ փորձում ենք ի մի բերել քննարկվող տարածաշրջանում գրավոր և հնագիտական տվյալների տեղեկություններով բացահայտվող քաղաքական իրադարձություններն իրենց զարգացման մեջ, ապա ակնհայտորեն նշմարվում են երկու կարևոր առանձնահատկություններ:

Առաջինն այս տարածքի բազմաէթնիկ և բազմամշակույթ բնույթն է, որն առկա էր պատմական ողջ անցյալի ընթացքում: Մասնավորապես մ.թ.ա. II-I հազ., դատելով խեթական և ասորեստանյան աղբյուրներում պահպանված հատուկ անուններից, այստեղ հնարավոր է ենթադրել մի քանի լեզվակից կամ ոչ լեզվակից էթնիկ հանրությունների գոյություն[1]: Եվ դա բնական է, եթե հաշվի առնենք մ.թ.ա. III-I հազ. ընթացքում դեպի այս տարածաշրջան ուղղված տարբեր տեղաշարժային ալիքները՝ Կուր-

---

[1] Այս հարցում առաջիններից էր Գ.Մելիքիշվիլին, ով, մ.թ.ա. II-I հազ. Սեպագրական և անտիկ աղբյուրների հաղորդած տեղեկությունների հիման վրա ենթադրում էր վերինեփրատյան գոտում մի շարք էթնիկ խմբերի առկայություն, այդ թվում՝ հայկական, «նախախեթական» (կասկեր), խուրրիական, նաև հյուսիսկովկասյան և վրացական (Меликишвили 1962: 61сл.):

Արաքս, կուրգանային մշակույթի կրողներ, իսկ մ.թ.ա. II-I հազ. Սահմանագծին և դրանից հետո մուշկեր, կասկեր, հնարավոր են նաև կիմմերներ կամ այլ ցեղեր: Ընդ որում, բացի վերոհիշյալ էթնիկ խմբերից, հնարավոր էր նաև այլոց մուտքը Ծոփք: Հենվելով եփրատյան գոտու նյութական մշակույթի իրողությունների վրա՝ վերոհիշյալ տեղաշարժերի կրողների առնվազն մի մասը պետք է նստադրվեր այստեղ: Այս առումով առավել բնութագրականը մ.թ.ա.1400թ. մոտերքում կազմված խեթական մի տեքստ է, որտեղ պահպանված ցեղապետերի անունները թույլ են տալիս ենթադրել առնվազն 4-5 տարբեր լեզուների կրողների առկայություն (խեթա-լուվիական, հնդ-իրանական, խուրրիական, «կապադովկիական», կասկական): Սրանցից բացի առկա են նաև դեռևս հստակորեն չստուգաբանվող զգալի թվով անձնանուններ[1]:

Երկրորդը քաղաքական կազմակերպման բավական ցածր մակարդակն է, ինչը որոշակիորեն տարօրինակ է, եթե հաշվի առնենք շրջակա միջավայրի հարմար աշխարհագրական դիրքը և տնտեսական ենթակառուցվածքների ստեղծման համար առկա նպաստավոր պայմանները: Չնայած եփրատյան գոտին սերտ շփումներ ուներ նախ միջագետքյան քաղաքակրթական կենտրոնների հետ առնվազն խալկոլիթյան փուլից, իսկ այնուհետև այն ներառվեց սկզբում Կուր-Արաքսյան մշակութային դաշտի մեջ, այնուհետև Խեթական տերության քաղաքական և հոգևոր-մշակութային ոլորտը, սակայն մինչև մ.թ.ա. XIII դարը այստեղ չձևավորվեց միասնական պետականություն: Ընդհուպ մինչև այդ պահը այստեղ գոյություն ունեին բազմաթիվ փոքր ցեղապետություններ, որոնք պատմագիտության մեջ սովորաբար ընդունված է անվանել նոմային կամ պոլիսային կառույցներ:

Այժմ ընդհանուր գծերով ներկայացնենք քննարկվող տարածաշրջանի և փոքրասիական՝ խեթա-լուվիական աշխարհի միջև ինտեգրացիոն գործընթացների ընթացքը:

Խարբերդ-Մալաթիայի և դրանց հարող շրջանները հայտնվեցին խեթական Տերության տեսադաշտում մ.թ.ա. XV դարի երկրորդ կեսին՝ նվաճվելով Թուդխալիյաս II-ի կողմից[2]: Նախքան այդ պահը Իսուվան

---

[1] Այդ անունների ցանկը և քննությունը տե՛ս Kosyan 2009:

[2] Իսուվայի նվաճման մասին տեղեկություններ են պահպանվել Թուդխալիյաս II-ի և նրա հաջորդ Առնուվանդաս I-ի տարեգրություններում (տե՛ս KUB XXIII 11/12, Դիմ. կողմ 27'-34', տեքստի հրատ.՝ տե՛ս Carruba 1977: 158-162; KUB XXIII 14 Դիմ. կողմ 1-8, հրատ.՝ Carruba 1977: 172). Իսուվայի նվաճման շրջանում խեթա-միտտանական փոխհարաբերությունների որոշ մանրամասներ արձանագրված են խեթական արքա Սուպպիլուլիումաս I-ի և Միտտա-

գտնվում էր իր հարավային հարևան Միտտանիի ազդեցության ներքո: Հնարավոր է, որ այստեղ գոյություն ունենային մի քանի ցեղային դաշնություններ, որոնցից մեկը հենց Իսուվան էր (մյուսները՝ Պախխուվա, Ծուխմա, Մալդիա և Խուրրի): Սրանք իրենց հերթին բաղկացած էին ավելի մանր միավորներից, որոնք կառավարվում էին ցեղապետերի/տոհմապետերի կողմից, որոնց աղբյուրներն անվանում են «ավագներ»: Այդպիսի պետականությունների թիվը, միայն ըստ խեթական տեքստերի, հասնում է երկու տասնյակի՝ Խինձուտա, Ալաթարմե, Սուլլամա, Վատարուանա, Պալիսնա, Տախխիսա, Պախխուվա, Կումմախա, Տիմմիյա, Մալդիյա և այլն[1]: Ի թիվս վերոհիշյալ երկրների՝ միևնույն համատեքստում հիշատակվում է առայժմ հստակ չբնորոշված Խուրրի երկիրը (սա Միտտանին չէ):

Խեթական տերության մեջ սրանց ինտեգրման առաջին քայլերը հանգում էին կախյալ պայմանագրերի կնքմանը, որոնք, սակայն, ցանկալի արդյունք չտվեցին, քանի որ արդեն հաջորդ սերնդի ընթացքում եփրատյան գոտու երկրները դուրս եկան տերության ենթակայության տակից և նույնիսկ տարածքային զավթումներ իրականացրին գետի արևմտակողմում[2]:

Իսուվայի և նրա հարևանների անջատողական միտումները շարունակվեցին ընդհուպ մինչև հաջորդ դարի կեսերը և ավարտվեցին խեթական տերության կողմից նրանց վերջնական հպատակեցմամբ, որից հետո սկսվում է նրանց ինտեգրման իրական գործընթացը: Իսուվան և նրա հարևանները որևէ կերպ չեն հիշատակվում Մուրսիլիս II-ի տարեգրություններում՝ որպես Խաթթիի դեմ ապստամբած երկրներ, ինչը վկայում է նրանց նկատմամբ գերիշխանության կայունության մասին: Իսկ արդեն հաջորդ՝ մ.թ.ա. XIII դարի կեսերից տեսնում ենք միանգամայն նոր իրավիճակ:

նիի արքա Շատտիվազայի միջև կնքված պայմանագրում (= CTH 51 (հրատ.՝ Weidner 1923: 2ff.; Beckman 1996, 6A [թարգմ.]).

[1] Սրա հիմնական մասը հայտնի էր դեռևս մ.թ.ա. XV դարի վերջերին կազմված մի պայմանագրից՝ կնքված խեթական արքա Առնուվանդաս I-ի կողմից վերինեփրատյան երկրների հետ (հրատ.՝ Sayce 1930: 5ff. (թարգմ.); Gurney 1948: 32ff. (թարգմ.); Hoffner 1976: 60ff. (տեքստի 1684/u կցաբեկորը); Խաչատրյան 1998: 87-93 (հատվածական թարգմ.); Kosyan 2006: 72ff. (գիտական տառադարձում, թարգմ. և պատմագիտական մեկնաբանություններ):

[2] Խեթական տերության և Իսուվայի փոխհարաբերությունների վերաբերյալ տե՛ս Klengel 1968; 1976; Güterbock 1973; Քոսյան 2002:

Խեթական տիրապետության պայմաններում ընթացող ինտեգրացիոն գործընթացների արդյունքում մ.թ.ա. XIII դարի կեսերին սրանց մի մասի միավորմամբ[1] կազմավորվում է Իսուվայի քույր-թագավորությունը: Թե որոշակի երբ և ինչպիսի պայմաններում ստեղծվեց Իսուվայի թագավորությունը, կարելի է միայն ենթադրել որոշ անուղղակի տեղեկությունների և փաստարկների հիման վրա: Ըստ երևույթին, մ.թ.ա. XIV դարում և XIII դարի առաջին կեսի ընթացքում Իսուվայի և հարևան շրջանների տոհմային ազնվականության շատ ներկայացուցիչներ ներառվեցին խեթական ռազմավարչական ապարատ, նախ՝ որպես օգնական զորաջոկատների հրամանատարներ, այնուհետև սկսեցին զբաղեցնել տարբեր պաշտոններ տերության ներքին կյանքի այլ ոլորտներում:

Այս առնչությամբ հիշատակելի է կումմախացի զինվորների ծառայությունը խեթական մայրաքաղաքում գտնվող արքայական պալատում որպես պահակազորի մաս[2]: Այնուհետև իսուվական ազնվական Լուպակկիի հիշատակությունը որպես խեթական արքունիքի բարձրաստիճան պաշտոնյա («գլխավոր կառավար»)[3]: Ի դեպ, այս Լուպակկիի կնիքի դաջվածքը հայտնաբերվել է Իսուվայի հնավայրերից մեկի պեղումների ժամանակ Քորուջութեփեից[4]: Հայտնի է նաև նրան ուղղված Իսուվայի արքա Էխլի-Շարրումայի նամակը, որտեղ վերջինս Լուպակկիին դիմում է որպես «իմ սիրելի հայր»[5]: Չնայած մասնագետների շրջանում կան որոշ կասկածներ նման դիմելաձևի հարցում, սակայն Լուպակկիի կնիքի առկայությունը Իսուվայում կարող է վկայել հօգուտ այն ենթադրության, որ այս անձնավորությունն իրոք կարող էր Իսուվայի արքայի հայրը լինել:

Լուպակկի անունը կրում է նաև մ.թ.ա. XIV դարի երկրորդ կեսի խեթական արքա Սուպպիլուլիումաս I-ի զորավարներից մեկը նրա սիրիական և եգիպտական արշավանքների ժամանակ[6]: Այս անվան հնա-

---

[1] Առայժմ որևէ կռվան չկա՝ պարզելու համար Իսուվայի քույր-թագավորության ընդգրկած տարածքը: Կարելի է միայն ենթադրել, որ այն պետք է համեմատաբար խոշոր լիներ՝ պայմանավորված խեթերի համար դրա կարևորագույն ռազմավարական նշանակությունը Ասորեստանի անմիջական հարևանությամբ:

[2] IBoT I 36 ՀԿ III 36 (տեքստի հրատարակությունը տե՛ս Güterbock and Van den Hout 1991).

[3] Չնայած այս տերմինի հստակ թարգմանությանը՝ պարզ չէ՝ արդյոք այս Լուպակկին ղեկավարո՞ւմ էր խեթական բանակի մարտակառքերի ջոկատները:

[4] KRC68-285 (հրատ. Güterbock 1973: 142 n.6):

[5] KBo XVIII 4 (հրատ. Klengel 1976: 86; Hagenbuchner 1989.II: N.132):

[6] KBo V 6 II 11, III 2.

ռավոր հնդ-իրանական ծագման և իսուվական պատկանելության մասին կան բավական հիմնավորումներ[1]:

Ինչ վերաբերում է Իսուվայի արքայատոհմին, ապա ներկայումս մասնագետները համակարծիք են այն հարցում, որ Իսուվայի առաջին արքա Արի-Շարրումայի կինը խեթական արքայադուստր Կիլուշխեպան էր՝ Խաթթուսիլի III-ի կնոջ՝ Պուդուխեպայի քույրը կամ դուստրը[2]: Այս առնչությամբ հիշատակելի է Պուդուխեպայի աղոթքներից մեկը, որտեղ թագուհին իր մտահոգությունն է հայտնում Իսուվայի մանկահասակ արքայազնի հիվանդության կապակցությամբ՝ աստվածներին խոստանալով երկրպագություն, եթե երեխան ապաքինվի[3]:

Վերոհիշյալը թույլ է տալիս առաջարկել հետևյալ վարկածը: Խեթական ծառայության մեջ գտնվող իսուվական տոհմային ավագանու ներկայացուցիչներից մեկի որդին խեթական արքա Խաթթուսիլի III-ի կողմից նշանակվել էր նորաստեղծ Իսուվայի արքա, որին կնության էր տրվել խեթական արքայադուստրը: Ի դեպ, քույր-թագավորությունների ստեղծման պրակտիկան լավ հայտնի է Խեթական տերության պատմության վերջին շուրջ հարյուր տարիների ընթացքում (Կարգամիս, Սեխա գետի երկիր, Տումմաննա և այլն):

Իսուվան կանոնավոր սկսում է հիշատակվել տեքստերում Խաթթուսիլիս III-ի և Թուդխալիյաս IV-ի օրոք՝ որպես Խաթթիի քաղաքական ազդեցության ոլորտի կարևոր պետություն. Խաթթիի և Իսուվայի արքայատոհմերի միջև սերտ ազգակցական կապեր էին հաստատվել[4]: Իսուվան, դատելով խեթական տեքստերից, մ.թ.ա. XIII դարի երկրորդ կեսին կարևոր առանցքային տեղ ուներ Խեթական տերության քաղաքական

---

[1] Տե՛ս Քոսյան 2006; Kosyan 2009: Լուպակկի անվան հնարավոր հնդ-իրանական ծագմանն անդրադարձել էր դեռևս 1930-ական թվականներին Ն.Միրոնովը (Mironov 1933: 205f.): Առաջավոր Ասիայի տարբեր տարածաշրջանների գրավոր աղբյուրներում հիշատակվող արիական լեզվական իրողությունների շարքում նա ընդգրկել էր նաև վերոհիշյալ անձնանունը՝ համեմատելով այն հին հնդկ. lopāka «չախկալի տարատեսակ», lopāśa «չախկալ, աղվես» բառերի հետ: Այնուամենայնիվ, հեղինակն այնքան էլ վստահ չէր այս համադրության վրա՝ նշելով, որ Լուպակկի անվան հիմքում կարող էին ընկած լինել ասիանիկ (ընդգծումը մերն է - Ա.Ք.) *luba, lub(a)-ija, կարիերեն labios բառերը:

[2] Այդ խնդրի վերաբերյալ տե՛ս Roos de 1987; 2005:

[3] Այդ տեքստի համապատասխան հատվածի մեկնաբանությունը տե՛ս Güterbock 1973: 139f.:

[4] î»ë՝ Güterbock 1973: 135ff.; Roos de 1987: 74ff.; նաև՝ Քոսյան 1997: 178, 179:

կյանքում: Այն փաստացի ապահովում էր տերության՝ Ասորեստանի և Հայասայի սահմանամերձ շրջանների անվտանգությունը: Իսուվայի արքաները հիշատակվում են որպես վկաներ խեթական մեծ արքաների և այլ պետությունների արքաների միջև պայմանագրերի կնքման արարողության ժամանակ: Հիշատակելի է Արիշարրումայի ներկայությունը Խաթթուսիլիս III-ի և Թարխունտասսայի արքա Ուլմի-Թեշուբի միջև կնքված պայմանագրում՝ որպես վկաներից մեկը[1], ինչպես նաև արքայազն Էխլի-շարրումայի նման դերը Թուդխալիյաս IV-ի և Թարխունտասսայի արքա Կուրունտայի պայմանագրում[2]: Իսուվայի արքան խեթական բանակի արշավանքների ժամանակ պետք է մասնակցեր ռազմական գործողություններին[3]:

Առանձնահատուկ դեր ունեին Իսուվայի արքաները նաև Խեթական տերության կրոնա-պաշտամունքային կյանքում: Շատ են հատկապես այն տեքստերը, որտեղ հիշատակվում են Իսուվայի արքաների կողմից Խաթթիի տարբեր կրոնական կենտրոններում իրականացվող պաշտամունքային արարողությունները[4]: Հատկանշական է, որ տեքստերից մեկում՝ միևնույն ենթատեքստում, հիշատակվում են Իսուվայի արքայի՝ պաշտամունքային գործերով ուղևորությունը Կիցցուվատնա (Կիլիկիա) և խեթական թագուհու ուղևորությունը Սամուխա և Անասիպա քաղաքներ (միևնույն նպատակով):

Եվ, իհարկե, առանձնակի կարևորություն է ներկայացնում Կումմախա քաղաքում գտնվող տաճարի քրմերին խեթական արքայի կողմից հանձնարարված գուշակային պրոցեսի մասին պատմող տեքստը[5]. ըստ տեքստի՝ գուշակությունը տևել է երկար տարիներ:

Խեթական տերության տրոհումից հետո վերինեփրատյան գոտում տիրող էթնոքաղաքական իրավիճակի մասին գրավոր աղբյուրներում առկա տեղեկությունների ծավալը նշանակալիորեն զիջում է նախորդ դարաշրջանին: Այստեղ նոր բնակչության մուտքն արձանագրող ասորեստանյան տեքստերը[6] հնարավորություն չեն ընձեռում թեկուզ մակերեսորեն գնահատելու այս տարածաշրջանում լեզվական իրողությունների

---

[1] KBo IV 10 ՀԿ 29 (տեքստի հրատարակությունը՝ Hout van den 1995).

[2] Bo 86/299 ՀԿ IV 34 (տեքստի հրատարակությունը՝ Otten 1988: 26).

[3] IBoT I 32, 29.

[4] IBoT II 131; KBo XXIV 132; KUB XLIV 4; KUB LVI 28 և այլն: Իսուվայի արքաների կողմից իրականացվող կրոնական ծիսակատարությունների մասին տե՛ս Քոսյան 2002:

[5] IBoT I 33 (տեքստի հրատարակությունը՝ Laroche 1958: 152ff.).

[6] Այդ մասին տե՛ս հանգամանորեն մասնավորապես Քոսյան 1999: 157-167:

պատկերը: Այնուամենայնիվ, հետխեթական փուլում Եփրատի արևմտակողմում խեթական քաղաքական ավանդույթների շարունակությունը, ի դեմս Մելիդի թագավորության, թույլ է տալիս ենթադրել, որ նախկին շփումները պետք է շարունակվեին[1]: Չնայած խեթական դարաշրջանի Իսուվայի թագավորության մի շարք քաղաքային կենտրոններ, դատելով այստեղ իրականացված հնագիտական ուսումնասիրությունների տվյալներից (Նորշունթեփե, Քորուջութեփե, Դեղիրմենթեփե և այլն), տերության անկման շրջանում, ամենայն հավանականությամբ, լքվել էին[2], սակայն որոշակի շարունակականություն ենթադրվում է:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Խաչատրյան Վ.Ն. 1998, Հայաստանը մ.թ.ա.XV-VII դարերում, Երևան:

Մարտիրոսյան Ն. 1961, Պրպտումներ փոքրասիական անուններու մասին, ՊԲՀ 3, 82-107:

Պետրոսյան Ա.Ե. 1997, Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգածագման խնդիրը, Երևան:

Պետրոսյան Ա.Ե. 2006, Արամազդ, Երևան:

Ջահուկյան Գ.Բ. 1970, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Երևան:

Ջահուկյան Գ.Բ. 1987, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան.

Սարգսյան Գ.Խ, 1988, Ուրարտական տերությունը և հայերը. – Բ.Ն.Առաքելյան, Գ.Բ.Ջահուկյան, Գ.Խ.Սարգսյան, Ուրարտու-Հայաստան, Երևան, 47-126:

Քոսյան Ա.Վ. 1997, Իսուվան (Ծոփքը) մ.թ.ա.XIII-XII դարերում, ՊԲՀ 1, 177-194:

Քոսյան Ա.Վ. 1998, Իսուվան և Գորդիոնը (Համեմատական վերլուծություն), ՊԲՀ 3, 177-194:

Քոսյան Ա.Վ. 2002, Իսուվայի կրոնական կենտրոնները խեթական դարաշրջանում, ՄՄԱԵԺ XXI, 315-331:

Քոսյան Ա.Վ. 2006, Արիացիները Պախխուվայում, ՄՄԱԵԺ XXV, 247-258:

Капанцян Гр. 1948, Хайаса-колыбель армян, Ереван.

---

[1] Նշենք այս առումով, որ հայ-փոքրասիական լեզվական շփումների և մասնավորապես հայերենի փոքրասիական շերտի գնահատման հարցում կարծիք կա, որ դրանց մեծ մասը կատարվել է լուվիերենից (Greppin 1978):

[2] Տե՛ս Sevin 1991; Քոսյան 1997: 187-189; 1998 և այլն:

Меликишвили Г.А. 1962, К изучению древней восточномалоазийской этнонимики, ВДИ 1, 46-65.

Beckman G. 1996, Hittite Diplomatic Texts, Atlanta.

Bobokhyan A. 2008, Kommunikation und Austausch im Hochland zwischen Kaukasus und Taurus, ca. 2500-1500 v.Chr., Bd.2, Oxford (BAR International series 1853).

Brant J. 1836, Journey Through a Part of Armenia and Asia Minor, in the Year 1835, Journal of the Royal Geographical Society of London 6, 187-223.

Carruba O. 1977, Beiträge zur mittelhethitische Geschichte.I-II, SMEA 18, 137-195.

Greppin J. 1978, Luwian Elements in Armenian, Древний Восток III, Ереван, 115-126.

Greppin J. 1982, The Anatolian Substrata in Armenian – An Interim Report, AAL 3, 65-72.

Gurney O.R. 1948, Mita of Pahhuwa, Liverpool Annals of Archaeology and Anthropology 28, 32-48.

Güterbock H.G.1973, Hittite Hieroglyphic Seal Impressions from Korucutepe, JNES 32, 35-147.

Güterbock H.G. and Th.P.J. van den Hout 1991, The Hittite Instruction for the Royal Bodyguard, Chicago, 1991(= Assyriological Studies 24).

Hoffner H.A. 1976, A Join to the Hittite Mita-text, Journal of Cuneiform Studies 28, 60-62.

Hout Th. van den 1995, Der Ulmitešub-Vertrag, Wiesbaden (=StBoT 38).

Kosyan A.V. 2009, On the Ethnic Background of Isuwa (a preliminary study), AJNES IV/2, 85- 97.

Laroche E. 1958, Lécanomancie hittite, Revue d·Assyriologie et d·Archéologie Orientale 52, 150-162.

Mironov N.D. 1932-1933, Aryan vestiges in the Near East of the second millenary B.C., Acta Orientalia 11, 140-217.

Otten H. 1988, Die Bronzetafel aus Boğazköy. Ein Staatsvertrag Tuthalijaš IV, Wiesbaden.

Roos J. de 1987, Who was Kilushepa?, Jaarbericht van het Vooraziatisch-Egyptisch Genootschap „Ex Oriente Lux" 29, 74-83.

Roos J. de 2005, DUMU.MUNUS GAL Reconsidered, Anatolica XXXI, 211-215.

Şerifoğlu T. E. 2007, The Malatya-Elâziğ Region during the Middle Bronze Age: A Re-Evaluation of the Archaeological Evidence, Anatolian Studies 57, 101-114.

Weidner E. 1923, Politische Dokumente aus Kleinasien, Leipzig.

INTEGRATIONAL PROCESSES IN THE EUPHRATIAN CONTACTING ZONE IN THE II-I MILLENNIUMS B.C.

Kosyan Aram
(Institute of Oriental Studies, NAS RA)

The article discusses the historical and geopolitical role of one of the most important regions of the Armenian Highland – the Euphratian contacting zone, situated on the close neighborhood of two main areas of the ancient Near-Eastern civilization – Mesopotamia and Asia Minor. The study focuses on the western segment of this contacting zone which during the III-I millenniums B.C. had gone through significant transformations – from small tribal units to centralized statehood.

The study of the above-mentioned processes could be useful for the understanding of several key problems of the ancient and medieval Armenian statehood, a significant portion of Hittite-Luwian lexics in Classical Armenian and western cultural realities in Armenian pre-Christian and later religion.

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՆԲ - Աճառյան Հ. Հայոց անձնանունների բառարան, հ. I-V, Երևան, 1942-1962:

ՀԱԱՆԳՆ - ՀՍՍՀ / Հայաստանի Հանրապետությունում դաշտային Հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Զեկուցումների թեզիսներ, Երևան:

ԲԵՀ - Բանբեր Երևանի համալսարանի, Երևան:

ԲՎՊՄԻ - Բանբեր Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի, Վանաձոր:

ՀԺՊ Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան, 1971:

ԼՀԳ - Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան:

ՄԱ - Մերձավոր Արևելք, Երևան:

ՄՄԱԵԺ - Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Երևան:

ՊԲՀ - Պատմա-բանասիրական հանդես, Երևան.

ՎԱ - Վասն արդարութեան, Վանաձոր:

ՕԱՀՀՄ - Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Երևան:

ВДИ - Вестник древний истории. Москва.

ИФЖ = ՊԲՀ

КУКН - Арутюнян Н.В., Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001.

МИ - Метаморфозы Истории, Псков.

МНМ - Мифы народов мира, Москва, 1980.

ППВ - Памятники письменности Востока, Москва.

РФПС - Ранние формы политических систем, Москва.

СА - Советская археология, Москва.

СИЭ 1970 - Советская историческая энциклопедия, т. I, Москва.

УЗИВАН- Учеые записки Института востоковедения АН, Москва-Ленинград.

ФО - Философия и общество, Москва.

ЭО - Этнографическое обозрение, Москва.

AAL Annual of Armenian Linguistics, Cleveland.

AfO - Archiv für Orientforschung, Graz.

AJNES - Aramazd. Armenian Journal of Near Eastern Studies, Yerevan.

AMI - Archäologische Mitteilungen aus Iran, Neue Folge, Berlin.

AnAr - Anadolu Araştirmalari (JKIF - Jahrbuch für Kleinasiatische Forschungen), İstanbul.

AoF - Altorientalische Forschungen, Berlin.

AOAT – Alter Orient und Altes Testament, Kevelaer / Neukirchen-Vluyn.
BAR IS – British Archaeological Reports. International Series, Oxford.
BASOR – Bulletin of the American Schools of Oriental Research, New Haven.
BHS 1997 - Biblia Hebraica Stuttgartensia, Stuttgart.
BSOAS - The Bulletin of the School of Oriental and African Studies, Cambridge.
CAD - The Assyrian Dictionary of the Oriental Institute of the University of Chicago, Chicago.
CCT – Cuneiform Texts from Cappadocian Tablets in the British Museum, London, 1921-1975.
CHANE – Culture and History of the Ancient Near East, Leiden – Boston – Köln.
CHI - The Cambridge History of Iran, Cambridge.
DocAs – Documenta Asiana, Roma.
EIr - Encyclopedia Iranica, London.
HSCPh - Harvard Studies in Classical Philology, Harvard.
IrAn - Iranica Antiqua, Leiden.
IrCa - Iran and the Caucasus, Leiden-Boston.
JIES - Journal of Indo-European Studies, Hattiesburg.
JNES – Journal of Near Eastern Studies, Chicago.
KST – Kazi Sonuclari Toplantisi, Ankara.
MMJ – Metropolitan Museum Journal, New-York.
OIP – Oriental Institute Publications, Chicago.
PIHANS – Publications de l'Institut historique-archeologique néerlandais de Stamboul, Leiden.
REA - Revue des études Arméniennes, Paris.
RGTC – Repertoire Geographique des Textes Cuneiformes, Wiesbaden.
RINAP – The Royal Inscriptions of the Neo-Assyrian Period, Winona Lake.
SAOC - Studies of Ancient Oriental Civilization, Chicago.
SHA - The Scriptores Historiae Augustae, Cambridge.
SMEA - Studi Micenei ed Egeo-Anatolici, Roma.
SRAA- Silk Road Art and Archaeology, Kamakura.
StBoT - Studien zu den Boğazköy-Texten (Wiesbaden), 1965ff.
ZDMG – Zeitschrift der Deutschen Morgenlandischen Gesellschaft, Leipzig.
ZPE - Zeitschrift für Papyrologie und Epigraphik, Köln.

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԱՏՈՐ III

ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԻՐ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԸ
(ժողովածուն նվիրվում է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Գագիկ Սարգսյանի ծննդյան 90-ամյակին)

Խմբագիր՝ Ա. Սահակյան
Համակարգչային էջադրումը՝ Վ. Պապյանի

Հրատ. պատվեր № 797
Ստորագրված է տպագրության՝ 14.08.2017թ.:
Չափսը՝ 60 x 84 1/16, 14 տպագր. մամուլ:
Տպաքանակը՝ 150 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:

[1000 դ.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0465613

102835